



INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

ISSUES ON THE  
ARMENIAN LANGUAGE  
HISTORY

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

ВОПРОСЫ  
ИСТОРИИ АРМЯНСКОГО  
ЯЗЫКА

Yerevan- 2021

Ереван- 2021

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

## IV

ԵՐԵՎԱՆ

ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2021

ՀՏԴ 811.19(091)

ԳՄԴ 81.2-03

Հ 282

Գիրքը հրատարակության է երաշխավորել  
ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի  
ինստիտուտի գիտական խորհուրդը

***Պատասխանատու խմբագիր՝***

Բանասիրական գիտությունների դոկտոր  
Վ. Լ. Կատվայան

***Գրախոսներ՝***

Բանասիրական գիտությունների դոկտոր  
Ա. Ե. Սարգսյան

Բանասիրական գիտությունների թեկնածու  
Ն. Մ. Սիմոնյան

Հ 282 Հայոց լեզվի պատմության հարցեր, հատոր IV  
ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2021.– 293 էջ:

Գիրքը ընդգրկում է լեզվի զարգացման տարբեր փուլերում հայերենի բառային կազմի և քերականական կառուցվածքի փոփոխություններին ու դրանց օրինաչափություններին, հայերենի և այլ լեզուների բառային աղերսներին, գրաբարի բառապաշարին, օտար և բնիկ բառերի հարաբերակցությանը, փոխառությունների գործառական առանձնահատկություններին նվիրված հետազոտություններ: Նախատեսվում է հայոց լեզվի պատմությամբ հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 811.19(091)

ԳՄԴ 81.2-03

ISBN 978-9939-9235-5-0

© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ, 2021 (էլ. հրատ.)

**ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՅՈՒ «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑԻ»  
ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Մարդու անվանադիր լինելը որպես նրա բացառիկ կոչում հիշատակվում է Սուրբ Գրքի առաջին իսկ էջերում: Վաղ միջնադարյան հայ քերականները, միմյանց կրկնելով, համոզմունք են հայտնել, որ ի սկզբանե անունները դրվել են ըստ իրերի բնույթի<sup>1</sup>: Մրանով է բացատրվել նաև հասարակ և հատուկ անունների տարբերությունը: Նկատելի է նաև, որ հարցի քննարկման ժամանակ շատ հաճախ միախառնվել են փիլիսոփայական և քերականական մոտեցումները<sup>2</sup>: Այսպիսի համադրում կա նաև Գրիգոր Տաթևացու վերլուծություններում, որտեղ **«բան», «անուն», «ստորաստութիւն»** հասկացությունները և՛ գոյական են. անուն ու ենթակա, և՛ դատողություն. ստորոգյալ ու բայ:

Հասարակ և հատուկ անունների Տաթևացու մեկնաբանության մեջ նույնպես առկա է փիլիսոփայական և քերականական մոտեցումների համադրումը. **«...գոյացութիւն՝ է ունօղ բնութեան կամ ներքոյ կացեալ բնութեան, որպէս մարդ: ...իսկ անձն է՝ զանազանեալն հանդերձ բացորոշ յատկութեամբ, որպէս Պետրոս»**<sup>3</sup>, որտեղ, ըստ էության «գոյացութիւն»-ը նույնացվում է հասարակ գոյականի, իսկ «անձ»-ը՝ հատուկ

---

<sup>1</sup> Տե՛ս, **Գ. Զահուկյան**, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում*, Եր. 1954թ.:

<sup>2</sup> Նույն տեղը:

<sup>3</sup> **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք որ կոչի Ոսկեփորիկ*. Կ.Պոլիս, 1746, էջ 472:

գոյականին: Նկատելի է, որ ըստ հեղինակի բացատրության՝ հասարակ գոյականները միևնույն բնության հատկանիշը կրող են, իսկ հատուկը՝ դրանցից առանձնացված մեկը:

Հասարակ և հատուկ անունների տարբերակվածության մեկ այլ բնորոշման հատկանիշ ենք տեսնում հեղինակի «Գիրք հարցմանցի» «Առանձնական աղոթքի մասին» ենթագլխում, որտեղ առանձին աղոթելու անհրաժեշտությունը Տաթևացին բացատրում է յուրաքանչյուրի առանձին անհատ լինելու հանգամանքով. «Քանի որ **ընդհանուր բնություն** ունենք, ուստի պետք է **ընդհանուր աղոթենք** և [միաժամանակ] քանի որ անհատ ենք և **առանձին դեմք**, պետք է **առանձին աղոթենք**»<sup>4</sup> [թարգմ. Ս.Գ.]:

Մյուս կողմից, ըստ Տաթևացու, գրեթե նույնանում են անվան և սահմանման գործառույթները, որովհետև երկրորդն ըստ էության, անվան ծավալվող բացատրությունն է. «ամենայն ինչ **անուամբ կամ սահմանաւ** ճանաչի, այլ սահմանաւ առաւել՝ քան անուամբ»<sup>5</sup>: Իսկ «Գիրք որ կոչի Ոսկեփորիկ» աշխատության մեջ գրում է. «... **անուն** մարդոյ յայտնէ զբնութիւն մարդոյ, անուն առիւծու յայտնէ զբնութիւն առիւծու, քանզի **համագոր է սահմանի** անունն»<sup>6</sup>:

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի<sup>7</sup> հատուկ անունների քննությունը կատարելով լեզվաբանական հարցադրումների շրջանակներում, արդյունքում ունենում ենք նաև արտալեզվական բավականին հետաքրքրական նյութի արձա-

---

<sup>4</sup> Գրիգոր Տաթևացի, *Գիրք հարցմանց*, Կ.Պոլիս, 1729, էջ 623:

<sup>5</sup> Գրիգոր Տաթևացի, *Գիրք քարոզութեան, Ամառան հատոր*, Կ.Պոլիս, 1741, էջ 165:

<sup>6</sup> Գրիգոր Տաթևացի, *Գիրք որ կոչի Ոսկեփորիկ*, էջ 555:

<sup>7</sup> Գրիգոր Տաթևացի, *Գիրք հարցմանց*, Կ.Պոլիս, 1729:

նագրում, այսինքն՝ իմաստային քննության ենթարկելով Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի հատուկ անունները՝ կարելի է պատասխանել հարցերի մի ամբողջ խմբի. ի՞նչ սկզբնաղբյուրներ է օգտագործել հեղինակը, ո՞ր մեկնիչներն են ընդունելի եղել առաքելական Հայ Եկեղեցուն, ի՞նչ պատճառներով են առաջացել դավանաբանական վեճերը, և ի՞նչու է Հայոց Եկեղեցին պահել ավանդական ուղին, պատմական ի՞նչ դեմքեր և դեպքեր է արձանագրում Գրիգոր Տաթևացին:

«Գիրք հարցմանց»-ի շարադրանքը հեղինակը բաժանել է տասը հատորների, որից առաջին երեքում **ընդհանուր դավանաբանական հարցադրումներ** են, հետևաբար, այստեղ հիմնականում հանրաձանոթ հատուկ անուններ են: Չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ հատորները Հին կտակարանի քննությունն է, ուստի սրանց մեջ էլ **հինկտակարանյան գրեթե երեք հարյուրին մոտեցող հատուկ անուններ են**: Եվ վերջին երեք հատորում Նոր կտակարանի քննությունն է, որտեղ էլ հիմնականում **նորկտակարանյան հատուկ անուններ են**՝ առաքյալների, մեկնիչների, հայրաբանների և այլն:

Նախանշված այս խմբերին ավելանում են **տեղանուններ, կրոնական արարողակարգերի անուններ, սրբերի անուններ, շարականների անվանումներ, հայազգի գործիչների անվանումներ, կան նաև անտիկ շրջանի հեղինակներին վկայակոչումներ**:

Ասենք, որ համատարած, ինչպես և ընդունված էր միջնադարում, Գրիգոր Տաթևացին բոլոր հատուկ անունները բերում է փոքրատառով, իսկ «**պատիւ**» նշանը՝ գործածում բացառիկ դեպքերում:

Ծագումնաբանական առումով հատուկ անունները հիմնականում սերում են հասարակ անուններից: Այս անցումը

բավականին լավ է երևում «Գիրք հարցմանց»-ի «Զարականս ո՞վ է ասացեալ» ենթագլխում: Միայն այս ենթագլխում հատուկ անունների թիվը վեց տասնյակ է, որտեղ հատուկ անուններ են դարձել նաև եկեղեցական արարողակարգերի անվանումները, իսկ երբեմն շարականների առաջին տողերը, բառակապակցությունները: Սրանց պարագայում հատուկ անունների համատարած հիմնական ձևույթ է դարձել «զ» նախդիրը.

ա) Եկեղեցական արարողակարգեր - «**Գարգն ապաշխարութեան**», «**Աւագ շաբաթն**», «**Գարգն յարութեան**», «**Գարգ մեծ տօնիցն**»:

բ) Սրբերի անվանումներ - «**Սուրբ Գրիգորին**», «**Յովհաննուն**», «**Վարդանանցն**», «**Անտօնին**», «**Սուրբ Յակոբին**», «**Սուրբ Սարգսի օրհնութիւնն**»:

գ) Շարականի առաջին տողերով կազմված կամ եկեղեցական տոնի անվանումից առաջացած հատուկ անուններ - «**Փոխման առաջին պատկերն**», «**Փոխման երկրորդ պատկերն**», «**Ի տեսութիւն անթառամ ծաղկին**», «**Անսկիզբն**», «**Մեծացուցեքն**», «**Մեղաք յամենայնին**», «**Պէնտակոստէին**», «**Խաչին և զեկեղեցոյ, զգորս ըստ պատկերին**», «**Աւագ օրհնութիւնքն զեօթն ձայնիցն**», «**Վառին**», «**Ծաղկազարդի հարցն**», «**Հոգւոյ գալստեան դ պատկերն**», «**Վարդավառի բ պատկերն**», «**Նայեա՛ սիրովն**», «**Ի քէն հայցեմքն**», «**Օրհնեմք զքեզն**», «**Այսօր անճառն**»:

Հատուկ անվանման սահմանումը թելադրում է, որ այն պետք է լինի եզակի թվով, քանի որ այն ընդհանուրից որոշակի հատկանիշներով առանձնացված միավոր է, սակայն գեղարվեստական խոսքում հատուկ անուն են դառնում նաև հոգնակի թվով գոյականներ: Սա տեսնում ենք նաև շարականների անվանումների պարագայում. «**Մարգարէիցն**», «**Առաքելոցն**,

«Թագաւորացն», «զՀարցն», «զՄարտիրոսացն», «զՆինուէաց-  
ւոցն», «զՀրեշտակապետացն», «զԵօթանասնիցն», «զՂևոն-  
դեանցն»:

Ընդհանուր դավանաբանական հարցերը քննելիս, նշվեց, որ հեղինակն անդրադառնում է հանրաժանոթ անունների, քննության նյութ դարձնում ժամանակին հայտնի դավանա-  
բանական վեճերի հայտնի հեղինակների կարծիքները՝ հըն-  
թացս բերելով սուրբգրային մեջբերումներ, մարգարէների  
կանխասացություններ՝ փորձելով ներկայացնել հարցի պատ-  
մությունը: Այստեղ նույն հատվածում կարելի է տեսնել և՛  
մեկնիչին, և՛ պատմական անձանց, և՛ սուրբգրային հերոսնե-  
րին. «Ասեմք եթէ՝ **զօզ և մագօզն** հոգևորապէս իմացեալ լինին  
ամենայն հալածողք եկեղեցւոյ. զորս սատակեսցէ՝ տէր յիսուս  
զամենեսեան որպէս ասէ սաղմոսն» (որպէս զանօթ բրտի  
փշրեսցես զնոսա):

Դարձեալ ի գիրս **հետրին** գրեալ է թէ **եղիա** և աշակերտք  
նորա ասացին թէ՝ (աշխարհս յամէ վեց **ռ** ամ. յորոց **բռ** ամն  
ունիցի տոհու, այսինքն ունայնութիւն:

Դարձեալ ի վերայ սաղմոսին որ ասէ, (զարթի՛ր փառք  
իմ.) ասէ մեկնիչն և աւանդութիւն հրէիցն թէ՝ խօսի աստ ի  
վերայ չորից թագաւորացն որք հալածեցին **զիսրայէլ**:

Վասն առաջնոյն ասէ՝ (զարթի՛ր փառք իմ.) ի բաբիլօն  
տալով մեզ **զմիսայէլ, զանանիա, և զազարիա**: **Զարթիր**, ի սուգ  
տալով մեզ **զմուրթբէ, և զեսթեր**:

Դարձեալ՝ ի գիրս **իօմայ** ասէ, (ո՛չ եկեսցէ մեսիայն մինչև  
տիրեսցէ չար թագաւորն հոռմայեցոց ամենայն աշխարհի **թ**  
ամիս:): Եւ ի մեկնութիւն ծննդոց ա ասէ **բերեսիաթաս** թէ՝ (Ժ  
թագաւորք տիրեսցեն ի սկզբանէ մինչև ի կատարած աշխարհի):

Նախ՝ Աստուած: Երկրորդ՝ **նեբբօթ**: Երրորդ՝ **յովսեփ**: Չորրորդ՝ **սողոմոն**: Հինգերորդ՝ **նաբուգոդոնտար**: Վեցերորդ՝ **դարեհ**: Եօթներորդ՝ **Կիւրոս**: Ութերորդ՝ **ադէքսանդր**: Իններորդ՝ **օգոստոս կայսր**. որ իբրև **գերկաթ մանրեցեղ զամենեսին: Տասներորդ**՝ Մեսիայն որ է՝ առաջին և վերջին»<sup>8</sup>:

Քանի որ երկրորդ հատվածում (չորրորդ, հինգե-րորդ, վեցերորդ, յոթերորդ հատորներում) **հինկտակարանյան անցքերն են**, ուստի այստեղ գրեթե երեք հարյուրին մոտեցող հինկտակարանյան հատուկ անուններ են հանդիպում: Այս մասում հիմնական առանձնահատկությունն այն է, որ ամբողջ շարադրանքը կառուցված է հնի և նորի համեմատությամբ, և հնից նորի անցումների վերլուծություններով: Ըստ Տաթևացու, եթե մարդկության ամբողջ պատմությունը հեթանոսության շրջանում մանկության և նախապատրաստական աշխատանքի փուլում էր, ապա մարգարեներով, Ելից, Թագաւորաց, Դատավորաց և Հին կտակարանի մնացյալ գրքերում նկարագրող իրադարձություններով սկսվեցին Փրկչի գալստյան նախապատրաստական աշխատանքները: Բնորոշ է «**Ուստի՞ է Մելքիսեդեկ**» հարցի պատասխանի շարադրանքը, որտեղ տրվում են Տիրոջ քահանայության և հին քահանայության տարբերության վերլուծությունները: Մելքիսեդեկը, որ քահանայեց Աբրահամի առաջ. «Հօրն անունն **մելքի**, և մօրն **սաղա**. և քաղաքին **սաղիմ**: Ի մանկութենէ կոռց նուիրեցաւ, և հրեշտակ աստուծոյ յափշտակեալ սնոյց զնա յանապատի մինչև հասոյց ի կատարումն: Ապա ի **թաբօր** լերինն ամպ խոնարհեալ և ձեռն կարկառեալ ձեռնադրեաց զնա ասելով, այս **մելքիսեդեկ** անհայր, անմայր չհամարեալ յազգս՝ նմանեալ որդւոյն

---

<sup>8</sup> **Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց**, էջ 28:

աստուծոյ: Զի տղայ մանուկ երթեալ ո՛չ ոք գիտէր զնա. և ո՛չ նա զոք ճանաչէր զի քանանացի էր և աննման վարուց նոցա: Բնակէր ի ներքոյ **գողգոթային** ուր **աղամայ** գերեզմանն էր: Իւր ձեռքն ցանէր և որթ վաստակէր իւր բաւական: Ուր եկեալ **աքրահամ**, և նա ել ընդ առաջ նորա ջերմ բաղարջ հացով և զինեալ օրինակ տէրունեան խորհրդոյն: Եւ անդ օրհնեալ զաքրահամ, և տասանորդ էառ յաւարէ անտի:

Հարցումն: Զի՞նչ է որ **Եփրեմ** ի զիրս կցորդաց ասէ, Մելքիսեղեկ՝ որ նա՛ ինքն է **սեմ**: Պատասխանի: Ո՛չ երկանուն է և ո՛չ այլ ինչ. այլ **իրինոս** ասէ՝ զպատճառն և դժուա՛ր է հասկանալոյ: **Նոյ** օրհնեաց **զսեմ**, և սեմայ որդի ո՛չ գոյր նման իւր որ օրհնէր զնա: **Աքրահամ** որդի էր ի տանէն **սեմայ**՝ արժանի օրհնութեան: Բայց սեմ չէ՛ր կենդանի որ օրհնէր զնա. և **թաքայ** չէր օրհնող: **Մելքիսեղեկ** զնորա դէմն առեալ՝ զնորա գործն էլից. օրհնեաց **զաքրահամ**՝ և **սեմ** կոչեցաւ»<sup>9</sup>:

«Գիրք հարցմանց»-ի հինկտակարանյան հատվածում հեղինակը բազմազան տեղեկություններ է հաղորդում նախաքրիստոնեական անցքերի և անձերի մասին, որոնք վկայակոչումներ են հայտնի ու անհայտ հեղինակներից: Տաթևացին շարադրանքը շատ չծանրաբեռնելու համար երբեմն չի մատնանշում հեղինակին, չնայած հիշատակարանում նա պարզորոշ նշում է բազմաթիվ հեղինակներից օգտվելու հանգամանքը: Օրինակ՝ նա թվարկում է նախահայրերի կա-նանց երեք տասնյակից ավելի անուններ. «Աղամայն Եւա: Մեթայն Ազերա: Ենովսայն Նուենա: Կայնանայն Մաղադեղա: Մաղադիէլին Դինա: Յարեղին Բառաքա: Ենովքայն Յադներա: Մաթուսաղային Յեդնա: Ղամեքայն Բեդհա: Նոյին Զարա: Մեմայն Դեզեկ

---

<sup>9</sup> Գրիգոր Տաթևացի, *Գիրք հարցմանց*, էջ 300:

Ալիփաթա: Արփաքսաթայն Ռաբուիա: Սաղային Սուքա:  
Եբերայն Զուրա: Փաղեկայն Դուրնա: Ռազաւայն Սուրա:  
Մերուքայն Մելքա: Նաքովրայն Յեսքա: Թարային Յեդնա:  
Աբրահամուն Սառա: Իսահակայն Ռեբեկա: Յակոբայն Ռաքել և  
Լիա: ... Իսկ դ կանայքն որք խառնեցան յօրհնութեան ազգն  
Իսրայելի, **Թամար**՝ որ ծնաւ զՓարէս ի Յուդայէ: **Ռահաբ**՝ որ  
ծնաւ զԲոյոս ի Սաղմանայ: **Հռութ**՝ որ ծնաւ զՈվբէթ ի Բոյոսայ:  
**Բերսաբէ**՝ որ ծնաւ զՍողոմոն ի Դաւթայ»<sup>10</sup>:

Վերջին երեք հատորում արդեն **նորկտակարանյան**  
անցքերի վերլուծություններն են: Ինչպես արդեն նշեցինք, մինչև  
այս մասը հեղինակը նախապատրաստում է անցումը «Գիրք  
հարցմանց»-ի բուն գաղափարական բովանդակությանը,  
այսինքն, նա հատորեն օգտագործելով հարց ու պատասխանի  
եղանակը, առաջին յոթ հատորներում ոչ միայն վերլուծում է  
Հին կտակարանը, այլև ապառիչ պատասխաններ տալիս  
դավանաբանական բազմաթիվ վիճահարույց հարցերի: Այս մա-  
սը ոչ միայն քրիստոնեության տեսական հիմքերի պաշտպա-  
նությունն է, այլև՝ Հայ Եկեղեցին ըստ արժանվույն ներկայաց-  
նելու կուռ շարադրանք, որտեղ մի կողմից Հայոց Եկեղեցու  
պատմական դերի ու նշանակության քննությունն է, մյուս  
կողմից՝ նրա նշանավոր ժողովները, հայ գործիչները, Հայոց  
Եկեղեցու առանձնահատկություններն ու ծիսակարգերը:

Այստեղ իբրև հատուկ անուններ տեղանուններն են,  
գործիչների, ծիսակարգերի անվանումները, ծիսակարգերի  
հեղինակները: Որպես օրինակ բերենք հայոց յոթ ժողովների  
համառոտ նկարագրությունը, միայն որտեղ ունենք **հինգ  
տասնյակից ավել** հատուկ անուններ.

---

<sup>10</sup> **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք հարցմանց*, էջ 299-300:

«Առաջին ժողովն եղն ի տանս **թորգումայ** յարևելից կողմանս. զկնի է երորդ ամի վախճանելոյ **մեծին սահակայ**: Ժողովեալ իւ եպիսկոպոսաց և բազում վարդապետաց և ժողովրդոց. կողմակալք և մարգպանք, մեծամեծօքն հայոց, և **սպարապետն վարդան** ազգայնօքն իւր: Եւ վերստին **հաստատեցին զկարգեալսն** սրբոյն գրիգորի և ներսէսի և սահակայ և մաշտոցի: Եւ գրեցին գիրս կանոնաց գլուխս ի, ընդդէմ եկամուտ թուլութեանցն: Եւ ի նոյն ժամանակս ասի լեալ անիծեալ ժողովն **քաղկեդոնի**: Երկրորդն է ժողովն **թէոդուպօլսի**, որ այժմ կոչի **կարնոյ** քաղաք. ո՛չ այն գոր յետոյ **հերակլ քաղկեդոնիկ** ժողովեաց և խաբեաց **զեգր կաթողիկոսն** հայոց: Այլ հրամանաւ մեծի թագաւորին **ուստիանէայ** ժողովեցան յունաց և հռոմոց և հայոց և վրաց և աղուանից եպիսկոպոսունք. և կաթողիկոսն հայոց սահակ. և հաստատեցին զկանոնսն երից սուրբ ժողովոյն որ ի **նիկիայ՝ ի կոստանդնուպօլիս՝ և յեփեսոս**: Եւ նգովեցին զաղանդն **մարկիանու և զարտեմոնի**, և **զտումարն լսոնի**. և միաբանեցան ի մի հաւատս սուրբ առաքելոցն. և ի կանոնս սուրբ ժողովոյն ինչ պետք էին յաւելին գլուխս **թ** ի զգուշութիւն եկեղեցւոյ: Երրորդ ժողովն է **դվնայ**, ի չորրորդ ամի թագաւորութեանն **կոստանդէայ** հռոմոց. հրամանաւ մեծի կաթողիկոսին հայոց **ներսէսի շինողի**. և այլ է և **Ժ** եպիսկոպոսաց՝ և վարդապետաց բազմաց և իշխանաց. և նորոգեցին զթուլութիւն և զերկպառակութիւն ինչ եկեղեցւոյ. և հաստատեցին գիրս կանոնականս **բԺան** գլխոց: Զորրորդ՝ մեծ և արժանաւոր ժողովն եղն ի **մանազկերտ**. ի **Ճող** թուականին. հրամանաւ և արդեամբք գիտնաւոր և մեծ իմաստասիրին սրբոյն **յոհաննու կաթողիկոսին** հայոց **օձնեցոյ**: Որ կանոնական գլխօք պայծառացոյց զկարգ եկեղեցւոյ և զուղղափառութիւն հաւատոյ. գոր **զ** ամաւ յառաջ եղծեալ էր **եգրի կաթողիկոսի**. որ **եգր** եղն հաւատոյ

ուղղութեան. և հրամանաւ **հերակլի** հաւանեցաւ ժողովոյն **քաղկեդոնի**. կացեալ **զ** կաթողիկոսք նոյն աղանդովն որ են այսոքիկ. **Եգր. Մովսէս. Անաստաս. Իսրայէլ. Սահակ. Եղիա:** Մինչ եկաց երկրորդ լուսաւորիչն հայոց և կրկին **կիւրղոս** սուրբ իմաստասէրն **յոհան**. և լուսաւորեաց զեկեղեցի: Այլ որ **ճճ** ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք, և կամեցան սերմանել զաղանդն **նեստորի**. որք նգովեալ որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի նոցանէ գիրս սուտս, **Զգօրտոսակ. Զկիրակոսակ. Զպղի տեսիլն: Զադամայ** ապաշխարութիւնն: Եւ **զղիաթեկ** զմանկութեան տեառն: **Եւզսեբիոս:** Եւ **զՃիոն օրհնութեան:** Եւ **զանթաքչելի մատեանս:** Եւ աւետարանի մեկնութիւն **զմանեայ:** Եւ որ հաւատայ նոցա նգովի: Այսպէս սրբեաց զեկեղեցի յամենայն աղանդոյ **սուրբն յոհան**. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի ամէն: Իսկ Հինգերորդ ժողովն եղն ի վիճակս **գրիգորիսի**. ի մայրաքաղաքն աղուանից **պարտաւ:** Եւ **տէր սիոն** հայոց կաթողիկոսն անդր հասեալ բազում եպիսկոպոսօք և մեծամեծ ազատօք հայոց և իշխանօք նոցին. ընդդէմ աղանդոց ա՛յնր ժամանակի, և թուլութեան կարգաւորաց եկեղեցւոյ, և բռնութեան իշխանաց: Գրէ կարգս կանոնականս **իդ** գլխօք. և հաստատէ՛ զեկեղեցի պայծառ կարգօք և ուղղութեամբ: Վեցերորդ ժողով եղն յամս **վաչագանայ արքայի** աղուանից: Ժողովեալ բազում եպիսկոպոսաց յամե-նայն կողմանց. և իշխանաց և մեծամեծաց հայոց. կարգեցին սահմանս կանոնականս **իբ** գլխով. և պայծառացուցին զեկեղեցի սուրբ: Եօթներորդ՝ ժողովն **սիմէոնի աղուանից** կաթողիկոսի և հայոց կաթողիկոսի տէր եղիայի: Յորժամ անիծիւք աքսորեցին **զներսէս** եպիսկոպոս որ եղն աղանդովն **ներսէսի**, և այլալեաց զկարգ և զուղղափառութիւն հաւատոյ: Զոր յառաջին ամին յորժամ նստաւ կաթողիկոս **տէր սիմէոնի**, ի ձեռն տէր **եղիայի**

մեծահանդէս ժողովմամբ պայծառացոյց զեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն»<sup>11</sup>:

«**Զջարականս ռ՞վ է ասացեալ**» գլխում ունենք հայ շարականագիրների երկու տասնյակ անուններ. մեծն Մեսրոպ, Մովսէս քերթօղն, Անանիա Շիրակունին, Խորենացին, Յոհան Օձնեցին, Տէր Կումիտասն, Պետրոս Գետադարձն, Սահակն Գրիգոր Մագիստրոսն, Ստեփաննոս Սիւնեցին, Ներսէս Կլայեցին, մեծն Ներսէս Կլայեցին, Ներսէս Լամբրոնացին, Գրիգոր Վկայասերն, Գրիգոր Սկիւռացին, Յակոբ Կլայեցին, Վարդան վարդապետն, Յոհաննէս Պլուզն, Սարկաւազ վարդապետն, Ստեփաննոս Սիւնեցին:

**Կրօնական արարողակարգերի անունները** քննելիս հեղինակը նկարագրում է ն՛ տոներ, ն՛ ծիսակարգային իմաստը, հեղինակին կամ եթէ փոխառյալ արարողակարգ է՝ բերողին, վերջին դեպքում նաև՝ ծագման երկիրը: Այս հատվածում ունենք շուրջ հիսուն հատուկ անուններ:

**Կանոն ջրօրհնէից** - «Իսկ զկանոն ջրօրհնէից՝ սրբոյն բարսղի է արարեալ յեօթն ամի հայրապետութեան իւրոյ **յԵրուսաղէմ**. զի անդ հանդիպեցաւ: Իսկ **խոսրով** թարգմանիչ եբեր ի **հայս**. որ գնացեալ էր **յԵրուսաղէմ** հրամանաւ **սրբոյն սահակայ**»<sup>12</sup>:

**Կանոն ապաշխարօղի** - «Իսկ ապաշխարօղսն կարգել. և դարձեալ ի մեծի է շաբաթի աւորն արձակել, սրբոյն **կիւրղի** է արարեալ ի դուռն սրբոյն **սիօնի**. ի **իա** ամի հայրապետութեան իւրոյ: Եւ **արջևան և կորիւն** թարգմանիչք բերին ի **հայս**»<sup>13</sup>:

---

<sup>11</sup> **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք հարցմանց*, էջ 544-545:

<sup>12</sup> **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք հարցմանց*, էջ 658:

<sup>13</sup> **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք հարցմանց*, էջ 658:

**Կանոն մայրօրհնէից** - «Իսկ զկարգ մայրօրնէից՝ սուրբն կիպրիանոս կարգեդոնացի»: Որ և զուստիանէ սրբունի կոյսն մա՛յր արար կանանց հաւատաւորաց<sup>14</sup>:

**Ջծնունդն և զտեառնընդառաջ** - «Եւ զինչ և իցէ պատճառաւ զկարգեալն առաքելոցն փոխեցին **զծնունդն և զտեառնընդառաջին** տօնն»<sup>15</sup>:

**Ագապս առնելոյ** - «Իսկ վասն ագապս առնելոյ որ է՝ ոգէհանգիստ. և վասն քահանայաթաղին որ է՝ **ԺՂ** աւետարան. զոր արարեալ է սրբոյն **Եփրեմի խորին ասորոյ ի նիկումիդացոց** քաղաքին Եւ **ղազար թարգման** երբ ի **հայս՝ ի Ժգ** ամի թարգմանութեան **սրբոյն սահակայ** առն աստուծոյ որ էր նախանձախնդիր կարգաց եկեղեցոյ: Որ Ժ թիւ էր ի **սրբոյն գրիգորէ** յետ **ՃԺա** ամի անցանելոյ. յորժամ այս ամենայն հաստատեալ նորոգեցաւ հրամանաւ **սրբոյն սահակայ պարթնի** ի փառս **քրիստոսի**. ձեռամբ իմով **մովսիսի** գրչի **սահակայ**»<sup>16</sup>:

**Տեառնական և Աղօրհնէք** - «Իսկ վասն տեառնականին և աղօրհնէիցն, **սուրբն յոստո՛ւ** է արարեալ. որ չորրորդ եպիսկոպոս էր յԵրուսաղէմ յառաքելոյն **Յակոբայ**: Յերկրորդ ամէ՛ **սրբոյն սահակայ** մինչև ի **Ժգ** ամն նորին՝ կատարեցան ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ:

**Սքեմաւորի** - Իսկ զսքեմայ կարգն՝ **սուրբն դիողորոս** եպիսկոպոս պամփիւլացոց քաղաքի. յառաջին ամի իւրոյ. Հրամանաւ **մեծին անտօնի** և **բ** թեբայեցոցն. և **բ** սկիւթացոց լերինն:

**Գրակարդացի** և այլոցն: - Իսկ վասն գրակարդացի և նկարեալ եկեղեցւոյ. և վասն զնշխարս ի հանգիստ փոխելոյ. այս ամենայն յիշատակ է մեզ ի **սրբոյն գրիգորէ՛ լուսաւորչէն** մերմէ:

---

<sup>14</sup> Նույն տեղը:

<sup>15</sup> **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք հարցմանց*, էջ 482:

<sup>16</sup> **Գրիգոր Տաթևացի**, *Գիրք հարցմանց*, էջ 658:

**Երեցօրհնէք** - Իսկ վասն քահանայօրհնէիցն, **սուրբն սահա՛կ** է արարեալ. յառաջին ամի եպիսկոպոսութեան իւրոյ. ի նաւասարդի ամսեանն որ օր մի էր. և յիշատակ **սուրբ կարապետին** արար զքահանայօրհնէքն:

**Երիցաթաղն** - Եւ նոյն **զքահանայթաղէքն**, որ ունի է աւետարան և զաշխարհական թաղումն, ի **յայրարատ** գաւառի ի **վաղարշապատ** քաղաքի ի վկայարանս **սրբոյն հռիփսիմի**. յետ **Ճժա** ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն հնովն վարէին:

**Հիմնարկէք** - Իսկ վասն հիմնարկութեան սուրբ տաճարի և ժամահար օրհնելոյ. սկիհ և մաղզմայ. և զգիրք. և զկնուք առնելոյ. և խաջօրհնելոյ. և զքառասնորդաց **գ** ժամուց զքարոզքն և զաղօթսն, **յոհան մանդակունին** է արարեալ. որ **ժդ** թիւ էր ի **սրբոյն գրիգորէ»**:

Հինգ տասնյակ են կազմում բերվող **սրբերի անունները** (հաշվի առնելով, որ այստեղ և հաջորդիվ բերվող հատուկ անունները գերազանցում են ութ հարյուրը, հղումները բերվում են ոչ թե տողատակում, այլ՝ տեղում).

ՍՈՒՐԲ ԱԹԱՆԱՍ - Այլ սուրբն աթանաս որ զխորհուրդ պատարագին աւանդեաց՝ այսպէս ուսոյց: - (Գիրք հարցմանց, 599),  
ՍՈՒՐԲ ԱՐԻՍՏԱԿԷՍ - Եւ փոխանորդ իւր նստոյց յաթոռ զսուրբն արիստակէս համանման նորին առաքինութեամբ, և որդի ըստ մարմնոյ. և ապա՛ զնաց ի հոռ: - (Գիրք հարցմանց, 548),

ՍՈՒՐԲ ԲԱՍԻԼԻՈՍ - պակասին սոքա և ժողովին ի ներքոյ երկրի և լինին տանջանարանք մեղաւորաց որպէս ասէ սուրբն քասիլիոս: - (Գիրք հարցմանց, 728),

ՍՈՒՐԲ ԲԱՐՍԵՂ - Եւ սուրբն քարսեղ կեսարացի այսպէս բաշխէր ժողովրդեանն. որպէս գրեալ է ի պատմութեան նորին յունուարի ա: - (Գիրք հարցմանց, 599),

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ - Իսկ հայաստանեայ քրիստոս որպէս ուսան ի սրբոյն գրիգորէ՝ անփոփոխ կացին ի նմին: - (Գիրք հարցմանց 482),

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ - Դարձեալ՝ որպէս մի է բնութիւն բանին մարդացելոյ ըստ սրբոյն կիրողի, մի է և ներգործութիւնն ըստ սրբոյ աստուածաբանին գրիգորի և ղիոնէսիոսի: - (Գիրք հարցմանց, 174),

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ - Վեցերորդ, զի թէ կինն կարէ մկրտել ի հարկաւոր ժամանակի, սուրբն գրիգոր լուսաւորիչն քանի ևս առաւել պատուական էր քան զմի կին. - (Գիրք հարցմանց, 589),

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԻՒՍԱՅԻ - Այլ կառավարի երբեք ի կամս նախախնամութեան առաջին պատճառին. որպէս ասէ սուրբն գրիգոր նիւսացին ի գիրս որ յաղագս բնութեան մարդոյն: - (Գիրք հարցմանց, 13),

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻՍ - Եւ երրորդն յաթոռս աղուանից սրբոյն գրիգորիսի շառաւիղի նորին հսկողի: - (Գիրք հարցմանց, 544),

ՍՈՒՐԲ ԳՈՂԳՈՂԱ - Եւ ծ ամն՝ որ առ որդւով նորին կոստանդէաւ յերկնից լուսափայլեալ ի լեռնէն ձիթենեաց մինչև ի սուրբ գողգոթայ: - (Գիրք հարցմանց, 294),

ՍՈՒՐԲ ԴԷՈՍԿՈՐՈՍ ԱՂԷՔՍԱՆԴՐԱՅԻ - Եւ գլուխ ժողովոյն էր սուրբն Դեոսկորոս աղէքսանդրացի: - (Գիրք հարցմանց, 542),

ՍՈՒՐԲ ԴԻՈՂՈՐՈՍ - Իսկ զսքեմայ կարգն՝ սուրբն ղիողորոս եպիսկոպոս պամփիլացոց քաղաքի. յառաջին ամի իւրոյ. հրամանաւ մեծին անտօնի և ք թեբայեցոցն. և ք սկիւթացոց լերինն: - (Գիրք հարցմանց, 659),

ՍՈՒՐԲ ԴԻՈՆԵՍԻՈՍ - Որպէս ասէ սուրբն ղիոնէսիոս եթէ՝ (ո՛չ ըստ աստուծոյ զաստուածայինսն գործեալ. և ո՛չ ըստ մարդոյ զմարդկայինսն: - (Գիրք հարցմանց, 85),

ՍՈՒՐԲ ԵՊԻՓԱՆ - Զի յետ քրիստոսի դադարեաց սատանայ զհոգիսն ի դժոխս տանելոյ որպէս ասէ սուրբն Եպիփան: - (Գիրք հարցմանց, 153),

ՍՈՒՐԲ ԵՒԱԳՐԻՈՍ - Յորում զորոգինէի գրեալսն խոտեցին. և զսուրբն Էւագրիոս միայնակեաց՝ և զհրաշալի այրն աստուծոյ զդիդիմոս՝ նգովեցին: - (Գիրք հարցմանց, 542),

ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ - Իսկ սուրբն Էփրեմ ասէ, մետասան թիւ գտանի ի մէջ երկց աւուրցն՝ ստեղծման լուսնին: - (Գիրք հարցմանց, 191),

ՍՈՒՐԲ ԵՓՐԵՄ ԽՈՐ ԱՍՈՐԻ - զոր արարեալ է սրբոյն Էփրեմի խորին ասորոյ ի նիկոմիդացոց քաղաքին: - (Գիրք հարցմանց, 658-659),

ՍՈՒՐԲ ԹԱԴԷՈՍ - Ասեմք թէ՝ սուրբն գրիգոր ի կեսարիայ ձեռնադրեցաւ ո՛չ յայլմէ առաքելոյ, այլ ի սրբոյն Թադէոսէ՛. որոյ էր վիճակս հայոց: - (Գիրք հարցմանց, 548),

ՍՈՒՐԲ ԻՍԱՀԱԿ - Ի բ ամի թագաւորութեանն, առաքեաց սուրբն Իսահակ և ետ բերել զսերմնօրհնէքն զկալոյ և զհնձանին. - (Գիրք հարցմանց, 658),

ՍՈՒՐԲ ԻՐԻՆՈՍ - Որպէս ասէ սուրբն Իրինոս զբանս յուստիանոսի, թէ բարոք ասաց վկայն յուստիանոս եթէ՝ (մինչ ի զալուստն քրիստոսի ո՛չ իշխէր հայիոյել զաստուած, զի յո՛յս ունէր դառնալոյ ի փառս. այլ յորժամ լուաւ զպարտութիւն իւր և զարտաքսիլն ի փառաց, ապա քարացաւ ի չարութեան իմաստութեան սիրտ նորա. և անամօթաբար հայիոյէր զնա և մատնիւր յալիտենից տանջանացն): - (Գիրք հարցմանց, 153),

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱԻՈՐԻԶ - Եւ սուրբ լուսաւորիչն զոր ի ժամանակին այնմիկ էր՝ զա՛յն կարգեաց ի մերս եկեղեցի. և ունիմք հաստատապէս: - (Գիրք հարցմանց, 599),

ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԳՐԻԳՈՐ - Եւ ի հայք վասն սուրբ լուսաւորչին գրիգորի: - (Գիրք հարցմանց, 549),

ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ - Եւ բաժանեալ գտուրք տեղիս տընօրինական, ետուն գտուրք յակորն պատրիարգարան, և զգող-գորայն, և գտուրք կարապետն և զսնարսն. և արկեալ վիճակս ի վերայ յարութեանն՝ անկաւ հայոց. և տրտմեցան ոմանք յազգէ նոցա: - (Գիրք հարցմանց, 548),

ՍՈՒՐԲ ԿԻՊՐԻԱՆՈՍ - Եւ թէ որ ասիցէ, ապա զիս<sup>ո</sup>րդ նոր եկեալքն ի հաւատս՝ թողեալք զկուռս և զամենայն չար՝ լինէին քահանայք և եպիսկոպոսունք. որպէս սուրբն կիպրիանոս: - (Գիրք հարցմանց, 166),

ՍՈՒՐԲ ԿԻՊՐԻԱՆՈՍ ԿԱՐԳԵՂՈՆԱՅԻ - Իսկ զկարգ մայրօրինէից՝ սուրբն կիպրիանոս կարգեղոնացի: - (Գիրք հարցմանց, 658),

ՍՈՒՐԲ ԿԻՐԵՂ - Վասն այն ասէ սուրբն կիրել թէ (յետ անճառ միաւորութեանն որ որ որոշումն դիցէ մարդկութեանն և աստուածութեանն՝ նգովեալ եղիցի:) - (Գիրք հարցմանց, 46),

ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ կմ ՄԱՐԻԱՄ ՍՈՒՐԲ - Տասներկու՝ Բաղդատութիւն երից ծնողաց և ծննդոց. այսինքն սառայի, և մարիամու սրբոյն, և եկեղեցոյ: - (Գիրք հարցմանց, 283),

ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ - Իսկ ի կատարել զգործ ողորմութեանն՝ ո՛չ ինչ պահանջի, եթէ ոչ կամքն նորա, որպէս երևեցաւ ի մարդեղութիւն բանին աստուծոյ ի սրբոյ կուսէն մարիամայ: - (Գիրք հարցմանց, 459),

ՍՈՒՐԲ ԿՈՅՍ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ - Այլ կամ իբր զիրեշտակս, կամ որպէս ի միոյ լուսոյ բազումք, կամ կուսութեամբ ծնունդ. որպէս սուրբ կոյսն մարիամ աստուածածին սրբութեամբ և կուսութեամբ ծնեալ փոխեաց զկարգ

բնութեան ծննդեանս որ ի սերմանէ առն և կնոջ. զի սա՛ ծնունդ միայն ի մօրէ՛ : - (Գիրք հարցմանց, 280),

ՍՈՒՐԲ ՀՌԻՓՄԻՄԷ - Եւ նոյն զքահանայթաղէքն, որ ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ զաւառի ի վաղարշապատ քաղաքի ի վկայարանս սրբոյն հռիփսիմի. յետ ճժա ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն հնովն վարէին: - (Գիրք հարցմանց, 659,

ՍՈՒՐԲ ՂՈՒԿԻՈՍ - Եւ սուրբն դուկիոս սքանչելագործ և մարգարեաշնորհ, գրեաց առ մարկիանոս, թէ սուգ զգեցուցեր առաքելոց և մարգարէից. զի քակտեցեր զնոցա շինւածն. և արգելաւ հոգին սուրբ յօրհնելոյ զպատարագն և զաւագան մկրտութեան: - (Գիրք հարցմանց, 543),

ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐ - Եւ յառաջին ամին յօստոս էր հայրապետ յեմ. իսկ յերկրորդն սուրբն մակար: - (Գիրք հարցմանց, 485),

ՍՈՒՐԲ ՄԵԹՈՂԷՈՍ - Իսկ (երրորդ մասն,) ասէ սուրբն մեթոռէոս եթէ՛ զապստամբ հրեշտակս ասէ որք զթիւ երկնաւոր դասուցն սխալեցին. զի մինչ ո՛չ էին կործանեալ՝ դ կարգ էին իւրաքանչիւր դասուցն. որպէս յա՛յտ է ի չորեքկերպեան կենդանեացն: - (Գիրք հարցմանց, 152),

ՍՈՒՐԲ ՄԻԽԱՅԷԼ - Եւ լգ բիրս սպանին յուղղափառաց դասուց. որպէս յա՛յտ է ի պատմութիւնս սրբոյն միխայելի: - (Գիրք հարցմանց, 547),

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ - Եւ բաժանեալ զսուրբ տեղիս տընօրինական, ետուն զսուրբ յակոբն պատրիարգարան, և զգողգոթայն, և զսուրբ կարապետն և զսնարսն. և արկեալ վիճակս ի վերայ յարութեանն՝ անկաւ հայոց. և տրտմեցան ոմանք յազգէ նոցա: - (Գիրք հարցմանց, 548),

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ - Երրորդ՝ նշանն սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. և զեօղն արկուոի՛ ուր տնկեաց

այգի. և քաղաքն նախիջևան, ուր ինքն նոյ հանգուցեալ է ի տապանի: - (Գիրք հարցմանց, 295),

ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ - Տասներորդ՝ զի դշխոյն հեղինէ որ շինեաց գսուրք յարութիւնն յԵրուսաղէմ - (Գիրք հարցմանց, 617),

ՍՈՒՐԲ ՅՈՀԱՆ - Այսպէս սրբեաց զեկեղեցի յամենայն աղանդոյ սուրբն յոհան. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի ամէն: - (Գիրք հարցմանց, 545),

ՍՈՒՐԲ ՅՈՀԱՆ ՕԶՆԵՅԻ - Եւ սուրբն յոհան օձնեցին զեզր կաթողիկոսին և զայլոցն որք թիրեալք էին զկնի քաղկեդոնի: - (Գիրք հարցմանց, 541),

ՍՈՒՐԲ ՅՈՍՏՈՍ - Իսկ վասն տեառնականին և ադօրինէիցն, սուրբն յոստո՛ս է արարեալ. որ չորրորդ եպիսկոպոս էր յԵրուսաղէմ յառաքելոյն յակոբայ: - (Գիրք հարցմանց, 659),

ՍՈՒՐԲ ՅՈՒԹԵՒՈՍ - Դարձեալ սուրբն յոթեոս յերկրորդ գլուխ աստուածային անուանցն ասէ, (զի և բնութեամբ ի չափ եկն յաղագս մարդասիրութեան. և ճշմարտապէս էացաւ և ա՛յր եղև զերագոյնն աստուած:) - (Գիրք հարցմանց, 83),

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ - Նա՛խ՝ որպէս ասաց սուրբն ներսէս՝ քրիստոսի բնութեամբ է հայր՝ և մեզ շնորհօք: - (Գիրք հարցմանց, 516),

ՍՈՒՐԲ ՆԻՒՍՏՅԻ - Իսկ բնական երազն բաժանի ի չորս ըստ սրբոյն նիւսացոյ ի գիրս կազմութեան: - (Գիրք հարցմանց, 268),

ՍՈՒՐԲ ՊԱՐՄԱՍ - Եւ պետրոս անտիոքոս պատրիարզն և սուրբն պարսամ գրեցին ի հայք և զգուշացուցին. և նգովեցին զհաւանեալսն մարկիանոսի: - (Գիրք հարցմանց, 543),

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - Նա՛խ՝ մեծն մեսրոպ ըզկարզն ապաշխարութեան. և սուրբն սահակ զաւագ շաբաթեանն: - (Գիրք հարցմանց, 637),

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ - Երանելին մովսէս խորենացի՝ որ էր գրիչ սրբոյն սահակայ պարթևի, յետ **ՃԺ** ամի սրբոյն գրիգորի՝ եղև սկիզբն թարգմանութեան ի հայոց լեզու: - (Գիրք հարցմանց, 658),

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ - Եւ զոր նախ իմացն, ըզ ի յանսահման ծովէն, և զթարգմանչաց օրհնութիւնն, և գտուրք սարգսի օրհնութիւնն, վարդան վարդապետն: - (Գիրք հարցմանց, 638),

ՍՈՒՐԲ ՍԻՄԷՈՆ - Եւ սուրբն սիմէոն սինակեացն այրեաց զթուղթն դաւանութեանն քաղկեդոնի՝ զոր գրեալ էր թագաւորն մարկիանոս աղաչանօք առ նա՛. և նզովեաց զթղտատարն որ էր թեոդորիտոս գլուխ ժողովոյն: - (Գիրք հարցմանց, 543),

ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ - Այսպէս և ի նորս սուրբն ստեփաննոս որ եղև առաջին մարտիրոս և վկայ քրիստոսի՝ հեղլով զարիւն իւր. տեսանէր բացեալ գերկինս և զյիսուս ընդ աջմէ աստուծոյ: - (Գիրք հարցմանց, 288),

ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԻՒՆԵԱՅ - Այլ սուրբն ստեփաննոս սինեաց, և մեծն ներսէս, վասն պատուոյ՝ նախ զիսաչի տունն են ասացեալ, և ապա՛ զաստուածածնին: - (Գիրք հարցմանց, 642):

Առանձին մեծ խումբ են կազմում **տեղանուններն ու աշխարհագրական անունները.**

**ԱԹԵՆՔ** - Եւ յովսէփ փալանացի, և եզնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուան զժողովոյն և գնացին ի քաղկեդոն. զի չէր յոյժ հեռի ի ճանապարհէն որով գային ի հայս. - (Գիրք հարցմանց, 543),.

**ԱՐԱԲԻԱՅ** - Եւ է՛ ի մէջ արաբիոյ և եղումայ. զոր այժմ կոչի թիլգուրան. ուր գերեզման նորա՛ է: - (Գիրք հարցմանց, 327),.

**ԱՐԿՈՒՌԻ** - Երրորդ՝ նշանն սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. և գեղն արկուռի՝ ուր տնկեաց այգի. և քաղաքն

նախիջևան, ուր ինքն նոյ հանգուցեալ է ի տապանի: - (Գիրք հարցմանց, 295),

**ԱՓՐԻԿԷ** - Կարկեհան՝ որ կայծ կոչի. հրագո՛յն է. գտանի յափրիկէ. ի գիշերի որպէս հուր վառի: - (Գիրք հարցմանց, 348).

**ՅՈՐՄԻ** - զԹադէոս. և զԲարդուղիմէոս. և զՅուդայ յակոբեան. որ կայ ի յորմի. որ սեպհական քաղաք է հայոց: - (Գիրք հարցմանց, 549).

**ԲԱՐԻԼՈՆ** - Դարձեալ՝ յերիս ժամանակս ազատեցան ի բարիլօնէ՛. այսինքն կիրոսիւ սաղմանասարաւ. դարեհիւ զօրաբարէլ. արտաշէսի եզր դալիր և նէեմի: - (Գիրք հարցմանց, 448).

**ԲԱՔՈՒ** - Եւ ի բաքու յեզրն կազբիական ծովուն. ուստի ծծումբն զօրութեամբ ունի զհուրն: - (Գիրք հարցմանց, 208).

**ԴՎԻՆ** - Նան ի հայք ի ժողովն դվնայ հաստատեցին ի սուրբն աստուածն խաչեցար ասել ստուգապէս: - (Գիրք հարցմանց, 631).

**ԵՂՈՍ** - Եւ է՛ ի մէջ արաբիոյ և եղոմայ. զոր այժմ կոչի թիզուրան. ուր գերեզման նորա՛ է: - (Գիրք հարցմանց, 327).

**ԵՐՈՒՍՏՂԷՍ** - Իսկ խոսքով թարգմանիչ երբեք ի հայս. որ գնացեալ էր յերուսաղէմ հրամանաւ սրբոյն սահակայ: - (Գիրք հարցմանց, 658).

**ԹԷՈՂՈՒՊՕԼԻՍ** - Երկրորդն է ժողովն թեղուպօլսի, որ այժմ կոչի կարնոյ քաղաք. ո՛չ այն զոր յետոյ հերակլ քաղկեդոնիկ ժողովեաց և խաբեաց զեզր կաթուղիկոսն հայոց: - (Գիրք հարցմանց, 544).

**ԹԻԼԳՈՒՐԱՆ** - Եւ է՛ ի մէջ արաբիոյ և եղոմայ. զոր այժմ կոչի թիզուրան. ուր գերեզման նորա՛ է: - (Գիրք հարցմանց, 327).

**ԻՍՐԱՅԷԼ** - Ասեն ոմանք թէ **Ժ** ցեղքն իսրայէլի որ փակեցան ի մէջ լերանցն կասբից, - (Գիրք հարցմանց, 708).

**ԿԱԳԻՍԱ** - Եւ մին յորժամ զլրտեսքն առաքեցին ի կագիսա, և իս օր յամեցին և մովսէս զիս պահեաց: - (Գիրք հարցմանց, 353).

**ԿԱԶԲԻԱԿԱՆ ԾՈՎ** - Եւ ի բաքու յեզրն կազբիական ծովուն. ուստի ծծումբն զօրութեամբ ունի զհուրն: - (Գիրք հարցմանց, 208).

**ԿԱՍԲԻՑ (ԼԵՌՆԵՐ)** - Ասէն ոմանք թէ ժ ցեղքն իսրայելի որ փակեցան ի մէջ լերանցն կասբից, - (Գիրք հարցմանց, 708).

**ԿԱՍԲԻՑ ԾՈՎ** - Յասպիս՝ նմա՛ն է զըմբիստի դեղնագոյն. գտանի յեզեր թորքումէտոս գետոյ յեզր կասբից ծովու: - (Գիրք հարցմանց, 348).

**ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ** - Մետրոփանոս կոստանդնուպօլսի Աղէքսանդրոս աղէքսանդրու: - (Գիրք հարցմանց, 542).

**ԿՈՐԴԻԱՅ ԼԵԱՌՆ** - Ասէն թէ՛ գոն ա՛յլ հոմանուն մասիս և արարատ. որպէս կորդուաց լեառն և ի պաղէստին և ի գամիրս: - (Գիրք հարցմանց, 294).

**ՀԱՅՔ** - Եւ Արջևան և Կորիւն թարգմանիչք բերին ի Հայս: - (Գիրք հարցմանց, 658). Իսկ յովսէփ և եգնակ եկեալք ի Հայս պատմեցին զամենայն ստուգութեամբ: - (Գիրք հարցմանց, 543). Եւ յովսէփ փալանացի, և եգնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուան զժողովոյն և գնացին ի քաղկեդոն. զի չէր յոյժ հեռի ի ճանապարհէն որով գային ի Հայս. - (Գիրք հարցմանց, 543).

**ՄԱՄԵՍՏԻԱ** - Եւ վկայ այսոցիկ ի մամեստիայ գտեալ քարն. յորում գրեալ էր յունարէն գրով, (սուրբ աստուած սուրբ և հօգօր սուրբ և անմահ որ խաչեցար վասն մեր ողորմեա՛ մեզ): - (Գիրք հարցմանց, 632).

**ՄԱՆԱԶԿԵՐՏ** - Չորրորդ՝ մեծ և արժանաւոր ժողովն եղև ի մանագկերտ. ի **Ճիդ** թուականին. հրամանաւ և արդեամբք զիտնաւոր և մեծ իմաստասիրին սրբոյն յոհաննու կաթողիկո-

սին հայոց օձնեցոյ: - (Գիրք հարցմանց, 545).

**ՄԾԲԻՆ** - Երբորդ՝ նշանն սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. և գեղոն\_արկուռի՝ ուր տնկեաց այգի. և քաղաքն նախիջևան, ուր ինքն նոյ հանգուցեալ է ի տապանի: - (Գիրք հարցմանց, 295).

**ՆԻԿԻԱՅ** - Առաջին ժողովն եղև ի նիկիայ սրբոց հարց. զկնի յԺը՝ կամ յԼ ամի ծննդեանն քրիստոսի. և ի **ի** ամի թագաւորութեանն կոստանդիանոսի: - (Գիրք հարցմանց, 542).

**ՄԱՂԻՄ** - Հօրն անունն մելքի, և մօրն սաղա. և քաղաքին սաղիմ: - (Գիրք հարցմանց, 300):

**(ՍՈՒՐԲ) ԳՈՂԳՈՂԱՅ** - Եւ **ծ** ամն՝ որ առ որդւով նորին կոստանդեաւ յերկնից լուսափայլեալ ի լեռնէն ձիթենեաց մինչև ի սուրբ գողգոթայ: - (Գիրք հարցմանց, 294).

**(ՍՈՒՐԲ) ԿԱՐԱՊԵՏ** (եկեղեցի) - Եւ բաժանեալ գտուրբ տեղիս տնօրինական, ետուն գտուրբ յակոբն պատրիարգարան, և զգողգոթայն, և գտուրբ կարապետն և զսնարսն. և արկեալ վիճակս ի վերայ յարութեանն՝ անկաւ հայոց. և տրտմեցան ոմանք յազգէ նոցա: - (Գիրք հարցմանց, 548).

**(ՍՈՒՐԲ) ՅԱՐՈՒԹԻՒՆ** (եկեղեցի) - Տասներորդ՝ զի դշխոյն հեղինէ որ շինեաց գտուրբ յարութիւնն յԵրուսաղէմ: - (Գիրք հարցմանց, 617).

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ** - Եւ նոյն զքահանայթաղէքն, որ ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ գաւառի ի վաղարշապատ քաղաքի վկայարանս սրբոյն հռիփսիմի. յետ **ճժա** ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն հնովն վարեին: - (Գիրք հարցմանց, 659).

**ՎԱՐՍԳ** - Տասներորդ խաչի **դ** տօնն. զոր ի սուրբ խաչին է. և երևմանն. և վարագայ խաչին. և խաչգիւտն: - (Գիրք հարցմանց, 649).

**ՏԱՐՕՆ** - Գրիգոր մագիստրոսն ի տարօն եկեղեցի է շինեալ. և

ծախիւք պատկեր բերեալ և անդ եղեալ: - (Գիրք հարցմանց, 639)  
**(ՔԱՂԱՔ) ԲԵԹԱՆԻԱՅ** - Վասն այն եհան զաշակերտոսն արտաքոյ քաղաքին բերանիոյ: - (Գիրք հարցմանց, 519).

**(ՔԱՂԱՔ) ԵՐՈՒՍԱՂԷՄ** - Զի արտաքոյ երկնային քաղաքին երուսաղէմի է՝ տանջանաց տեղի, ուր մեղաւորքն ժողովին: - (Գիրք հարցմանց, 748).

**(ՔԱՂԱՔ) ՆԱՄԻՋԵՒԱՆ** - Երրորդ՝ նշանն սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. և գեօղն արկուռի՝ ուր տնկեաց այգի. և քաղաքն նախիջնան, ուր ինքն նոյ հանգուցեալ է ի տապանի: - (Գիրք հարցմանց, 295).

**ՔԱՂԿԵՂՈՆ** - Եւ զայլ ամենայն որպիսութիւն չար ժողովոյն քաղկեդոնի գտցես ի պատմագիրս միխայելի: - (Գիրք հարցմանց, 543)

**ՓԵԳՈՎՐԱՅ** - Փեգովքայ տեղի՝ էր կոռց. և դևքն չտային թոյլ թաղել զմարմինն, մինչև սաստեաց միքայել հրեշտակապետն ասելով, (սաստեացէ՝ ի քեզ տէր.) որպէս յա՛յտ է ի կաթուղիկէից վերջին թուղթն: - (Գիրք հարցմանց, 409).

**ՓԻՍՈՆ ԳԵՏ** - Զմրուխտ. կանա՛չ է և դեղնագոյն. գտանի ի փիստն գետ. Ղևի՛ է և Յոհաննէս: - (Գիրք հարցմանց, 348):

Գալով հաճախականությանը, ապա ոչ անսպասելիորեն «Գիրք հարցմանց»-ի հատուկ անունների մեջ ամենամեծ հաճախականությունն ունի «**Քրիստոս**» անունը, որ հանդիպում է 1168 անգամ:

Բերում ենք «Գիրք հարցմանց»-ի հատուկ անունների ամբողջական ցանկը՝ հաշվի առնելով, որ դրանք հեղինակի կողմից բերվում են հարուստ պատմական տեղեկությունների միջավայրում՝ այդպիսով ձեռք բերելով **աղբյուրագիտական արժեք**, մյուս կողմից, սա կարող է դիտարկվել իբրև առանձնացված անձնանունների բառարան և լինել երբևիցե

հրատարակված **անձնանունների** **բառարանների** **շարքի**  
**համալրում:**

## ՑԱՆԿ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ

**ԱԲԳԱՐ** - Դարձեալ ասեմք թէ զիա՞րդ յետին. զի աբգաբ թագաւորն հայոց նախ քան զիսաշն հաւատաց ի քրիստոս և երանեցաւ ի նմանէ: - (Գիրք հարցմանց, 549).

**ԱԲԴԻՈՒ** - Ամովս: Միքիա: Յովէլ: Աբդիու: Յովնան: Նաուում: Ամբակում: - (Գիրք հարցմանց, 450).

**ԱԲՂՈՆ** - Երկոտասաներորդն Աբղոն որդի ելեքայ փարաթոնացի ամս ք: - (Գիրք հարցմանց, 420).

**ԱԲԵՍԵԱ** - Դաւթի **գ** արք անւանիք, և աբեսեա չորրորդ ընդ նոսա. **գ** աւետարանիչքն, և յոհաննէս որդի սողոմեայ: - (Գիրք հարցմանց, 438).

**ԱԲԷԼ** - Իսկ զփոխարէն պարգևսն զոր ընկալաւ, Վասն առաջնոյն՝ զի ասէ զիր, (հայեցաւ,) այսինքն հաճեցաւ աստուած ի հաբէլ: - (Գիրք հարցմանց, 286).

**ԱԲԷՆ** - Սա՛ սպան զսիսարա և գաբէն ի ձորն կիսոնի. և այլազգիքն ամս է: - (Գիրք հարցմանց, 420).

**ԱԲԻԱ** - Թագաւորք յուդայ նստան յերուսաղէմ. Ռոբովամ. Աբիա. Ասափ. և այլ թագաւորք **իբ**: - (Գիրք հարցմանց, 446).

**ԱԲԻԱԹԱՐ** - Աբիաթաբ որդի է աքիմէլեքայ. որդւոյ աքիտովբայ. որդւոյ փենէհէսի. որդւոյ հեղեայ: - (Գիրք հարցմանց, 427).

**ԱԲԻԼԴՈՍ** - Եւ հայրապետք էին անդ ....Աբիլիդոս հռովմայ: - (Գիրք հարցմանց, 543).

**ԱԲԻՍԵԼԻՔ** - Երրորդ՝ զի առ աբիմէլէք նոյնպէս եղև. և որպէս յեզիպտոս գորտն. նոյնպէս և անդ մուկն: - (Գիրք հարցմանց, 426),

**ԱԲԻՈՒԴ** - Եւ եղև քոյր սորա եղիսաբէթ կին ահարօնի քահանայի. յորմէ ծնաւ նաբաթ և աբիուդ. եղիազար և իթամար քահանայք: - (Գիրք հարցմանց, 452),

**ԱԲԻՍԱԿ** - Վասն է՞ր ոչ գիտաց զաբիսակ: - (Գիրք հարցմանց, 479).

**ԱԲԻՍՈՂՈՄ** - Դաւիթ յետ յերկուց ամաց ետես զաբիստդով. և տէրն զմեղաւորս յետ ապաշխարութեան հոգւոյ և մարմնոյ. (Գիրք հարցմանց, 438).

**ԱԲԻՐՈՆ** - Երրորդ՝ կրեցին զանէծքն դադան և աբիրոն: - (Գիրք հարցմանց, 479).

**ԱԲՐԱՀԱՄ** - Եւ դարձեալ վկայէ՛ առաքեալն թէ՛ (որ աբրահամիւ խոստացաւ յետ պատարագելոյ որդւոյն իսահակայ, յանձն իմ երդնում ասէ՛) զոր ինչ խոստացաւ նմա: - (Գիրք հարցմանց, 40).

**ԱԳԱԳ** - Նա՛խ՝ զի վրէժխնդիր եղև օրինացն աստուծոյ. որպէս փենէհեզ սպան զգամբրի և զքասբի. և սամուէլ զագագ: - (Գիրք հարցմանց, 444).

**ԱԳԱԹԱՆԳԵՂ** - Եւ յա՛յտ է զի ագաթանգեղ, (յայնժամ լուաւ տրդատ եթէ հաւատաց ի քրիստոս կոստանդիանոս որդին կոստայ: - (Գիրք հարցմանց, 549).

**ԱԳԱԹՈՆ** - Արար զ երորդ ժողով՝ ագաթոն պապն հոսմայ. ի թագաւորութեան հօրն յուստիանու ի կոստանդնուպօլիս: - (Գիրք հարցմանց, 543).

**ԱՂԱՄ** - Նախ՝ փչեաց ի յաղամ շունչ կենդանի և եղև: - (Գիրք հարցմանց, 50).

**ԱՂԴԱ** - Զի ասեն թէ՛ այր և երիտասարդն զոր սպան դամեք և էառ զկանայս նոցա. աղդա և սելլա, նոքա եղբա՛րք էին ենովքայ արդարոյ: - (Գիրք հարցմանց, 290).

**ԱՂԴԷ** - Որպէս Թադէոս ի հայք զաղդէ և զթէոփիլոս: - (Գիրք հարցմանց, 546).

**ԱՂՈՆԻԱ** - Երեքտասաներորդ՝ զառաջին մեղքն եթող զադոնիայ, և յերկրորդին սպան: - (Գիրք հարցմանց, 481.)

**ԱՂԻԱՆՈՍ** - Եւ հայրապետք էին անդ, ...Աղիանոս հռոմայ: - (Գիրք հարցմանց, 544).

**ԱՂԻՆԱՅ** - Չորրորդ՝ օրինեաց գնախաստեղծքն ի լերինն աղինայ և ասէ (աճեցէք և բազմացարուք և լցէք գերկիր:)- (Գիրք հարցմանց, 319).

**ԱՂՈՆԻԷԼ** - Ութերորդ՝ աղոնիէլ. տեառն իմոյ աստուծոյ: - (Գիրք հարցմանց, 144).

**ԱՂՐԻԱԶԱՐ** - Վաթսուներորդ, մարտեաւ ընդ աղրիազարու և սպան գնա և քակեաց զկառս նորա, և զթագն եղ ի գլուխ իւր: - (Գիրք հարցմանց, 438).

**ԱՂՕՆԻԱ** - Եւ ի ձախն, Աղօնիա՝ տէր տէրանց ընդ մեզ: - (Գիրք հարցմանց, 338).

**ԱԶԱՐԻԱ** - Վասն առաջնոյն ասէ՝ (զարթի՛ր փառք իմ.) ի բարիւն տալով մեզ զմիսայէլ, զանանիա, և զազարիա: - (Գիրք հարցմանց, 28).

**ԱԶԵՐԱ** - Անունք Կանանց Նահապետացն.... Սեթայն ազերա՝: - (Գիրք հարցմանց, 299).

**ԱԶՈՎՐ** - Իսկ ըստ ազգաբանութեանն Մատթէի, ծնանի ...Ազովր լր: - (Գիրք հարցմանց, 453).

**ԱԹԱՆԱՍ** - Եւ սուրբն կիրեղ և աթանաս ասեն, (մի՛ է բնութիւն բանին աստուծոյ մարմնացելոյ:)- (Գիրք հարցմանց, 79).

**ԱԹԵՆՔ** - Եւ յովսէփ փալանացի, և եզնակ կողբացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուան զժողովոյն և գնացին ի քաղկեդոն. զի չէր յոյժ հեռի ի ճանապարհէն որով գային ի հայս: - (Գիրք հարցմանց, 543).

**ԱԼՂԵՐԱ** - Քսաննքերորդ՝ ասէ ալպերա վարդապետն ձեր թէ՛ (քրիստոս էր համանգամայն ճանապարհորդ և ըմբռնօղ ի կէտ յղութեանն իւրոյ:)- (Գիրք հարցմանց, 100).

**ԱԼՊԵՐՏ** - Նախ՝ է վկայություն անդուստ իսկ թշնամեացն. քանզի ասէ ալպէրտն ի յառաջին գիրքն **Ժա** համարին, թէ հոգի ասեմ սրբութեան. արիւն փրկութեան. և ջուր լուացման: - (Գիրք հարցմանց, 594).

**ԱԼՓԵԱՆ** - Ասաց յակորոս ալփեան: - (Գիրք հարցմանց, 573).

**ԱԿԻՏՈՓԷԼ** - Նախ բնական խելքն. որ ի բարեխառն կազմուածոյ հանդիպի. որպէս էր՝ ակիտոփելին և քուսեայ բարեկամին դաւթի: - (Գիրք հարցմանց, 537).

**ԱՀԱՐՕՆ** - Եօթնեւթ, մովսէս մի անգամ պատարագեաց և ետ ցահարօն և ցորդիսն: - (Գիրք հարցմանց, 329).

**ԱՂԷՔՍԱՆԴ** - Մետրոփանոս կոստանդնուպօլսի Աղէքսանդրոս աղէքսանդրոս: - (Գիրք հարցմանց, 542).

**ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ** - Այլ և ծանի՛ր գայս: Զի **դ** գլխաւորագոյն արոռք կարգեցան ընդ բոլոր տիեզերս վասն չորից աւետարանչացն: ...Յաղէքսանդրիայ վասն մարկոսի: - (Գիրք հարցմանց, 549).

**ԱՂԷՔՍԱՆԴ ՄԱԿԵՂՈՆԱՅԻ** - Ի սաղովկայ առաջին ամին՝ Աղէքսանդր մակեդոնացի: - (Գիրք հարցմանց, 453).

**ԱՂԷՔՍԱՆԴՐՈՍ** - Մետրոփանոս կոստանդնուպօլսի Աղէքսանդրոս աղէքսանդրոս: - 542. (Գիրք հարցմանց, 542).

**ԱՍԱՂԷԿ** - Դաւիթ եհար գամաղէկ որ գերեաց զիրեայս և զայլազգիս. և տէր մեր եհար զգերիչն հրէից և հեթանոսաց: - (Գիրք հարցմանց, 437).

**ԱՍԲԱԿՈՒՄ** - Ասեմք թէ՛ յիրաւի, որովհետն երևեցաւ տէր մեր ի փրկութիւն ընտրելոց ըստ ամբակումայ, նախահայրն յաւիտեան. իսկ այլք ազատեցան ժամանակեայ: - (Գիրք հարցմանց, 777).

**ԱՄԵՆԵՄ** - Չորրորդն Բարակ. որդի ամենեմայ ի կեղեւայ նեփթաղէմի ամս **իւ**: - (Գիրք հարցմանց, 420).

**ԱՄԵՍԻԱ** - Զչորքս զայս՝ Զոքոզիա և Զգոդոդիա մայրն, և Զյովաս և Զամեսիա ո՛չ գրէ յազգահամարսն աւետարանիչն վասն լինելոյ դուստր և թոռունք եզաբելի: - (Գիրք հարցմանց, 452).

**ԱՄԻՆԱԴԱԲ** - Որպէս ահարօն ունէր զդուստրն ամինադաբայ՝ զքոյրն նայաստնի իշխանին յուդայ: - (Գիրք հարցմանց, 461).

**ԱՍՈՆ** - Վասն որոյ յետոյ տրտմի և նեղի. ատէ՛ զպատճառ մեղացն և դառնայ ինքեան. որպէս ամոնի եղև: - (Գիրք հարցմանց, 558).

**ԱՍՈՎՍ** - Ռորովամ թագաւորէ՛ յերուսաղէմ ամս **Ժ**: ...Ամովս ամս **Ժբ**: - (Գիրք հարցմանց, 453).

**ԱՍՈՒՐ** - Նոյնպէս և սատանայ աներևոյթ մօտ՝ ի մարդն երթալ. թէ ամուր է հաւատն և կամքն՝ ո՛չ կենայ անդ, յուսահատի և թողու: - (Գիրք հարցմանց, 161).

**ԱՄԲԱՄ** - Հայրն մովսէսի ամբա՛մ է և մայրն յոքաբեր: - (Գիրք հարցմանց, 330).

**ԱՅՐԱՐԱՍ** - Եւ նոյն զքահանայթաղէքն, որ ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրաբատ գաւառի ի վաղարշապատ քաղաքի ի վկայարանս սրբոյն հոռիփսիմի. յետ **ՃԺա** ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն հնովն վարեին: - 659. (Գիրք հարցմանց, 659).

**ԱՆԱԹ** - Երրորդն Սամէգար. որդի անաթայ. որ մաճիւն **n** այր եսպան՝ ամս **դ**. և Դեբովրա ամս **ե** ընդ այլազգեացն: - (Գիրք հարցմանց, 420).

**ԱՆԱՅԷԼ** - Զորրորդ՝ անայել. որ է լրումն աստուծոյ: - (Գիրք հարցմանց, 144).

**ԱՆԱՆԻԱ** - Զայս ամենայն ոմանք անանիայի տան. և ոմանք խորենացոյն: - (Գիրք հարցմանց, 637).

**ԱՆԱՆԻԱ (ԴԱՄՍԱՍԿԱՅԻ)** - Եւ որպէս ասէ կղէմ և անանիա

դամասկացի, թե **զ** գիրք այլ ընկալաք յեկեղեցի: - (Գիրք հարցմանց, 450).

**ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿՈՒՆԻ (ՇԻՐԱԿԱՅԻ)** - Իսկ այլք ասեն թե անանիա շիրակունին է ասացեալ: - (Գիրք հարցմանց, 637).

**ԱՆԱՆԻԱՍ** - Անանիաս, Եղիազար փողովք երգէին: - (Գիրք հարցմանց, 641).

**ԱՆԱՍՏԱՍ** - ... որ եզր եղև հաւատոյ ուղղութեան. և հրամանաւ հերակլի հաւանեցաւ ժողովոյն քաղկեդոնի. կացեալ **զ** կաթողիկոսք նոյն աղանդովն որ են այսոքիկ. Եզր. Մովսէս. Անաստաս. Իսրայէլ. Սահակ. Եղիա: - (Գիրք հարցմանց, 545).

**ԱՆԱՏՈԼ** - ... և զթեոդորիտոս եղին գլուխ ժողովոյն վասն մարդահաճութեան թագուհոյն և թագաւորին. և զդէոսկորոս հայրապետն աղէքսանդրոս, և զպետրոս անտիոքոս, և զտիմոթէոս և զանաստօլ, և զայլս բագումս խոտեցին. և վկայեցին նոքա ճշմարտութեան: - (Գիրք հարցմանց, 543).

**ԱՆԳԷ** - Անգէ: Զաքարիա: Մաղաքիա: Երեմիա: Բարուք: Ողբք: Դանիէլ: Եզեկիէլ: - (Գիրք հարցմանց, 450).

**ԱՆԴԷ ՄԵԿՆԻՉ** - Ասեմք ըստ սրբոյն անդրէի մեկնչի` եթէ սուրբքն զաշխարհի վախճան խնդրեցին. որոց ցուցանէ զպատճառս երկայն մտելոյն. - (Գիրք հարցմանց, 696).

**ԱՆԴՐԷԱՍ** - Ասաց զայս անդրէաս: - (Գիրք հարցմանց, 573).

**ԱՆԹԷՎԻՈՍ** - Եւ յունարէն անթէվիոս. այսինքն հակառակ: - (Գիրք հարցմանց, 707).

**ԱՆՆԱ** - ... իսկ Աննա ամուսնացաւ ի զալիլեայ ընդ յովակիմայ. և ծնաւ զաստուածածինն մարիամ ի պրոպատիկէ ի տունն յովակիմայ. և անտի տարեալ եղև ի տաճարն տեառն: - (Գիրք հարցմանց, 460).

**ԱՆՏԻՈՔ** - Յոհան անտիոքայ` թղթով միաբանեալ. **բճ** հարք ընդդէմ նեստորի որ **բ** բնութիւն ասէր և **բ** որդի. կրկին կամք և

կրկին ներգործութիւն քրիստոսի. և զաստուածածինն մարդածին: - (Գիրք հարցմանց, 542).

**ԱՆՏՈՆ** - Որպէս եղիայի. պօղի և անտոնի. և մերոյ լուսաւորչին Գրիգորի: - (Գիրք հարցմանց, 220).

**ԱՊ** - Իսկ իար, որ է Նոյ արդար. Սիւան, սեմ. Թամուզ. թարա. Ապ, արբահամ: - (Գիրք հարցմանց, 200).

**ԱՊԵԼԻՕՂ** - Իսկ միջինն Ապելիօղ. բարեխառն. անձրև, և արև: - (Գիրք հարցմանց, 205).

**ԱՊԵԼԻՈՍ** - Ապելիօս. այս՝ ապողո՛ն է: - (Գիրք հարցմանց, 201).

**ԱՊՕՂԻՍԱՐ** - Եւ հայրապետք էին անդ,... Ապօղինաք աղէք-սանդրացի: - (Գիրք հարցմանց, 543).

**ԱՍՍՅԷԼ** - Ասայէլ ընթացիւք: - 434. (Գիրք հարցմանց, 434). Կամ թէ արագ որպէս ասայէլ որ հասնէր այծեման: - (Գիրք հարցմանց, 761).

**ԱՍՍՓ** - .... որպէս յա՛յտ է ի սաղմոսն ասսփայ և կորիսայ և այլոցն. - (Գիրք հարցմանց, 636).

**ԱՍԵՐ** - Դան. Ասեր. և Նեփթաղիմ. **ժե** բիր և **ռո** զօրք նոցա: - (Գիրք հարցմանց, 378).

**ԱՍԻԱ** - Կամ ունէիր իշխանութիւն որպէս աղէքսանդրոս. որ զասիա զերոպիա և զլիբիա ընդ իշխանութեամբ էարկ: - (Գիրք հարցմանց, 761).

**ԱՍՈՐԵՍՏԱՆ** - ...և փակէի արքայի որդւոյ ռոմէլայ. և զերեաց զնեփթաղիմ և զգալիլեա. և Զգաղայաթ **զ** ցեղիւքն իսրայէլի. և տարաւ յերկիրն ասորեստանեայց: - 447. (Գիրք հարցմանց, 447).

**ԱՏՈՄ** - Ի խնդրոյ ումեմն բանասիրի Ատոմի ուղղափառի: - (Գիրք հարցմանց, 772). Ատոմ խնդրօղն գրքոյս - (Գիրք հարցմանց, 794).

**ԱՏՈՒՐ** - Ոմանք **դ** ասեն. և անւանս թուեն, Ատուր, Թատուր, Գատուր, Սատնատուր: - (Գիրք հարցմանց, 495).

**ԱՐԱ** - Որպես ասեն զշամիրամէ թէ՛ յորժամ սպանաւ աքա ի պատերազմին, զայլ ոմն նման նորին պատուեաց և ասաց թէ աստուածքն յարուցին: - (Գիրք հարցմանց, 238).

**ԱՐԱԲԻԱ** - Ոմանք զսիօն ասեն, և այլք զեղոմ, և այլք գաքաքիա. որ և անդ ասեն և այլք զգերեզման նորա լինիլ: - (Գիրք հարցմանց, 327).

**ԱՐԱՄ** - Աքամ ամաց **խէ՛** ծնանի զամինադաբ: - (Գիրք հարցմանց, 452).

**ԱՐԱՐԱՍ** - Վեցերորդ՝ տապանն նոյի յարարատ ի լեառն մասիս: - (Գիրք հարցմանց, 555).

**ԱՐԳԵՍԷՍ** - Որ մերձ ի հիւսիս է, Արգեստէս կոչի. կազմէ սա զամպս: - (Գիրք հարցմանց, 205).

**ԱՐԵԳԻ** - Արեգի. որպէս թէ յառնեն բոյսք և բանջարք աստուածային հրամանաւ: - 201.

**ԱՐԷՍ** - Եւ գԱրեսին՝ երեքշաբթի: - (Գիրք հարցմանց, 190).

**ԱՐԻՈՍ** - Դարձեալ ընդդէմ այնոցիկ որք արարած ասեն զբանն աստուծոյ և զհոգին. որպէս արիոս. և մակեդոն. և հրէայք. և այլք: - (Գիրք հարցմանց, 55).

**ԱՐԻՍՊԱԳԱՅԻ** - Գիրք դիոնիսեայ արիսպագացոյ: - (Գիրք հարցմանց, 450-451).

**ԱՐԻՍՏԱԿԷՍ** - Եւ Պատրիարքունք էին անդ, Արիստակէս հայոց: - (Գիրք հարցմանց, 542).

**ԱՐԻՍՏՈՏԷԼ** - Իսկ բանին արիստոտէլի՛ թէ ի հակասութեանց մի կողմն ճշմարիտ է, այսինքն կամ ստորաստութիւնն կամ բացասութիւնն: - (Գիրք հարցմանց, 9).

**ԱՐՇԱԿՈՒՆԻ** - Ուստի բազմացեալ լցին զարեւելս ի պալի. յորմէ թագաւորք պարսից և հայոց արշակունիք կոչեցեալ: - (Գիրք հարցմանց, 330).

**ԱՐՇՈՒՐ** - Իսկ այլ ոմանք թուեն զեօթներորդն դանիէլի ի դարե-

հի որդւոյ արշուրեայ առաջին ամէն. յորում գտեսիլն ետես մարգարէն. մինչն ի ծնունդն քրիստոսի ամբ **նձգ**: - (Գիրք հարցմանց, 449).

**ԱՐՋԵԻԱՆ** - Եւ արջնան և կորին թարգմանիչք բերին ի հայս: - (Գիրք հարցմանց, 658).

**ԱՐՏԱՇԷՍ** - Դարձեալ՝ յերիս ժամանակս ազատեցան ի բաբի-լօնէ, այսինքն կիրոսի սաղմանասարաւ. դարեհի գորաբաբէլ. արտաշէսի եզր դալիր և նէեմի: - 448. (Գիրք հարցմանց, 448).

**ԱՐՏԵՍՈՆ** - Եւ էր արտեմոնս այս զկնի առաքելոցն **բճ** ամաւ սուղ ինչ պակաս: - (Գիրք հարցմանց, 482).

**ԱՐՓԱՔՍԱԹ** - Վասն զի զկայնան որդի արփարսաթայ և հայր սաղայի **ճ** և **ի** ամ ի թիւ առնու: - (Գիրք հարցմանց, 411).

**ԱՐՔԵՂԱՅՈՍ** - Բայց արքեղայոս դարձեալ մաքրեաց զամենայն որ ուսաւ ի ծովային կենդանեաց: - (Գիրք հարցմանց, 640).

**ԱԻՈՎԴ** - Երկրորդն Աւովդ. յերկուց ձեռաց յաջողակ եմինացի յեփրեմայ ամս **ձ**. և այլազգիքն ամս **ի**: - (Գիրք հարցմանց, 420).

**ԱՓՐԻԿԷ** - Կարկեհան՝ որ կայծ կոչի. հրագո՛յն է. գտանի յԱփրիկէ. ի գիշերի որպէս հուր վառի: - (Գիրք հարցմանց, 348).

**ԱՓՐՈՂԻՏԷ** - Չափրողիտեայն՝ ուրբաթ: - (Գիրք հարցմանց, 190).

**ԱՔԱՋ** - Եւ յետ հնգետասան ամի յաւուրս աքագու՝ ել թագ դաթ-փաղսար արքայ ասորեստանի ի վերայ իսրայէլի: - (Գիրք հարցմանց, 446-447).

**ԱՔԱՐ** - Աքար զարմեան և սաւուղ կիսեան և յուդա սիմոնեան մեղայ ասելով ո՛չ արդարացան: - (Գիրք հարցմանց, 415).

**ԱՔԻԼԵԻՍ** - Ապա աքիլէս, զատուցանէ՛ զկողմն երկրորդ ձայնին որ կոչի աւագ կողմն: - (Գիրք հարցմանց, 640).

**ԱՔԻՄԵԼԷՔ** - Կամ զի աքիմէլէք **զճ** քահանայիւք սպանաւ ի սաւուղայ. և արքաթար փախեաւ առ դաւիթ և ընդ նմա՛ էր

զամենայն աւուրս թագաւորութեան նորա. և յանուանէ զնա՝  
յիշէ: - (Գիրք հարցմանց, 427).

**ԱՔԻՆ** - Ռոբովամ թագաւորէ՛ յերուսաղէմ ամս **Ժէ**: ...Աքին՝ **լր**: -  
(Գիրք հարցմանց, 453).

**ԱՔԻՏՈՎԲ** - Աբիաթար որդի է աքիմէլէքայ. որդւոյ աքիտովքայ.  
որդւոյ փենէհէսի. որդւոյ հեղեայ: - (Գիրք հարցմանց, 427).

**ԲԱԲԻԼՈՆ** - Յակիմթ. կարմիր է. գտանի առ բաբիլոնիւ: - (Գիրք  
հարցմանց, 348).

**ԲԱՀԱՂ** - ...վասն այն ո՛չ կոչին ճշմարիտ մարգարէ պարգաբար.  
այլ բաղադրեալ. որպէս մարգարէ բահադու. կամ մարգարէ  
բարձանց կամ անտառին: - (Գիրք հարցմանց, 536).

**ԲԱՂԱՍՍ** - Բաղաամ մոգ էր և կախարդ. և սովոր էր ընդ դևս  
խօսիլ. վասն որոյ յառաջեաց աստուած և խօսեցաւ: - (Գիրք  
հարցմանց, 387).

**ԲԱՂԱՍ** - Վաթսունևոյ, Վասն բաղամ մոգին. նգովք և անէծք: -  
(Գիրք հարցմանց, 285).

**ԲԱՂԴԱՏ** - Ոմանք ասեն թէ՛ բարեկամքն իւր որ էին յազգէն  
եսաւայ ելիփագ. սովփար. և բաղդատ. որք եկին մխիթարել զնա  
ի վշտացն, նոքա գրեցին. որպէս ինքն ասէր, (ո՛ տայր ինձ գրել  
զբանս իմ յիշատակ յաւիտենից:) - (Գիրք հարցմանց, 320).

**ԲԱՆԷԱՍ** - Բանէաս Մանէոն և այլքն քնարօք երգէին: - (Գիրք  
հարցմանց, 641).

**ԲԱՌԱՔ** - Անունք Կանանց Նահապետացն.... Յարեղին  
բառաքա: - (Գիրք հարցմանց, 299).

**ԲԱՌՆԱԲԱՍ** - Եւ որոշօղ. (որոշեցէք զպօղոս և զբառնաբաս:) -  
(Գիրք հարցմանց, 52).

**ԲԱՄԵՄԱԹ** - Եւ էր յազգէն եսաւայ ի կնոջէն բասեմաթայ՝  
դստեր իսմայէլի. և եերորդ ծնունդ էր յաբրահամէ: - (Գիրք  
հարցմանց, 320).

**ԲԱՍԻԼԻՈՍ** - Այլ որք ուղիղ դատեցան վարդապետք եկեղեցւոյ ըստ տեսլեանն յօհաննու. որպէս մեծն անդրէաս և համախոհք նմին սուրբն իրինոս, եպիփան, և բասիլիոս: - (Գիրք հարցմանց, 687).

**ԲԱՐՄԿ** - Կշտերն բարակ՝ խորագէտ է: - (Գիրք հարցմանց, 247).

**ԲԱՐՍՔԻԷԼ** - Եօթներորդ բարաքիէլ. սկիզբն աստուածայնոյ: - (Գիրք հարցմանց, 144).

**ԲԱՐԴՈՒՂԻՍԷՈՍ** - զԹադէոս. և զԲարդուղիմէոս. և զՅուդայ յակոբեան. որ կայ ի յորմի. որ սեպիական քաղաք է հայոց: - (Գիրք հարցմանց, 549).

**ԲԱՐՈՒՔ** - Որպէս ասէ բարուք (ո՛վ իսրայել որպէս զի մեծ է տունն աստուծոյ և ընդարձակ տեղի ստացուածոյ նորա:) - (Գիրք հարցմանց, 763).

**ՅՈՎՆԱՆ** - Ամովս: Միքիա: Յովէլ: Աբդիու: Յովնան: Նաւուս: Ամբակում: - (Գիրք հարցմանց, 450).

**ՅՈՎՍԱԲԵԹ** - Այլ և յովսաբէթ դո՛ւսոր է յովրամայ և զողողիայ և քոյր որոգիայ: - (Գիրք հարցմանց, 452.).

**ՅՈՎՍԱԳԱԹ** - Ուր ինքն տէրն խաչեցաւ և յարեաւ. և սոքա ամենեքեան ձոր յովսափաթու կոչին, որ յերկու ձորի մէջն է յերուսաղէմ: - (Գիրք հարցմանց, 737).

**ՅՈՎՍԷՓ** - Եւ ազգայինքն՝ միոյն հայր և հոգի. և միւսոյն յովսէփ և մարիամ: - (Գիրք հարցմանց, 87).

**ՅՈՎՍԷՓ ԱՐԵՄԱԹԱՅԻ** - Զսուրբն աստուածն ո՞վ է ասացեալ: Պատասխանի: Յովսէփ արեմաթացին: - (Գիրք հարցմանց, 631).

**ՅՈՎՍԷՓ ՓԱԼԱՆԱՅԻ** - Եւ յովսէփ փալանացի, և եզնակ կող-

բացի թարգմանիչք, դարձեալ էին յաթենայ և եկեալ ի կոստանդնուպօլիս. լուսն գծողովոյն և գնացին ի քաղկեդոն. զի չէր յոյժ հեռի ի ճանապարհէն որով գային ի հայս: - (Գիրք հարցմանց, 543).

**ՅՈՎՍԻԱ** - Որպէս ո՛չ եղև վնաս յովսիայ որով հայրն թիրեր: - (Գիրք հարցմանց, 593).

**ՅՈՎՐԱՄ** - Այլ և յովիդա քահանայապետ զդուստր յովրամայ արքայի զքոյր որդիայ: - (Գիրք հարցմանց, 461).

**ՅՈՐՂԱՆԱՆ** - Զայսմ վիշապէ՛ ասէ՛ զգլուխ վիշապին փրկիչն ջախջախեաց ի յորդանան. այն է որ զամենայն ջուրս ծովուն յակնակապիճս իւր ընդունէր: - (Գիրք հարցմանց, 151).

**ՅՈՐՄԻ** - ...զԹադէոս. և զԲարդուղիմէոս. և զՅուդայ յակոբեան. որ կայ ի յորմի. որ սեպհական քաղաք է հայոց: - (Գիրք հարցմանց, 549).

**ՅՈՒՂԱՅ** - Թամար՝ որ ծնաւ զփարէս ի յուդայէ՛: - (Գիրք հարցմանց, 300).

**ՅՈՒՂԱՅ ՅԱԿՈԲԵԱՆ** - զԹադէոս. և զԲարդուղիմէոս. և զՅուդայ յակոբեան. որ կայ ի յորմի. որ սեպհական քաղաք է հայոց: - (Գիրք հարցմանց, 549).

**ՅՈՒՂԻԴ** - Իսկ Սիրաք և Իմաստութիւնն և Յուդիդն և Տուբիդն և Տուբիայն և Մակաբայեցիքն և Կտակքն և այլք, չեն յայսմ համարի: - (Գիրք հարցմանց, 451).

**ՅՈՒՍԵՖԱՆՈՍ ԿԱՅՍՐ** - Այլ և պետրոս անտիոքայ և տիմօթէոս աղէքսանդրոս հրամանաւ յուստիանոսի կայսեր՝ հաստատեցին ի սուրբ աստուածն խաչեցար ասել: - (Գիրք հարցմանց, 631).

**ՅՈՒԼԻԱՆՈՍ** - Այլ և յորժամ սատակեցաւ յուլիանոս, զծողովեալ ինչսն սուրբն բարսեղ բաժանեաց ժողովրդեանն. նոր տարի անուանեալ ի կեսարիայ: - (Գիրք հարցմանց, 200).

**ՅՈՒՍԵՖԱՆՈՍ** - Ի թագաւորութեանն յուստիանոսի եղև դարձ-

եալ եերորդ ժողով ի կոստանդնուպօլիս: - (Գիրք հարցմանց, 543).

**ՅՈՔԱԲԵԹ** - Հայրն մովսէսի ամրա՛մ է և մայրն յոքաբէթ: - (Գիրք հարցմանց, 330).

**ՅՕՀԱՆՆ, ՅՈՀԱՆՆ** - Ասէն դարձեալ, աւետարանն յօհաննու ասէ, (ամենայն ինչ որդովն եղև.) ապա ուրեմն և հոգին եղեալ է ի ձեռն որդւոյ. զիա՞րդ է հաւասար որդւոյ կամ հօր: - (Գիրք հարցմանց, 53).

**ՅՕՀԱՆ ԱԲԵՏԱՐԱՆԻԶ** - Եւ վկա՛յ մեզ յօհան աւետարանիչն որ ասէ՝ (Ձայս ասաց եսայի զի ետես զփառս նորա և խօսեցաւ վասն նորա:)- (Գիրք հարցմանց, 631).

**ՅՕՀԱՆ ԴԱՄԱՍԿՍԻ** - Զի և յօհան դամասկացին ասէ հարկ զոլ ամենայն սկսգման ունել դադարումն. այլ զի հրեշտակք և հոգիք ոչ դադարին, այս կամա՛ցն աստուծոյ է պահպանութիւն, և ոչ բնութեան նոցա. զի յո՛չ էից եղեալքն՝ կարեն յոչ էութիւն փոխիլ: - (Գիրք հարցմանց, 37).

**ՅՈՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ** - Իսկ վասն հիմնարկութեան սուրբ տաճարի և ժամահար օրհնելոյ. սկիհ և մաղգմայ. և զգիրք. և զկնունք առնելոյ. և խաչօրհնելոյ. և զքառասնորդաց գ ժամուց զքարոզքն և զաղօթսն, յօհան մանդակունին է արարեալ. - (Գիրք հարցմանց, 659).

**ՅՈՀԱՆՆ ՈՐՈՏՆԵՑԻ** - Այլ և վարժապետին իմոյ և մեծ հռետորի հայոց, Յոհաննու Որոտնեցւոյ, եղիցի ի սմա յիշատակ մաղթանաց մասին օրհնութեան. և վիճակ ժառանգութեան սրբոցն ի յոյս: - (Գիրք հարցմանց, 773).

**ՅՈՀԱՆՆԷՍ ՊԼՈՒԶ** - Իսկ զներսէսին մեծի. և զխոտաճարակացն, յոհաննէս ակուզն: - (Գիրք հարցմանց, 638).

**ՅՈՀԱՆ ՕԶՆԵՑԻ** - Զմեղաք յամենայնին, և զկարգ մեծ տօնիցն, յօհան օձնեցին: - (Գիրք հարցմանց, 637).

**ՅՕՀԱՆՆԷՍ, ՅՕՎՀԱՆՆԷՍ, ՅՈՀԱՆՆԷՍ** - Զի որպէս գիշակնութիւնն չտայ թոյլ տեսանել յստակ, այսպէս երկիւղն յետս քարշէ զբազումս ո՛չ հաւատալ ի քրիստոս որպէս ասէ յօհաննէս. (զայս ասացին ծնօղքն կուրին՝ զի երկնչէին ի հրէիցն խոստովան լինիլ զքրիստոս:) - (Գիրք հարցմանց, 32).

**ՅՈՎԱՆ** - Ամովս: Միքիա: Յովէլ: Աբդիու: Յովնան: Նաուում: Ամբակում: - (Գիրք հարցմանց, 450).

**ՅՕՆԱՆ** - Այլ և զառաւել գութն հեթանոսաց տեսցէ. որպէս յօնան զնինկեացոցն ապաշխարութիւնս: - (Գիրք հարցմանց, 444).

**ՆԱԲՈՒԳՈՂՈՆՍՍՈՐ** - Երկրորդ ա՛յն է՝ որ յորժամ լինի կամքն մարդոյն չար և խիստ ի ծածուկ, և զայն յայտնէ՝ աստուած. որպէս նաբուգողոնոսորայ. որ ունէր սիրտ գազանի՝ ի կերպարանս գազանաց փոխեցաւ: - (Գիրք հարցմանց, 336).

**ՆԱԲՈՒԶԱՐԴԱՆ** - Եւ յետ **է** ամսոյ՝ նաբուգարդան դահճապետն հրձիգ արար զէմ և զտաճարն և զտուն թագաւորացն. և զպարիսպն կործանեաց. և զսինսն պղնձի և զաւազանն և զամենայն կահ պղնձի և արծաթի տարաւ ի բաբիլօն: - (Գիրք հարցմանց, 447).

**ՆԱԽԻԶԵԻԱՆ** - Երրորդ՝ նշանն սրբոյն յակոբայ մծրնայ հայրապետին. և զեօղն արկուռի՝ ուր տնկեաց այգի. և քաղաքն նախիջևան, ուր ինքն նոյ հանգուցեալ է ի տապանի: - (Գիրք հարցմանց, 295).

**ՆԱԶԱՐԵԹ** - Իսկ ոմանք յետ ծննդեանն ի կուսէն ասէն օծեալ զքրիստոս ի մկրտութեանն. վկայ բերելով (զյիսուս որ ի նազարէթէ, զոր էօծ աստուած հոգւով և զօրութեամբ:) - (Գիրք հարցմանց, 475).

**ՆԱԹԱՆ** - Յակոբ ի ցեղէն սողոմոնի որդի մատթանայ. և Ելի ի ցեղէն նաթանայ որդի մելքեայ: - (Գիրք հարցմանց, 460).

**ՆԱՅԱՍՕՆ, ՆԱՅԱՍՈՆ** - Ամինադաբ ամաց խե՛ ծնանի զնայասօն. և էր ասէ ամինադաբ սպարապետ զօրուն յուդայի ի հանել մովսէսի գորդիսն իսրայելի յեգիպտոսէ: - (Գիրք հարցմանց, 452).

**ՆԱԻԱԹ** - Երեսունք, յետոյ առ սամուէլ ի նաւաք գնացեալ և հոգի աստուծոյ խաղացեալ. և տէր մեր առ հայր ի յերկինս ելեալ, և յառաքեալսն զհոգին առաքեալ: - (Գիրք հարցմանց, 437).

**ՆԱԻՌԻՍ** - Ամովս: Միքիա: Յովէլ: Արդիու: Յովնան: Նաւում: Ամբակում: - (Գիրք հարցմանց, 450).

**ՆԵՔՐՕԹ** - Երկրորդ՝ նէքթօք: - (Գիրք հարցմանց, 28).

**ՆԵՂՈՍ** - Ըստ մարմնոյ յա՛յտ է զի երկիրն եգիպտացոց դա՛շտ է. վասն այն նէղոս գետն արբուցանէ զնա՛: - (Գիրք հարցմանց, 398).

**ՆԵՌՆ** - Ըստ այսմ օրինակի և նոր հերձաձօղք քաղ-կեղոնիկք նէռին կարապետք. հետևօղք նեստորի անիծելոյ՝ և լևոնի պղծոյ: - (Գիրք հարցմանց, 34).

**ՆԵՄԻՍՈՍ** - ... Բայց թէ ազատեալ լիցի տեառն կամօք. որպէս նէսիմոնս այն. իսկ թէ զայր որ ընդ ծառայութեամբ է՝ ո՛չ հրամայեցին հայրապետքն սուրբք գալ ի յաստիճան եկեղեցւոյ. - (Գիրք հարցմանց, 589).

**ՆԵՍՏՈՐ** - Ըստ այսմ օրինակի և նոր հերձաձօղք քաղկեղոնիկք նէռին կարապետք. հետևօղք նեստորի անիծելոյ՝ և լևոնի պղծոյ: - (Գիրք հարցմանց, 34).

**ՆԵՐՍԷՍ** - Կամ որպէս ասեն թէ՝ նէրսէս անուն արուեստաւոր տապանին՝ շինեաց իւր տուն ի վերոյ կողմանէ. և զի ո՛չ էր հրամանաւն աստուծոյ՝ սատակեցաւ նա՛ անդ, և զնորա գէշն ուտէր ագռաւն: - (Գիրք հարցմանց, 294).

**ՆԵՐՍԷՍ ԼԱՍՔՐՕՆԱՅԻ** - Իսկ զայսօր յարեաւն, զնորոգեալ

կղզիքն, և զթոռանցն, ներսէս լամբօնացին: - (Գիրք հարցմանց, 637).

**ՆԵՐՍԷՍ ԿԼԱՅԵՑԻ** - Եւ զվառին ներսէս կլայեցին: - (Գիրք հարցմանց, 637).

**ՆԵՐՍԷՍ ՄԵԾ** - Իսկ գներսէսին մեծի, և զխոտաճարակացն, յոհաննէս պլուզն: - (Գիրք հարցմանց, 638).

**ՆԵՐՍԷՍ ՇԻՆՈՂ** - Երբորդ ժողովն է դվնայ, ի չորրորդ ամի թագաւորութեանն կոստանդեայ հռոմոց. հրամանաւ մեծի կաթողիկոսին հայոց ներսէսի շինողի. և այլ է և ժ եպիսկոպոսաց՝ և վարդապետաց բազմաց և իշխանաց: - (Գիրք հարցմանց, 544).

**ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ** - Որպէ՞ս ասէ մեծն Ներսէս շնորհալին. ընդ ծառոց երկրի զգալեաց. տընկեաց և զտունկս իմանալեաց: - (Գիրք հարցմանց, 221).

**ՆԵՓԹԱՂԻՄ** - Չորրորդն Բարակ. որդի ամենեմայ ի կեղեսայ նեփթաղէմի ամս իւ: - 420. (Գիրք հարցմանց, 299).

**ՆԷՏՄԻ** - Այլ և աղբատութեամբ. ուստի յա՛յտ է զի անէ՛ծ զգէզդի վասն ընչիցն նէեմանայ: - (Գիրք հարցմանց, 404).

**(ՄԵԾՆ) ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ** - Որպէ՞ս ասէ մեծն Ներսէս շնորհալին. ընդ ծառոց երկրի զգալեաց. տնկեաց և զտունկս իմանալեաց: - (Գիրք հարցմանց, 221).

**ՆԵՔԱԻՈՎ** - Զյովաքազ գերի տարաւ ներաւով փարաւոն. և թագաւորեցոյց զեղիակիմ: - (Գիրք հարցմանց, 453).

**ՆԵՔՏԱՌԻՈՍ** - Եւ Պատրիարգունք էին անդ, Ներսէս հայոց. Կիրեղ Երուսաղէմի, Դամասոս հռոմայ. Ներտառիոս կոստանդնուպօլսի: - 542. (Գիրք հարցմանց, 299).

**ՆԸՍԱ** - Քսանգ, տիկինն սաբայ որ կոչիր նըսա, ցանկացաւ իմաստութեանն սողոմոնի: - (Գիրք հարցմանց, 441).

**ՆԻԿԻԱՅ** - Առաջին ժողովն եղն ի նիկիայ սրբոց հարց. զկնի յԺԸ՝

կամ յլ ամի ծննդեանն քրիստոսի. և ի ի ամի թագաւորութեանն կոստանդիանոսի: - (Գիրք հարցմանց, 542).

**ՆԻԿՈՂԻՄՈՍ** - Եւ թեպէտ յովսէփ իջոյց ի խաչէն, և յովսէփ և նիկողիմոս պատեցին, այլ ինքն կամաւն էջ ի բազուկսն յովսէփայ և պատեցաւ զմոռվ: - (Գիրք հարցմանց, 316).

**ՆԻԿՈՍԻՂԱՅԻ** - ... զոր արարեալ է սրբոյն եփրեմի խորին ասորոյ ի նիկոմիդացոց քաղաքին: - (Գիրք հարցմանց, 658-659).

**ՆԻԿՈՍԻԿՈՍ** - Այլ և սամարուհի կնոջն լուսինա՝ էր անունն: ...Դպրին նիկոմիկոս: - (Գիրք հարցմանց, 495).

**ՆԻԿՕԼԱՅՈՍ ՀԵՐԵՍԻՈՏ** - Յորեան ընդ յարդի. կնճիռն ընդ զինւոյ. մրուր ընդ ձիթոյ. յուդա ընդ յառաքեալսն. նիկօլայոս հերեսիոս ընդ աշակերտսն: - (Գիրք հարցմանց, 756).

**ՆԻՆՈՒԷ** - Զորօրինակ, քարոզեցաւ նինուէի կործանումն. և նախագուշակ եղև եգեկիայի մահ. և ո՛չ մի ի սոցանէ կատարեցաւ: - (Գիրք հարցմանց, 779).

**ՆԻՍԱՆ** - Եւ ի ժեն նիսանի անցին ընդ ծովն որ է՝ Եւ ամիս. և է ամիս ի գործ խորանին: - (Գիրք հարցմանց, 344).

**ՆԻՒՍԱՅԻ** - Եւ այլ ամենայն գովութիւն մարդոյն զոր դնէ նիւսացին ի զիրս բնութեան, յատկութիւն է մարդոյն: - (Գիրք հարցմանց, 275).

**ՆԻՒՍԱՅԻ ԳՐԻԳՈՐ** - Իսկ նիւսացին գրիգոր ի բնութեան զիրս՝ ի վերջին դասուց հրեշտակացն ասէ անկեալ: - (Գիրք հարցմանց, 150).

**ՆՈՍԻՆՈՍ** - Ապա՝ նոմինոս, զատոյց զկողմն չորրորդ ձայնին. որ է՝ վերջին: - (Գիրք հարցմանց, 640).

**ՆՈՅ** - Զի առաջին օրն ցուցանէ զառաջին դարն՝ որ յադամայ մինչև ցնոյ: - (Գիրք հարցմանց, 193).

**ՆՈՒԵՆԱ** - Անունք Կանանց Նահապետացն.... Ենովսայն նուենա: - (Գիրք հարցմանց, 299).

**ՆՈՒՄԱՍ ՊՈՒՄԻԼՈՍ** - Բայց ասեն ոմանք թե՛ յաւուրս մանասեի՛ Նումաս պումիլոս ք ամիս յաւել ի տարին հոռնոց. զի յառաջ քան զնա՛ ժ էր և յաւել ի նոսա զյունվար և զփետրվար: - (Գիրք հարցմանց, 299).

**ՆՈՒՆԻ ԿՈՅՍ** - Հինգերորդ, զի թե՛ զո՛յր հնար կնոջ վասն հարկին առնել զգործ քահանայի, ընդէ՛ր ոչ կարաց նունի կոյսն մկրտել զոք ի վրաց յորժամ դարձոյց յաստուածգիտութիւն. - (Գիրք հարցմանց, 589).

**ՆՕՏՈՍ** - Եւ որ մերձ յարևմուտս է՛ Լիւա՛ նօտոս. առնէ մառախուղ. մեզ. և վրդովումն յամպս: - (Գիրք հարցմանց, 206).

**ՇԱՀԱՊՕՆ** - Որ և մեր նստելով իբր ի մետաղս կամաւոր դիպա-  
հոջ՛ շահապօս կոչեցեալ ամրոցի: - (Գիրք հարցմանց, 788).

**ՇԱՍԻՐԱՍ** - Որպէս ասեն զշամիրամէ թե՛ յորժամ սպանաւ արա ի պատերազմին, զայլ ոմն նման նորին պատուեաց և ասաց թէ աստուածքն յարուցին: - (Գիրք հարցմանց, 238).

**ՇԱՍՍ** - Չորրորդ Արեգակն. զոր շամս կոչեն ջն՛ րմ է և լուսաւոր. լ օր և ժ ժամ և կէս յամէ՛ ի կենդանակերպն. և ի բոլոր տարին վճարէ՛: - (Գիրք հարցմանց, 189).

**ՇՄԱԻՈՆ** - Իսկ շմաւոն ո՛չ էր ապաշխարեալ, վասն որոյ ո՛չ օրինեաց: - (Գիրք հարցմանց, 409).

**ՈԶԻԱ** - Երրորդ՛ զի ո՛չ էր քահանայ. վասն որոյ յետոյ ասէր դա-  
ւիթ ցքահանայսն, դո՛ւք ղևտացիքդ սրբեցէք և բարձէք զտապա-  
նակն. զի մի՛ լիցուք որպէս զոզիա: - (Գիրք հարցմանց, 431).

**ՈԼՈՍՊԻԱԴ** - Արդ սկսեալ առ դարեհիւ ի կէ ոլոմպիադին՛ դադարեցին ի ճձզ ոլոմպիադին առ հիւրկանոսիւ քահանայա-  
պետիւ, որ գերեցաւ ի պարթևաց: - (Գիրք հարցմանց, 449).

**ՈՂԴԻԿԻՆ** - Յետ որոյ քեղկի քահանայ որ էր հայր երեմիայի՛ եզիտ զերկրորդ օրէնքն և մատոյց առ ովսիա. և զնաց առ ողդիկին մարգարէ հարցանել. - (Գիրք հարցմանց, 447).

**ՈՉՔՈՐ** - Որ եթուք՝ ոչքոր։ - (Գիրք հարցմանց, 495)։

**ՈՍԿԵԲԵՐԱՆ, ՈՍԿԷԲԵՐԱՆ** - Տասներորդ՝ ամենայն սուրբ վարդապետք ուղղափառաց որպէս եփրեմ՝ ոսկեբերանն՝ կիրեղ՝ աթանաս՝ և այլք, անապական գրեն և խոստովանին զմարմինն սուրբ։ - (Գիրք հարցմանց, 499)։

**ՈՎՐԷԲՆ** - Սա՛ սպան զովրէբն, զգէբն, զգեբէէ, զսաղմանա, և զայլսն։ - (Գիրք հարցմանց, 420)։

**ՈՎԲԷԹ** - Ովբէթ ամաց ճա՛ ծնաւ զյեսսէ։ - (Գիրք հարցմանց, 452)։

**ՈՎԳ** - Եւ զե թագաւորսն մաղիամու՝ և զսեհոն՝ և զովգ՝ յայնկոյս յորդանանու։ - (Գիրք հարցմանց, 414)։

**ՈՎՄԻԱ** - Նոյնպէս և արդարութիւնն երբեմն յերկարէ՛ զկեանս որպէս առ եզեկիա. և երբեմն կարճէ՛ որպէս առ ովսիայ։ - (Գիրք հարցմանց, 292)։

**ՈԻՌՀԱՅ** - Զի առաքեալն թաղէոս յորժամ ձեռնադրեաց զաղղէ յուռիայ, և ապա՛ ի կեսարիայ եկն և ձեռնադրեաց առաջին եւ պիսկոպոս զթէոփիլոս. զայն յորոյ անունն գրեաց Ղուկաս զաւետարանն և զգործքն առ թէոփիլոս։ - (Գիրք հարցմանց, 548)։

**ՈԻՌՆԱՅ** - Դարձեալ, ձորն յովսափաթու կոչի ձոր դատաստանի. այսինքն է կալն ուռնայի, ուր դաւթի խոստացաւ անդ առնել դատաստան. յորժամ սեղան շինեաց և պատարագեաց զեզինսն և բարձաւ մահն։ - (Գիրք հարցմանց, 737)։

**ՈԻՐԻԱ** - Հինգերորդ՝ բանիւ և արդեամբ սպան զուրիա, և նոյնպէս վճարի. բանիւ նախատէ սիմէի, և արդեամբ արիսողոմ։ - (Գիրք հարցմանց, 433)։

**ՈԻՐԻԷԼ** - Հինգերորդ՝ ուրիէլ. տեսումն աստուծոյ։ - (Գիրք հարցմանց, 144)։

**ՈՓՆԻ** - Նա՛խ՝ զի անարժան լինին սպասաւորքն. որպէս ովնի և փենէհեզ որդիքն հեղեայ։ - (Գիրք հարցմանց, 425)։

**ՈՔՈԶԻԱ** - Այլ և յովսաբեթ դո՛ւստր է յովրամայ և գողողիայ և քոյր ոքոզիայ: - 452.

**ՈՔՈՂԻԱ** - Այլ և յովիդա քահանայապետ գղուստր յովրամայ արքայի զքոյր ոքողիայ: - (Գիրք հարցմանց, 461).

**ՊԱԼՀ** - Ուստի բազմացեալ լցին զարևելս ի պալի, յորմէ թագաւորք պարսից և հայոց արշակունիք կոչեցեալ: - (Գիրք հարցմանց, 330).

**ՊԱՂԷՍՏԻՆ** - Ասեն թէ՛ զոն ա՛յլ հոմանուն մասիս և արարատ. որպէս կորդուաց լեառն և ի պաղէստին և ի գամիրս: - (Գիրք հարցմանց, 294).

**ՊԱՆԹԵՐ** - Եւ այսպէս **բ** եղբօր թոռունք էին Մարիամ կոյսն և Յովսէփ ի հարց կողմանէ մելքեայ և պանթերի ի նաթանայ: - (Գիրք հարցմանց, 460).

**ՊԱՊԻԱՆՈՍ** - ... ապա Պապիանոս քեռորդի սոցա՝ արար զչորրորդ ձայնն ի ծփանաց ծովու: - (Գիրք հարցմանց, 640).

**ՊԱՐՏԱԻ** - Իսկ Հինգերորդ ժողովն եղև ի վիճակս գրիգորիսի. ի մայրաքաղաքն աղուանից պարտաւ: (Գիրք հարցմանց, 545).

**ՊԵՏՐՈՍ** - Նաև աշակերտքն. որպէս պետրոս որ դաւա՛նեաց զքրիստոս որդի աստուծոյ: - (Գիրք հարցմանց, 68).

**ՊԵՐԻՏՈՍ** - Պերիտոս. ա՛յս՝ պա՛ն է նոխագոտն: - (Գիրք հարցմանց, 201).

**ՊԻԹԱԳՈՐ** - Իսկ այլ տասունքն իմաստասիրաց բանքն. Որպէս պղատոնին. արիստոտելին. պիթագորին և այլք. որք միայն զաստեա՛ցս պատմեն մեզ: - (Գիրք հարցմանց, 380).

**ՊԻՂԱՏՈՍ** - Եւ տէր մեր ի նոյն այրին յազգէ նոցին ըմբռնեալ. և ի զինաւորս պիղատոսի մատնեալ: - (Գիրք հարցմանց, 423).

**ՊՂԱՏՈՆ** - Այլ վարդապետք եկեղեցւոյ ասեն ըստ պղատոնի եթէ՛ լոյսն խզումն է ի տարրական հրոյ, որ յառաջին օրն գոյացաւ: - (Գիրք հարցմանց, 188): Իսկ այլ տասունքն

իմաստասիրաց բանքն. որպէս պղատոնին. արիստոտէին. պիթագորին և այլք. որք միայն զաստեա՛ցս պատմեն մեզ: - (Գիրք հարցմանց, 380).

**ՊՂԻ** - Այլ որ **ՃԾ** ամաւ յառաջ եկին ի հայք՝ ասորիք արք քաջաբանք, և կամեցան սերմանել զաղանդն նեստորի. որք նգովեալ որոշեցան. բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի նոցանէ գիրս սուտս, Զգօրտոսակ. Զկիրակոսակ. Զպղի տեսիլն: - (Գիրք հարցմանց, 545).

**ՊՈԼՈՔՈՆՈՍ** - Եւ զպոլոքոնոս աշակերտաց բազմաց վարդապետ. և ծեր, որ զմեռեալս յարուցանէր սքանչելեօք: - (Գիրք հարցմանց, 544).

**ՊՈՂՔԷՐ** -Զի պողքէր քոյր թագաւորին թէոդոսի ի կուսանաց վանս էր. և պղծեցաւ պոռնկութեամբ ի մարկիանոսէ. և ապա՛ եղև կին նմա. և ասեն թէ ի նեստորէ՛ էր մկրտեալ: - (Գիրք հարցմանց, 542).

**ՊՈՐՓԻՐ (ՊՈՐՓԻՐՈՍ)** - Զի թէ ասես միաւորական, ահա՛ արարեր դու զանձն բնութիւն. զի բնութիւն է միարար ըստ պորփիրի, տեսակին կցորդութեամբ բազում մարդիկ մու: - (Գիրք հարցմանց, 86).

**ՊՐՈՊԱՏԻԿԷ** - ... իսկ Աննա ամուսնացաւ ի զալիլեայ ընդ յովակիմայ. և ծնաւ զաստուածածինն մարիամ ի պրոպատիկէ ի տունն յովակիմայ. և անտի տարեալ եղև ի տաճարն տեառն: - (Գիրք հարցմանց, 460).

**ՊՕՂ** - Որպէս եղիայի, պօղի և անտոնի. և մերոյ լուսաւորչին Գրիգորի: - (Գիրք հարցմանց, 220).

**ՊՕՂԻՏԻԱՆՈՍ** - Պօղիտիանոս աղէքսանդրու: - (Գիրք հարցմանց, 544).

**ՊՕՂՈՍ** (առաքեալ) - Իսկ մեծն ներսէս ասէ, պակասու-թիւնն այն է, որ կիրք չարչարանացն քրիստոսի թուով և տեսակաւ

պակա՛ս էր յառաքեալն պօղոս. այսինքն խաչն, բւեռքն, և այլն. և զայն էլից քարոզութեամբն իւր ի մարմինս եկեղեցւոյ: - (Գիրք հարցմանց, 781).

**ՊՕՂՈՍ** - Եւ յօհաննէս զսա օդո՛յ դասէ. վասն այն նոյն անուամբն՝ պօղոս իշխան օդոյս կոչէ. կամ զի յօդս են բնակեալ և իշխեն մարդկան: - (Գիրք հարցմանց, 150).

**ՊՕՂՔԵՐ** - Այլ զչար և զաստուածուրաց ժողովն քաղկեդոնի որ ի ձեռն մարկիանոսի և անիծելոյն պօղքերի՝ ո՛չ ընդունիմք. և զընդունօղսն նգովեմք: - (Գիրք հարցմանց, 547).

**ՌԱՔՈՒԻՒ** - Անունք Կանանց Նահապետացն.... Արփաքսաթայն ռաքուիա՛: - (Գիրք հարցմանց, 299).

**ՌԱՓԱԽ** - Անունք Կանանց Նահապետացն.... Ռազաւայն սուրա՛: - (Գիրք հարցմանց, 299).

**ՌԱՓՈՒԷԼ** - Սեփովրա էր դուստր ռագուէլի քրմի՝ որդոյ դեղանայ. որդւոյ յեկտանայ. որդւոյ արքահամու ի քետուրայ կնոջէ: - (Գիրք հարցմանց, 330.).

**ՌԱՀԱՔ** - Եօթներորդ՝ ռահաք եթող զկուռս և զբազում հոմանիս. և ցանկացաւ յեսուայ: - (Գիրք հարցմանց, 417).

**ՌԱՓՄԱԿԱՅ** - Չորեքտասաներորդ՝ այլ և ի զիշերի հրեշտակն տեառն էհան զգօրսն ռափսակայ. որ պաշարեալ էին զերուսաղէմ և փրկեաց գնոսա. - (Գիրք հարցմանց, 514).

**ՌԱՔԷԼ** - Անունք Կանանց Նահապետացն.... Յակոբայն ռաքէլ և լիա՛: - (Գիրք հարցմանց, 299).

**ՌԱՏԱՅԷԼ** - Երրորդքն պահպանեն զիւրաքանչիւր անձինս, որպէս ռաֆայէլ: - (Գիրք հարցմանց, 136).

**ՌԱՔՈՍ** - Աւագակն որ յաջմէն խաչեցաւ՝ դէմաս էր անունն. և որ յահեկէն՝ կոստաս: ...Որ զլեղին եբեր՝ ռաքոս: - (Գիրք հարցմանց, 495).

**ՌԵԲԵԿԱ** - Անունք Կանանց Նահապետացն.... Իսահակայն

ռերեկա՛: - (Գիրք հարցմանց, 299).

**ՌԵՔԱՐ** - Զոր աւետարանիչն ռեքաբ կոչէ: - (Գիրք հարցմանց, 452).

**ՌՈՐՈՎԱՄ, ԸՈՐՈՎԱՄ** - Թագաւորք յուդայ նստան յերուսաղէմ. Ռորովամ. Աբիա. Ասափ. և այլ թագաւորք **իբ**: - (Գիրք հարցմանց, 446).

**ՌՈՍԵԼԱՅ** - ...և փակէի արքայի որդւոյ ռոմելայ. և գերեաց զնեփթաղիմ և զգալիլէա. և Զգադայաթ **զ** ցեղիւքն իսրայէլի. և տարաւ յերկիրն ասորեստանէայց: - 447. (Գիրք հարցմանց, 299).

**ՌՈՍԵԼՈՍ** - Հօր անունն ռոմելոս ասեն. զմին ձեռն և զոտն երկայն և մինն կարճ. զմի ակն խաժ, և զմիւսն սև: - (Գիրք հարցմանց, 706).

**ՌՈՒԲԷՆ** - Ռուբէն օրհնի, զի ապաշխարեաց: - (Գիրք հարցմանց, 285).

**ՍԱԲԱ** - Քսանգ, տիկինն սաբայ որ կոչիր նըսա, ցանկացաւ իմաստութեանն սողոմոնի: - (Գիրք հարցմանց, 441).

**ՍԱԲԷԼ** - Իսկ եկեղեցի սուրբ՝ ընդդէմ արիոսի մի բնութիւն խոստովանի. և ընդդէմ սաբէլի **զ** անձինք: - (Գիրք հարցմանց, 81).

**ՍԱԲԱԻՌՎԹ** - Սա է հատն ցորենոյ որ անկեալ յերկիր՝ բազում պտուղս աշխարհի պտղաբերեաց. քանզի (թէ ոչ տն սաբաւովթ թողեալ էր մեզ սերմն, իբրև գտողոմ լինէաք և գոմորայ նմանէաք:) - (Գիրք հարցմանց, 755).

**ՍԱԲԵՓԹԱ** - Եւ վասն այն գնաց ի սաբեփթա յայլազգիս. զի և զնոցա նեղութիւնն տեսցէ. որք չէին անցեալ զօրինօքն մովսէսի: - (Գիրք հարցմանց, 443-444).

**ՍԱԲԷ** - Ընդվզեալ սաբէլի և կորուսեալ ի կնոջէ. և սատանայի կործանեալ յիմաստուն կուսէ: - (Գիրք հարցմանց, 438).

**ՍԱՂԱՅԷԼ** - Եւ ցուցցէ թէ իշխան և զլուի էր սաղայէլ իւրոյ դասունց: - (Գիրք հարցմանց, 148).

**ՍԱՂՈՎԿ** - Սաղովկ և աբիաթար. աննա և կայիափա. որ և աղջիկն հետագօտեալ: - (Գիրք հարցմանց, 438).

**ՍԱՀԱԿ** - Եւ վերստին հաստատեցին զկարգեալսն սրբոյն գրի-գորի և ներսէսի և սահակայ և մաշտոցի: - (Գիրք հարցմանց, 544.).

(ՄԵԾՆ) **ՍԱՀԱԿ** - Առաջին ժողովն եղև ի տանս թորգոմայ յարևելից կողմանս. զկնի է երորդ ամի վախճանելոյ մեծին սահակայ: - (Գիրք հարցմանց, 544).

**ՍԱՂԱ** - Հօրն անունն մելքի, և մօրն սաղա, և քաղաքին : - (Գիրք հարցմանց, 300).

**ՍԱՂԱԹԻԷԼ** - Իսկ ըստ ազգաբանութեանն Մատթէի, ծնանի յեքոնիա զսաղաթիէլ ամաց **ծգ**: - (Գիրք հարցմանց, 453).

**ՍԱՂԻՄ** - Երրորդ՝ զի թագաւոր էր սաղիմայ. որ է՝ խաղա-ղութեան: - (Գիրք հարցմանց, 50).

**ՍԱՂՄԱՆԱ** - Ռահաբ՝ որ ծնաւ զբոյոս ի սաղմանայ: - (Գիրք հարցմանց, 300).

**ՍԱՂՄԱՆԱՍԱՐ** - Եւ ի պահպանութիւն աշխարհին հրէից՝ առաքեաց սաղմանասար յերկրէն ասորոց պանդուխտս որ բնակեցան ի սամարիայ և սամարացիք կոչեցան: - (Գիրք հարցմանց, 447).

**ՍԱՂՄՈՆ** - Եւ սաղմոն էառ զռահաբ իւր կին զոր յերիքովէ՝ : - (Գիրք հարցմանց, 452).

**ՍԱՄԱՐԻԱ** - Եւ դարձեալ՝ յետ աւելի քան զերեսուն ամ ի զերորդ ամին եզեկիայ արքայի յուդայ՝ ել սաղմանասար արքայ ասորեստանեայց ի վերայ սամարիայ. - (Գիրք հարցմանց, 447).

**ՍԱՄԵԱՅ** - Զի՞նչ էր նշանք սամեայ մարգարէի առ սեղանն ըրթովամու: - (Գիրք հարցմանց, 442).

**ՍԱՄԷԳԱՐ** - Երրորդն Սամեգար. որդի անաթայ. որ մաճիւն **n** այր եսպան՝ ամս **դ**. և Դերովրա ամս **ե** ընդ այլազգեացն: - (Գիրք

հարցմանց, 420).

**ՄԱՍՈՍԱՑԻ ՊՕՂՈՍ** - Ոմանք՝ որպէս նեստոր. և սամու-  
տացին պօղոս. և դիոթորոս: - (Գիրք հարցմանց, 82).

**ՄԱՍՈՒԷԼ** - Եւ որպէս ովսէէ ո՛չ է պոռնիկ՝ և ո՛չ սամուէլ մար-  
դասպան զի հրամանաւ աստուծոյ էր: - (Գիրք հարցմանց, 389).

**ՄԱՍՓՍՈՆ** - Արին Սամփսոն բազում բաղդատութեամբ խոր-  
հուրդ և օրինա՛կ է Տեառն մերոյ ամենագօր փրկողին: - (Գիրք  
հարցմանց, 421).

**ՄԱՌԱ** - Տասներկու՝ Բաղդատութիւն երից ծնողաց և ծննդոց.  
այսինքն սառայի, և մարիամու սրբոյն, և եկեղեցւոյ: - (Գիրք  
հարցմանց, 283).

**ՄԱՏԻԷԼ** - Իսկ բանսարկուն սատիէլ՝ զմի յերից մասանցն  
զչորրորդն քարշեաց ընդ ինքեան և կործանեաց յերկիր. որպէս  
ասէ տեսիլն՝ (լի՛՝ առիւծն անկաւ յերկիր և հրեշտակք նորա ընդ  
նմա: ) - (Գիրք հարցմանց, 152).

**ՄԱՏՆԱՏՈՒՐ** - Ոմանք **դ** ասեն. և անւանս թունն, Ատուր,  
Թատուր, Գատուր, Սատնատուր: - (Գիրք հարցմանց, 495).

**ՄԱՐԳԻՍ** - Եւ պատրիարգունք էին անդ, ...Զսարգիս յեւպրա-  
միու: - (Գիրք հարցմանց, 543).

**ՄԱԻՈՒՂ** - Վասն որոյ նախ տուաւ թագաւորութիւնն բենիա-  
մենի որ էր սաւուդ: - (Գիրք հարցմանց, 338).

**ՄԱՓԻՐԱՅ** - Եւ շնչաւոր մարդոյ յիմարութիւն է հոգին. որ և  
պատժեաց զանանիա և զսափիրայ: - (Գիրք հարցմանց, 523).

**ՄԵՔԻՈՍ** - ...բայց ոմանք ընկալեալ էին և թարգմանեալ ի  
նոցանէ ....զսեբիոս: - (Գիրք հարցմանց, 545).

**ՄԵՂԵԿ** - Եւ ըմբռնեաց զսեղեկիա արքա յուդայ, և փորեալ  
զաչսն տարաւ ի բաբիլօն: - (Գիրք հարցմանց, 447).

**ՄԵԼԼԱ** - Զի ասեն թէ՛ այր և երիտասարդն զոր սպան դամեք և  
Էառ զկանայս նոցա. աղդա և սելլա, նոքա եղբա՛րք էին ենովքայ

արդարոյ: - (Գիրք հարցմանց, 290).

**ՄԵԼԻՆ** - Զգոհալն Կոնոնսի. Զմուշթարին Դիոսի. Զմառեխն Արեսի. Զարեգակն Իլիոսի. կամ Զնսիլոսի. Զօհրայն. Ափրոդիտեայ. Զօտարիտն Երմեսի. Զլուսինն Մելինի: - (Գիրք հարցմանց, 190).

**ՄԵԼՈՎ** - Տասներորդ՝ ի սելով օծաւ և յերուսաղէմ թագաւորեաց: - (Գիրք հարցմանց, 441).

**ՄԵՀՈՆ** - Եւ **զե** թագաւորսն մաղիամու՝ և գսեհոն՝ և զովզ՝ յայնկոյս յորդանանու: - (Գիրք հարցմանց, 414).

**ՄԵՂԲԵՍՏՐՈՍ** - Եւ պատրիարգունք էին անդ, ...Մեղբեստրոս հռոմայ: - (Գիրք հարցմանց, 542).

**ՄԵՄ** - Եւ իշխանք վերակացուք գործոյն՝ Լամսուր ի սեմա՛յ ազգէն: - (Գիրք հարցմանց, 297).

**ՄԵՐՈՒՔ** - Անունք Կանանց Նահապետացն.... Մերուքայն մելքա՛: - (Գիրք հարցմանց, 299).

**ՄԵՓՈՎՐԱ** - Մեփովքա էր դուստր ռագուէլի քրմի՝ որդոյ դեղանայ. որդոյ յեկտանայ. որդոյ աբրահամու ի քետուրայ կնոջէ: - (Գիրք հարցմանց, 330).

**ՄԷԹ** - Եւ ապա՛ զադամ, զի ունի գսէթ ծնունդ՝ և զկա ո՛չ ծնունդ. այլ հատումն ի նոյն բնութենէ. և ընդ միով սահմանաւ գոլ ծնողին և հատմանն և ծնիցելոյն: - (Գիրք հարցմանց, 53).

**ՄԻԲԱՅ** - Երկու յաւանակն սիբայի. Էշն և յաւանակն յիսուսի: - (Գիրք հարցմանց, 438).

**ՄԻՂՈՆ** - Եւ որպէս եղիա որ կապեաց զերկինս և փախեաւ ի սիդոն. նոյն նմա հրամայեաց աստուած բանալ զերկինս. նմանապէս և այս: - (Գիրք հարցմանց, 542).

**ՄԻՄԱ** - Զաբարիա Սիմա Ելիա Մովսէս տաւոթ երգէին: - (Գիրք հարցմանց, 641).

**ՄԻՄԷԻ** - Դաւիթ ընդէ՞ր ոչ ետ պատասխանի անարգանացն

սիմէի: - (Գիրք հարցմանց, 433).

**ՄԻՄԷՕՆ** - Եօթներորդ՝ ժողովն սիմէօնի աղուանից կաթողիկոսի և հայոց կաթողիկոսի տէր եղիայի: - (Գիրք հարցմանց, 545).

**ՄԻՄՈՆ** - Հինգերորդ՝ սիմոն ասաց (հաւատալ ի յեկեղեցի զքաւութիւն և զթողութիւն մեղաց): - (Գիրք հարցմանց, 573).

**ՄԻՄՈՆ** (ԿԱԽԱՐԴ) - Իններորդ՝ զի և ի հոգևորն՝ փոքունք զմեծամեծաց անուանս կոչէին ինքեանց ի մոլորումն մարդկան. որպէս սիմոն կախարդն ասէր զինքեն՝ թէ քրիստոսն իցէ. մինչև յանդիմանեցաւ ի պետրոսէ: - (Գիրք հարցմանց, 238).

**ՄԻՄՈՆԵԱՆ** - Աքար զարմեան և սաւուղ կիսեան և յուդա սիմոնեան մեղայ ասելով ո՛չ արդարացան: - (Գիրք հարցմանց, 415).

**ՄԻՆԱ ԼԵԱՌՆ** կամ **ԼԵԱՌՆ ՄԻՆԱ** - Երրորդ՝ բազում աստուածախօսութիւնք ի նմա եղեն. յելանելն նոյի ի տապանէն. և առ աքրահամ. և առ մովսէս ի սինա լեան. և տուչութիւն օրինացն ի կիրակէ եղև: - (Գիրք հարցմանց, 193).

**ՄԻՆԻԳՐԷՍ** - Իսկ յետ սորա՝ Սինիգրէս արար զառաջին ձայնն, ի հիւսնականէ՝ գտեալ արուեստից: - (Գիրք հարցմանց, 640).

**ՄԻՈՆ** - Եւ տէր սիոն հայոց կաթողիկոսն անդր հասեալ բազում եպիսկոպոսօք և մեծամեծ ազատօք հայոց և իշխանօք նոցին. ընդ դէմ աղանդոց ա՛յնր ժամանակի, և թուլութեան կարգաւորաց եկեղեցւոյ, և բռնութեան իշխանաց: - (Գիրք հարցմանց, 545).

**ՄԻՌՎՆ** - Եւ վերջոյ ի հիւսիս. որ ցուցանէ զշնորհն որ ի հինն սիովն հնչեաց յեկեղեցիս հեթանոսաց. - (Գիրք հարցմանց, 674).

**ՄԻՍԱՐԱ** - Այլ և ցիցն ի ձեռին յայելի զոր վարսեաց ընդ ծամելիսն սիսարայ: - (Գիրք հարցմանց, 494).

**ՄԻՐԱՔ** - Եւ սկիզբն ամենայն մեղաց ամբարտանութիւնն է որ-

պէս ասէ սիրաք: - (Գիրք հարցմանց, 569).

**ՄԻԻԱՆ** - Իսկ իար, որ է՛ նոյ արդար. Սիւան, սեմ. Թամուզ. թարա. Ապ, աբրահամ: - (Գիրք հարցմանց, 200).

**ՄԻԻՆԵԱՅ ՆԱՀԱՆԳ** - Ընդ հովանեաւ երկնահանգէտ մեծարգոյ ուխտի Սիւնեաց նահանգի: - (Գիրք հարցմանց, 772).

**ՄԻՕՆ** - Իսկ որ ի խորանէն բերին մովսէս և ահարօն զգաւազանն ծաղկեալ. զի ի սիօնէ՛ ելցէ օրէնք. որ է՛ յեկեղեցոյ ամենայն իշխանութիւն: - (Գիրք հարցմանց, 382).

**ՄԿԻԻՈԱՅԻ ԳՐԻԳՈՐ** - Այլ և ի մերոց վարդապետաց սկիւռացին գրիգոր ի փոխումն աստուածածին կուսին: - (Գիրք հարցմանց, 687).

**ՄՈՂՈՍ** - Նա՛խ՝ զի ի պատճառս դովտայ փրկեսցի սողոմ ի գերչացն: - (Գիրք հարցմանց, 302).

**ՄՈՂՈՎՍ** - Տասներորդ՝ Վասն դովտայ և կնոջն. և սողովմայ: - (Գիրք հարցմանց, 283).

**ՄՈՎՐԱՏ** - Եւ սուքրատ պատմագիրն ասէ թէ՛ մեծն իգնատիոս աստուածագգեացն ետես երկնային զօրս. և լուաւ ի նոցանէ. - (Գիրք հարցմանց, 631).

**ՄՈՂՈՍՈՆ** - Եւ դարձեալ՝ ըստ սողոմոնի գ են սիգաճեմք. առիծ՝ և նոխազ՝ և արաղաղ: - (Գիրք հարցմանց, 54).

**ՄՈՂՈՎՄԷ** - Մարիամ ամուսնացաւ ի բերլէհէմ և ծնաւ գտողոմի զմանկաբարձն յիսուսի. ո՛չ որ մայր եղև որդւոցն զբերթեայ. զի այն. սողովմէ դուստր է յովսէփայ աստուածաւորն: - (Գիրք հարցմանց, 460).

**ՄՈՄՆԱՍ** - Սոմնաւ անտիոքայ: - (Գիրք հարցմանց, 543).

**ՄՈՍՈՐՈՆ** - Յետոյ վասն զազանաց երկրին՝ հնազանդեցաւ գրոյն մովսէսի. և ծածկեցին զաստուածս իւրեանց ի լերին սոմորոն. և անդ երկիր պազին սամարացիք: - (Գիրք հարցմանց, 447).

**ՍՈՎԻԻԷ** - ...և Սովիէ ի նոյն բերլէհեմ ծնաւ գեղիսաբեր մայր մկրտչի: - (Գիրք հարցմանց, 460).

**ՍՈՎՓԱՐ** - Ոմանք ասեն թէ՝ բարեկամքն իւր որ էին յազգէն եսաւայ ելիփազ. սովփաք. և բաղդատ. որք եկին մխիթարել զնա ի վշտացն, նոքա գրեցին. որպէս ինքն ասէր, (ո՛ տայր ինձ գրել զբանս իմ յիշատակ յաւիտենից): - (Գիրք հարցմանց, 320).

**ՍՈՒԿԵՍՈՍ** - Զնոյն և սուրբն կիւրեղ գրէ առ սուկեսոս թղթին, (Մի ասեմք զքրիստոս աստուած մարդացեալ, և մի զբնութիւն նորա:): - (Գիրք հարցմանց, 83).

**ՍՈՒՐԱ** - Անունք Կանանց Նահապետացն.... Ռազաւայն սուրա՛: - (Գիրք հարցմանց, 299).

**ՍՈՒՔԱ** - Անունք Կանանց Նահապետացն.... Սաղային սուրա՛: - (Գիրք հարցմանց, 299).

**ՍՈՓԷԿԴԻԴԷՍ** - ...ապա՛ Սովեկդիդէս եղբայր սոցա եգիտ զեր-րորդ ձայնն ի հոսանաց. - (Գիրք հարցմանց, 640).

**ՍՈՓՈՆԻԱ** - Սովոնիա. որ լինի **իս**: - (Գիրք հարցմանց, 450).

**ՍՊԱՆԻԱ** - Որպէս ասեն վարդապետք, ի վերջին ծովէն սպանիոս մինչև ի հնդիկս սակաւ աւուրց բացատ գոյ թէ վարես-ցէ հողմ զնաւն: - (Գիրք հարցմանց, 763).

**ՍՏԵՓԱՆՆՈՍ** - Զմակարիոս յանտիրոքու. և զաշակերտն իւր զատեփաննոս: - (Գիրք հարցմանց, 544).

**ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԻՒՆԵՅԻ** - Զաւագ օրհնութիւնքն զեօթն ձայ-նիցն, ստեփաննոս սիւնեցի: - (Գիրք հարցմանց, 637).

(ՄԵԾՆ) **ՎԱՐԴԱՆ** - Այլ և զկարգն յարութեան՝ սորա՛ է ասացեալ մեծն վարդան ի տեսութիւն անթառամ ծաղկին: - (Գիրք հարցմանց, 637).

**ՎԱՐԴԱՆ** (սպարապետն) - Ժողովեալ **իս** եպիսկոպոսաց և բազում վարդապետաց և ժողովրդոց. կողմակալք և մարգպանք,

մեծամեծօրն հայոց, և սպարապետն վարդան ազգայնօքն իւր: - (Գիրք հարցմանց, 544).

**ՎԱՐԴԱՆ** (վարդապետն) - Այլ և ոմանք ի մենջ որպէս վարդապետն վարդան և այլք ասեն զոլ ի միում տեղոջ զամենայն հոգիս: - (Գիրք հարցմանց, 686).

**ՎԱՀԱՆ** - Լուսնաձև Վահանն ի վերայ թիկանցն և սրտին՝ և կրկին տախտակ դատաստանին յուսն, եմփորո՛նն է: - (Գիրք հարցմանց, 348).

**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ** - Եւ նոյն զքահանայթաղէքն, որ ունի է աւետարան. և զաշխարհական թաղումն, ի յայրարատ զաւառի ի վաղարշապատ քաղաքի ի վկայարանս սրբոյն հոփսիմի. յետ **ՃԺԱ** ամի սրբոյն գրիգորի. զի մինչև ցայն հնովն վարէին: - (Գիրք հարցմանց, 659).

**ՎԱՉԱԳԱՆ** (ԱՐՔԱՅ) - Վեցերորդ ժողով եղև յամս վաչագանայ արքայի աղուանից: - (Գիրք հարցմանց, 545).

**ՎԱՐԱԳ** - Տասներորդ խաչի **դ** տօնն. զոր ի սուրբ խաչին է. և երևմանն. և վարագայ խաչին. և խաչգիւտն: - (Գիրք հարցմանց, 649).

**ՎԵՐԱՊԱՆԹԵՐ** - Պանթեր ծնաւ զվերապանթեր: - (Գիրք հարցմանց, 460).

**ՎՇԱՍՊԵԱՅ** - Եւ աստի թուեալ ի դարեհէ՛ որդոյ վշտասպեայ, որ արձաձեաց զգօրաբաբէլ. և յորոյ երկրորդ ամին շինէ զտաճարն: - (Գիրք հարցմանց, 449).

**ՎՕՌԷՍԱ, ՎՕՌԷՍՔ** - Անունք Երկոտասան Հոդմոյն: ...Հիւսիսայինք որք կոչին Վօռէսք: Այն որ մերձ յարևելս է, Վօռեա՛ս կոչի. նեղէ՛ զամպս, և կապէ՛ զանձրես: Եւ որ մերձ յարևմուտս է, Թրասկիաս կոչի. առնէ զձիւնն: Իսկ միջինն՝ Ապարքտիաս. ցուրտ և կարկտաբէ՛ր է: (Գիրք հարցմանց, 205).

**ՏԱԲԻԹ** - Այսպէս և առեալք զհոգին սուրբ բղիսեն. ոմանց ի մահ

և ունանց ի կեանս. որպէս առ տաքիթայն և առ սափիրային: - (Գիրք հարցմանց, 523).

**ՏԱՐԱՏՈՍ** - Տարատոս կոստանդնուպօլսի: - (Գիրք հարցմանց, 544).

**ՏԱՐՕՆ** - Գրիգոր մագիստրոսն ի տարօն եկեղեցի է շինեալ. և ծախիւք պատկեր բերեալ և անդ եղեալ: - (Գիրք հարցմանց, 639).

**ՏՈՐՈՍ** - Բիւրեղն, ծովագոյն յօդանման. գտանի ի տորոս յանցս եփրատ գետոյն: - (Գիրք հարցմանց, 349).

**ՏԷՐ ԵՂԻԱ** - Եօթներորդ՝ ժողովն սիմէօնի աղուանից կաթողիկոսի և հայոց կաթողիկոսի տէր եղիայի: - (Գիրք հարցմանց, 545).

**ՏԷՐ ՅԱԿՈԲ ԿԼԱՅԵՑԻ** - Զերգեցեքն, տէր յակոբ կլայեցին: - (Գիրք հարցմանց, 638).

**ՏԷՐ ՄԻՍԷՈՆ** - Զոր յառաջին ամին յորժամ նստաւ կաթողիկոս տէր սիմէոնի, ի ձեռն տէր եղիայի մեծահանդէս ժողովմամբ պայծառացոյց գեկեղեցի կանոնական հաստատութեամբ ի փառս քրիստոսի աստուծոյ մերոյ օրհնելոյն յաւիտեանս ամէն: - (Գիրք հարցմանց, 545).

**ՏԷՐ ՄԻՈՆ** - Եւ տէր սիոն հայոց կաթողիկոսն անդր հասեալ բազում եպիսկոպոսօք և մեծամեծ ազատօք հայոց և իշխանօք նոցին. ընդ դէմ աղանդոց ա՛յնր ժամանակի, և թուլութեան կարգաւորաց եկեղեցոյ, և բռնութեան իշխանաց: - (Գիրք հարցմանց, 545).

**ՏԻԲԵՐ** - Արդ՝ առաջին վկայութիւն, ասէ սուրբն կիւրեղ ի գիրս պարապմանց ի հարցմունս տիբերեայ եթէ՝ հատուցմունքն հետևին դատաստանին. և դատաստանն գալստեան դատաւորին ի կատարածի: - (Գիրք հարցմանց, 691).

**ՏԻԲԵՐԻԱՅ** - Եւ կրկին սուտ. զի ուր զձուկն կերին՝ ի գալիլեայ յեզր տիբերիայ ծովուն էր **դ** աւուր ճանապարհ հեռի յերուսա-

դեմէ՛ և ի լեռնէն ձիթենեաց ուստի համբարձաւ քրիստոս: - Գիրք հարցմանց, 511).

**ՏԻՄՈԹԷՈՍ** - Տիմոթէոս աղէքսանդրու. Մելիտոս անտիոքայ. ՃԾ հարք ընդդէմ մակեդոնի հայհոյչի հոգւոյն սրբոյ: - (Գիրք հարցմանց, 542).

**ՏԻՏՈՍ** - ...որպէս գրէ սուրբն դիոնէսիոս ի թուղթն տիտոսի: - (Գիրք հարցմանց, 596).

**ՏՈՐՈՍ** - Բիւրեղն, ծովագոյն յօղանման. գտանի ի տորոս յանցս եփրատ գետոյն: - (Գիրք հարցմանց, 349).

**ՏՈՒԲԻՒ** - Իսկ Սիրաք և Իմաստութիւնն և Յուդիդն և Տուբիդն և Տուբիայն և Մակաբայեցիքն և Կտակքն և այլք, չեն յայսմ համարի: - (Գիրք հարցմանց, 451).

**ՏՈՒԲԻՂ, ՏԻԲՈՒԹ** - Զոր ի տուբիթն ասէ, (յորժամ կացեր յաղօթս և նուն քո սառա, ես մատուցի զաղօթս ձեր առաջի սրբոյն:)- (Գիրք հարցմանց, 59).

**ՐԱԽԱԲ** - Եւ նշանն րախաբ պոռնկի: - (Գիրք հարցմանց, 494).

**ՓԱՂԵԿ** - Անունք Կանանց Նահապետացն.... Փաղեկայն դուրնա՛: - (Գիրք հարցմանց, 299).

**ՓԱՅԼԱԾՈՒ** - Եւ է երկինք՝ է գօտիքն են է մոլորակացն. որ է Զոհա՛լն. Երևա՛կն. Հրա՛տն. Արեգա՛կն. Լուսնթա՛գն. Փայլա-ծո՛ւն և Լուսինն: - (Գիրք հարցմանց, 183).

**ՓԱՆՈՒԷԼ** - Իններորդ՝ փանուէլ. յայտնութիւն աստուծոյ: - (Գիրք հարցմանց, 144).

**ՓԱՐԱՆ** - Եւ արքսրեցին զթէոդորոս գփարանու եպիսկոպոսն: - (Գիրք հարցմանց, 543).

**ՓԱՐԷՍ** - Թամար՝ որ ծնաւ գփարէս ի յուդայէ՛: - (Գիրք հարցմանց, 300).

**ՓԱՐԻՍ** - Երկրորդ՝ զի կամեր զա՛զգն հարցանել թէ յուդայի ցե-դէն և փարիսէ՛ն իցէ, զի սպանցէ զնա: - (Գիրք հարցմանց, 427).

**ՓԵԳՈՎՐԱՅ** - Փեգովրայ տեղի՝ էր կոռց. և դևքն չտային թոյլ թաղել զմարմինն, մինչև սաստեաց միքայել հրեշտակապետն ասելով, (սաստեացէ՛ ի քեզ տէր.) որպէս յա՛յտ է ի կաթուղիկէից վերջին թուղթն: - (Գիրք հարցմանց, 409).

**ՓԵՆԵՀԷՍ, ՓԵՆԵՀԷԶ** - Նա՛խ՝ զի հրամանաւն աստուծոյ էր. որպէս պոռնկութիւնն ովսէի և սպանութիւնն փենեհէսի ո՛չ էր մեղք: - (Գիրք հարցմանց, 337).

**ՓԵՍԻՈՍ** - Եւ անուն փարաւոնի որ ընկղմեցաւ՝ փեսիոս. և ոմանք կանաքարիս կոչեն: - (Գիրք հարցմանց, 337).

**ՓԻԼԻՍՈՆ** - Տիտոսի: Փիլիմոնի: - (Գիրք հարցմանց, 450).

**ՓԻԼԻՊՊՈՍ** - Ներքինոյն զոր փիլիպպոս մկրտեաց փոթամո՛ւս էր: - (Գիրք հարցմանց, 495).

**ՓԻԼՈՆ ԻՄԱՍՏՈՒՆ** - Ապա ուրեմն համաձայնելի է մեզ փիլոնի իմաստնոյ. որ անծորելի է ասէ պտուղն և անթափ տերնն: - (Գիրք հարցմանց, 224).

**ՓԻՍՈՆ ԳԵՏ** - Զմրուխտ. կանա՛չ է և դեղնագոյն. գտանի ի փիստն գետ. Ղևի՛ է և Յոհաննէս: - (Գիրք հարցմանց, 348).

**ՓԼԱԲԻԱՆՈՍ** - Եւ թղթով նգովեցին զԷստիքէս և զփլաբիանոս և զղոմնաս և զտումարն լսոնի: - (Գիրք հարցմանց, 542).

**ՓՈԹԱՍՈՍ** - Ներքինոյն զոր փիլիպպոս մկրտեաց փոթամո՛ւս էր: - (Գիրք հարցմանց, 495).

**ՓՈԿԵՂԵԴԷՍ** - Փոկեղեղէս եղբայր նորա՝ արար զերկրորդ ձայնն ի դարբնականէ՛. - (Գիրք հարցմանց, 640).

**ՓՈՏԻՆԱ** - Այլ և սամարուիի կնոջն լուսինա՛ էր անունն: ...Տեռատեսին փոտինա: - (Գիրք հարցմանց, 495).

**ՓՈՏԻՆՈՍ** - Դարձեալ՝ մի բնութիւն համբաւեն մարկեղոս և փոտինոս: - (Գիրք հարցմանց, 82).

**ՓՈԻԱ** - Նախ փուա արքայ ասորեստանեայց ել ի վերայ իսրա-յելի: - (Գիրք հարցմանց, 446).

(ՔԱՂԱՔ) **ԲԵԹԱՆԻՈՅ** - Վասն այն եհան զաշակերտսն արտաքոյ քաղաքին բերթանիոյ: - (Գիրք հարցմանց, 519).

(ՔԱՂԱՔ) **ԵՐՈՒՍԱՂԷՄ** - Զի արտաքոյ երկնային քաղաքին եւմի է՝ տանջանաց տեղի, ուր մեղաւորքն ժողովին: - (Գիրք հարցմանց, 748).

(ՔԱՂԱՔ) **ՆԱՄԻԶԵՒԱՆ** - Երրորդ՝ նշանն սրբոյն յակոբայ մծբնայ հայրապետին. և գետոն արկուռի՝ ուր տնկեաց այգի. և քաղաքն նախիջևան, ուր ինքն նոյ հանգուցեալ է ի տապանի: - (Գիրք հարցմանց, 295).

**ՔԱՂԵՐ** - Դարձեալ՝ քաղէք և յետու. հին և նոր կտակարանք. որք զհանդերձեալն մեզ պատմեն. և զյաղթելն անմարմին թշնամոյն: - (Գիրք հարցմանց, 380).

**ՔԱՂԿԵՂՈՆ** - Ըստ այսմ օրինակի և նոր հերձաձօղք քաղկեդոնիկք նեռին կարապետք. հետևողք նեստորի անիծելոյ՝ և լնոնի պղծոյ: - (Գիրք հարցմանց, 34).

**ՔԱՍ** - Հայկն յաբերթի. և Բէլն ի քամայ որսորդ նոցա: - (Գիրք հարցմանց, 297).

**ՔԱՆԱՆ** - Վեց քաղաքաց հրամայեաց որոշել ապաստանի և տալ քահանայից. **գ** յերկիրն քանանու և **գ** յայնկոյս յորդանանու: - (Գիրք հարցմանց, 392).

**ՔԱՍԲԻ** - Նա՛խ՝ զի վրէժխնդիր եղև օրինացն աստուծոյ. որպէս փենէհէզ սպան զգամբրի և զքասքի. և սամուէլ զագագ: - (Գիրք հարցմանց, 444).

**ՔԵԲՐՕՆ, ՔԵԲՐՈՆ** - Նախ ի բերլեհեմ. և ապա՛ ի քեքրօն. և յետ եօթն ամաց ի վերայ ամենայն իսրայելի օծաւ: - (Գիրք հարցմանց, 673).

**ՔԵՂԿԻ** - Յետ որոյ քեղկի քահանայ որ էր հայր երեմիայի՝ եգիտ զերկրորդ օրէնքն և մատոյց առ ովսիա. և գնաց առ ողոյիկին մարգարէ հարցանել. - (Գիրք հարցմանց, 447).

**ՔԵՏՈՒՐ** - Սեփովրա էր դուստր ռագուելի քրմի՝ որդոյ դեղանայ. որդւոյ յեկտանայ. որդւոյ աքրահամու ի քետուրայ կնոջէ: - (Գիրք հարցմանց, 330).

**ՔԻՆՈՍՓԷՆԷՄ** - Եւ ապա՝ քինոսփենէս հմուտ ձայնից գազանաց և թռչնոց, զատուցանէ՝ ըզկողմն առաջին ձայնին: - (Գիրք հարցմանց, 640).

**ՔԻՐԱՍ** - Զի գտեղին յերուացւոցն գնեաց դաւիթ. և ճարտարապետն քիրամ տիրացի էր որ շինեաց. և քիրամ արքայ զփայտն առաքեաց: - (Գիրք հարցմանց, 440).

**ՔՈՂՈՂ ԳՈՍՈՐ** - Եւ յորժամ կոտորեաց զթագաւորսն քողող զոմորայ, եցոյց թէ թագաւոր թագաւորա՛ց է: - (Գիրք հարցմանց, 300).

**ՔՈՐԱԶ** - Եւ ծնունդն ի քորագին. և սնունդն ի բերսայիդայ. և թագաւորեալ ի բիւզանդիայ: - (Գիրք հարցմանց, 706).

**ՔՈՒՍԻ** - Նախ բնական իւելքն. որ ի բարեխառն կազմուածոյ հանդիպի. որպէս էր՝ ակիտովելին և քուսեայ բարեկամին դաւթի: - (Գիրք հարցմանց, 537).

**ՔՍԱՆԹԻՄ** - Եզիպտոսի իշխանին քսանթիս կոչէին որ չարչարիչն էր իսրայելի: - (Գիրք հարցմանց, 330).

**ՔՐԻՍՏՈՍ** - Այլ արդ՝ է քրիստոս ամենայն՝ սիրով յօդեալ են ի միմեանս՝ և բարեկարգեալք: - (Գիրք հարցմանց, 21).

**ՔՐԻՍՏՈՍ ՅԻՍՈՒՄ** - Եօթներորդ՝ ըստ ուսման. որպէս աշակերտք ծնունդք կոչին վարժողաց. եթէ ի մարմնա-կանս. և եթէ ի հոգեկանս. ըստ այնմ (ի քրիստոս յիսուս յաւետարանաւն ե՛ս ծնայ զձեզ): - (Գիրք հարցմանց, 308).

**ՕԳՈՍԻՆՈՍ** - Եւ օգոստինոս վարդապետ նոցա ասէ ի գիրս Երրորդութեանն, (ըմբռնել զաստուածային էութիւնն՝ պատկանի որդւոյն աստուծոյ ըստ բնութեանն. և որդւոյն մարդոյ՝ ըստ շնորհաց միաւորութեանն): - (Գիրք հարցմանց, 100).

**ՕԳՈՍՏՈՍ** - Կամ լինելի ազատ որպէս զօգոստոս, որում բոլոր աշխարհ ծառայեաց: - (Գիրք հարցմանց, 761).

**ՕԳՈՍՏՈՍ ԿՍՅՍԸ** - Իններորդ՝ օգոստոս կայսր, որ իբրև գերկաթ մանրեցեղ զամենեսին: - (Գիրք հարցմանց, 29).

**ՕԶՆԵՅԻ** - Չորրորդ՝ մեծ և արժանաւոր ժողովն եղև ի մանագ-կերտ. ի **Ճեղ** թուականին. հրամանաւ և արդեամբք գիտնաւոր և մեծ իմաստասիրին սրբոյն յոհաննու կաթողիկոսին հայոց օձնեցոյ: - (Գիրք հարցմանց, 545).

**ՕՍԻԴ** - Այլ աշխարհն օսիդ՝ զաւա՛ն է եսաւայ. զի օսիդն մի է յորդոցն եսաւայ յորոյ անուն կոչեցաւ երկիրն օսիդ: - (Գիրք հարցմանց, 327).

**Grigoryan Susanna - Examination the proper names of the “Book of Questions” of Grigor Tatevatsi** - Examination the proper names of the “Book of Questions” of Grigor Tatevatsi shows that these names are in a rich environment of historical information, and they can also serve as a separated dictionary of proper names, and become a supplement to ever published dictionaries of proper names.

**Григорян Сусанна - Исследование собственных имен «Книги вопрошений» Григора Татеваци** - Изучение собственных имен «Книги вопрошений» Григора Татеваци показывает, что эти имена находятся в богатой среде исторической информации, а также они могут служить самостоятельным словарем собственных имен, и стать пополнением когда-либо опубликованных словарей собственных имен.

ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ  
ԲԱՌԻՄԱՍՏՍՅԻՆ ՆՈՐ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ  
«ԳԻՐՔ ՎԱՍՏԱԿՈՑ» ԵՐԿՈՒՄ

Հայոց լեզվի պատմության միջին շրջանը (XII-XVI դդ.) զգալի հետաքրքրություն է ներկայացնում բառապաշարի հարստացման, իմաստային զարգացման ու քերականական փոփոխությունների տեսանկյունից: Միջնադարում հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած հասարակական տեղաշարժերն իրենց անմիջական անդրադարձն ունեցան հայերենի բառապաշարի վրա և նպաստեցին վերջինիս զարգացմանն ու հարստացմանը: Թեև միջին շրջանում մեր լեզվում ակտիվ կիրառությամբ սկսեցին աչքի ընկնել արաբերեն, պարսկերեն, թուրքերեն և եվրոպական լեզուների շատ բառեր, սակայն բառապաշարը շարունակեց զարգանալ նախ և առաջ հայերենի ներքին հնարավորություններով՝ բառակազմությամբ և իմաստափոխությամբ: Միջին հայերենով ավանդված մատենագրության մեջ կիրառվել են հայերենի բառակազմական բոլոր միջոցներով ստեղծված բազմաթիվ բառային նորակազմություններ, որոնք էլ ավելի են հարստացրել մեր լեզուն: Նորակազմ բառերից բացի, միջնադարյան մատենագրությունն աչքի է ընկնում նաև հին հայերեն բառերի՝ գրաբարին անծանոթ բազմաթիվ նոր իմաստներով, որոնց մի մասը, ակտիվորեն կիրառվելով միջին հայերենի շրջանում, պահպանվել և ամրագրվել է ժամանակակից հայերենի բառապա-

շարում: Է. Աղայանը վերջիններս պայմանականորեն անվանում է *միջինհայերենյան իմաստափոխություններ*<sup>1</sup>:

Միջին հայերենի համար բնութագրական է այն, որ բառիմաստի նոր դրսևորումները գործածվել են հին իմաստներից զուգահեռ՝ այդպիսով ստեղծելով բազմիմաստություն և, ինչ խոսք, հարստացնելով լեզուն:

Իմաստային նոր դրսևորումներ կարելի է գտնել միջին հայերենով ավանդված տարբեր սկզբնաղբյուրներում՝ ոչ միայն ինքնուրույն, այլ նաև թարգմանական գրականության հուշարձաններում: Այս տեսանկյունից կարելի է ասել՝ առանձնանում է 13-րդ դարի հայ թարգմանական գրականության կարևոր նմուշներից մեկը՝ «Գիրք վաստակոց» երկը («Գեոպոնիկա»)<sup>2</sup>: Այն նախատեսված է գյուղատնտեսությամբ զբաղվողների համար և ընդգրկում է հացամշակության, այգեգործության, գինեգործության, անասնաբուծության, թռչնաբուծության, մեղվաբուծության և այլ բնագավառներին վերաբերող շատ հարցեր: Կիլիկյան շրջանի հայկական մշակույթի ու գյուղատնտեսության վերելքն արձանագրող այս գիրքն արժեքավոր է ոչ միայն իբրև միջնադարյան մատենագրությամբ վկայված եզակի ձեռնարկ, այլ նաև անգնահատելի սկզբնաղբյուր է միջին հայերենի ուսումնասիրության համար: Այդ հանգամանքը նկատել է Ղ. Հովնանյանը՝ «Գիրք վաստակոց»-ը համարելով «ռամկական մատենագրութեան գլխաւորագոյն մատեանն»<sup>3</sup>:

Նշված երկում մեր հաշվումներով կիրառվել են հիմնա-

---

<sup>1</sup> Տե՛ս Էդ. Աղայան, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 75:

<sup>2</sup> *Գիրք վաստակոց*, Վենետիկ, 1877 (այսուհետև տեքստում՝ ԳՎ, օրինակների էջերը կնշվեն փակագծերում):

<sup>3</sup> Ղ. Զովնանեան, *Հետազոտութիւն նախնեաց ռամկօրէնի վրայ*, Կ. Ս., Վիեննա, 1897, էջ 92:

կանում գրաբարում գործածական բառերի\* 62 նոր իմաստներ\* (56 բառ, որից վեցը միաժամանակ երկու նոր իմաստով է գործածվել), որոնց մեծ մասը առաջին անգամ կամ եզակի վկայությամբ նոր իմաստով է հանդիպում հենց այս երկրում: Դրանք հիմնականում գյուղատնտեսությանը և առօրյա տնտեսությանը վերաբերող իմաստային նոր դրսևորումներ են: Նկատենք նաև, որ իմաստափոխություններից տասնույթը՝ հիմնականում բառիմաստի ընդլայնմամբ առաջ եկած եզակի դրսևորումներ, արձանագրված չեն նախ և առաջ «Միջին հայերենի բառարան»-ում<sup>4</sup>, որոշ բառերի դեպքում՝ նաև մյուս բառարաններում<sup>5</sup>:

«Գիրք վաստակոց» երկում բառերի իմաստային նոր դրսևորումները պայմանավորված են իմաստափոխական

---

\* Բացառություն են կազմում *մկրատ* և *քամի* գոյականները, որոնք գրաբարի մատենագիտության մեջ չեն հանդիպում, բնորոշ են միջին հայերենին, բայց ԳՎ-ում նոր իմաստով են գործածվել:

\*Նոր բառիմաստների մեջ ընդգրկել ենք նաև գրաբարի ժողովրդախոսակցական բառաշերտում գործածելի որոշ իմաստներ, որոնք, սակայն, մեզ հասել են միջին հայերենով ավանդված գրավոր մատենագրության, տվյալ դեպքում՝ «Գիրք վաստակոց»-ի միջոցով: ՆՀԲ-ն դրանք բերում է ռամկօրէն նշումով և իբրև աղբյուր նշում հենց այս երկը:

\* Նշված բառերը համապատասխան օրինակներով, բերվում են հոդվածի վերջում:

<sup>4</sup> Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան* (այսուհետև՝ ՄՀԲ), Ե., 2009:

<sup>5</sup>Մեր առանձնացրած բառերը ստուգել ենք հետևյալ բառարանների տվյալներով. *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի*, Վենետիկ, 1846, *Նոր բառգիրք հայկազնեան լեզուի* (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, 1836-37, Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), Ե., 1971-1979, Ստ. Մալխասեանց, *Հայերեն բացատրական բառարան*, Ե., 1944, Հ. Աճառեան, *Հայերեն գաւառական բառարան*, Թիֆլիս, 1913, Լեզվի ինստիտուտի հրատարակած «*Հայոց լեզվի բարբառային բառարան*», Ե., 2001-2012: **Նորայր Բյուզանդացի**, «*Բառգիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց*» (Մարտիրոս Մինասյանի հրատարակությամբ), Ժնև, 2000:

տարբեր երևույթներով, որոնց հիմքում ընկած է հասկացությունների միջև եղած որևէ նմանություն կամ առնչություն: Նոր բառիմաստներն այս երկում հիմնականում առաջ են եկել խոսքիմասային տեղաշարժերի, բառիմաստի ընդլայնման և նեղացման ճանապարհներով: Միջին հայերենի պարագայում, կարծում ենք, դժվար է հստակ խոսել իմաստափոխության այս կամ այն կոնկրետ տեսակի մասին երկու պատճառով.

ա) բառերի գրաբարյան իմաստները շարունակում են մնալ հիմնական, բայց դրանց զուգահեռ կիրառվում են նոր իմաստներ, ընդ որում մի դեպքում նոր նշանակություններն առաջանում են հասկացության ծավալի ընդլայնմամբ, մյուս դեպքում՝ նեղացմամբ և մասնավորմամբ,

բ) իմաստափոխության տեսակները երբեմն իրարից դժվար է տարանջատել, քանի որ դրանք կարող են միասնաբար հանդես գալ<sup>6</sup>, այսինքն՝ միևնույն բառի նոր իմաստը կարելի է դիտել և՛ ընդլայնում և՛ նեղացում: Այսպես, օրինակ՝ *գան* բառի՝ «բույսի վնասված մաս» նշանակությունը առանձին վերցրած՝ իբրև մասնագիտական իմաստ, իմաստի նեղացում է, բայց քանի որ *գան*-ը, պահպանելով իր «ծեծ» նշանակությունը, ստացել է նաև «վերք» և «բույսի վնասված մաս» իմաստները, գործ ունենք իմաստի ընդլայնման հետ:

Վերոնշյալ հանգամանքները հաշվի առնելով՝ մենք պայմանականորեն առանձնացրել ենք ԳՎ-ում կիրառված իմաստային նոր դրսևորումների երեք խումբ.

ա) **Խոսքիմասային տեղաշարժերով** պայմանավորված նոր բառիմաստներ: Վերջիններս հիմնականում առաջ են եկել

---

<sup>6</sup> Տե՛ս **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., էջ 107:

հատկանշային իմաստի մեջ առարկայական նշանակություն կամ առարկայական նշանակության մեջ հատկանշային իմաստ զարգանալու ճանապարհներով<sup>7</sup>:

**Ապրացու** բառը գրաբարում ածական է և ունի «ապրեցնող, փրկող» նշանակությունը: Առձեռն բառարանը տալիս է ածականական երկու իմաստ՝ «ապրելու միջոց» և «ապրող, նա, որ պիտի ապրի»<sup>8</sup>: Ստ. Մալխասյանցը արդեն եղածին զուգահեռ, իբրև գավառական բառ կամ նշանակություն, բերում է նաև «ապուրի համար պետքական» իմաստը<sup>9</sup>: Վերջինս էլ *ապրացու, ապուրցու, ապրցու* ձևերով կիրառվում է հայերենի մի շարք բարբառներում<sup>10</sup>:

ԳՎ-ում *ապրացու*-ն գործածվել է բոլորովին այլ՝ «երկար ժամանակ բան պահելու՝ *ապրեցնելու* տեղ, մառան» գոյականական իմաստով. «Եւ ոմանք թգնւոյն տերնն *ապրացուին* ներքն փռեն 'ի կերչէն պահէ» (31): Այս նոր իմաստը, ինչպես արդեն տեսանք, արձանագրված չէ ՄՀԲ-ում և մյուս բառարաններում<sup>11</sup>: Նկատենք մի հետաքրքիր հանգամանք. «Առձեռն բառարան»-ը, նշված բառի համար բերելով

---

<sup>7</sup>Սրա մասին տե՛ս **Լ. Խաչատրյան**, *Գոյականի և ածականի իմաստափոխությամբ պայմանավորված խոսքիմասային տարարժեքությունը հին հայերենում*, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 1990, № 8, էջ 28-30:

<sup>8</sup>Տե՛ս *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի*, էջ 95:

<sup>9</sup> **Ստ. Մալխասեանց**, *Հայերէն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՀԲԲ), Ե., 1944, հ.1, էջ 211:

<sup>10</sup> Տե՛ս **Հ. Աճառեան**, *Հայերէն գաւառական բառարան*, Էմինեան ազգագրական ժողովածու, Թիֆլիս, 1913, էջ 130: *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ.1, Ե., 2001, էջ 95:

<sup>11</sup> *Ապրացու* բառը վերոհիշյալ օրինակով իբրև գոյական բերում է **Նորայր Բյուզանդացին** իր «*Բառգիրք ստորին հայերենի ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց*» (Մարտիրոս Մինասյանի հրատարակությանը), Ժնն, 2000, գրքում (էջ 67), սակայն իմաստը չի նշում:

«ապրելու միջոց» իմաստը, փակագծում նշում է *տապան Նոյի*<sup>12</sup>, այսինքն՝ տապանը դիտվում է իբրև «ապրեցնող միջոց»: Սրանից կարելի է հասկանալ, որ *ապրացու* բառը իմաստի ընդլայնմամբ ԳՎ-ում կիրառվել է նաև «ապրեցնող տեղ» նշանակությամբ:

**Բերան** բառը գրաբարում բազմիմաստ գոյական է և գործածվում է «1. բերան (կզմիս.), 2. անցք, մուտք, 3. սայր, շերք, 4. անձ, դեմք, մարդ, 5. գետի ճյուղավորում, բերան, 6. հրաման, 7. սկիզբ» իմաստներով<sup>13</sup>: ԳՎ-ում *բերանը* քանիցս կիրառվել է միջին հայերենին բնորոշ «անգամ» մակբայական իմաստով. «Եւ ապա երրորդ *բերան* ձէթն որ առնուս, է յոռին և վատթարն»: «Եւ յառաջին *բերանն* որ ելանէ՝ այն է լավն», «Եւ երբ զայս երկու *բերանս* առնուս, աղ մանր կամ նաղրուն 'ի ձէթն ա՛ծ» (184): ՆՀԲ-ն ռամկորեն նշումով բերում է *մի բերան* բառակապակցությունը՝ «մի անգամ» իմաստով՝ հղելով Ոսկիփորիկ միջնադարյան ժողովածուին<sup>14</sup>: *Բերան*-ի «անգամ» իմաստը, գործուն լինելով խոսակցական լեզվում և բարբառներում<sup>15</sup>, պահպանվել և ամրագրվել է նաև ժամանակակից հայոց լեզվում<sup>16</sup>:

**Ծայր** գոյականը, որ գրաբարում ունի «վերջ, գագաթ, կատար» իմաստները, միջին հայերենում ևս իմաստափոխության է ենթարկվել՝ կիրառվելով ածականական «քիչ» իմաստով: Վերջինս *մի անորոշ դերանվան* համադրմամբ ԳՎ-

---

<sup>12</sup> Տե՛ս նշվ. տեղում, էջ 95:

<sup>13</sup> Տե՛ս Ռ. Ղազարյան, *Գրաբարի բառարան*, Ե., 2000, հ.1, էջ 283:

<sup>14</sup> Տե՛ս ՆՀԲ, հ.1, էջ 482:

<sup>15</sup> Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 183, ՀԼԲԲ, հ.1, Ե., 2001, էջ 93:

<sup>16</sup> *Ժամանակակից հայոց լեզվի բառարան*, հ.1, Ե., 1969, էջ 316 (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), Էդ. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 188:

ում, ինչպես նաև 13-րդ դարի մեկ այլ՝ «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» երկում գործածվել է «մի քիչ» նշանակությամբ. «...նա առնուն *ծայր մի* աղ և լնուն ի բերանն»: «Եւ այն է լաւ, որ յետևէն *ծայր մի* ստեպ բանաս զպատուհանսըն»<sup>17</sup>: Նկատենք, որ ԳՎ-ում *ծայր մի*-ն մակբայական իմաստով կիրառվել է նաև բայի հետ: Վերջինս արձանագրված չէ ՄՀԲ-ում:

**Կուշտ** գոյականը, որ փոխառություն է պահլավերենից, գրաբարում հայտնի է իր «կող», «կողք» և «փոր» իմաստներով<sup>18</sup>: Միջին գրական հայերենում արդեն հանդիպում են վերջինիս ածականական և մակբայական կիրառությունները՝ «կշտացած» (*փոր* իմաստի ընդլայնմամբ) իմաստով<sup>19</sup>, ինչպես՝ «Որ միշտ *կուշտ* կենան և ճարտար զարգանան» (216):

ՀԱԲ-ում գտնում ենք «կող» և «փոր» իմաստները և դրանցից կազմված *կշտապինդ*, *թուլակուշտ* բառերը, որոնք առնչվում են *փոր*-ին: Հ. Աճառյանը «յագ, յագեցած» իմաստով վկայակոչում է Կ. Երզնկացուն և Սմբատի Դատաստանագիրքը՝ նշելով, որ տվյալ իմաստով գործածական է միայն հետին հայերենում: Նա բերում է սրանից կազմված մի շարք գավառական կազմություններ՝ *կշտանալ*, *կշտում*, *անկշտում*, *կուշտուկուռ*, *կուռուկուշտ*, *կուշտ-կուշտ*, *կուշտփոր*, *կշտահաւ*, *կշտափորիկ*, *կշտապատառ* և այլն<sup>20</sup>:

Պետք է նշել, որ «հագեցած, կշտացած» իմաստը ևս պահպանվել ու ամրագրվել է ժամանակակից հայերենի բառապաշարում, ընդ որում նկատենք, որ *կուշտ*-ի՝ գրաբարի

---

<sup>17</sup>Տե՛ս *Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ* (այսուհետև՝ ԲՁ ), Ե., 1980, էջ 88, 195:

<sup>18</sup> Ռ. Ղազարյան, *Գրաբարի բառարան*, հ.1, էջ 672:

<sup>19</sup> ՄՀԲ, էջ 386:

<sup>20</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 2, Ե., 1973, էջ 660:

առաջնային նշանակությունները մնացել են բարբառային և ժողովրդախոսակցական լեզվում և արդի բացատրական բառարաններում հենց այդպես էլ ներկայացվում են<sup>21</sup>:

**Կոր** ածականը գրաբարում ունի «*ծուռ, կեռ*», *թեքված* իմաստները, իսկ ԳՎ-ում, ինչպես և միջին հայերենում, վերջինս նաև գոյական է և նշանակում է «կարիճ», ինչպես՝ «Եւ թէ հասանի ի վաստակաւորն ցաւ ինչ ի թիւնաւորէ ի *կորէ*, եթէ տանու *կոր* լինի և եթէ վայրի՝ նա թուրիախի հին զինին օգտէ» (8): «Եւ թէ *զկորն* ծխես ՚ի կրակն, նա զինչ ՚ի մէջ տանն *կոր* կենայ՝ փախչին» (78): «Եւ որչա՞փ գովեմ՝ երբ գովելի է. զի ով առնու զջուրն նորին և զձեռնսն օծանէ, և զօձն բռնէ և *զկորն*, նա չկարէ խայթել. և թէ զբողկն ՚ի վերայ *կորի* դնէ՝ սատակի» (166):

ՆՀԲ-ն «կարիճ» իմաստով *կոր*-ը տալիս է «ռամկօրեն» նշումով և հղում է հենց ԳՎ-ին<sup>22</sup>: Հ. Աճառյանը ամենից առաջ վկայակոչում է Անանիա Շիրակացու «Մնացորդք բանից» գիրքը (7-րդ դար), սակայն կասկած է հայտնում, որ համապատասխան հատվածները «յետին հավելուած են»: Այնուհետև XIII դարում վկայակոչում է ԳՎ-ը և Վարդան Այգեկցու առակները: Աճառյանը, *կոր* բառը հայակերտ դիտելով, վերջինիս «կարիճ» իմաստը բխեցնում է *կորի* նույն «ծուռ» իմաստից՝ նշելով, որ միջատի անվան փոխարեն գործածվել է վերջինիս հատկանիշը՝ նկատի ունենալով խայթոցի «կորուրթյունը»<sup>23</sup>: ԳՎ-ում գործածվել է նաև սրանից կազմված *կորահար* (կարիճից խայթված, էջ 165) նորակազմությունը: Կոր-ը «*կարիճ*» նշանակությամբ գործածվել է նաև հայերենի որոշ

<sup>21</sup> ԺՀԼԲԲ, հ. 3, Ե., 1974, էջ 243, ՍՀԲԲ, էջ 783:

<sup>22</sup> ՆՀԲ, հ. 1, էջ 1118:

<sup>23</sup> Տե՛ս ՀԱԲ, նույն տեղում, էջ 643-644:

քաբաբներում (Արաբկիրի, Մեքաստիայի, Բեյլանի, Հաճնի, Մարադայի)<sup>24</sup>: Նշենք, որ վերջինս միջին հայերենից անցել է ժամանակակից հայերեն<sup>25</sup>:

**Հետ** գրաբարյան նախադրությունը միջին հայերենի շրջանում կիրառվել է նոր իմաստներով: Գրաբարում բնիկ հայերեն *հետ* բառը, որ նախնական նշանակությամբ ունեցել է «ոտք», ապա «հետք» իմաստը<sup>26</sup>, առավելապես կիրառվել է նախադրության պաշտոնով՝ «հետը, միասին և հետևից», թեև *ի* և *զ* նախդիրների հետ ունի նաև մակբայական կիրառություն<sup>27</sup>: Միջին հայերենում պատկերն այլ է. *հետ*-ը, միավորելով նաև գրաբարյան *յետ*-ի իմաստները, հանդես է գալիս նաև «հետո» մակբայի և կապի նշանակություններով, իսկ թվականների հետ գործ է ածվում «անգամ» մակբայական իմաստով<sup>28</sup>: ԳՎ-ում վկայված են վերոհիշյալ նշանակությամբ զգալի թվով օրինակներ, ինչպես՝ «...վատ թագ այլագոյնք լինի և սևագոյն, և մեծությամբ երկու *հետ* մեծ քան զայլ մեղու» (191): «Ապա ցորեանն մնշեա այնու երեք չորս *հետ*» (20):

*Հետ*-ը «անգամ» իմաստով դեռևս մեկ դար առաջ քանիցս կիրառել է Մխիթար Հերացին. «Տո՛ւ ր զգարեջուրն *երկու հետ*»<sup>29</sup>, «...և զահդ շատ *հետեր* արա» (ՄՀՋՄ 125), «... և զայդ տուր *հետ մի քանի*» (ՄՀՋՄ 133):

*Հետ*-ի «անգամ» իմաստով կիրառությունը, ինչպես մի

---

<sup>24</sup> Տե՛ս *ՀԼԲԲ*, հ.3, Ե., 2004, էջ 159:

<sup>25</sup> Տե՛ս *ԺՀԼԲԲ*, հ.3, էջ 194, *ԱՀԲԲ*, էջ 761:

<sup>26</sup> *ՀԱԲ*, հ. 3, Ե., 1977, էջ 89:

<sup>27</sup> *ՆՀԲ*, հ.2 էջ 89:

<sup>28</sup> Տե՛ս *ՄՀԲ*, էջ 424:

<sup>29</sup> Տե՛ս **Մխիթար Հերացի**, *Ջերմանց մխիթարություն*, Վենետիկ, Ս. Ղազար, 1832, էջ 105 (այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում՝ ՄՀՋՄ հա-մառոտահրույթամբ):

թվականի հետ, այնպես էլ առանձին, բնորոշ է բարբառներին<sup>30</sup>:

**Միջավայր** բառը գրաբարում գոյական է և նշանակում է «միջին վայր միջասահման, մեջտեղի տարածություն»: ՆՀԲ-ն ռամկոթեն նշումով տալիս է նաև վերջինիս ածականական «միջասահման» կամ «գաղջ» իմաստը<sup>31</sup>: Միջին հայերենով վկայված մատենագրության մեջ արդեն արձանագրվում են ածականի՝ «միջին չափով, չափավոր» կիրառություններ: Նշված իմաստով *միջավայր*-ը զգալի գործածություն ունի հատկապես Մ. Հերացու բժշկարանում, ինչպես՝ «Եւ կերակուրք *միջավայրք* և պարկեշտ տուր» (ՄՀՁՄ 19): «Եւ երբ իմանաս, որ ջերմն ի վճար երեկ, զհիւանդն 'ի *միջավար* բաղանիս տա՛ր, որ ոչ տաք լինի, ոչ հով» (ՄՀՁՄ 14):

ԳՎ-ում *միջավայր* ածականը բառիմաստի ընդլայնմամբ կիրառվել է նաև «բարեխառն», նշանակությամբ. «...եւ եթէ *միջավայրք* լինի տեղն, նա ընդդէմ արեւելից լավ է» (48): Պետք է նշենք, որ ՄՀԲ-ում արձանագրված չէ նշված իմաստը:

Պահլավերենից փոխառված **պահ** բառը գրաբարում բազմիմաստ գոյական է՝ «1. պահպանություն, 2. զիշերային պահակություն, 3. կարճ ժամանակ, 4. կարճատև բանտարկություն, 5. զգուշություն, 6. պաշարում» իմաստներով<sup>32</sup>: ԳՎ-ում *պահ*-ը կիրառվել է իբրև ածական՝ «հղի» իմաստով, որը վերաբերում է շանը և ձիուն<sup>33</sup>. «Զհովատակն ի հետ պահեա տասն օր. և ապա երևեցո մատակին. Թէ ընդունի՝ չէ *պահ*, և թէ ոչ՝ *պահ* է» (202): «Եւ երբ *պահ* լինի, զարեհաց առնել տո՛ւր» (221): ԳՎ-ում այս իմաստով գործածվել է նաև *պահնալ*

---

<sup>30</sup> ՀԼԲԲ, հ.3, էջ 275:

<sup>31</sup> ՆՀԲ, հ.2, էջ 279:

<sup>32</sup> Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 379:

<sup>33</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 4, Ե., 1979, էջ 9:

«հղիանալ» բայը. «Եւ այսու ճանաչեալ յետ վազելոյն՝ թէ *պահցաւ* մատակն թէ ոչ» (202): «Նա բռնէ զսերմն և *պահնայ*: Եւ երբ *պահնայ*՝ յաւելի աշխատանաց պահեա. և թեթն և նօսք դարման տու՛ր» (202):

Հետագա դարերի աշխատություններում *պահ*-ը *հղի* իմաստով չի հանդիպում:

**Սերտ** ածականը գրաբարում բազմիմաստ բառ է և համապատասխանաբար ունի «ամուր, պինդ, խիտ, ջերմ, ստույգ, մտերիմ, սեփական» իմաստները<sup>34</sup>: ԳՎ-ում վերջինս կիրառվել է բոլորովին նոր՝ «շուտ-շուտ, ստեպ» մակբայի իմաստով, ինչպես՝ «*Սերտ* ծեծեա՝ նուաժ գջուրն՝ որ փրփրայ» (103): «*Սերտ* խառնէ որ չայրի» (105): «...Ա՛ն անուշահոտ սպիտակ ծաղկունք, և *սերտ* շփեա զկոճակն ՚ի ներքուստ» (192):

Նշված *սերտ*-ից ԳՎ-ում համապատասխանաբար կիրառվել է **սերտել** բայը՝ (գրաբարում՝ ամրացնել, պնդացնել) «շուտ-շուտ անել, կրկնել» իմաստով. «...և ՚ի հետ *սերտեն* զգարկերն այնչափ, որ միսն մեն մանրի» (194): Նկատենք, որ ինչպես *սերտ*, այնպես էլ *սերտել* բառերի նոր իմաստները արձանագրված չեն բառարաններում:

**բ) Բառիմաստի ընդլայնմամբ** առաջ եկած իմաստափոխություններ: Այս խմբում ընդգրկվել են այն բառերը, որոնք իրենց մեջ ներառել են նոր առարկաներ, հատկանիշներ և գործողություններ<sup>35</sup>:

**Ակն** բազմիմաստ գոյականը հենց գրաբարում մեզ ներկայանում է չորս համանուն բառերով, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին տարբեր իմաստներ ունի.

<sup>34</sup> ՆՀԲ, հ. 2, էջ 710:

<sup>35</sup> Տե՛ս **Էդ. Աղայան**, *Ընդհանուր և հայկական բառագիտություն*, էջ 102:

«Ակն<sup>1</sup> - աչք, տեսողություն

Ակն<sup>2</sup> - թանկագին քար

Ակն<sup>3</sup> - հույս

Ակն<sup>4</sup> - ակունք, աղբյուր»:

*Ակն* «աչք» բառը, ԳՎ-ում բառիմաստի ընդլայնմամբ, գործածվել է նաև բույսի համար՝ «բողբոջ, բույսի աչք» նշանակությամբ, ինչպես՝ «Ի կոճէն՝ որ է տակքն տնկացուին մինչև ի ծայրն՝ տասն *ակն* լինի» (51): «Եւ երբ տնկես՝ այնպես արա, որ ՚ի հողէն ՚ի վեր երկու *ակն* մէն կենայ» (60): «Երեք ու-ռին *ակներն* այնպէս ա՛ծ իրար, որ դորդ ընդդէմ իրերաց գան»: «Ի հօտելոյն ժամն սղոցով զինքն վերէւ *ակինն* կտրեա» (129):

Իբրև ԳՎ-ում գործածված նշանակություն՝ բառն արձա-նագրում են թե՛ ՆՀԲ-ը և թե՛ ՀԱԲ-ը<sup>36</sup>:

*Ակն*-ի «բողբոջ» իմաստը պահպանվել է և ամրագրվել արդի հայերենի բառապաշարում որպես բուսաբանական տերմին<sup>37</sup>:

**Արի և արիական** ածականները ինչպես գրաբարում, այնպես էլ հայերենում առհասարակ, ունեն «քաջ, խիզախ, սրտոտ» իմաստները, իսկ ԳՎ-ում երկու ածականներն էլ բառիմաստի ընդլայնմամբ *կենալ* բայի հարադրությամբ կիրառվել են «զգույշ» իմաստով՝ նշանակելով «զգույշ լինել», կամ «արթուն մնալ, զգուշանալ»։ «Լավ ականբացել և ականուռիցն *արի կենալ*» (62): «Արժան է այգեպանաց *արի կենալ* եւ հանապազ գտնկած ուռն վերացուցանել» (67): «Եւ իւրեանս ականուռին արի կացի՛ր, որ չթողուս, որ ելանէ» (128): «Բայց *արիական* պարտ է *կենալ*, որ բազմաճիւղք չթողուս, զի մի՛ տունկն վատուժացեալ աւերիցի» (64): «Եւ այսմ պարտ է

<sup>36</sup> Տե՛ս ՆՀԲ, հ.1, էջ 24, ՀԱԲ, հ.1, Ե., 1971, էջ 107:

<sup>37</sup> Տե՛ս ԺՀԼԲԲ, հ. 1, Ե., 1969, էջ 155, ՍՀԲԲ, էջ 92:

*արիական կենալ* եւ *հանել*» (143): «Յայնժամ բոլորութեամբն պարտ է, որ *արիական կենաս*, զի ծառն ի մատդաշուց ի վեր բոլոր գայցէ: Բայց ԺԵ օր ջրելոյ *արիական կա՛ց*» (147-148): «Եւ երբ ծնանի՝ յայնժամ պարտ է *արիական կենալ*, եւ մի՛ այլ զգարին թանար, ցամաք տուր» (203):

Նշված իմաստային նոր դրսևորումը թերևս բնորոշ է «Գիրք վաստակոց»-ին, քանի որ կիրառվել է միայն տվյալ երկում (չի հանդիպում հին և միջնադարյան մատենագրության մեջ)<sup>38</sup> և ՄՀԲ-ից (բերվում է միայն *արիական*-ը) բացի, մյուս բառարաններում ընդգրկված չէ:

**Բռնել** բայը գրաբարում նշանակում է «պահել», «ձեռքի մեջ առնել»<sup>39</sup>: Միջին հայերենում արդեն նշվածին ավելանում են «փակել», «ամրացնել», «պնդացնել» իմաստները<sup>40</sup>, իսկ ԳՎ-ում *բռնել*-ը բառիմաստի ընդլայնմամբ կիրառվել է իբրև չեզոք սեռի բայ՝ «արմատակալել, կպչել»։ «...զի երբ գան անձրևքն՝ ... յորժամ տնկես՝ աղէկ *բռնէ*» (53):

Վերջինս պատճառական ածանցի հավելմամբ, ինչպես նաև *տալ* բայի հարադրությամբ գործածվել է նաև իբրև ներգործական սեռի բայ. «...առնուն զուռն ի տակուցն՝ հանդերձ հենայովն, և տանին ի մաշարայ մի, կուռ հետ իրերաց տնկեն, և անդ *բռնեցնեն* և տակոեցնեն» (178) «Քաղցրացուցանեն և *բռնել տան* զտունկ և դարմանեն» (53):

ՄՀԲ-ն վերոհիշյալ իմաստի կիրառման համար նշում է միայն ԳՎ-ը:

*Բռնել* բայի «արմատակալել, կպչել» նշանակությունն

---

<sup>38</sup> Տե՛ս Ն. Բյուզանդացի, *Բաղկիք ստորին հայերենի ի մատենագրութեանց* ԺԱ-ԺԷ դարուց, էջ 80, ՄՀԲ, էջ 88:

<sup>39</sup> Տե՛ս ՆՀԲ, հ. 1, էջ 517:

<sup>40</sup> Տե՛ս ՄՀԲ, էջ 127:

ամրագրվել է արդի հայերենի բառապաշարում<sup>41</sup> և գործունե կիրառություն ունի ժողովրդախոսակցական բառապաշարում:

**Բուրդ** գոյականը թե՛ գրաբարում, թե՛ հայերենում առհասարակ ունի «կենդանիների մազ, գեղմ, ասր» իմաստը, իսկ միջին հայերենում բառը «մամուռ» նշանակությամբ գործածվում է նաև *ծառի* համար<sup>42</sup>: «Գիրք վաստակոց» գրքի վերջում բերվող բառացանկում վերջինս բացատրվում է իբրև «ծառի միջի փափուկ մասը»<sup>43</sup>, մինչդեռ բնագրում *բուրդը* նմանությամբ կիրառվել է մրգի համար, ընդ որում՝ երկու նոր իմաստով: Առաջին դեպքում *բուրդը*-ը նշանակում է «մրգի արտաքին թավշանման խավ», ինչպես՝ «Ա՛ն սպրկիկ սերկեկիլ հասուն, սրբած ի *բրդէն*» (123): «Ա՛ն նոր սերկեկիլ զաղւորն և ապա սրբեա զինքն ՚ի *բրդէն* չուխայ կտորով» (126):

ԳՎ-ում նշված իմաստով գործածվել է նաև *անբուրդ* կազմությունը. «Վասն դեղձենեաց, թէ որպես առնես, որ մեծ լինի և ջրով և *անբուրդ*՝ դեղձն» (156):

Երկրորդ իմաստով *բուրդը*-ը «մրգի կեղևի և միջուկի միջև գտնվող սպիտակ խավ» է նշանակում. «Եւ թէ նոնենւոյն և զկեռասենւոյն միջոյն *բուրդն*՝ այդ օրինակաւդ հանես, բերն կուտ չունենայ» (130): Բարբառներից մեկում էլ (Միվրիհիսար) *բուրդը*-ը նարնջի կեղևի և միջուկի միջև գտնվող սպիտակ խավն է մատնանշում<sup>44</sup>:

Նշված երկու նոր իմաստներն էլ արձանագրված չեն ՄՀԲ-ում, թեև Ն. Բյուզանդացին բերում է *տնկիներին առնչվող*

---

<sup>41</sup> Տե՛ս *ԺՀԼԲԲ*, հ.1, էջ 345, *ՍՀԲԲ*, էջ 204:

<sup>42</sup> Տե՛ս *ՍՀԲ*, էջ 126:

<sup>43</sup> Տե՛ս *ԳՎ*, էջ 242:

<sup>44</sup> Տե՛ս *ՀԼԲԲ*, հ. 1, Ե., 2001, էջ 224:

բուրդը՝ վկայակոչելով հենց ԳՎ-ի օրինակները<sup>45</sup>:

**Պազան** բառը գրաբարում ունի «գիշատիչ կենդանի», «փիղ», «օձ» և նաև ածականական «զազանաբարոյ» իմաստները<sup>46</sup>: ԳՎ-ում վերջինս կիրառվում է նաև ածականական «սաստիկ, թունդ» իմաստով, որը վերաբերում է աղաջրին և քացախին. «ի *զազան* աղջուր դնես» (173), «Թէ ուզես որ *զազան* առնես, դու չորս չափ ջուր դի՛ր և երեք չափ աղ» (186), «Տե՛ս որ քացախն *զազան* չլինի» (188): Նշենք, որ այս իմաստով *զազան*-ը գործածվել է նաև «Բժշկարան ձիոյ» երկում. «Դու ա՛ն քացախ, որ չլինի խիստ *զազան*, ու խառնէ ի ներս աղվեսու արոյն»<sup>47</sup>:

**Պան** գոյականը գրաբարին բնորոշ «ծեծ» իմաստին զուգահեռ միջին հայերենում ձեռք է բերել նաև «վերք, վնասվածք» նշանակությունը, որի կիրառությամբ էլ հաճախակի հանդիպում է միջնադարյան բժշկարաններում<sup>48</sup>:

ԳՎ-ում «վերք» իմաստով *զան*-ը մեկ անգամ է հանդիպում միայն. «Վասն պախրեի, որ կաղայ....լուս գլճղակսն տաք ջրով, և գիտ *զզանն*, և հին տաք մարդոյ գոգով լուս» (213):

Այս երկի համար առավել հատկանշական է *զան*-ի՝ «բույսի վնասված մաս» նշանակությունը, որ առաջ է եկել «վերք» իմաստի ընդլայնումով: ԳՎ-ում բազում օրինակներ կարելի է գտնել վերոհիշյալ նշանակությամբ, ինչպես՝ «Տե՛ս, թե *զանն* բարձր լինի ՚ի հողոյ առ մաղած հող և այծու աղբ և խառնեա ընդ իրար և շաղախ արա, և դի՛ր ի վերայ *զանին*: Եւ թէ ՚ի հողն մօտ լինի *զանն*՝ դու գաղբն և զհողն յիրեար խառնեա և

---

<sup>45</sup> Տե՛ս **Ն. Բյուզանդացի**, նշվ. աշխ., էջ 119:

<sup>46</sup> Տե՛ս *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի*, էջ 199:

<sup>47</sup> Տե՛ս *ՄՀԲ*, էջ 130:

<sup>48</sup> Տե՛ս **Ն. Բյուզանդացի**, նշվ. աշխ., էջ 127:

ծածկեա նոյն հոդովն. օգտէ *գանին*» (76), «... և 'ի յատակն օտար աղբ լից հող. և ըզտնկին *գաներն* կուով օ՛ծ և ապա դիր. նա անսղալ բռնէ» (179):

Որքան էլ զարմանալի կարող է թվալ, վերոնշյալ երկու իմաստներն էլ չենք գտնում ՄՀԲ-ում, թեև այնտեղ «վնասել» իմաստով արձանագրված է *գանել* բայը, ընդ որում բերվում է հենց ԳՎ-ի օրինակը<sup>49</sup>: *Գանել* բայը գրաբարում ունի «ծեծել, նախատել, կշտամբել» իմաստները, որոնք վերաբերում են մարդուն կամ կենդանուն, իսկ ԳՎ-ում իմաստային ընդլայնում է նկատվում. *գանել*-ը քանիցս կիրառվել է «ծառի արմատը կամ բույսը վնասել» իմաստով, ինչպես՝ «... և պատրաստ կաց 'ի բրելն որ չքշտես և չ*գանես* գտունկն» (65), «Յաղագս որ 'ի տունկն փորիչ կամ խոփ կամ այլ սուր իրք դիպի՝ և *գանէ* զինքն» (76), «Ա՛ռ գպտուղն ձեռօք քաղած որ չ*գանի*» (127):

Նկատենք, որ ԳՎ ում գործածված *գան* «բույսի վիրավոր մաս» և *գանել* «ծառի արմատին փորելու ժամանակ վնասել» բառերի իմաստային այս նոր դրսևորումները արձանագրել է Աճառյանը՝ իբրև սկզբնաղբյուր հղելով հենց ԳՎ-ն<sup>50</sup>:

**Գնալ** բայը, որ գրաբարում ունի «առաջ շարժվել, քայլել, հեռանալ, անցնել, հոսել» իմաստները, ԳՎ-ում կիրառվել է նաև «պակասել» նշանակությամբ՝ «Եփեա, որ երեք լիտրն *գնալ*» (112):

Հիշյալ նշանակությունը պահպանվել և ամրագրվել է արդի հայերենի բառապաշարում<sup>51</sup>:

---

<sup>49</sup> Տե՛ս ՄՀԲ, էջ 133:

<sup>50</sup> ՀՄԲ, հ. 1, էջ 514:

<sup>51</sup> Տե՛ս ՄՀԲԲ, էջ 249:

**Գոյանալ** բայը հայերենում աչքի չի ընկնում իր բազմիմաստությամբ, ունի «գոյություն ստանալ, առաջանալ», «բաղկանալ», նաև՝ «կազմակերպվել» իմաստները<sup>52</sup>: ԳՎ-ում, սակայն, *գոյանալ*-ը գործածվել է նոր՝ «աճել» իմաստով, ինչպես՝ «Բայց թե ի վատթար կաթեն փոխե ոք գտղայն՝ նա *գոյանայ* և գիրանայ» (60): Նշված իմաստը հենց ԳՎ-ի վկայմամբ գտնում ենք միայն ՄՀԲ-ում:

**Գտակ (գրբ. գդակ)** գոյականը ինչպես գրաբարում, այնպես էլ հայերենում առհասարակ, ունի «գլխարկ, գլխանոց» իմաստը: Հիմնական նշանակությունից բացի (94), ԳՎ-ում բառը իմաստային ընդլայնմամբ գործածվել է նաև ծաղկի համար՝ նշանակելով «ծաղկի միջի գդակաձև կամ թագաձև մաս». «Ա՛ռ գտողտն *գտակովն* և բարունակովն, և եփեա ջրով» (108):

ՄՀԲ-ում *գտակ*-ը բերվում է իբրև հնչյունական փոփոխության ենթարկված բառ (գրաբարի համեմատ), բայց նոր իմաստը չի նշվում, թեև վերոհիշյալ նշանակությունն արձանագրում են ն՛ ՄՀԲ-ն և ՛ չԱԲ-ը, ընդ որում երկուսն էլ որպես գրավոր աղբյուր վկայաբերում են հենց «Գիրք վաստակոց»-ը: ՄՀԲ-ն նշում է «գլխարկի նմանությամբ ասի և զայլոց իրաց»<sup>53</sup>, իսկ Աճառյանը բառը մեկնում է իբրև «ծաղիկների ընդունարանը, որի մեջ ծլում է ծաղիկը»<sup>54</sup>: Ստ. Մալխասյանը *գտակ*-ի համար իբրև երրորդ իմաստ նշում է «ծաղկի բաժակ»<sup>55</sup>:

**Երես(ք)** գոյականը գրաբարյան բազում իմաստներից բացի («մարդու երես», «տեսք», «մակերես», «անձ», «աչք»,

---

<sup>52</sup> Տե՛ս **Ռ. Ղազարյան**, *Գրաբարի բառարան*, հ. 1, էջ 335, ՀԲԲ, հ.1, էջ 458, *ԱՀԲԲ*, էջ 253:

<sup>53</sup> Տե՛ս ՄՀԲ, հ. 1, էջ 583:

<sup>54</sup> Տե՛ս չԱԲ, հ. 1, էջ 529:

<sup>55</sup> ՀԲԲ, հ.1, էջ 472:

«կեղծավորություն», «գիտակցություն», «իմաստ, նշանակություն», «պատճառով»), ԳՎ-ում կիրառվել է նոր՝ «շերտ» իմաստով. «Ա՛ն զպտուղն ձեռօք քաղած, որ չգանի և դի՛ր յաման. *երես* մի պտուղ, *երես* մի ըռազիան կամ սամիթ կամ մագտաքէի ցախ» (127): «Դի՛ր յաման, *երես* մի զսատապն կամ քերէֆս մինչեւ լցուի» (128): «*Երեսք* մի հող ա՛ծ և *երեսք* մի աղբ, և ապա հողով ծածկեա» (182): *Երեսք* գոյականով գործածվել է նաև *երեսք երեսք* կրկնավոր բարդությունը՝ «շերտ-շերտ» նշանակությամբ. «Եւ դիր *երեսք երեսք* մինչ ի վեր» (189):

Նկատենք, որ նշված «շերտ» իմաստը՝ ԳՎ-ում կիրառված համապատասխան օրինակներով, բերում է միայն Նորայր Բյուզանդացին, ապա նաև՝ ՄՀԲ-ն<sup>56</sup>:

**Զուգել** բայը, որը գրաբարում ունի «1. զույգ դարձնել, 2. միավորել, 3. Կապակցել, 4. համեմատել» իմաստները<sup>57</sup>, ԳՎ-ում գործածվել է նաև «սարքել, պատրաստել» նշանակությամբ, ինչպես՝ «Եւ զմորթին մաղ *զուգես*, և զսերմն այնու մաղես և ապա ցանես՝ օգտէ» (74): «Դեղ ընդհանրական, որ զգինին *զուգես*, որ հիւանդաց և առողջաց օգտակար լինի» (109): «Ձէթ *զուգեա՛* և օ՛ծ» (201):

ՄՀԲ-ն բերում է *զուգել*-ի՝ միջին հայերենին բնորոշ նշված իմաստը՝ վկայակոչելով 13-րդ դարի բանասաստեղծ Կոստանդին Երզնկացուն<sup>58</sup>, մինչդեռ 12-րդ դարում այն գործածել է Ներսես Շնորհալին իր հանելուկներում<sup>59</sup>: Հայերենի որոշ բարբառներ (Մուշ, Վան, Արաբկիր, Բաղեշ)<sup>60</sup> ևս ունեն

<sup>56</sup> Տե՛ս **Ն. Բյուզանդացի**, նշվ. աշխ., էջ 189, ՄՀԲ, էջ 189:

<sup>57</sup> Տե՛ս **Ռ. Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 450:

<sup>58</sup> Տե՛ս *ՄՀԲ*, էջ 209:

<sup>59</sup> Տե՛ս **Ն. Բյուզանդացի**, նշվ. աշխատ., էջ 204:

<sup>60</sup> Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայերեն գաղափարական բառարան*, էջ 324:

գուղել բայի «սարքել» նշանակությունը: Վերջինս, պահպանվելով միջին հայերենում, ամրագրվել է նաև արդի հայերենի բառապաշարում<sup>61</sup>:

**Թագ** գոյականը ԳՎ-ում գործածվել է միանգամայն նոր՝ «մեղուների թագուհի» իմաստով. «...և երբ մեղու կամենաս տնկել, դու յամեն կոճակ *թագ* մի դիր, նա այն զամեն մեղուքն ժողով պահե: Եւ *թագիտ* նշանք այս է. խարտեշ լինի և մեկուկէս մեծ քան զայլ մեղու. և որ զայս նշանքս ունենայ, լաւն այն է, և վատ *թագ*՝ այլագոյն լինի և սևագոյն, և մեծութիւն երկու հետ մեծ քան զայլ մեղու» (191):

*Թագ*-ի իմաստային այս նոր դրսևորումը տեղ չի գտել ՄՀԲ-ում, թեև այն արձանագրել են նախ Նորայր Բյուզանդացին<sup>62</sup>, ապա նաև՝ Աճառյանը՝ հղելով հենց ԳՎ-ն<sup>63</sup>:

**Լիճ** գոյականը, բուն «ծովակ» իմաստից բացի, ԳՎ-ում գործածվում է «այլուրի խյուս» նշանակությամբ. «Ա՛ն գարեալիւր, ջրով *լիճ* արա և լից յաման» (220): «Եւ այլք առնուն կաւ եւ *լիճ* առնեն եւ զկուզերն ի ներք թաթախեն եւ պահեն եւ յորժամ ուզեն, լուսնան եւ ուտեն» (133):

ՄՀԲ-ում ընդգրկված վերոհիշյալ իմաստը Մալխասյանցը բերում է իբրև հին բառ կամ նշանակություն<sup>64</sup>, իսկ Աճառյանը վերջինս դնում է գավառական ձևերի շարքում՝ հղելով ԳՎ-ն<sup>65</sup>:

**Խոռիլ // խոռել** ներգործական սեռի բայը գրաբարում է ունի «անցք բացել» և «մարմնի վրա վերք՝ փոս բացել» իմաստ-

---

<sup>61</sup> Տե՛ս *ԺՀԼԲԲ*, հ. 2, Ե., 1972, էջ 62, *ԱՀԲԲ*, էջ 385:

<sup>62</sup> Տե՛ս **Ն. Բյուզանդացի**, նշվ. աշխ., էջ 215:

<sup>63</sup> Տե՛ս *ՀԱԲ*, հ. 2, էջ 135:

<sup>64</sup> Տե՛ս *ՀԲԲ*, հ.1, էջ 833:

<sup>65</sup> Տե՛ս **Հ. Աճառյան**, նշվ. աշխ., էջ 282:

ները<sup>66</sup>: ԳՎ-ում վերջինս չեզոք սեռի կիրառությամբ է գործածվում և նշանակում է «պակասել»։ «Յայսպիսի հաւայէս խոովի և *խոռի* աճումն տնկիդ, և գոյացութիւնն *խոռի*» (177):

Նշված իմաստը առաջ է եկել նախորդի իմաստային ընդլայնմամբ, քանի որ անցք բացելը ինքնին ենթադրում է ամբողջությունը խախտելով պակասեցնել: *խոռիլ*-ի «պակասել» իմաստը հենց այդպես են մեկնում որոշ բառարաններ:<sup>67</sup>

Հիշյալ նշանակությամբ *խոռիլ* բայը ԳՎ-ից մեկ դար առաջ կիրառվել է Ն. Շնորհալու հանելուկներում<sup>68</sup>, թեև ՄՀԲ-ն հիշյալ աղբյուրը չի արձանագրում: Նշենք նաև, որ մի շարք բարբառներում բայը կիրառվել է «պակասեցնել» նշանակությամբ<sup>69</sup>:

**Ծառայել** բայի համար գրաբարի բոլոր բառարաններում բերվում են «ծառայություն անել», «ենթարկվել», «հպատակվել», «սպասարկել», «ծառայություն մատուցել» իմաստները<sup>70</sup>: Իսկ ահա ԳՎ-ում *ծառայել*-ը բառիմաստի ընդլայնմամբ կիրառվել է բույսի համար՝ «խնամել» նշանակությամբ. «...և աղբով և ջրով *ծառայեա*, մինչև 'ի բեր հասանի» (140): «Վասն զմեծ ծառսն տաճելոյ և *ծառայելոք*» (181): «Եւ զքո քուռակին ծառայութիւնն սրբելով եւ դարմանելով եւ արութեամբ իբր քո տղային *ծառայեա՛*» (203): Նույն իմաստը ԳՎ-ում արտահայտվել է նաև *ծառայութիւն առնել* հարադիր բայով. «Պարտ է զխօթ ոչխարն բաժանել ի յառողջէն... զերդ հիւանդաց *ծառայութիւն առնել*» (218):

---

<sup>66</sup> Տե՛ս **Ռ. Ղազարյան**, *Գրաբարի բառարան*, հ. 1, էջ 581:

<sup>67</sup> Տե՛ս *ՀԲԲ*, հ. 1, էջ 285, *ՄՀԲ*, էջ 328, *ՀԱԲ*, հ.2, էջ 398:

<sup>68</sup> Տե՛ս **Ն. Բյուզանդացի**, նշվ. աշխ., էջ 301:

<sup>69</sup> Տե՛ս *ՀԼԲԲ*, հ. 2, Ե., 2002, էջ 351:

<sup>70</sup> Տե՛ս *Առձեռն բառարան*, էջ 405, *ՆՀԲ*, էջ 1011, **Ռ. Ղազարյան**, նշվ. աշխ., էջ 607:

Ի դեպ, նշենք, որ Տարոնի բարբառում *ծառայել*-ը ունի «սնուցել, կերակրել» իմաստը<sup>71</sup>:

Որքան էլ զարմանալի կարող է թվալ, ՄՀԲ-ում արձանագրված է միայն բառի կրավորաձև տարբերակը՝ *ծառայվիլ* «խնամվել»<sup>72</sup>: «Խնամել, հիվանդին խնամք տանել» իմաստը գտնում ենք միայն Մալխասյանցի բառարանում<sup>73</sup>:

**Ծունզն** գոյականը կազմախոսական նշանակությունից բացի, ԳՎ-ում նմանությամբ գործածվել է նաև բույսերի համար. ինչպես՝ «Եւ 'ի հաստատած այգին, որ սարբնայով լինի չորս ուռ պարտ է թողուլ 'ի *ծունզն*. յամէն *ծունզ* երկու որթ ուռ» (63), «Դու 'ի մէկայլ տարին մայրան թողուս, որ է *ծունզ*» (64):

Գրաբարի բառարաններում արձանագրված է *ծունզ*-ի «հացաբույսերի ցողունների միացման տեղը» իմաստը, սակայն նկատի ունենալով, որ ՆՀԲ-ն և ՀԱԲ-ը (ունի նաև Մալխասյանցի բառարանը) այդ իմաստի համար իբրև աղբյուր վկայակոչում են հենց ԳՎ-ն<sup>74</sup>՝ վերջինս ևս դնում ենք իմաստային նոր դրսևորումների շարքում: Ի դեպ, *ծունզ*-ն՝ իբրև բուսաբանական տերմին ամրագրվել է արդի հայերենի բառապաշարում<sup>75</sup>:

**Ծփել** ներգործական բայը գրաբարում ունի «ալեկոծել, հուզել, խռովել» իմաստները<sup>76</sup>, իսկ ԳՎ-ում վերջինս բառիմաստի ընդլայմամբ կիրառվել է «ջրով լվանալ, շփել, օծել» իմաստով. «Շող ջրով զոլոքսն (ձիոյն) *ծփեա՛* աղէկ» (205):

---

<sup>71</sup> Տե՛ս *ՀԼԲԲ*, հ. 2, էջ 396:

<sup>72</sup> Տե՛ս *ՄՀԲ*, էջ 343:

<sup>73</sup> *ՀԲԲ*, հ.2, էջ 331:

<sup>74</sup> Տե՛ս *ՆՀԲ*, հ. 1, էջ 1027, *ՀԱԲ*, հ.2, էջ 472:

<sup>75</sup> Տե՛ս *ՄՀԲԲ*, էջ 664:

<sup>76</sup> Տե՛ս **Ռ. Ղազարյան**, նշվ. աշխ., հ. 1, էջ 617, *ՆՀԲ*, հ. 1, էջ 1029:

«*Ծփեա՛* զձին տաք ջրով: *Ծփեա՛* զփորն աղէկ. եւ թէ հապալաս դնես եւ դադան ի ջուրն եւ եփես եւ *ծփես*, օգտէ» (206):

ՄՀԲ-ն, արձանագրելով նշված իմաստը, վկայաբերում է 13-րդ դարի «Բժշկարան ձիոյ» երկը, իսկ ԳՎ-ի օրինակը չի նշվում<sup>77</sup>, մինչդեռ Աճառյանը *ծփել*-ի նոր իմաստը մեկնում է «մարմնին ջուր զարնելով լվալ» և բերում է հենց ԳՎ-ի օրինակը<sup>78</sup>: Վերոհիշյալ իմաստը, ինչպես և նախորդը կիրառվել է միջին հայերենի շրջանում և չի ամրագրվել բացատրական բառարաններում:

Ուշագրավ է հատկապես **կայթք** բառի կիրառությունը: *Կայթք* կամ *կայթիւն* գոյականը գրաբարում գործածվում է «ոտքերի դոփյուն», «թռչկոտել»-ի կամ «ծափ տալ»-ի նշանակությամբ, ընդ որում ՆՀԲ-ն վերջինս գուգակցում է *ճայթիւն* և *ցայտիւն* գոյականների հետ<sup>79</sup>, իսկ Աճառյանը *խ* և *կ* հնչյունների լծորդությամբ միացնում է *խայտալ* և *կայտռել* բայերը<sup>80</sup>: Նշված բոլոր բառերն էլ արտահայտում են ոտքերի կամ ձեռքերի միջոցով ուրախության արտահայտելը: Իսկ ահա ԳՎ-ում *կայթք*-ը հանդես է գալիս նոր իմաստով՝ նշանակելով «անասունների ծնկներն ու ազդրերը». «*Կայթքն* լայն ըստ չափուն» (199):

ԳՎ-ի բառարանում տրված բացատրությունը<sup>81</sup> և համապատասխան օրինակը բերում է Նորայր Բյուզանդացին<sup>82</sup>,

---

<sup>77</sup> ՄՀԲ, էջ 351:

<sup>78</sup> Տե՛ս *ՀԱԲ*, հ. 2, էջ 474:

<sup>79</sup> Տե՛ս *ՆՀԲ*, հ. 1, էջ 1044:

<sup>80</sup> Տե՛ս *ՀԱԲ*, հ. 2, էջ 506:

<sup>81</sup> Տե՛ս *ԳՎ*, էջ 248:

<sup>82</sup> Տե՛ս *Նորայր Բյուզանդացի*, նշվ. աշխատ., էջ 339:

ապա նաև արձանագրում է ՄՀԲ-ն<sup>83</sup>, իսկ մյուս բառա-  
րաններում նշված իմաստը տեղ չի գտել:

**Կոճակ** գոյականը, որ ըստ ՆՀԲ-ի՝ *կոճ-ի* «ռամկօրեն» տարբերակն է, գրաբարում մի քանի իմաստ ունի. «1 դռան վերևի շրջանակի ձողափայտ, 2 վեգ, ճան, 3 ոտքի թաթից վերև զգված ոսկոր, 4 մատների ոսկորներն իրար միացնող խաղը»<sup>84</sup>: Միջին հայերենում բառը հանդես է գալիս «փեթակ» և «ճարմանդ» իմաստներով<sup>85</sup>: ԳՎ-ում *կոճակ*-ը միաժամանակ գործածվել է երկու իմաստով. մի դեպքում՝ կիրառվել է իբրև «փեթակ», ինչպես՝ «Եւ բուռն ու աղէկ *կոճակ*, որ իսկի կենայ, տախտակով շինածն է փիճի կամ կաղնի... ի *կոճակին* քովն հինգ, վեց ծակայլ թո՛ղ, որ հով մտանէ... փաթափեա իրօք *կոճակն* մինչ ի յիւր տեղն տանիս, դնես» (190): «...երբ ելանեն մեղուքն ՚ի *կոճակէն* յարօտ՝ և դատրկի *կոճակն*, նա դու ճարտար *զկոճակն* սրբէ ՚ի ցեցէ և ՚ի սարդոստայնէ և յաղբէ և յամեն աղտէ» (192): Մյուս դեպքում՝ *կոճակը*, «ճարմանդ» իմաստի ընդլայնմամբ գործածվել է «բույսի աչք, կոկոն» նշանակությամբ, ինչպես՝ «Եւ այսու՝ սերմն ուժով և հաստ տակովիչ և *կոճակ* առնու, և զհատն գէր բերէ» (24):

Նշված երկու իմաստներն էլ բնորոշ են հայերենի որոշ բարբառների, ընդ որում՝ «փեթակ» իմաստը ունի Համշենի բարբառը, իսկ «բողբոջ»-ը բնորոշ է Կեսաբիայի և Դերսիմի բարբառներին<sup>86</sup>: Առաջինը կիրառվել է միայն միջին հայերենի շրջանում, իսկ երկրորդը, ավելի գործուն լինելով, պահպանվել

---

<sup>83</sup> Տե՛ս ՄՀԲ, էջ 357:

<sup>84</sup> Տե՛ս ՆՀԲ, հ.1, էջ 1113:

<sup>85</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 381:

<sup>86</sup> Տե՛ս ՀԼԲԲ, հ. 3, Ե., 2004, էջ 172:

և ամրագրվել է արդի հայերենի բառապաշարում<sup>87</sup>:

**Կուտ** գոյականը գրաբարում նշանակում է «սերմ, հատիկ»<sup>88</sup>, իսկ ահա ԳՎ-ում, ապա նաև միջնադարյան բժշկաբաններում գտնում ենք բառիմաստի ընդլայնմամբ կիրառված «կորիզ» իմաստը<sup>89</sup>, ինչպես՝ «Իւր *կուտն* այսպէս ցանուի, որ ի դեղձէն սակաւ մի ի վերայ *կտին* թողուս: Եւ փորձած է, որ երբ պտտուղ ունենայ, նա ի *կտին* տեղը դամոն ընծայի և ի դրուցէ՝ դեղձ: Եւ թէ ուզես, որ դեղձն ի իւր ծառն առանց կտի լինի, ...նա դեղձն անկուտ լինի» (156): «Խաղողի *կուտն* վնաս է, ձու ածել չտայ» (225): Նշված իմաստով ԳՎ-ն ունի նաև *կտաբույս* կազմությունը: Նշենք, որ թե՛ վերջինս և թե՛ «կորիզ» նշանակությունը պահպանվել և ամրագրվել են ժամանակակից հայերենի բառարաններում<sup>90</sup>:

ԳՎ-ում *կուտ*-ը համանուն ձևով հանդես է գալիս նաև իբրև «ծանրության չափ», ինչպես՝ «Եւ այլ ոմանք առնուն զընտանի աղն կամ զկողբացին չորս տրամ, և մուտ չորս *կուտ* և հաւկթի սպիտակուց, ՚ի մի խառնեն» (106): Նշված համանուն բառը կիրառվում է նաև հայերենի բարբառներում<sup>91</sup> և իբրև այդպիսին էլ ամրագրված է հայերենի բացատրական բառարաններում<sup>92</sup>:

**Հեր** գոյականը բառիմաստի ընդլայնումամբ կիրառվել է ոչ միայն իբրև «մարդու մազ», այլև՝ «բույսի մազմզուկ», ինչպես՝ «Եւ զայն գետինն թէ ուզենայ ոք որ զքաղն սպառէ, յայս ամիսս հնձէ զթրմզին *հերն* և ՚ի վերայ խոտին կրէ» (39): «Եւ

---

<sup>87</sup> Տե՛ս *ԺՀԼԲԲ*, հ. 3, Ե., 1974, էջ 172, *ԱՀԲԲ*, էջ 752:

<sup>88</sup> Տե՛ս **Ռ. Ղազարյան**, նշվ. աշխ., հ. 1, էջ 673:

<sup>89</sup> Տե՛ս *ԱՀԲ*, էջ 387:

<sup>90</sup> Տե՛ս *ԺՀԼԲԲ*, հ. 2, Ե., էջ 246, *ԱՀԲԲ*, էջ 785:

<sup>91</sup> Տե՛ս *ՀԼԲԲ*, նույն տեղում, էջ 216:

<sup>92</sup> Տե՛ս *ԺՀԼԲԲ*, նույն տեղում, *ԱՀԲԲ*, նույն տեղում:

զթեղիտակն եւ զբաղկենոյ *հերն* եւ զգիշախոտին տակն եփեա՝ քաջ եւ այնու ծփեա՝ զջեղն» (206):

Նշված իմաստային դրսևորումը գտնում ենք միջին հայերենի շրջանում, մասնավորապես՝ բժշկարաններում<sup>93</sup>:

**Հիւթ** գոյականը գրաբարում ունի «1 նյութ, 2 խոնավություն, 3 բույսերի սննդարար նյութ, 4 փխր. էություն, 5 փխր. ուժ, զորություն» իմաստները<sup>94</sup>: ՆՀԲ-ն բերում է նաև բառի «հյութեղ» ածականական նշանակությունը: Հ. Աճառյանը նշված իմաստի համար հիշատակում է IV դ. վարդապետ Հովհան Ոսկեբերանին<sup>95</sup>:

ԳՎ-ում *հյութ* ածականը բառիմաստի ընդլայնմամբ գործածվել է հողի համար՝ նշանակելով «պարարտ, խոնավոտ», ինչպես՝ «Եւ գտունկն շինեա... և թաղեա ՚ի *հիւթ* տեղիսն» (52):

Վերոհիշյալ բացատրությունը բերում է ՆՀԲ-ն՝ ԳՎ-ի «հիւթ տեղի»-ն մեկնելով իբրև *պարարտ և խոնավոտ*<sup>96</sup>: Խոնավ իմաստով միջին հայերենում բառը կիրառել է նաև Ամիրդովլաթ Ամասիացին<sup>97</sup> (XV դ): Ստ. Մալխասյանցի բառարանում արդեն *հյութ*-ի «հյութեղ, հյութալի» իմաստն արձանագրված է իբրև հազվադեպ բառ կամ նշանակություն<sup>98</sup>:

**Ձգել** բայը դեռևս գրաբարում հայտնի է բազմաթիվ իմաստներով<sup>99</sup>: ԳՎ-ում վերջինս «զցել» իմաստին զուգահեռ կիրառվել է նաև նոր՝ իմաստային ընդլայնում ստացած «վիժել»

<sup>93</sup> Տե՛ս **Ն. Բուզանդացի**, նշվ. աշխատ., էջ 430, *ՄՀԲ*, էջ 425:

<sup>94</sup> Տե՛ս **Ռ. Ղազարյան**, *Գրաբարի բառարան*, հ. 2, էջ 73:

<sup>95</sup> *ՀԱԲ*, հ. 3, Ե., 1977, էջ 98:

<sup>96</sup> *ՆՀԲ*, հ. 2, էջ 101:

<sup>97</sup> Տե՛ս *ՄՀԲ*, էջ 437:

<sup>98</sup> *ՀԲԲ*, հ. 2, էջ 110:

<sup>99</sup> Տե՛ս **Ռ. Ղազարյան**, *Գրաբարի բառարան*, հ. 2, էջ 106:

իմաստով, որը վերաբերում է անասուններին, ինչպես՝ «Նօսր դարման տու, և ի խոտ մի՛ գատեր, զի մտացն ասէ և *ձգէ* զքոռակն» (202): «Եւ չէ պարտ յեղեամն արածել, զի սպանօղ է եղեամն եւ յղեացն անցուցանել տայ և *ձգէ*» (215): Միջին հայերենին բնորոշ այս իմաստը գտնում ենք նաև Եվդոկիայի և Սեբաստիայի բարբառներում<sup>100</sup>, ինչպես նաև՝ գրական արևմտահայերենում<sup>101</sup>:

**Ճանկ** գոյականը, որ փոխառված է պարսկերենից, գրաբարում հայտնի է երկու իմաստով՝ «կեռ ծայրով երկաթ» և «թռչունի կամ գազանի մագիլ»<sup>102</sup>: ԳՎ-ում վերջինս, «մագիլ, ճիրան» իմաստի ընդլայնմամբ, բազմիցս հանդես է գալիս իբրև չափի միավոր՝ «ճանկաչափ, մատների ծայրով վերցվող քանակություն». «Յիրմէ ի տակսն լնուն *ճանկ* մի» (56): «...յամեն տասն լիտր գինի՝ երեք *ճանկ* կամ չորս մանր աղ» (86):

ԳՎ-ից բացի, *ճանկ*-ը նշված իմաստով գործածվել է նաև միջնադարյան բժշկարաններում. «Եւ զալիկն այսպէս դիր, որ դնես ափկից մի յերդ ու *ճանկ* մի գարի» (ԲԶ 67): «Ա *ճանկ* ծեծած պաքսիմատ և յինքն խառնէ» (ԱԱՕԲ 293)<sup>103</sup>:

Նկատենք, որ *ճանկ*-ը մի շարք բարբառներում կիրառվում է «բուռ, ափ» իմաստով <sup>104</sup>:

**Միս** գոյականը ԳՎ-ում բառիմաստի ընդլայնմամբ գործածվել է նաև «պտուղի փափուկ մաս» նշանակությամբ. «Բայց խիստ շատ ջրելն՝ դեցնեցուցանէ զծառսն. բայց երբ ՚ի չափն տաս զջուրն, նա պտուղն աղէկ *միս* առնու, և կուտն փոքր

<sup>100</sup> Տե՛ս ՀԼԲԲ, հ. 3, էջ 321:

<sup>101</sup> Տե՛ս Ռ. Մաքսպետոյան, *Արևմտահայերեն - արևելահայերեն ուղղախոսական - բացատրական բառարան*, Ե., 2000, էջ 165:

<sup>102</sup> Տե՛ս Ռ. Ղազարյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 121:

<sup>103</sup> Տե՛ս ՄՀԲ, էջ 468:

<sup>104</sup> Տե՛ս ՀԼԲԲ, նույն տեղում:

լինի և ձեռ տայ» (179):

Հիշյալ նշանակությունը, բնորոշ լինելով բարբառներին<sup>105</sup>, կիրառվել է նաև միջին հայերենում, ապա պահպանվելով՝ ամրագրվել է նաև արդի հայերենի բառապաշարում<sup>106</sup>:

Արաբերենից փոխառյալ *մկրատ* miqrad «կտրող գործիք» գոյականը (ավանդված չէ գրաբարից), որ սովորական է միջին հայերենի համար, նշված իմաստից բացի, ԳՎ-ում գործածվել է «խաղողի որթի ծիլ» նշանակությամբ. իմաստային այս ընդլայնման հիմքում հավանաբար ընկած է մկրատի և խաղողի որթի ծիլի նմանությունը. «Եւ թէ յամեցուցանել կամիս գտունկն (որթոյն) եւ ապա դնել, քաղե՛ա գտունկսն եւ *զմկրատսն* սրբե՛ա յիւրմէ աղէկ» (51): «Եւ երբ դնել կամենաս, նախ սրբեա գտերեսն և *զմկրատսն* և ապա դիր» (53):

Աճառյանը վկայում է *մկրատ*-ի «խաղողի որթի ծիլ» իմաստը և հղում ԳՎ-ն<sup>107</sup>: Ստ. Մալխասյանցի բառարանում որպես գավառական բառ կամ նշանակություն ևս գտնում ենք վերոբերյալ իմաստը<sup>108</sup>: *Մկրատ*-ը վերոհիշյալ նշանակությամբ կա Արարատյան (Դվինի) բարբառում, ինչի մասին վկայում են բարբառային բառարանները<sup>109</sup>: ՄՀԲ-ում, սակայն, նշված իմաստն արձանագրված չէ:

*Ուշագրավ են շող* բառի իմաստային դրսևորումները: Վերջինս գրաբարում գործածվում է և՛ գոյականական՝ «լույսի շող», «ճառագայթ», և՛ ածականական՝ «լուսավոր» իմաստներ:

---

<sup>105</sup> Տե՛ս **Հ. Աճառյան**, *Հայերեն գաւառական բառարան*, էջ 816:

<sup>106</sup> Տե՛ս ԺՀԼԲԲ, հ. 3, էջ 542, ԱՀԲԲ, էջ 1016:

<sup>107</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 330:

<sup>108</sup> ՀԲԲ, հ. 3, էջ 344:

<sup>109</sup> Տե՛ս **Հ. Աճառեան**, *Հայերեն գաւառական բառարան*, էջ 786, ՀԼԲԲ, հ. Դ, Ե., 2007, էջ 65:

րով: ԳՎ-ում *շողը* գրաբարյան «Հառագայթ» իմաստին զուգահեռ («զի օղիցն պարզ գիջութիւնն և արեգական պարզ *շողն* խաղողին սնունդ տայ» (84)) բառիմաստի ընդլայնմամբ միաժամանակ կիրառվել է երկու նոր նշանակությամբ՝ գոյականական՝ «տաքություն, շոգ» և ածականական՝ «*շոգ, տաք*». ինչպես՝ «ձմեռն ցրտոյն եւ ամառն խիստ *շողոյն*» (192) «ի *շողէն* յետ պահեա՛» (213), «Եւ ի կէս աւուր *շողոյն* ի շուք ա՛ծ (գոչխարսն) եւ հանգո՛ւ անհնար» (215), «Զէ պարտ գոչխարսն կա՛մ ի խիստ ցուրտն կտրել, կա՛մ ի խիստ *շողն*, այլ ՚ի միջասահմանն» (217), «Նոյնպէս եւ զայլ սերմանքն յիւր ժամն (հնձեա՛) եւ առաւօտուն ի շահ ածելն *շողուն* աղէկ է» (29-30) (գոյականական):

«Դի՛ր պղնձով եռջուր, որ հասուցանէ զինքն *շող* ջուրն» (84): «Եւ այսու ճանաչի, որ *շող* տեղեաց զինին պարզ և անոյշ է» (88): «Եւ ՚ի լեռնային, պաղ և սառնային երկիրն՝ պարտ է գետինքն յամառն ՚ի *շող* աւուրսն շինել» (17) (ածականական):

«Տաքություն, շոգ» իմաստով ԳՎ-ում գործածվել են նաև *շողային* և *շողհար* նորակազմությունները, ինչպես՝ «Ինքն սնուցանող և դարմանող է բուսոցն, և առաւել տաք հողմն ի ցրտային ժամն, և ցուրտ օդն ի *շողային* պահն» (26): «Զգինին միահամ բերէ ի գիջային, ի չորային, ի հովային եւ ի *շողային* վայրսն քան զայլսն» (49): «Թէ *շողհար* լինի ոչխարն և ստեպ նստի և աղէկ արօտ չուտէ» (218): Իսկ ածականական *շող*-ի կրկնությամբ մակբայի նշանակությամբ կիրառվել է *շող շող* կրկնավոր բարդությունը. «Տաք կոշկոռ աղնձած և *շող շող* ի ներք ձգեա» (186):

Պետք է նշենք, որ *շող-ը* թե՛ գոյականական, թե՛ ածականական նշված իմաստներով դեռևս 12-րդ դարում կիրառել է Մ. Հերացին իր «Զերմանց մխիթարութիւն»

բժշկարանում. «ի խիստ ցրտոյ և ի խիստ շոդոյ պահէ զծառն» (ՄՀՋՄ 37): «Այլ գլխացաւի, թէ ի հովէ լինի, թէ ի շոդոյ» (ՄՀՋՄ 145): «...և շրջել՝ որ փակոյցն ի վեր գայ և հետ շոդ ճուլապ խմէ» (ՄՀՋՄ 148): «Պարտ է յայնժամ առնուլ, որ չլինի աւելի շոդ կամ հով, յաշուն և ի գարուն» (ՄՀՋՄ 147): «...և տաք տանէ և ի շոդ օդէ պատրաստ կենայ» (ՄՀՋՄ 46):

ՄՀԲ-ն երկու իմաստների համար էլ վկայակոչում է Հերացուն և «Բժշկարան ձիոյ»-ին, իսկ ԳՎ-ն չի նշվում աղբյուրների շարքում: Նկատենք, որ շոդ-ի վերոնշյալ իմաստները կիրառելի են նաև բարբառներում<sup>110</sup>:

**Որձ** ածականը գրաբարում գործածվում է կենդանու արական սեռը ցույց տալու համար: ԳՎ-ում վերջինս կիրառվել է նաև բույսերի դեպքում (որոնք ունեն միայն արական գործարան). «...արմաւենի *որձ* և էգ որ մօտ ի ծաղիկն լինի կեցեալ գործուն, և ի յէգ արմաւենի ծառն կախէ» (157):

ՆՀԲ-ն հիշատակում է *որձ*-ի՝ ԳՎ-ում կենդանու նմանությամբ նաև բույսի համար գործածված լինելը<sup>111</sup>, իսկ Ստ. Մալխասյանցի բառարանում արդեն գտնում ենք որոշակի բացատրությունը. «այն բույսերը, որոնք միայն արական գործարան՝ բեղմնատր փոշի ունին, ինչպես *որձ* արմաւենի, *որձ* կանեփ»<sup>112</sup>:

Ուշ միջնադարում՝ 16-17-րդ դդ., բժիշկ Բունիաթ Սեբաստացին իր «Գիրք բժշկութեան տումարի» բժշկարանում նշված իմաստով -ուկ փոքրացուցիչ վերջածանցով կիրառել է *որձուկ* նորակազմ ածականը, որով հատկանշվում է բույսերից մեկը. «Այս մաջունս դ (4) տարի բան կուգա, դ (4) տարէն ետ այլ

<sup>110</sup> Տե՛ս ՀԼԲԲ, հ. 4, էջ 267: ՀԲԲ, հ. 3, էջ 530:

<sup>111</sup> ՆՀԲ, հ.2, էջ 532:

<sup>112</sup> Տե՛ս ՀԲԲ, հ. 3, էջ 584:

նամ չի գար, հալիլէն *որձուկ* լինի, կդէզն հանես ... առանց կդէզ ծեծէ՝ ձգէ մէջն»<sup>113</sup>:

Ժամանակակից հայերենի բացատրական բառարաններում վերոհիշյալ իմաստի առկայությունը<sup>114</sup> մեզ հուշում է, որ իմաստային այդ դրսևորումը պահպանվել և ամրագրվել է արդի հայերենի բառապաշարում:

**Ուժաւոր** ածականը գրաբարում ունի «ուժեղ, հզոր» իմաստը և հենց այդպես էլ ամրագրված է հայերենի բացատրական բառարաններում, ընդ որում Ստ. Մալխասյանցի և լեզվի ինստիտուտի հրատարակած բառարաններում բառը բերվում է «հնացած» նշումով<sup>115</sup>, իսկ Էդ. Աղայանի բառարանում վերջինս ամրագրված է իբրև ժողովրդախոսակցական բառ<sup>116</sup>: ԳՎ-ում *ուժաւոր*-ը իմաստային ընդլայնմամբ գործածվել է նաև «բարկ, թունդ» (գինու համար) նշանակությամբ. «Ի գինին կամ ի մուստառն խառնեցին, նա *ուժաւոր* և անոյշ արար» (96):

Նույն իմաստով է կիրառվել նաև *ուժաւորել* բայը (թունդ դարձնել). «...եւ առին սպիտակ քուշնայ...և ածին 'ի գինին, նա խիստ *ուժաւորոդ* է գինւոյն» (96):

Պետք է նշել, որ նշված իմաստը արձանագրված է միայն ՄՀԲ-ում (հայերենի մյուս բառարաններում տեղ չի գտել):

**Պատահաբ(ք)** գոյականը գրաբարում գործածվում է «անսպասելի դեպք», «փորձանք, դժբախտ դեպք» նշանակություններով: Իսկ ահա ԳՎ-ում վերջինս հոգնակի ձևով բազմիցս (10 անգամ) կիրառվել է «վնասատու միջատներ և կենդանիներ» իմաստով. «զի դարմանիչ է բուսոյն և անցուցիչ

---

<sup>113</sup> Տե՛ս **Բունիաթ Սեբաստացի**, «Գիրք բժշկութեան տումարի», Ե., 1987, էջ 224:

<sup>114</sup> Տե՛ս *ԱՀԲԲ*, էջ 1148, *ԺՀԼԲԲ*, հ. 4, Ե., 1980, էջ 118:

<sup>115</sup> Տե՛ս *ՀԲԲ*, հ. 3, էջ 592, *ԺՀԼԲԲ*, հ. 4, էջ 578:

<sup>116</sup> Տե՛ս *ԱՀԲԲ*, էջ 1487:

որդանն և այլ *պատահարացն*» (28): «...և զամենայն ազգ *պատահարս* ճիճեաց և որդանց սպառեն ի տնկէն» (56): «Եւ այս ազգ *պատահարս* խիստ յայնժամ գայ՝ երբ լուսինն ի լի լինի» (74): «...և այն *պատահարին*, որ ի հողմոյ գայ, կամ ճիճւոյ՝ որ զտակսն ուտէ և վատուծացուցանէ» (183): «Եւ *պատահարսն* սպա՛ն և հատո՛ւ... զերդ զամբուռ, մուկն, ցեց և այսպիսիք» (191):

Նշված իմաստից ԳՎ-ում կիրառվել է *պատահարիլ* նորակազմ «վնասվել» բայը. «Յաղագս այգւոյ որ աստեղէ *պատահարի*» (70): «...եւ թէ *պատահարի* ուրուք ծառն՝ դեղ որ բժշկի» (182):

«Փորձանք, դժբախտ դեպք» իմաստով բառը դարձյալ արձանագրված է միայն ՄՀԲ-ում՝ հենց ԳՎ-ի հոմամբ<sup>117</sup>, իսկ վերոհիշյալ օրինակները առանց *պատահարք*-ի նշանակութ-յունը բացատրելու բերում է Նորայր Բյուզանդացին<sup>118</sup>:

Ուշագրավ են **պարան** գոյականի իմաստային նոր դրսևորումները: Վերջինս գրաբարում հայտնի է իր «թոկ, ճոպան» նշանակությամբ: *Պարան*-ը ԳՎ-ում միաժամանակ գործածվել է երկու նոր իմաստով. մի դեպքում իբրև «հողը չափելու երկարության միավոր», ինչպես՝ «Չէ պարտ, որ աւելի հօտէ, քան ութ *պարան* այգի» (10), մյուս դեպքում՝ «վազերի շարք, կարգ» իմաստով, ինչպես՝ «Զհետևակ այգւոյն *զպարանսն*, հեռի ի միմեանց վեց ոտն պիտի առնել...որ դորդ ի *պարան* գայ զսարբնայովն. հեռ ի միմեանց *պարանքն* ժե ոտն, և տունկք վեց ոտն, զի սարբնայովն միադեհ ունի *զպարանին* դորդութիւնն» (55-56): «Զտարեց ծառս՝ առաջն *պարանին* պիտի տնկել» (59):

ՆՀԲ-ն «հողը չափելու երկարության միավոր» իմաստի

---

<sup>117</sup> Տե՛ս ՄՀԲ, էջ 642:

<sup>118</sup> Տե՛ս Ն. Բյուզանդացի, նշվ. աշխ., էջ 638-639:

համար իբրև աղբյուր հղում է հենց ԳՎ-ը՝ նշելով. «...թուի նշանակել զսահմանեալ չափ ինչ լարի»<sup>119</sup>:

Հ. Աճառյանը, անդրադառնալով *պարան-ի*՝ ԳՎ-ում կիրառված իմաստային երկու նոր դրսևորումներին, նկատում է, որ նշված երկու «շարք» իմաստով կիրառվել են նաև *այգեպարան* (55), *պարանմէջ* (66) բառերը<sup>120</sup>, ընդ որում սրանցից առաջինը ածականի իմաստով ամրագրված է նաև ժամանակակից հայերենի բառապաշարում<sup>121</sup>: Աճառյանը իրավամբ նկատում է նաև, որ «այգիների մի տեսակ չափ» և «որթատունկերի շարք» իմաստները պահպանված են Ակնի, Ադանայի բարբառերում, ընդ որում, վերջին իմաստը փոխառել են նաև թուրքերենի բարբառները<sup>122</sup>: *Պարան-ի* «որթատունկերի շարք» բարբառային իմաստն արձանագրում են նաև Ստ. Մալխասյանցը և ՀԼԲԲ-ն<sup>123</sup>:

**Պտղել // պտիխիլ** չեզոք սեռի բայը գրաբարում նշանակում է «պտտող բռնել» և «ծնունդ առնել»<sup>124</sup>, բարբառներում կիրառվում է նաև «պտտողը հատ-հատ պոկել» (ներգործական սեռի) իմաստով<sup>125</sup>, ընդ որում վերջինս ամրագրված է նաև ժամանակակից հայերենի բառապաշարում<sup>126</sup>: ԳՎ-ում վերոհիշյալ բայը գործածվել է «պայթել, ճզմվել» իմաստով. «Մ'նշե՛ա սերտ ձեռքդ այնպես, որ *չպտիսի* կամ չգանի» (188): ՄՀԲ-ն, արձանագրելով վերոհիշյալ իմաստը, բերում է հենց

---

<sup>119</sup> Տե՛ս ՆՀԲ, հ.2, էջ 627:

<sup>120</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 4, Ե., 1979, էջ 56:

<sup>121</sup> Տե՛ս ՍՀԲԲ, էջ 39

<sup>122</sup> Տե՛ս ՀԱԲ, նույն տեղում;

<sup>123</sup> Տե՛ս ՀԲԲ, հ. 4, էջ 77, ՀԼԲԲ, հ. 5, Ե., 2008, էջ 48-49:

<sup>124</sup> Տե՛ս Ռ. Ղազարյան, նշվ. աշխատ., հ. 2, էջ 424:

<sup>125</sup> Տե՛ս ՀԲԲ, հ.4, էջ 125, ՀԼԲԲ, հ.5, էջ 126:

<sup>126</sup> Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 1229:

նշված օրինակը <sup>127</sup>: Աճառյանը *պտղեղ*-ը մեկնում է «մատների ծայրով պտուղը ճզմել»՝ դարձյալ հղում անելով ԳՎ-ին<sup>128</sup>:

**Մեւակ** բառը գրաբարում գոյական է և նշանակում է «սև թանաք, սևադեղ»<sup>129</sup>: ԳՎ-ում վերջինս գործածվել է նոր՝ «սևահող» ածականական իմաստով. «Ջինձորին տնկելն և զպատրուսելն իբրև գտանձին արա և ինքն զհովային և *զսևակ* զետինն ընդունի» (154):

ՄՀԲ-ն արձանագրում է բառի հիշյալ նշանակությունը՝ վկայակոչելով հենց ԳՎ-ի օրինակը: *Մեւակ*-ը «սևահող» նշանակությամբ գործածական է Մշո բարբառում<sup>130</sup>, գավառական նշումով այն արձանագրված է նաև Մալխասյանցի բառարանում<sup>131</sup>, սակայն արդի հարերենի բառապաշարում չի ամրագրվել:

**Միրտ** գոյականը «Գիրք վաստակոց»-ում բառիմաստի ընդլայնմամբ կիրառվել է նոր՝ «մրգի միջուկ, կորիզ» նշանակությամբ<sup>132</sup>. «Ա՛ռ նոր սերկևիլ... և այնու ճեղքեա ի չորս և հան *սիրտն*, և զքթերն և դի՛ր ի ձիւթած կարաս» (126): «... նա պիտի որ լեղուութեան ջուրն ընդ այն ծակն ՚ի վայր քամի ՚ի *սրտէն*, և ծառն քաղցրանայ և նուշն» (150):

ՄՀԲ-ում *սիրտ* բառի այս նոր իմաստը տեղ չի գտել, չնայած որ ածանցավոր *սրտուկ* ձևը կա<sup>133</sup>: ՆՀԲ-ն բերում է

---

<sup>127</sup> Տե՛ս *ՄՀԲ*, էջ 663:

<sup>128</sup> Տե՛ս *ՀԱԲ*, հ. 4, էջ 112:

<sup>129</sup> Տե՛ս **Ռ. Ղազարյան**, նշվ. աշխ., հ. 2, էջ 454:

<sup>130</sup> Տե՛ս *ՀԼԲԲ*, հ. 5, էջ 309:

<sup>131</sup> Տե՛ս *ՀԲԲ*, հ. 4, էջ 209:

<sup>132</sup> Այս մասին տե՛ս նաև **Հ. Թադևոսյան**, *Միրտ բաղադրիչով նոր կազմություններ միջնադարյան բժշկարաններում*, Հայերենագիտական միջազգային տասներերորդ գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., 1915, էջ 118:

<sup>133</sup> Տե՛ս, *ՄՀԲ*, էջ 722:

«սիրտ պտղոց» իմաստը և հղում է ԳՎ-ին<sup>134</sup>: Ստ. Մալխասյանցը *սիրտ* բառի համար որպես 11-րդ իմաստ ևս նշում է «պտուղների սիրտը՝ էական մասը»<sup>135</sup>: Իսկ եթե նկատի առնենք է. Աղայանի «Արդի հարերենի բացատրական բառարան»-ում տեղ գտած ժողովրդախոսակցական «միջուկ» իմաստը<sup>136</sup>, ապա կարելի է արձանագրել, որ նշված իմաստը ևս պահպանվել ու ամրագրվել է ժամանակակից հայերենի բառապաշարում:

**Վազել, (վազեցնել)** բայը ԳՎ-ում հիմնական՝ «ցատկել, առաջ գնալ» («Որ քանի քուռակն ի ծիծն կենայ՝ զինքն չվազեցնես» (203)) իմաստից բացի հանդես է գալիս նաև գրաբարին բոլորովին անծանոթ, նոր իմաստով և վերաբերում է անասունների զուգավորվելուն: Բերենք օրինակներ. «Եւ այսու ճանաչեա յետ *վազելոյն*՝ թէ պահցաւ մատակն թէ ոչ»: «Եւ տես աղէկ թէ որձն սիրէ զմատակդ՝ ի յինն օրն *վազեցո* յետ ծննդեանն»: «Եվ թէ չսիրէ՝ նա երեք օրն *վազեցո*, որ աղտիցն բան, և սիրէ և ՚ի ցանկութիւն շարժի, և վազէ, և թէ դեռ չսիրէ և չվազէ, զմատակն ՚ի վերայ *վազեցո*, ևս զինքն ՚ի ցանկութիւն շարժէ» (202): «Թէ այնպէս որ պարիսրցի հողմովն *վազեցնես*՝ որձ սերմանի» (210):

ՆՀԲ-ն *վազ (վազք)* արմատը մեկնում է իբրև ածական՝ «վրա վազող, վրնջող» իմաստով, և վերջինից էլ բխեցվում է ԳՎ-ի *վազցնիլ*-ը, այն է՝ «թողուլ գործ ձին ի մատակն» (զուգավորել)<sup>137</sup>: Աճառյանը ևս Նորայր Բուզանդացու հետևողությամբ *վազել*-ը միջին հայերեն բառ է դիտում<sup>138</sup>: Զուգավորել իմաստով *վազցնել*-ը կիրառվել է նաև 13-րդ դարի մյուս բժշկարանում.

<sup>134</sup> Տե՛ս ՆՀԲ, հ. 2, էջ 716:

<sup>135</sup> Տե՛ս ՀԲԲ, հ. 4, էջ 220:

<sup>136</sup> Տե՛ս ԱՀԲԲ, էջ 1306:

<sup>137</sup> Տե՛ս ՆՀԲ, հ. 2 էջ 769:

<sup>138</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 292:

«Եւ հետ այնոր, որ *վազցնեն*, նա պահեն ի յովտկէն ի յետ քսան արբ»։ «...թէ ուզենայ՝ նայ այլվայ *վազցնեն* որպէս զառօքի տարպայն» (ԲՁ 50)։

Միջին հայերէնում *վազել* չեզոք բայը կիրառվում է նաև «հոսել» իմաստով. «Քիթն որ արիւն *վազէ*» (ՄՀՁՄ 69)։ «Յղեղէն անչափ դեղին ջուր *վազցնէ*»<sup>139</sup>։ Նշված իմաստը պահպանվել և ամրագրվել է ժամանակակից հայերենի բացատրական բառարաններում<sup>140</sup>

ԳՎ-ում ուշագրավ է **տարեց** գրաբարյան քարացած ձևի՝ իբրև առանձին բառի կիրառությունը։ Գրաբարում *տարեց*-ը հոգնակի սեռականի բառաձև է (տարիների), իսկ միջին հայերենի բառապաշարում վերջինս արդեն ամրագրված է իբրև ածական, որը կիրառվում է երկու իմաստով՝ «1. տարիքոտ (մարդու համար) և 2. մի քանի տարվա»<sup>141</sup>։ ԳՎ-ում *տարեց*-ը գործածվել է երկրորդ իմաստով. «և *գտարեց* ծառս՝ առաջև պարանին պիտի տնկել և հաստատել» (59)։

ՄՀԲ-ն նշված իմաստի համար վկայակոչում է «Բժշկարան ձիոյ» երկը, իսկ ԳՎ-ի օրինակը չի նշվում։ Նկատենք, որ *տարեց* ածականի (նաև գոյական) վերոհիշյալ երկու իմաստներն էլ պահպանվել ու ամրագրվել են ժամանակակից հայերենի բառապաշարում<sup>142</sup>։

**Ցամաք** գոյականը գրաբարում և՛ ածական է՝ «չոր, ցամաքած», և՛ գոյական՝ «ցամաք, երկիր, հող»։ ԳՎ-ում ածական *ցամաք*-ը բառիմաստի ընդլայնմամբ կիրառվել է «անշաղախ»

---

<sup>139</sup> Տե՛ս **Ամիրդովլաթ Ամասիացի**, *Օգոստ բժշկութեան*, Ե., 1940, էջ 349։ Այսուհետև՝ ԱՍՕԲ։

<sup>140</sup> *ԱՀԲԲ*, էջ 1350, *ԺՀԼԲԲ*, հ. 4, էջ 355։

<sup>141</sup> *ՄՀԲ*, էջ 752։

<sup>142</sup> *ԺՀԼԲԲ*, հ. 4, էջ 465, *ԱՀԲԲ*, էջ 1422։

իմաստով, ինչպես՝ «և ընդ մեղուանոցն ՚ի մեջն պարտ է շինել *ցամաք* քարով պատ» (190):

Ընդ որում, նշենք, որ հիշյալ իմաստն արձանագրում է միայն ՄՀԲ-ն՝ վկայակոչելով հենց ԳՎ-ի վերոնշյալ օրինակը<sup>143</sup>:

ԳՎ-ում ուշագրավ իմաստային դրսևորումներ ունի *քամի* գոյականը:

Որքան էլ զարմանալի կարող է թվալ, *քամի* բառանունը վկայված չէ գրաբարում: Առձեռն բառարանը բառը բերում է «ռամկօրեն» նշումով<sup>144</sup>, ՆՀԲ-ն ևս այն բնորոշում է «առաւել ռամկօրեն» և տալիս «հողմ և փուք» իմաստները<sup>145</sup>: Գ. Զահուկյանը *քամի* բառը<sup>146</sup> տեղադրել է հնագույն հայերենի բարբառային տարբերակների շարքում՝ ուշ բնորոշմամբ՝ *հողմ-այս-սիք-քամի*<sup>147</sup>: Միջին հայերենի բառարանում արդեն գտնում ենք *քամի* բառանվան լայն ու բազմիմաստ կիրառություններ՝ հետևյալ իմաստներով՝ «1. օդ, 2. հողմ, 3. փուք, 4. ցավ, 5. հողացավ, 6. փխբ.՝ ոչնչություն»<sup>148</sup>: *Քամի* բառը միջնադարյան մատենագրության մեջ կիրառվել է նշված բոլոր իմաստներով, իսկ բժշկարաններում այն զուգահեռաբար կիրառվել է երեք իմաստով<sup>149</sup>՝ «փորի գազեր», «ցավ, հիվանդություն» և «հողացավ»:

ԳՎ-ում *քամի*-ն գործածվել է երկու նշանակությամբ.

---

<sup>143</sup> Տե՛ս ՄՀԲ, էջ 771:

<sup>144</sup> *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի*, էջ 823

<sup>145</sup> Տե՛ս ՆՀԲ, հ. 2, էջ 977:

<sup>146</sup> Գ. Զահուկյան, *Ստուգաբանական բառարան*, Երևան, 2010, էջ 775:

<sup>147</sup> Տե՛ս Գ. Զահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 402:

<sup>148</sup> ՄՀԲ, էջ 798:

<sup>149</sup> Տե՛ս նույն տեղում:

1. «ցավ». «Ձի պղլամն հալածէ և կտրէ *զքամին* յամէն մարմնոյն, յոսկերացն և ՚ի ջլացն և յերակացն և թոքացավի օգտէ» (120):

2. «փութ, գագեր». «Բակլայն...նոյնպէս և ազգի-ազգի *քամիք* ընծայէ» ՚ի մարմինն» (21):

Երկրորդի համար պետք է նշել, որ այդ իմաստով բառը մեկ դար առաջ կիրառել է Մ. Հերացին իր «Ջերմանց մխիթարութիւն» աշխատության մեջ. «Եւ կերակուր զայս տուր՝ որ *քամի* չընծայէ» (էջ 124): «...մանաւանդ զայն տուր, որ *զքամին* արծակէ» (125): *Քամի*-ն «փութ, գագեր» նշանակությամբ, շարունակելով գործածվել հետագա դարերի բժշկարաններում, պահպանվել և ժամանակակից հայերենի բառապաշարում ամրագրվել է իբրև ժողովրդախոսակցական բառ<sup>150</sup>:

Նկատենք, որ եթե *քամի*-ն «Գիրք վաստակոց»-ում հանդես է գալիս իբրև *հիվանդության պատճառով առաջացած ցավազին զգացում*<sup>151</sup>, ապա 13-րդ դարի մյուս և հետագա դարերի բժշկարաններում վերջինս կիրառվել է հենց «հիվանդություն» լայն իմաստով, ինչպես՝ «Եւ այս ուռուցս կարէ ընծայիլ *ի քամոյ*, որպէս և արծվիքն և բարակցավութիւնն»<sup>152</sup>: «Այն *քամին*, որ ֆաթիւ ասեն կամ յաղիքն լինայ կամ ի ձվերն» (ԱԱՕԲ 405): «Կին, որ տղան ձգէ կամ *քամի*, որ ի յարգանդն լինայ» (ԱԱՕԲ 424): «Եւ սպեղանին օգտէ *քամուն*, որ ի կոպն լինի»<sup>153</sup>:

*Քամի*-ի թե՛ «ցավ» և թե՛ «հիվանդություն» նշանակությունները կիրառվել են միջին հայերենում և չեն ամրագրվել

---

<sup>150</sup> Տե՛ս ԱՀԲԲ, էջ 1550:

<sup>151</sup> Նույն տեղում, էջ 1471:

<sup>152</sup> Տե՛ս ՄՀԲ, էջ 771:

<sup>152</sup> Գրիգորիս, Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց, Ե., 1962, էջ 31:

<sup>153</sup> Ամիրդովլաթ Ամասիացի, Սնգիտաց անպէտ, Վիեննա, 1926, էջ 215:

արդի հայերենի բառապաշարում:

**Քշտել** բայը գրաբարում ունի «կտրել, կրճատել», իսկ միջին հայերենում «հարվածել» իմաստները, ինչպես՝ «և պատրաստ կաց ի բրելն որ *քշտես* և չգանես գտունկն» (65): ԳՎ-ում «հարվածել»-ից բացի *քշտել*-ը բառիմաստի ընդլայնմամբ կիրառվել է նաև «քսել» իմաստով. «Ճանաչել զմեծն և զբրդեղն, որ երբ զձեռնդ *քշտես* ի բուրդն կակուղ լինի» (214): ՄՀԲ-ում նշվում են «հարվածել» և «մի բանի մեջ հավաքել» իմաստները, իսկ «քսել»-ը արձանագրված չէ: Աճառյանը *քշտել* բայի համար նշում է նաև «ձեռքը մի բանի զարնել, քսել» իմաստը՝ իբրև սկզբնաղբյուր նշելով հենց ԳՎ-ը<sup>154</sup>: Նկատենք, որ *քշտել* բայի «քսել» իմաստը ունեն Հաճնի (քիշտել), Խարբերդի (քշտել) և Սվեդիայի բարբառները<sup>155</sup>:

Գ) **Բառիմաստի նեղացմամբ** ստեղծված նոր բառեր, որոնք ԳՎ-ում ավելի սակավ են հանդիպում: Վերջիններս, հիմնականում վերաբերելով մասնագիտական նեղ ոլորտի՝ գյուղատնտեսությանը, միջին հայերենում տերմինի արժեք են ստացել:

**Աղբիւր** գոյականը գրաբարում ունի մի քանի իմաստ. « 1. ջրի աղբյուր, 2. ակունք, 3. փխբ. անձ կամ առարկա, որից օգուտ է բխում»<sup>156</sup>: ԳՎ-ում բառը գործածվել է միջին հայերենին բնորոշ իմաստի նեղացմամբ՝ «արտասվալիճ» նշանակությամբ՝ այդպիսով ձեռք բերելով կազմախոսական տերմինի արժեք. «Եւ թէ այրես և 'ի մէղրն խառնես և օծանես, աղուեսացալի օգուտ: Եւ աչացալի՝ որ *յաղբիւրն* նասուր լինի» (169):

Պետք է նշենք, որ *աղբիւր-ն* իբրև բժշկական տերմին

---

<sup>154</sup> ՀԱԲ, հ. 4, էջ 585:

<sup>155</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>156</sup> Տե՛ս Ռ. Ղազարյան, *Գրաբարի բառարան*, հ.1, էջ 30;

կիրառել է Մխիթար Հերացին դեռևս «Գիրք վաստակոց» երկի թարգմանությունից մեկ դար առաջ «Եւ Ա մի *աղբերին* դեհն, որ քարշէ գաչքն դէպ ի յունքն»<sup>157</sup>: Նրա հետևողությամբ բառը տերմինի իմաստով կիրառվել է միջին հայերենի շրջանի բժշկարաններում<sup>158</sup>, իսկ ժամանակակից հայերենի բառարաններում ամրագրվել է վերջինիս փոխարինած *աղբուրակ* կամ *արտասվալիճ* տերմինը<sup>159</sup>:

**Գորտ** բառը բուն՝ կենդանու տեսակի անվանումից բացի, ԳՎ-ում կիրառվել է բառիմաստի նեղացմամբ՝ նշանակելով մի այլ կենդանու՝ «ձիու սմբակի միջի կլոր մասը». «Եւ սմբակն ոչ շատ տափակ, 'ի չաքն, և մեջն խորու. և *գորտն* փոս և անարատ» (198): Այս նշանակությամբ բառը առավել գործածական է «Բժշկարան ձիոյ»-ում. «Եւ նաւսրութիւն սմբակին ու կակդութիւն, և որ լինի փոս, որ երբ կոխէ, նա *գորտն* չհասնի ի գետինն, և որ լինի *գորտն* պինդ՝ աղէկ է» (ԲՁ 47): «Եւ հատվածն ի յոտվին լինի ի կըրնգնին ու լինի ի գորտն... հայնց որ աճէ ու բոլոր առնու զմբակքն» (ԲՁ 101):

Նշված բժշկարանում հանդիպում է նաև վերոհիշյալ իմաստից կազմված *գորտնփոխ* նորակազմությունը. «Եւ երբ գրաստն *գորտնփոխ* լինի, նա դնեն ներքև լուսնին սեկ ու լուսնեն» (90):

*Գորտ*-ի նշված իմաստը բնորոշ է միջին հայերենի շրջանին. սրա մասին են վկայում թե՛ Նորայր Բյուզանդացին և թե՛ Աճառյանը, որոնք անդրադառնալով *գորտ*-ի

---

<sup>157</sup> Տե՛ս **Աբուսայիդ**, *Յաղագս կազմութեան մարդոյն*, աշխատասիրությամբ Ս. Վարդանյանի, Ե., 1974, էջ 184: Հերացու «Վասն շինուածոյ և յօրինուածոյ աշաց» պատառիկը մեզ հասել է Աբուսայիդի նշված կազմախոսական երկի միջոցով:

<sup>158</sup> Տե՛ս ՄՀԲ, էջ 27:

<sup>159</sup> Տե՛ս ԺՀԼԲԲ, հ. 1, էջ 37, ՍՀԲԲ, էջ 23:

կազմախոսական նշանակությամբ, իբրև օրինակ վկայակոչում են հենց «Գիրք վաստակոց» երկը, Ստ. Մալխասյանցն էլ վերջինս դնում է հազվադեպ բառ կամ նշանակություն ունեցող բառերի շարքում<sup>160</sup>:

**Հաց** բառը, որ գրաբարում ունի «1. այլուրից պատրաստված ուտելիք, 2. կերակուր» իմաստները, ԳՎ-ում կիրառվել է ավելի նեղ՝ «հացահատիկ» նշանակությամբ, ինչպես՝ «Ա՛ռ ՚ի *հացէն* չափ մի, հնտոեա և մաղեա» (31):

Միջին հայերենում նշված իմաստը արձանագրում է ՄՀԲ-ն՝ վկայաբերելով միայն ԳՎ-ը<sup>161</sup>: Նկատենք, որ վերոհիշյալ իմաստը պահպանվել է և ամրագրվել է ժամանակակից հայերենի բառապաշարում<sup>162</sup>:

Ուշագրավ է **պտտոլ** գոյականի իմաստային նոր դրսևորումը ԳՎ-ում: *Պտտոլ*-ը գրաբարում բազմիմաստ բառ է և գործածվում է «1. բերք, 2. զավակ, 3. արգասիք, 4. առաջին վաստակ, 5. վանքերին տրվող տուրք, 6. երախայրիք, 7. մատների ծայր» նշանակություններով<sup>163</sup>: Բառիմաստի նեղացմամբ ԳՎ-ում բառը բազմիցս գործածվել է պտտոլներից միայն մի տեսակի՝ «ձիթապտոլի» նշանակությամբ. «Ա՛ռ զսև հասած *պտտոլն*՝ զանարատն, և դիր յաման» (128): «Եթէ ո՛րպէս քաղէ ոք *զպտտոլն*: Են ոմանք, որ ձողեր թափիչք առնեն և թափնեն. և այն վնաս է, աւերէ զծառսն, և զձէթն. զի հողոտի *պտտոլն* և աւերէ զձէթն» (183): «Երբ սևանայ և հասանի *պտտոլն*...քաղել

---

<sup>160</sup> Տե՛ս Ն. Բուզանդացի, նշվ. աշխ., էջ 146, ՀԱԲ, հ. 1, էջ 585: ՀԲԲ, հ. 1, էջ 466: Ս. Գաբամաճեան, *Նոր բառգիրք հայերէն լեզուի*, Կ. Պոլիս, 1910, էջ 341, Գնէլ արքեպս. Ճերճեան, Փարամազ Կ. Տոնիկեան, *Հայոց լեզուի նոր բառարան*, Պէյրոս, 1992, էջ 416:

<sup>161</sup> Տե՛ս ՄՀԲ, էջ 416:

<sup>162</sup> Տե՛ս ՄՀԲԲ, էջ 850, ԺՀԼԲԲ, հ. 3, էջ 328:

<sup>163</sup> Տե՛ս Ռ. Ղազարյան, նշվ. աշխատ., հ. 2, էջ 424:

տու՛ր...որ գիտենաս թե՛ ձեթ կարենաս հանել» (184): «Արժան է կալ տեղեացն աղէկանալ եւ լողիլ, եւ ապա *պտղի* ձիթի տուրտնով օծանիլ» (29): «Եւ այլք *զպտղի* ձիթի տուրտինն առնուն եւ զաւագն եւ զկրակաց մոխիրն, եւ յիրեար խառնեն եւ օծանեն. զհատն շէն եւ զէր պահե՛» (30): «Ա՛ռ *պտղի* ձիթի մրուր, որ է տուրտին, քամեա եւ եփեա» (101):

Նկատենք, որ ԳՎ-ում քանիցս կիրառված *պտղի ձեթ* «ձիթապտղի յուղ» հասկացության համար զուգահեռ գործածվել է նաև *հոռոմ ձեթ* բառակապակցությունը. «Ա՛ռ *զհոռոմ ձիթի* տուրտինն կամ զձեթն և շողցո՛» (80): «Վասն *հոռոմ ձիթին* տուրտնին, եթէ ո՛րպէս պարտ է ՚ի բան դնել» (101):

*Պտուղ*-ի վերոհիշյալ իմաստը թեև Ղ. Ալիշանն ընդգրկել է քննական բնագրի բառացանկում<sup>164</sup>, սակայն վերջինս տեղ չի գտել թե՛ ՄՀԲ-ում, և թե՛ մյուս բառարաններում (ՆՀԲ, ՀԲԲ): *Չիրապտուղ* իմաստով *պտուղ*-ը կիրառվել է Սվեդիայի բարբառում<sup>165</sup>:

Պարսկերենից փոխառյալ **պղինձ** բառը գրաբարում ունի «մետաղ» և «պղնձադրամ» իմաստները, իսկ միջին հայերենում և մասնավորապէս ԳՎ-ում գործածվում է նաև «պղնձե կաթսա» նշանակությամբ, ինչպէս՝ «Առ զպտղի ձիթի տուրտինն և լից ՚ի *պղինձ*, մի և դիր զիշերն ՚ի մէջ տանն. Նա ՚ի զիշերն ամէն մկունք ՚ի ներք լնանին և մեռանին» (81): «Զայն ընտրեա և յետ հան. և արկ ի մղրուն, և դի՛ր *պղնձով* եռջուր » (84): «Եւ թէ առնու ոք յայլ ածուոց թրթրէ և սամիթ, և ՚ի մէջ *պղնձի* խարշէ, և զջուրն ՚ի վերայ ցանէ» (161):

Հ. Աճառյանը *կաթսա* իմաստի համար վկայակոչում է ԳՎ-ը և Հովհաննէս Երզնկացու երկը, որոնք երկուսն էլ 13-րդ

<sup>164</sup> ԳՎ, էջ 257:

<sup>165</sup> Տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 113, ՀԼԲԲ, հ.5, էջ 130;

դարում են ստեղծվել<sup>166</sup>: *Պղինձը* նշված իմաստով զգալի կիրառութիւն ունի նաև հայերենի մի շարք բարբառներում<sup>167</sup>: Միջին հայերենի շրջանում գործածվելով՝ բառը պահպանվել, ապա և ամրագրվել է հայերենի բառապաշարում<sup>168</sup>:

Այսպիսով՝ ամփոփելով վերն ասվածը՝ ևս մեկ անգամ արձանագրենք, որ միջին հայերենի համար կարևոր սկզբնաղբյուր հանդիսացող «Գիրք վաստակոց» երկում գործածվել են բառերի 62 նոր իմաստներ, այդ թվում նաև՝ առաջին անգամ կամ եզակի կիրառված: Դրանցից մի քանիսն են միայն, որ ավելի վաղ՝ ԳՎ-ից մեկ դար առաջ, կիրառել են Մ. Հերացին (4 բառիմաստ) և Ն. Շնորհալին (2 բառիմաստ) կողմից, իսկ նույն՝ 13-րդ դարում գործածվել է յոթ բառիմաստ, որից հինգը «Բժշկարան ձիոյ»-ում, մեկը՝ Գրիգորիսի բժշկարանում, մեկը՝ Վ. Այգեկցու առակներում: Իմաստային նոր դրսևորումները հիմնականում վերաբերում են գյուղատնտեսությանը և առօրյա տնտեսությանը: Այդ բառերի զգալի մասը կիրառվել են միջին հայերենում. դրանցից միայն տասնվեցը (*ակն* «բողբոջ», *բերան* «անգամ», *բռնել* «արմատակալել», *գուզել* «պատրաստել», *ծունգն* «բույսերի ցողունների միացման տեղը», *կոճակ* «կոկոն», *կոր* «կարիւճ», *կուշտ* «կշտացած», *կուտ* «կորիզ», *հաց* «հացահատիկ», *հետ* «անգամ», *միս* «պտուղի փափուկ մասը», *որձ* «պտուղ չտվող բույս», *պղինձ* «պղնձե կաթսա», *սիրտ* «մրգի միջուկ, կորիզ», *տարեց* «մի քանի տարվա»), գործուն լինելով միջին հայերենում, նաև բարբառներում, պահպանվել և ամրագրվել են ժամանակակից հայոց լեզվի բառապաշարում:

---

<sup>166</sup> ՀԱԲ, հ. 4, էջ 88:

<sup>167</sup> Տե՛ս **Հ. Աճառեան**, *Հայերէն գաւառական բառարան*, էջ 915, ՀԼԲԲ, հ. 5, էջ 89:

<sup>168</sup> Տե՛ս *ԱՀԲԲ*, էջ 1217, *ԺՀԼԲԲ*, հ. 4, էջ 205:

Իմաստային նոր դրսևորումներից տասնութը (հիմնականում բառիմաստի ընդլայնմամբ առաջ եկած եզակի դրսևորումներ) չեն արձանագրվել ՄՀԲ-ում: Դրանցից յոթը (*զանձ, զանժ, գտակ, թագ, ծունգ, մկրատ, քշտել*) արձանագրված են ՀԱԲ-ում, այդ թվում երկուսը (*գտակ, ծունգն*)՝ նաև ՆՀԲ-ում և ՀԲԲ-ում, *սիրտ* բառի «մրգի միջուկ, կորիզ», *միջավայր*-ի «բարեխառն», *որձ*-ի «պտտոլ չտվող բույս» իմաստերն ունեն ՆՀԲ-ն և ՀԲԲ-ն, յոթ իմաստներ (*ապրացու, բուրդ<sup>1</sup>, բուրդ<sup>2</sup>, ծայր մի, պտտոլ, սերտ, սերտել*), տեղ չեն գտել բառարաններից և ոչ մեկում:

Պետք է նկատենք, որ ՄՀԲ-ում չարձանագրված նոր իմաստները հետագա դարերում կիրառությամբ աչքի չեն ընկել, դրանցից միայն *մկրատ* և *քշտել* բառերը վերոհիշյալ իմաստներով այսօր էլ կիրառելի են հայերենի որոշ բարբառներում:

\*ՄՀԲ-ում չարձանագրված նոր իմաստների ցանկ

| Բառ                | Նոր իմաստ կամ նշանակություն                        | Բնագրային օրինակ                                                                                                                                                                                                                                     |
|--------------------|----------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Ապրացու            | <i>երկար ժամանակ բան պահելու տեղ, մառան</i>        | «Եւ ոմանք թգնւոյն տերնն <i>ապրացուին</i> ներքն փռնն 'ի կերչէն պահէ» (31):                                                                                                                                                                            |
| Բուրդ <sup>1</sup> | <i>մրգի արտաքին թավ-շանման խավ</i>                 | Ա՛ն սպրկիկ սերկելիլ հասուն, սրբած ի <i>բրդէն</i> » (123): «Ա՛ն նոր սերկելիլ զաղւորն և ապա սրբեա զինքն 'ի <i>բրդէն</i> չուխայ կտորով» (126):                                                                                                          |
| Բուրդ <sup>2</sup> | <i>մրգի կեղևի և միջուկի միջև գտնվող սպիտակ խավ</i> | «Եւ թէ նռնենւոյն և զկեռասե-նւոյն միջոյն <i>բուրդն</i> ` այդ օրի-նակաւդ հանես, բերն կուտ չունենայ» (130):                                                                                                                                             |
| Գան <sup>1</sup>   | <i>վերք, վնասվածք</i>                              | «Վասն պախրեի, որ կաղա ...լուա զկճղակսն տաք ջրով, և զիտ <i>զգանն</i> , և հին տաք մար-դոյ զոգով լուա» (213):                                                                                                                                           |
| Գան <sup>2</sup>   | <i>բույսի, վնասված մաս</i>                         | «Տե՛ս, թե <i>գանն</i> բարձր լինի 'ի հողոյ առ մաղած հող և այծու աղբ և խառնեա ընդ իրար և շաղախ արա, և դի՛ր ի վերայ <i>գանին</i> : Եւ թէ 'ի հողն մօտ լինի <i>գանն</i> ` դու զաղբն և զհողն յի-րեար խառնեա և ծածկեա նոյն հողովն. օգտէ <i>գանին</i> » (76) |
| Գտակ               | <i>ծաղկի միջի գդակաձև</i>                          | «Ա՛ն գտուղտն <i>գտակովն</i> և                                                                                                                                                                                                                        |

|          |                                           |                                                                                                                                                                                                                                                                                                              |
|----------|-------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
|          | <i>կամ թագաձև մասը</i>                    | բարունակովն, և եփեա ջրով» (108):                                                                                                                                                                                                                                                                             |
| Թագ      | <i>մեղուների թագուհի</i>                  | «...և երբ մեղու կամենաս տնկել, դու յամեն կոճակ <i>թագ</i> մի դիր, նա այն զամեն մեղուքն ժողով պահե: Եւ <i>թագիտ</i> նշանք այս է. խարտեշ լինի և մեկուկէս մեծ քան զայլ մեղու. և որ զայս նշանքս ունենայ, լան այն է, և վատ <i>թագ</i> ՝ այլագոյն լինի և սևագոյն, և մեծութիւն երկու հետ մեծ քան զայլ մեղու» (191): |
| Ծայր     | <i>քիչ</i>                                | Եւ այն է լաւ, որ յետնեն <i>ծայր մի</i> ստեպ բանաս զպատու-հանսըն» (195):                                                                                                                                                                                                                                      |
| Ծառայել  | <i>բերքը խնամել</i>                       | «...և աղբով և ջրով <i>ծառայեա</i> , մինչև 'ի բեր հասանի» (140):                                                                                                                                                                                                                                              |
| Ծունգ    | <i>բույսի ցողունի ծնկա-ձև միացած մասը</i> | «Եւ 'ի հաստատած այգին որ սարբնայով լինի չորս ուռ պարտ է թողով 'ի <i>ծունգն</i> . Յամեն <i>ծունգ</i> երկու որթ ուռ» (63), «Դու 'ի մեկայլ տարին մայրան թողուս, որ է <i>ծունգ</i> » (64):                                                                                                                       |
| Միջավայր | <i>բարեխառն</i>                           | «...եւ եթէ <i>միջավայրք</i> լինի տեղն, նա ընդդէմ արեւե-լից լավ է» (48):                                                                                                                                                                                                                                      |
| Մկրատ    | <i>խաղողի որթի ծիլ</i>                    | «Եւ երբ դնել կամենաս, նախ                                                                                                                                                                                                                                                                                    |

|        |                                |                                                                                                                         |
|--------|--------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------|
|        |                                | սրբեա գտերեսն և <i>զմկրատսն</i> և ապա դիր» (53):                                                                        |
| Որձ    | <i>որձ բույս (պտուղ չտվող)</i> | «...արմաւենի որձ և էգ որ մօտ ի ծաղիկն լինի կեցեալ գործուն, և ի յէգ արմաւենի ծառն կախէ» (157):                           |
| Պտուղ  | <i>ձիթապտուղ</i>               | «Երբ սևանայ և հասանի <i>պտուղն</i> ..քաղել տու՛ր... որ գիտենաս թէ ձէթ կարենաս հանել» (184):                             |
| Սերտ   | <i>շուտ-շուտ</i>               | « <i>Սերտ</i> խառնէ որ չայրի» (105), «... Ա՛ն անուշահոտ սպիտակ ծաղկունք, և <i>սերտ</i> շփեա զկռճակն ՚ի ներքուստ» (192): |
| Սերտել | <i>շուտ-շուտ անել</i>          | «...և ՚ի հետ սերտեն զգարկերն այնչափ, որ միսն մէն մանրի» (194):                                                          |
| Սիրտ   | <i>մրգի միջուկ, կորիզ</i>      | «Ա՛ն նոր սերկնիլ.... և այնու ճեղքեա ի չորս և հան <i>սիրտն</i> » (126):                                                  |
| Քշտել  | <i>քսել</i>                    | «Ճանաչել զմեծն և զբրդեղն, որ երբ զձեռնդ <i>քշտես</i> ի բուրդն կակուղ լինի» (214):                                       |

**Hasmik Tadevosyan – New Semantic Manifestations of words in the Work “Girk Vastakots”.** - This article studies new meanings of words (56 words, 62 meaning), which were used in the work "Girk Vastakots" (13c.). This work is a translation from the Arabic version of “Geoponics”, which is one of the significant examples of medieval Armenian translation literature and serves as an important source for the study of the Middle Armenian language.

The words acquiring a new meaning, mainly refer to agriculture and everyday economy. They are represented by three groups: new meanings resulting from 1. interchanges of parts of speech, 2. expansion of the words’ lexical meaning, 3. narrowing of the words’ lexical meaning.

Most of these new semantic manifestations were used in the Middle Armenian language, only sixteen of them, being active, were preserved and were recorded in the dictionary of the Modern Armenian language.

Eighteen of new semantic manifestations (mainly unique expressions caused by the expansion of vocabulary) were not included in the "Dictionary of Middle Armenian". Seven of these words were not recorded in any dictionary. It should be noted that the new meanings, which have not found a place in the “Dictionary of the Middle Armenian Language”, were not used in the following centuries. In some dialects of the Armenian language only the words "մկրաս" (grapevine sprout) and "քշտի" ( to rub) can be used.

**Тадевосян Асмик - Новые семантические проявления слов в произведении “Гирк Вастакоц”.** - В данной статье рассматриваются семантические новые проявления значения слов (56 слов, 62 новых значения), которые употреблялись в произведении “Гирк Вастакоц” (13в.). Эта работа, переведенная с арабской версии “Геопоника”, является одним из наиболее важных примеров средневековой армянской переводной литературы и служит важным источником для изучения среднеармянского языка.

Слова, которые приобрели новое значение, в основном относятся к сельскому хозяйству и повседневной экономике. Эти слова представлены тремя группами: слова, появившиеся в результате: 1. чередования частей речи, 2. расширения лексического значения слова, 3. сужения лексического значения слова.

Большинство новых семантических проявлений осталось в рамках использования среднеармянского языка. Только шестнадцать из них, будучи активными в среднеармянском языке и диалектах, были сохранены и зафиксированы в словаре современного армянского языка.

Восемнадцать новых семантических проявлений (в основном уникальные проявления, появившиеся в результате расширения словарного запаса), не были включены в “Словарь среднеармянского языка”. Семеро из них не нашли места ни в одном из словарей. Следует отметить, что новые значения, которые не нашли места в “Словаре среднеармянского языка”, не использовались и в последующих столетиях. На некоторых диалектах армянского языка могут использоваться только слова *"ւլրիւն"* (росток виноградной лозы) и *"քշտել"* (тереть).

ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ՝

13-րդ դարի ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

Ձեռագրի հիշատակարան ասելով պետք է հասկանալ ձեռագրերում կատարված այն բոլոր հավելյալ գրառումները, որոնք պարունակում են հիշատակի խոսքեր ձեռագրերի ձեռքբերման, ընդօրինակության, նվիրատվության և զանազան այլ իրողությունների վերաբերյալ: Հայտնի է, որ հայերեն գրավոր ավանդույթի սկզբնավորմանը զուգահեռ սկիզբ է դրվել նաև ձեռագրերում հիշատակարաններ գրելուն: Նախկինում ընդհանուր գծերով անդրադարձել ենք նախ 5-11-րդ դարերի, ապա և՛ 12-րդ դարի հիշատակարանների բառապաշարին<sup>1</sup>: Առանձին հոդվածներում քննել ենք 13-րդ դարի հիշատակարանների բառապաշարի տարբեր շերտեր ու դրսևորումներ: Այս աշխատանքում ներկայացնում ենք 13-րդ դարին պատկանող հիշատակարանների բառապաշարն իր բազմազանությամբ:

Ինչպես հայտնի է, հայկական ամենահին ամբողջական ձեռագիրը պատկանում է 9-րդ դարին: Մինչ այդ դարը և հետագայում ստեղծված բազում երկեր մեզ հասել են ուշ դարերի ընդօրինակություններով: Բնականաբար, բուն երկին զուգահեռ

---

<sup>1</sup> Վ. Խաչատրյան, *5-11-րդ դարերի ձեռագրերի հիշատակարանների բառապաշարը*, Երիտասարդ լեզվաբանների հանրապետական գիտաժողովի զեկուցումներ, Ե., 2013, հոկտեմբերի 2-3, էջ 39-48, *12-րդ դարի ձեռագրերի հիշատակարանների բառապաշարը*, Լրաբեր. գիտական հոդվածների ժողովածու, մաս 3, Ե., 2014, էջ 803-809:

գրչագրվել են նաև յուրաքանչյուր ձեռագրում առկա հիշատակարանները, որոնք լույս են սփռում տվյալ երկրի գրչագրական ընթացքի վրա: Հարկ է նկատել, որ ձեռագրերի հետագա ընդօրինակողները կամա թե ակամա կարող էին վրիպումներ թույլ տալ: Շատ դեպքերում նաև պարզվում է, որ հաջորդները նույնությամբ վերցրել են նախորդների հիշատակարանները՝ միմիայն փոխելով անձնանունները: Ինչպես առհասարակ ոչ սկզբնական ձեռագրերի դեպքում չենք կարող անվերապահորեն ընդունել, որ լեզվական որոշ իրողությունների փոփոխություններ տեղի չեն ունեցել, նույնը վերաբերում է ձեռագրերի ստեղծման ժամանակից առաջ գրված հիշատակարաններին: Հիշատակագիրները մեծ մասամբ նշել են իրենց գրառումների ժամանակը: Այսպիսով, յուրաքանչյուր ընդօրինակությանը զուգահեռ ավելացված հիշատակարանների հիման վրա պարզ է դառնում ձեռագրերի ստեղծման ժամանակը: Բազում հիշատակարաններ էլ հետագայում են հավելվել ձեռագրերին, քանի որ ազատ հատվածներում ոմանք տեղեկություններ են հաղորդել ձեռագրերի ձեռքբերման և այլ հանգամանքների վերաբերյալ:

Առավել արժեքավոր են այն հիշատակարանները, որոնք համապատասխանում են տվյալ ձեռագրի ստեղծման ժամանակին, կամ հետագայի հավելումներ են, այսինքն՝ սկզբնագիր հիշատակարանները և ոչ թե ընօրինակվածները, որոնք կարող էին կամա թե ակամա աղավաղումների ենթարկված լինել:

Պետք է հավաստել, որ հայերեն ձեռագրերի հիշատակարանները բացառիկ կարևոր սկզբնաղբյուր են հայոց լեզվի պատմության համար: Այն բացատրվում է հետևյալ առումներով.

ա) հիշատակարանները, ի տարբերություն այլ բնագրերի, տրամադրում են մարդկային զգացումների, ապրումների, կենցաղային-ընտանեկան հարաբերությունների մանրամասներ, որոնցով և պայմանավորված է կենդանի խոսքին հատուկ անմիջականությունը, այսպիսով և բառապաշարի համապատասխան շերտերին պատկանող բառերի առկայությունը.

բ) նրանցում սովորաբար գրաված է հիշատակագրության կոնկրետ ժամանակը, որով և պատկերացում է կազմվում տվյալ լեզվական երևույթի առկայության ճշգրիտ ժամանակի մասին.

գ) հաճախ հեղինակները նշել են իրենց բնօրրանը, որով և պարզվում է լեզվական միավորների բարբառային պատկանելությունը:

Ահա նշված առումներով էլ որոշակի կարևորություն է ներկայացնում սույն ուսումնասիրությունը: Նախորդ աշխատանքներում, անդրադառնալով 5-11-րդ դարերի, ապա և 12-րդ դարի հիշատակարանների բառապաշարին, առանձնացրել ենք որոշ թվով բարբառային բառեր և բառատարբերակներ, նաև այնպիսիք, որոնք ուղենշում են հետագա փոփոխությունները, այսինքն՝ հատուկ են միջին հայերենին:

13-րդ դարի հիշատակարանների<sup>2</sup> լեզվական որոշ հարցերի անդրադարձել է Լ. Հովսեփյանը: Նա մասնավորապես դիտարկել է հոլովման և խոնարհման համակարգերին բնորոշ այն իրողությունները, որոնք շեղվում են գրաբարյան օրինաչափությունից՝ կիսով չափ լինելով միջինհայերենյան ձևեր, մասամբ՝ «գրաբարյան գերճշգրտության», զանազան վրիպակ-

---

<sup>2</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (ԺԳ դար), կազմ. Ա. Մաթևոսյան, Ե., 1984:

ների և տարընթերցումների հետևանք, քիչ ղեպքերում՝ բարբառային իրողություններ<sup>3</sup>:

Ինչպես և ուսումնասիրությունն է ցույց տալիս, բոլոր դարերի հիշատակարանների լեզուն մեծ մասամբ գրաբարն է: Համեմատաբար քիչ ծավալ են կազմում միջին հայերեն, ապա և աշխարհաբար հիշատակարանները: Վերջինների համեմատ ավելի մեծ թիվ են կազմում տարբեր լեզվափուլերին հատուկ իրողությունների ներհյուսմամբ կազմվածները: Անխառն կամ գրեթե անխառն գրաբարով գրվածները ծավալով շատ անգամ գերազանցում են նախորդներին: Դա պայմանավորված է հիշատակագրության դարավոր ավանդույթի համաձայն լեզվական միևնույն կադապարների պահպանումով: Պետք է հավելել, որ հիշատակարաններ գրել են ամենատարբեր կրթություն ունեցող անհատներ: Նրանցից շատերը հայ գրական-մշակութային հայտնի գործիչներն են եղել, ուստի և, լավագույնս տիրապետելով գրաբարին, գրել են ստվարածավալ հիշատակարաններ՝ գրաբարյան օրինաչափություններով:

Ոչ միայն ձեռագիր ընդօրինակողները՝ գրիչներն են հիշատակարաններ գրել, որոնք հիմնականում ուսյալ մարդիկ են եղել, այլև ձեռագիր փրկագնողները, ստացողները, գրչագրեր պատվիրողները և առհասարակ տվյալ աշխատությանը ինչ-ինչ առնչություններ ունեցող անհատներ: Նրանցից շատերը, առանձնակի կրթություն չունենալով, գրաբարի կանոններին ու բառապաշարին քաջատեղյակ չլինելով, մեկ կամ մի քանի նախադասությունից բաղկացած հիշատակարաններ են թողել, որոնք և, ըստ երևույթին, հիմնականում տրամադրում են բարբառային-խոսակցական իրողությունները: Ցավոք սրտի, պետք

---

<sup>3</sup> Լ. Հովսեփյան, *ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն*, Ե., 1997:

է նկատել, որ վերջիններում շատ հազվադեպ է նշվում հիշատակագրողի ծննդավայրը<sup>4</sup>:

13-րդ դարի հիշատակարանների լեզուն գլխավորապես գրաբարն է: Սակայն որքան էլ մեծ է եղել գրաբարյան օրինաչափությունների պահպանման ձգտումը, այնուամենայնիվ առանձին հիշատակարաններում տեղ են գտել գրաբարի ընդհանրական ձևերից շեղվող բառատարբերակներ, որոնք պայմանավորված են կա'մ միջինհայերենյան փոփոխություններով, կա'մ առանձին միավորների բարբառային պատկանելությամբ, չիմացության հետևանքով հիշատակագիրների թույլ տված բազում սխալներով, հաճախ՝ գրաբարյան գերճշգրտությամբ:

Պետք է նկատի առնել նաև դարերի հոլովություն հիշատակարանների աղավաղումներն ու ընդօրինակողների վրիպումները: Այս ամենը վկայում է մի շարք դժվարությունների մասին՝ պարզելու՝ որն է այն ժամանակների համար իրական, որն է սխալագրություն կամ վրիպակ, մանավանդ որ շատ օրինակներ աղերսներ ունեն բարբառային մերօրյա երևույթների հետ: Այդ հարցերը պարզաբանելու համար ապավինել ենք հայերենագիտության արդի ձեռքբերումներին, մեծապես օգտվել բառարանային տվյալներից:

Ելնելով հիշատակարանների բովանդակային-ոճական առանձնահատկություններից՝ կարևոր ենք համարել նախ

---

<sup>4</sup> Եթե հիշատակագիրը տեղեկություն է հաղորդել իր ծննդավայրի կամ գրչության վայրի վերաբերյալ, ապա յուրաքանչյուր բնագրային վկայության կողքին նշել ենք այն՝ տեղանունների հայտնի բառարանի հիման վրա պարզելով տվյալ վայրի աշխարհագրությունը /Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Ե., 1986 / (այսուհետև՝ ՏԲ):

անդրադառնալ նրանցում լայնորեն գործածված բառերին: Այնուհետև քննել ենք բառապաշարի այն շերտերը, որոնք սովորական և ընդհանրական չեն գրաբարի համար, շեղվում են գրաբարյան օրինաչափությունից՝ հիմնականում լինելով բարբառային իրողություններ, օտարամուտ բառեր: Հարկ ենք համարել նաև անդրադառնալ միջին հայերենին հատուկ բառապաշարին՝ բնիկ, օտար և անհայտ ծագման, գրաբարի համեմատությամբ հնչյունական և բառակազմական այլ տարբերակներով առկայացած բառեր: Անշուշտ, վերհանել ու քննել ենք նաև բառարաններում չարձանագրված բառապաշարը

### **Հիշատակարաններում հաճախակի գործածված բառեր:**

Ինչպես վերը նշել ենք արդեն, հիշատակարան գրել են հայերենի գրավոր շրջանի սկզբնավորումից ի վեր: Հետագայում հիշատակագիրները ավանդաբար օգտվել են այն բառերից, արտահայտություններից, լեզվական կառույցներից ու բանաձևերից, որոնք ի սկզբանե կիրառվել են հիշատակարաններում: Այսպիսով, հիշատակագրության դարավոր ավանդույթով և նյութի բովանդակային կողմերով պայմանավորված՝ որոշ բառեր հաճախակի գործածություն են ստացել:

Հիշատակագիրները սովորաբար օրհնանքի և մեծարանքի խոսքեր են շռայլել ձեռագիր ընդօրինակողների, ստացողների և առհասարակ նրանց հասցեին, ովքեր որևէ դեր են ունեցել այն փրկելու, պահպանելու, գրչագրելու և փոխանցելու գործում՝ այդ ամենը համարելով մեծագույն ծառայություն հայրենիքին, ժողովրդին և հավատին: Դրան հակառակ՝ խոնարհաբար ինքնանսեմացման և բանադրանքի խոսքեր են ասել իրենց հասցեին: Հետևաբար որոշ բառեր կիրառվել են մեծ հաճախականությամբ: Այսպես. «Արդ, որք անկոտիք ի սմանէ, յիշեսցիք ի Տէր *գարբասէր* կրանաւորն գՊապիոս....որ բազում

փափագանաւք ստացաւ զսայ յարդար գոյից իւրոց: Ընդ նոսին և *զողորմելի* և *զտխմար* գրիչս յիշեսցիք ի Տէր» (257), «Գրեցաւ աստուածախաւս.... Աւետարանաւ.... հրամանաւ *սրբասնեալ* և *աստուածամեծ* քահանայ Յոհաննիսի և *պատուական* ծերունի հաւր իւրոյ Գրիգորոյ» (298), «Զստացող տառիս զտէր Յոհաննէս րաբունի յիշեսցիք ի Տէր և զծնողսն իւր: Ընդ նմին և զՅոհաննէս *սրբասնեալ* քահանայ, որ զաւրինակս ետ» (387), «Եւս առաւել աղաչեմ յիշել ի Տէր *զպատուական* հայրն իմ և զուսուցիչն զՍտեփանոս *պատուելի* քահանայն, և զՍտեփնոս *սրբասնեալ* աբեղայն, որ զաւրինակս երեստ» (907), «Զարժանի յիշատակաց *զգերահռչակ* և *բարերջանիկ վսեմախոտ* րաբունին Մխիթար՝ զստացող տառիս յիշեսցիք ի Տէր Յիսուս» (926):

Ինչպէս արդեն նշել ենք, հիշատակագիրները իրենց անձի մասին խոսել են պարսավանքի, մեղադրանքի արտահայտություններով՝ մեծ մասամբ ելնելով ընդօրինակված ձեռագրերում թույլ տրված վրիպումներից, գրի խոշորության և զանազան այլ հանգամանքներից, այսպիսով հայցելով Աստծու ողորմությունն ու օրհնությունը և խնդրելով, որ ընթերցողները աղոթքներում հիշեն նաև իրենց և ողորմի ասեն: Ահա և այսպիսի հանգամանքներում լայն գործածություն են ստացել ստորև ընդգծված բառերը. «Որք ընթեռնուք յիշելոյ արժանի համարեսցիք զտառապեալ եւ զտարակուսեալս մեղաւք *զանպիտան* գրիչս» (123), «Քրիստոս Աստուած, ողորմեա տեառն Յովաննէսի՝ սրբոյ ուխտին առաջնորդի եւ բարիոք հովուապետի, ամէն: Ընդ նմին սորին *տրուպ* եւ *անհեղեղ* գրչի Մարտիրոսի, ամէն» (123), «Գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ Առաքելի քահանայի, *տրուպ* եւ *անարժան* ծառայի Աստուծոյ» (201), «....եւ ստացաւ զաստուածային մատենսս նպաստաւորութեամբ Թորոս Վահկայցոյ *տրուպ* գրչի» (540), «Եւ զիս *զնուաստ* աշա-

կերտու և **զախմար** գրիչս յիշեա մարդասէր Տէր ամենակալ» (153), «Արդ՝ գրեցաւ ձեռամբ Սարգսի **մեղապարտ** և **սուտանուն** կրանաւորի» (214), «Գրեցաւ մատեանս.... ձեռամբ Կիւրակոսի **ախմար** եւ **մեղապարտ** գրչի, ի խնդրոյ երջանիկ եւ սրբասնեալ եպիսկոպոսի Տէր Գրիգորի» (214), «Արդ, որք աւկտիք ի սմանէ և կամ ընդաւրինակէք, զերջանիկ եպիսկոպոսս՝ զտէր Դաւիթ յիշելոյ արժանի արասցուք. ընդ նմին և **զանարժան** և **զյախմար** զծողս» (174), «....գրեցաւ գիրս.... ձեռամբ **անպիտանի յոքնամեղ** եւ **թարմատար** գրչի Յուսկան» (158), «Եւ զիս զեղկելիս զսակաւ գրիս գրողն զՎարդան **սուտանուն** արեղայս և զկապաւոյս և զկազմաւոյս յիշեցէք և մեղաց թողութիւն խնդրեցէք, և Աստուած զձեզ յիշէ» (196), «Ով պատուական և սուրբ կրանաւոր Ռստակէ զսակաւ գիրս ընկալ և **զփանաք** գրիչս յիշեցիր ի մաքրափայլ յաղաթս քո, և Աստուած վայելել տացէ մաքուր անձինդ» (216), «Գրողի սորա Գրիգորի, **մեղապարտ** քահանայի, **նւաստ** եւ **եսոին** գրչի Տէր Յիսուս ողորմեսցի» (201), «ԶԳրիգորիս Սըսցի՝ **զանպիտանս** ի գրչաց և **թարմատար** երգեցող յիշեցիք ի Քրիստոս, և զստացաւոյ Աւետարանիս՝ զվարդապետն Գրիգոր, և Տէր Յիսուս յիշողացդ և յիշելոցս ողորմեսցի, ամէն» (203), «Գրեցաւ սա ձեռամբ **յոգնամեղ** և **անպիտան, սուտանուն** քահանայի Կոստանդինի» (562), «**Զամենամեղս** և **զբազմաշարս, զանարժանս** յոքունց՝ զգրիչս Դաւիթ յիշել աղաչեմ» (306), «Արդ աղաչեմ ես **բազմամեղ** և **անարժան** գրողս զսրբազնեալ քահանայդ զհայր յիշեայ» (340), «Զվարդապետն իմ զՆերսէս . և **զամենամեղ** գրողս աշակերտ նորին Եսայի յիշել աղաչեմ ի Տէր» (554), «....եւ խոշորութեանս եւ սխալանաց, որ ի սմա, անմեղադիր լերուք, զի **ախմար** էի եւ **պակասամիտ**» (289), «....յիշեցէք **փցուն** գրիչս՝ Ստեփան սոսկ անուամբ կրանաւոր» (530), «Գրեցաւ սուրբ տէրունեան բա-

նիցն շտեմարանս, ձեռամբ **անարժան** և **սուտանուն** քահանայի Յուսեփա» (472), «Գծագրեցաւ վսեմական.... տառս Նորոյ կտակարանաց, .... ձեռամբ **նուաստ** և **փցնամատն** գրչի Յակոբա» (735), «....գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ **մեղապարտի, անարուեստի, ախմարի** և **փցուն** գրչի» (738), «Եւ զիս, **զանարհեստ** և **զանարժան** գրողս զՅոհաննէս երեց, որ առաւել կարաւտիմ ձերոց աղաւթից, յիշելոյ արժանի արարեք զիս և զծնողսն իմ» (536), «Աղաչեմ յիշել զիս՝ **զանափտան** եւ **զսուտանուն** քահանայս զՅոհաննէս» (831), «Եւ իմոյ յանցանացն այլ հայցեցէք թողութիւն անարժան զծողիս, **պիտականուն** քահանայ Վարդան սպասաւոր բանի» (764), «....յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զիս՝ զմեղաւք սևացեալ **զսուտանուն**, որ կոչի Բանարգէս» (768), «....գոր իմ իսկ **մեղսամակարթ** ձեռամբ և հողացեալ մատամբ սկսա....» (281), «Տառապեալս Գեորգ վարդապետ, որ յԱրմէնս լեառն իմով **մեղսաներկ** ձեռամբ գրեցի զաստուածաւանդ. Աւետարանսս» (692), «Արդ, յիշեսջիք.... **զմեղսամակարթ** գրիչ, որ բազում տառապանաւք եւ նեղութեամբ շարադրեցի զսա խոշոր գրով» (788) ևն:

Մի շարք գրիչներ էլ իրենց «նսեմութիւնը» արտահայտել են նվազական ածանցների օգնությամբ, ինչպես. «**Զմեղապարտ գրչիկս** յիշեա ի Տէր, ով սրբազան ընթերցող» (701), «Նաև **զսուտանուն գրողակս** Աւշին և զծնաւոյս իմ և իմոցն յիշատակել աղաչեմ, և Աստուած որ առատն է ի տուրս բարեաց, յիշելեացս և յիշողացդ առհասարակ ողորմեսցի, ամէն» (754), «Եւ արդ աղաչեմ հողացեալ բերանովս զորդիստ Նոր Սիոնի՝ յիշատակ արժանի արարեք զմեղապարտ **գրողիկս** և զծնողսն իմ և թողութիւն շնորհեցէք» (255), «**Զնուաստ հողիկս** զԹումաս սարկաւաքն, աղաչեմ յիշել ի Տէր» (177), «....յիշեցէք սրտի մտաւք ի մաքրափայլ աղաւթս ձեր **զփծուն** և զխոշոր **գրչակս** ԳԳրիգոր

աբեղաս» (517), «Քրիստոս Աստուած ողորմի ստացողի սուրբ գրոյս Դաւիթ քահանայի և ծնողաց իւրոց և ինձ **փցուն գրչակիս**, և լսողացդ և կարդացողացդ, ամէն և եղիցի» (887), «Զբիւր քանքարաց պարտականս և գտառապեալս, զմեղաւք լցեալ **գծաւղակս** զՍարգիս **սուտանուն** քահանա, աղաչեմ յիշել ի սուրբ յաղօթս ձեր» (929) ևն:

Հիշատակարանները սովորաբար ավարտվում են հետագայում տվյալ ձեռագիրն ստացողին կամ ընթերցողին ուղղված խնդրանքով, որ աղոթքներում հիշեն իրենց՝ ձեռագիրն որևէ առնչություն ունեցող անձանց, հաճախ նաև՝ իրենց հարազատներին: Այսպիսով, *աղաւթք* բառը հիշատակագրության սկզբնական շրջանում *սուրբ* և *մաքուր* որոշիչներից զատ ստացել է նաև նշվածներով բաղադրված մի քանի այլ որոշիչներ, որոնք մեծ հաճախականությամբ գործածվել են բոլոր դարերի հիշատակարաններում: Հետագա դարերի, այդ թվում և 13-րդ դարի հիշատակարաններում կիրառվել են այլ որոշիչներ ևս, ինչպես և կփաստենք ստորև տրվող օրինակներով. «Բարսեղ քահանայ ստացաւդ տառիս, որ և հանգուցեալն է ի Քրիստոս, աղաչեմ յիշատակել ի *սուրբ* և ի *մաքուր* աղաւթս ձեր» (649), «...յիշեսցիք *յարժանաւոր* և *մաքրափայլ* յաղաւթս ձեր զերիցս երանեալ հայրապետն Հայոց գտեր Կոստանդին՝ զստացող սորա եւ զաստուածասէր ծնաւդսն իւր» (190), «Արդ, որք աւգտիք ի սմանէ, յիշեցէք ի *սրբամատոյց* յաղաւթս ձեր զիս զմեղաւորս Պետրոս» (226), «Արդ աղաչեմ զամենեսեանսն, որք վաեւէք ի մխիթարութեան սորա, յիշեցէք ի *սուրբ մաքրափայլ* յաղաւթս ձեր զստացող սորա՝ զՍտեփանոս քահանայ» (255), «Երեսս անկեալ աղաչեմ զամենեսեան, որք պատահիք սմին, յիշեցէք ի *սրբամաքուր* աղաւթս ձեր զերիցս երանեալ ծերունի պատուական քահանայն Յոհաննէս Գոմոձգերցի, որ զաւրի-

նակն շնորհեաց» (397), «...յիշեսցիք սիրով ի Քրիստոս... ի **մշտամատոյց** յաղաւթս ձեր» (432), «...զՄաթէոս վարդապետս արժանի առնէք ի **սրբայիպայլ** յաղաւթս ձեր, յիշել հանդերձ հոգևոր հարբն իմոյ» (676), «...յիշելոյ արժանի առնէք ի **սուրբ** և **մաքրափայլ յամբիծ** աղաւթս ձեր զԵրեմիա քահանայ» (536), «...յիշել սրտի մտաւք ի բաղդատական և **երկնաբացիկ** աղաւթս ձեր զԽաչատուր քահանայ և զծնողսն իւր» (470), «Արդ, աղերս մաղթանաց արկանենք առաջի մանկանց Նոր Սիովնի՝ յիշել ի **միագումար** եւ ի **սրաթոնիչ** աղաւթս ձեր զվերագրեալոյ ամենայն» (121), «...ապաւինելով ի **լուսաթոնիչ** աղաւթս ձեր...» (156), «Որ կարդայք կամ արիւնակէք, յիշեսցիք ի **մեղսաքաւիչ** յաղաւթս ձեր զստացողս սորին զծառայս Աստուծոյ Մարիուն» (767), «... յիշեսցիք ի **մեղսաքաւիչ, երկնաթոնիչ** յաղաւթս ձեր, զԿոստանդին, ....զի բազում աշխատութեամբ աշխատեցաւ և կոստդեց զԱւետարանս զայս» (828), «...սրբազան ընթերցաւդք.... յիշեսցիք ի **սուրբ** եւ **երկնայթոնիչ** աղաւթս ձեր...» (848):

**Բարբառային-խոսակցական բառեր:** 13-րդ դարի հիշատակարաններում նկատվում են բարբառային - խոսակցական հայերենին բնորոշ բառեր: Դրանք ըստ ծագման առանձնանում են հետևյալ երեք խմբերով՝ բնիկհայերենյան, անհայտ ծագման և օտարամուտ բառեր: Երկրորդ խմբին պատկանողները հայ լեզվաբանության մեջ հայտնի են «ենթաշերտային բառեր» տերմինով<sup>5</sup>:

**Բնիկ բառեր:** Ըստ բառարանային տվյալների՝ բնիկ հայերեն բառեր են հետևյալները.

<sup>5</sup> Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» (այսուհետև՝ Ակնարկներ), հ. Ա, Ե., 1972, էջ191:

**Գէշ** «վատ, տգեղ »։ «Յուրտ է, ձեռս **կաղունել** է, **գէշ** կու գրուի, թողութիւն արա աղաչեմ» (356, **Ալկանց** անապատ, որն ըստ ՏԲ-ի՝ գտնվում է Կիլիկիայի Յախուտ գավառում)։ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» -ն<sup>6</sup> բառը մեկնում է «որպէս ոմկ. *յոռի, վատթար, անախորժ*»՝ վկայելով երկու օրինակ՝ մեկը 13-րդ, իսկ մյուսը 14-րդ դարի գրավոր աղբյուրից։ «Հայերէն արմատական բառարան»-ի<sup>7</sup> **գէշ** «ղի, դիակ» բառահոդվածում Աճառյանը նաև անդրադարձել է հիշյալ իմաստին՝ վկայելով. «...**գէշ** «վատ» կապ չունի սրա հետ, այլ ծագում է *գարշ* բառից»։ Վերջինս էլ, համաձայն ՀԱԲ-ի, բնիկհայերենյան բառ է՝ «հնխ. ghers- «սարսափ, զգուանք» բառից»։

**Պոն** «հացի տեսակ»։ «ԶՓիլիպպոս սուրբ և ընտրեալ քահանայ յաղաթս ձեր յիշեսցիք, որ գտաք **զղոնս** եբեր» (146)։ Ըստ ՀԱԲ-ի՝ բնիկ հայերեն բառ է՝ հնխ. dhon- ձևից, նշանակում է «մի տեսակ հաց, պաքսիմատ»։ Հ. Աճառյանը, ելնելով բառարանային վկայություններից և իբրև լրացուցիչ փաստարկ բերելով այն, որ «նոյն բառի նուագական ձևը՝ *ղոնիկ*՝ գործածական է մինչև այժմ էլ Բուլանըլիսի և Մշոյ բարբառում և նշանակում է «կէս կանգուն երկարութեամբ և մի մատ հաստութեամբ մի տեսակ տափակ հաց՝ մէջտեղը ծակով», եզրակացնում է, որ բառը ժամանակին եղել է կենդանի ժողովրդական բառ։ «Հայոց լեզվի բարբառային բառարան» -ում<sup>8</sup> առաջին իմաստը նշված է «շան լափ», ապա նոր՝ «հաց»՝ հղված լինելով *ղոնիկ*։ Ընդ որում, համաձայն բառարանի, *ղոն* հայտնի է Ղարաբաղի բարբառում, իսկ *ղոնիկ* տարածված է նաև այլ բարբառներում,

<sup>6</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, 1836-1837:

<sup>7</sup> Հ.Աճառեան, Հայերէն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), Ե., 1971-1979:

<sup>8</sup> Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), Ե., 2012:

և այն բացատրված է «երկարաձև, բոքոնի նման հաստ հաց»: Ակնարկներում ներկայացված է «կլոր հաց, թոնրան բոքոն»<sup>9</sup>:

**Թաթաւ** «անձրև». « ի ժամանակս բարեպաշտ ամիրսպասալար Զաքարիայի... բովանդակ ԻԲ (22) ար **թաթաւ** եկն եւ գետ յարոյց եղեւ» (21). ՆՀԲ-ում և «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի»-ում<sup>10</sup> վկայված չէ, սակայն առկա է նույն արմատից կազմված **թաթաւեմ** բայը, որի մի շարք նրբիմաստների կողքին նշված է նաև «թրջել» իմաստը: ՀԱԲ-ի **թաթաւ** բառահոդվածում տրված է. «արմատ առանձին անգործածական, որից կազմուած են **թաթաւել**, **թաթաւումն**, **տղմաթաթաւ**, **մեղաթաթաւ....**», այնուհետև. «Բնիկ հայ բառ. կրկնուած է պարզական \*թաւ արմատից (առանձին անգործածական), որ գալիս է հնիս. *tap* ձևից» և նշանակում է «ընկղմել, թաթաւել, մխրճել»: Նույն բառահոդվածում ի վերջո վկայված է, որ առանձին գործածական է որպէս «անձրև» իմաստով գավառական բառ՝ կիրառության վայրերի նշումով: Ապա հիշատակվում է. «ըստ Նորայր, Բառ. Ֆր. 955 ա կայ և միջին հայերէնում»: «Միջին հայերենի բառարան» -ում<sup>11</sup> երկու վկայություն է բերված՝ մեկը Հ. Երզնկացուց, մյուսը՝ Ն. Քուչակից:

**Կաղունել** «ցրտից կուչ գալ, կծկվել». «Անհերթեր կու գրուի, ցուրտ է, ձեռս **կաղունել** է, թողութիւն արա» (356). այս բառն առկա է ՀԼԲԲ-ում, և տրված է, որ հատուկ է Ակնա բարբառին և նշանակում է «կծկվել, կուչ գալ (մատների մասին)»: Այն, ինչպէս և պարզվում է, ՆՀԲ-ում, ՀԱԲ-ում և «Հայերէն բացա-

---

<sup>9</sup> Նշվ. աշխ., էջ 190:

<sup>10</sup> Գ. Ճէլալեան, *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի* (այսուհետև՝ ԱԲ), Վենետիկ, 1865:

<sup>11</sup> Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան* (այսուհետև՝ ՄՀԲ), Ե., 2009:

տրական բառարան» -ում<sup>12</sup> արձանագրված *կադաւեմ* բայի միջ-նաձևն է *ա* ձայնավորի՝ միջին հայերենին հատուկ անկմամբ առաջացած հնչյունական տարբերակն է: Վերջինս ՀԲԲ-ում բացատրված է նաև *քցմել* բայով, որի *քուցումել* տարբերակը նույնպես գործածվել է նշված դարի հիշատակարաններից մեկում, ինչպես և կփաստենք ստորև:

**Ենթաշերտային բառեր:** Մառլենա Մուրադյանը Ակնարկներում գրում է. «Միջին հայերենը ավանդում է գրաբարին անձանոթ բազմաթիվ այնպիսի բառեր, որոնց ծագումը հաճախ դժվար է պարզել: Դրանց զգալի մասը, անշուշտ, հայ ժողովրդի կազմի մեջ ձուլված տարբեր ցեղերի ու ժողովուրդների բառապաշարի հետքերն են, որ, հիմնականում, միջին հայերենի բարբառներից ներթափանցել են գրական լեզվի մեջ»<sup>13</sup>: Ահա թե որ բառերն են անվանվում «ենթաշերտային»: Ըստ Ակնարկների և բառարանային տվյալների՝ այս ենթախմբին են պատկանում ստորև ներկայացվող բառերը:

**Կորդ** «խուպան, անվար, ամայի»։ «Ձի թեպէտ ոչ աղբիւր ջրոյ նոր պատառեցաք և ոչ ի **կորդ** ազարակի սերմանց որայս բարդից հնձեցաք, ի նոցունց համբարաց ցորենոյ, ճմլել» (Հեղինակ՝ Հովհաննես Երզնկացի, 706): Ինչպես հայտնի է, Երզնկան քաղաք է Արևմտյան Հայաստանում՝ Էրզրումի նահանգում: Ըստ ՀԼԲԲ-ի՝ բառը գործածվել է մի շարք վայրերում, սակայն նշված չէ Էրզրումը կամ Երզնկան:

**Ձարբ** - «...և հեր գլխոյն ուղղորդ և **ձարբ**, և աչն նեղ, և ճակատն լայն, և քիթն տափակ, և մուրուքն **քոսակ**» (196): Բառը ՀԱԲ-ում նախ բացատրված է «մեծ-մեծ, խոշոր»՝ ելնելով եղած

---

<sup>12</sup> Մ.Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՀԲԲ), Ե., 1944-1945:

<sup>13</sup> Նշվ. աշխ., էջ 191:

փաստերից: Ապա նշված է, որ հայտնի է նաև «կոշտ, անհարթ» իմաստով՝ որպես միակ վկայություն տրվելով հիշատակարանի օրինակը: Հազիվ թե կարելի լինի տվյալ տեքստից բխեցնել «անհարթ» իմաստը, մանավանդ որ *հերք* չի կարող միաժամանակ լինել «ուղղորդ» և «անհարթ»: Հավանական է «կոշտ» իմաստով կիրառությունը: Բառը տեղ է գտել նաև «Հայերեն ստուգաբանական բառարան» -ում<sup>14</sup>. «մեծ-մեծ, խոշոր» նշանկությունից բացի՝ այսպիսի մեկնություն է տրվել. «հմմտ. հայ. *ձառ* «կոշտ», *ձար* («կոշտ» մազ), հ. իռլ. *garb*, կիմր. *garw* «կոշտ»: Ի դեպ, ՀԱԲ-ում առանձին գլխաբառով տրվել է նաև *ձար* «մազ, մազեղեն» բառը, իսկ նույն բառահոդվածում՝ *ձարի* «մազոտ, թաւ»: Կա՛մ *ձարի*-ն ինչ-ինչ հանգամանքներում կարող էր դարձած լինել *ձարք*, կա՛մ էլ վերջինս *ձար* «մազ» գոյականի գործիական հոլովն է, ինչպես և՛ *ջուր* – *ջուրք*, ուստի և «մազով, մազոտ» իմաստից երկրորդաբար բխել է «թավ» իմաստը: Հիշատակարանում առկա հետևյալ նախադասությունից պարզ է դառնում, թե որ տարածաշրջանից է հեղինակը. «...ոչ կարեն պատմել զանցս չարչարանացն, որ ետ ըմպել զբաժակն բարկութեան **Այրարատեան** գաւառին և **Անոյ**» (196):

**Ճուռ**. «խաղողի փոքրիկ ողկույզ». «...ի նուազեալ ժամանակս իբր ի դրունս ձմերայնոյ ի լսնացեալ **Ճուռ** կամ ողկոյզ ինչ զարմանալի փայլեաց» (568): ՆՀԲ-ում առկա է միայն *ճիռ* հնչյունական տարբերակը, իսկ ՀԱԲ-ում նույնի բառահոդվածում տրված են ևս մի քանի տարբերակներ, այդ թվում և՛ *ճուռ*: ՀԱԲ-ում նույնպես վկայված է վերջինս, սակայն նշված չեն կիրառության վայրերը: Այն պարունակող հիշատակարանը

<sup>14</sup> Գ. Զահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան* (այսուհետև՝ ՀՄԲ), 2010:

կրում է հետևյալ խորագիրը՝ «Յիշատակարան թագաւորին Հայոց Լեւոնի ընծայաւորի զարինակ սուրբ գրոցս Հաղբատա», որից հայտնի է դառնում հիշատակագրի ինքնությունը: Պետք է նկատել նաև, որ *ՃԻՆ* տարբերակը վկայվել է 15-րդ դարի հիշատակարանում. «...և կամ թէ իբր *ՃԻՆ* ի մեջ ողկուզաց ի գաւառին Սիւնեաց...» (գրիչ՝ Թովմայ Մեծոփեցի, վայր՝ Մեծոփայ վանք)<sup>15</sup>:

**Մուտքախ** «խոհանոց». «ԶԱռիւծ սպասաւոր նորա և **մուտքախի** և զծնաւոյս իւր արհնութեամբ յիշեցեք ի Տէր Յիսուս» (29): Վերը հիշատակված մի շարք բառարաններից միայն ՀԼԲԲ-ում է վկայված այս բառը, և որպէս աղբյուր նշված է Մասունի բարբառը, սակայն բնագրային վկայություն առկա չէ:

**Մոտել** «գժտվել, խռովություն բարձրացնել, ապստամբել». «Ի թուին Հայոց ՈՀԹ (1230), յամիս աւգոստոս ԻԵ (25) աւրն, յաւուր կիրակէի եկն առ մեզ Սարգիս հայրն և եբեր մեզ վատ գրոյց, որ եկեալ Լեւոն թագաւորին թագուհի ի Կիպռասա ի Սելնկիա, որ **տենայր** զիր դուստրն, որ էր Հեթում թագաւորին թագուհի: Եւ տարան զթագուհին ի Սելնկիա, և անդ ետես զմայրն իւր, և խաբեց զթագաւորին հայրն զպարոն Կոստանդին, և մտաւ ի Սելնկիա, և **մոտեց** հետ իր մաւրն, և զպարոնն հանին **քաշնաւք** բերդէն: Այս այսպէս գործեցաւ, և ենք յահի և յերկեղի. այլ յառաջկայն Աստուծոյ է գիտելի» (166): ՆՀԲ-ում տրված է **մոտել** բայի մեկ վկայություն՝ դարձյալ 13-րդ դարին պատկանող աշխատությունից: Ըստ ՆՀԲ-ի՝ տվյալ վկայությունը «երբեմն ապստամբեալք յաստուծոյ» արտահայտության կողքին է՝ լուսանցքում. «ի լուսանցս գրի **մոտեք**»: ՆՀԲ-ում արձանագրված են նաև **մոռուտ** «մոմոացող», **մոռութիւն** «աղմուկ,

---

<sup>15</sup> Տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, կազմ. Լ. Խաչիկյան, Ե., 1955, էջ 101:

ապստամբութիւն»։ ՀԱԲ-ում տրված է *մուռտ* «աղմուկ, խռովություն» բառարմատը, որի հոդվածում գրված է. «Բաղադրություն՝ *մռտել, մռտութիւն*։ Թերևս կապված է *մուռ, մունջ* արմատների հետ», իսկ *մուռ*-ը բացատրված է «հլու, լուռումունջ լսող»։ Ինչպես նկատելի է, անհավանական է այսպիսի բացատրությունը։ Բայը վկայված է նաև «Հայերեն գաղափարական բառարան»-ում<sup>16</sup>, որի համաձայն՝ հայտնի է Չենկիլերի բարբառում «դրդել, գրգռել, խօսք խառնել» իմաստով<sup>17</sup>։ Ելնելով վերոհիշյալից՝ դժվար չէ հասկանալ, որ *մումռալ, մումրթ* «բերան, ստորին շրթունքը», *մուռ* «ոխ», ապա և *մռուտ* «մռմռացող», որից և *մռտել* «գժտվել, ապստամբել» բառերը նույնական ծագում ունեն։ Նշվածների հիմքը հավանաբար մարդու մոռոցն է՝ որպես բողոքի, դժգոհության, զայրույթի արտահայտություն։

*Մսել* «ցրտահար լինել, պաղել»։ «Այսպար ձեռս խիստ *մսեցաւ*, զի իմանալիս կրկին է սառեալ, վայ» (գրիչ՝ Առաքել, վայր՝ Ս. Թեոդորոսի վանք, մերձ ի գեղաքաղաքս Ճմին՝ ըստ ՏԲ-ի՝ Գյուղ Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի Եկեղյաց գավառում, Երզնկայի շրջանում, 56)։ Ըստ ՆՀԲ-ի՝ վկայված է նաև 5-րդ դարում, ՀԱԲ-ը նշում է. «պատահական նմանություն ունին ալբան. *marθ* «սաստիկ ցուրտ», ռուս. *морозъ*...»։

*Շիւար* «խեղձ, անճար, մոլորված»։ «....թէ քանի թագաւորք և առաջնորդք և իշխանք և փարթամք թողին զայս կեանս եւ գնացին ունայն և են ողորմ և *շիւար*» (Հեղինակ՝ Վարդան Այգեկցի, 188)։ ՆՀԲ-ն հղում է *շուար* տարբերակը՝ բացա-

<sup>16</sup> **Հ. Աճառեան**, *Հայերէն գաղափարական բառարան* (այսուհետև՝ ՀԳԲ), 1913։

<sup>17</sup> Ակնարկներում նույնպես վկայված է այս փաստը (էջ 196), սակայն ըստ ՏԲ-ի՝ *Չենկիլերը* գետակ է Կուրի ավազանում՝ Ձորագետի վտակը. այդ անվանումով որևէ բնակավայր նշված չէ։

տրության մեջ տալով. «Առաւել ունկ. որպէս վարանք, տագնապ, խուճապ»:

**Քաշնք** «կշտամբանք». «...ն զպարոնն հանին **քաշնաք** բերդէն» (166): ՄՀԲ-ում վկայված է **քաշանք** «նախատինք, անպատվութիւն», և բերված է բնորոշ վկայություն, իսկ ՀԼԲԲ-ում՝ **քաշնքել** «խրատել, կշտամբել»: Սակայն վերջինում բնագրային վկայություն տրված չէ, անգամ նշված չէ տարածական պատկանելությունը: Այն արձանագրված է նաև ՀԲԲ-ում: Ինչպես և գիտակցվում է, **քաշանք** կամ **քաշնք** բառի արմատը նույնական է **քաշել** բայի արմատին, ուստի և դիտարկված բառը սկզբնապես նշանակել է «քաշքշում, քաշքշոց», ապա և երկրորդաբար ստացել «հանդիմանություն, կշտամբանք» իմաստը: Դա պայմանավորված է նրանով, որ հանդիմանությունը հաճախ ուղեկցվում է «քաշքշումով»:

**Քուցումել** «մրսելուց մատները չշարժել, հուպ չգալ». «Ով սուրբ ընթերցողք, յիշեցէք զեղկելիս, զի թանաքս սառոյց երեւ ձեռս **քուցումած**, վասն Տեառն մի պախարակէք զխոշոր զ[րի]ս» (882): Արձանագրված է ՀԲԲ-ում՝ հղվելով **քցմել**: ՀԼԲԲ-ն նույնպես վկայում է **քցմել**, **քցմուկ** (քցմած): Մեր կարծիքով՝ նշվածը **ցամաքել** (**ցմքել**) բայի՝ բարբառներին հատուկ դրափոխությամբ առկայացած իրողություն է. պետք է նկատել, որ **ցամաքիմ** բայի բացատրության մեջ ՆՀԲ-ում տրված է նաև «պաղիլ»: Իսկ ըստ ՀԱԲ-ի՝ **ցամաք**-ը փոխառյալ է եբրայերենից. «Բառիս հետ յայտնապէս նոյն է եբր. **סמך** «չորացնել»:

Ինչ վերաբերում է ժամանակին բարբառային հայերենում կիրառված օտար ծագման բառերին, դրանց կանդառառնանք ստորև՝ խնդրո առարկա հիշատակարաններում առիասարակ տեղ գտած օտարամուտ բառապաշարը քննելիս:

Բացի բուն բարբառային բառերից՝ հիշատակարաններում կիրառվել են նաև գրաբարյան օրինաչափությունից հնչյունական և բառակազմական առումներով շեղվող բազում բառեր: Դրանք, քննվող հիշատակարաններից բացի, մեծ մասամբ գրական վկայագիր են ստացել միջինհայերենյան շրջանի երկերում:

**Հնչյունափոխական տարբեր երևույթներով առկայացած բառատարբերակներ:** **Ձայնավորների առնմանություն.** *երեխայրիք* բառատարբերակում միաժամանակ առկա է հնչյունների և՛ առնմանություն, և՛ տարնմանություն, ՆՀԲ-ում արձանագրված է միայն *երախայրիք*, որը սովորական դրսևորումն է հայերենի զարգացման բոլոր փուլերի համար. «...տուք *զերեխայրիս* կալոյ և զհնձանի Տեառն Յիսուսի և Հաւր իւրոյ գթածի և բարեխօսին զկողովն *ռողկուզից* մտաւոր գոհութիւն (Հեղինակ՝ Վարդան Արևելցի, Վայր՝ Սանահին, 308). *ռողկոյզ* բառն էլ նախ վերածվել է *ռողկուզ*-ի՝ պայմանավորված *ոյ* երկբարբառի՝ միջին հայերենի համար սովորական պարզեցմամբ, ապա և *ռ* ձայնավորի առնմանությամբ դարձել *ռողկուզ. յեմել (յամել)* «ուշացնել». «...որ շատ *յեմեց* / գիրքս, նա սրտոտեցաւ, որ իրաւ էր» (931):

**Բաղաձայնների առնմանություն.** *մարմպան* (մառնպան կամ մառանապան), *փոմպան* (փոնապան). «...որ աշխատեցան ի կոկ թղթիս, նաև զտնտես և *զմարմպան* .... և *զփոմպան*» (Գրիշ՝ Դաւիթ Բջնեցի, Վայր՝ Ակներ, 305), *աշտիճան* – Հ. Աճառյանը ՀԱԲ-ում *աստիճան* գլխաբառի ներքո նկատել է. «Ս ձայնը ազդուելով յաջորդ ճ-ից՝ դարձել է շ....». «Եւ իբրև եհաս *յաշտիճան* քահանայութեան, կամեցաւ զի անմոռաց պահեսցէ զնա ի սրտէ» (Գրիշ՝ Ստեփանոս, Վայր՝ Սկևռայ, 456, նաև՝ 221, 637):

**Ձայնավորների տարնմանություն. ընծիռել** (ընձեռել). «...որոց թէն զառաւել փափկագոյն կերակուրն *ընծիռես*, այնպէս է որպէս զանարգն» (Հեղինակ՝ Ներսէս՝ քերորդի Ներսիսի Լամբրոնացոյ, Վայր՝ Սկևռա (վանք Կիլիկիայում), 50), *սարկնագ* (սարկաւագ). «... յաղաւթս ձեր յիշեցէք... գտուտանուն *սարկնագ*, և Աստուած զձեզ յիշէ յիւր յարքայութիւն, ամէն» (880):

**Երկբարբառների պարզեցում կամ պարզ ձայնավորի փոփոխություն երկբարբառի:**

**Այ>ա - զմարն** մեր (795), **հարն** մեր (899), **զեղբարն** իւր **զսիրեցել** զԽափլան (612), «...զպատանի *եղբարն*, որ հեռուոր զնաց ի ճանապարհ» (613):

**Այ>ո lol - «Պոմանս** ահեղ եւ արհաւիրք Տերունական է սպառնալիք» (Գրիչ՝ Պետրէ, Վայր՝ Կիպրոս, 510), «Թէ մի դատիք, որ չդատիցիք, *Պոմանս* ահեղ քստմնելիք» (870):

**Այ>ե - հերենիք** - ՄՀԲ-ում արձանագրված է *հերենի* հնչյունական տարբերակը և բացատրված «հորից մնացած՝ ստացված՝ ժառանգված, հայրենի, հայրական»։ «Յանունն Աստուծոյ ես անարժան ծառայս Աստուծոյ Վարդան անունս քահանայի և վարքս չարագործի, ըստացա զտուրբ Աւետարանս ի հալալ ընչից իմոց յիշատակ ինձ, .... *հերենիք* որդոց իմոց Մամիկոնա և Աւագին և Ջալալխաթուն դուստր իմ» (809):

**Եա>ե /ե/ – նշված հնչյունափոխությունը** ավելի հաճախ նկատվում է գրաբարյան *-եալ* վերջավորությամբ անցյալ դերբայի ձևերում, ապա և՛ անցյալ կատարյալի հիմքով բաղադրված բառերում, ինչպես՝ **զմեղուցել** գրիչս, **զտառապել** գրիչս (429), ի Քրիստոս **փոխեցել** ծնողքն իմ (784), զեղբարն իւր **զսիրեցել** զԽափլան (612), «...ողորմայ *թշուառացել* և եղկելի անձինս յառաջ յիշեցեալ անուանս *տառապէրս* և տկարս» (546),

«...յիշեսցիք **գարբասնել** և գերջանիկ սուրբ եպիսկոպոս գտեր Համազասպ» (595), զիր **ննջեցելսն** (297), «...**յիշել** լիջիք յանսպառ բարիսն» (488), «...և դուք **յիշել** լիջիք» (670), **ճգնազգեց** (514), **միակեց** Սիմեոն (73): Նույն հնչյունափոխության արդյունք են նաև հետևյալները. ի **դղեկն** (52), **յաւիտենա** **յաւիտենից**, «Աւա՛ղ աւուրցս դառնութեանց, որ էհաս մեզ, զի ահ պաշարեաց **զամենէսէն**» (611), «...զի ոչ էի **տեղեկ** բայից և բառից» (22), **մատենա** (Գրիշ՝ Թորոս Ռուսլին, Վայր՝ Հոռոմկլա, 334), զսակաւ **կենաս** ընդ **անյաւգուտ** ուսմանդ (734), «...զի **երկոսենքն** խեղճ մեռան անյիշ/ատակ/ » (400):

**Իւ>ե՝ բնութեն** (495), **դաւանութեն** (514), **պատմութեններս** ձեռամբ Յակովբայ (465), **երկեղ** (Գրիշ՝ Ստեփանոս Կաղզանցի, Վայր՝ Յախոտան անապատ, 630), **երկեղիւն** Աստուծոյ (39), արդարեւ ողջախոհ եւ **երկեղած** յԱստուծոյ (329, Գրիշ Թորոս Ռուսլին, Վայր՝ Հոռոմկլա), ահ և **երկեղ** ի վերայ ամենայն քաղաքաց ծովեգերեայց (719), **երկեղազարդ** (ՆՀԲ-ում **երկիրդազարդ** զլխաբառի ներքո՝ բնագրային վկայությունների մեջ կա նաև նշված տարբերակով) (603), **աներկեղաբար** (686), **աղբեր** անսպառ (աղբիւր) (409), **գեղն** (67), **գեղեքաղաք** (794), «Տէր յիշեա զՏերտէր երկրցին մեր, որ ած եբեր փոխանակ ճաշի, և վերարկուն՝ ընկոյզ՝ փոխան **եղի**» (478), «... ընդ սուրբ **եղաբերքիցն** յիշեայ զանարժան ծառայս քո» (560):

**Իւ>ու՝** տունկ և **ճուղս** ունելով բարձրածայրել (733):

**Ոյ > ու - ամենակեցուց** յարութեամբդ (687), **զքորն** Զաքիկն և Ծիծմարն (265), **զքորն** իւր (795), «Վայ ինձ **կուրիս**, կաղ իշով մինչև երբ հասից ի տեղի» (779), **ոյ> ո -** գդեռաբոյս **քորք** սորին զՍպիլ (419), «**Անոշ** քնէ Միհրան» (481). ինչպես նկատված է ՆՀԲ-ում, գրաբարի համար կանոնավոր է **անոյշ** տարբերակը, իսկ **անուշ**-ը նշված է որպես ռամկոորեն: Հասկա-

նալի է, որ վերջինիս է հարում նաև հիշատակարանի վկայությունը:

Որոշ բառերում էլ տեղի են ունեցել պարզ ձայնավորների փոփոխություն երկբարբառների կամ վերջիններիս փոփոխություն այլ երկբարբառների:

**Ու>աւ /ol** - արկանել **զապաւոս** (ՆՀԲ – ապուռ «աւար, կողոպուտ», 859), **ու>ոյ** - «...թերևս արժանաւորիլ **ամենագոյթ** ողորմութեան քո՝ աւուրն աներեկի» (758), **ու>իւ** ի վերին զաւ/ր/ութենէն **ընթահանիւր** տիեզեր/ա/ց (636), **զընթանիւր** տիեզերս (686), **թիւնաւոր** (442):

**Ի>իւ** - **ընտիւր** բանիւք (194), ի կողմն **հիւսիւսոյ** (311), ճգնազգեաց **մարտիւրոսացն** (150), ի քաղաքս **կիւղիկեցոց** ի Տարսոն (111), ի **կիւրակի** ի յայգ երկուշաբթի (669):

**Իւ >ոյ** - Որ ինք է **մէն** ւ այլ չլինի, **Յիւսթն հարոյր տասնիստթնի** /1268/, Ջառ և աւար և **զարոյննի** (Ստացող՝ Սմբատ Գունդստապլ, 362), «Տէր ողորմեսցի **հոյսանն** Աստուածատու» (Գրիչ՝ Պետրոս, Վայր՝ Խաւմ քաղաք, 135), Աւետիք **հոյսանն** (Գրիչ՝ Աստուածատուր, Վայր՝ Սեբաստիա, 209):

**Եայ > է** - «Այլ որ յաւետ է **քրիստոնէ**» (776), բազում թուրք և քուրդ և **քրիստոնէք** (175):

**Հ բաղաձայնի փոխարեն իւ** - **շնախաւոր** (շնորհաւոր). «...թէ աւելի **շնախաւոր** լինի ձեզ վասն յուսոյն իմոյ՝ որ առ Տէր» (Հեղինակ՝ Վարդան Արևելցի, Վայր՝ Անդուլ անապատ - բերդ Կիլիկիայում, 326), «Գրեցաւ սուրբ Աւետարանս ի **խոչակաւոր** և յաստուածաբնակ ուխտիս Ասայելի անապատիս» (637) և նույնում՝ այլ սուրբ **նախատակաց** (Գրիչ՝ Յովաննէս, Վայր՝ Ասայելի վանք և Մշակավանք - տեղանունների բառարանում արձանագրված է, որ առաջինի տեղը անհայտ է, հիշատակված է Ձեռագրաց ցուցակում, եղել է գրչության կենտրոն, իսկ

երկրորդը՝ վանք Մեծ Հայքի Գուգարք աշխարհում՝ Նոյեմբեր-  
յանի Կողբ գյուղից 3-4 կմ հեռու, 637), «ի յիմ **խալալ արդենցն**,  
գոր Աստուած իմ հոգուս բաժին էր պատրաստել» (687):

**Բառամիջյան ձայնավորների անկում** - «....և **զուսցիչն** իմ  
զՍարգիս քահանայ՝ զհանգուցեալն ի Քրիստոս, աղաչեմ յիշել ի  
Տէր» (461), «Վայ, աղմուկ էլաւ, **խալտեցաւ**» (222), «Որ յոռոգելս  
**հալծեցաւ**, Քերականաւ ուղ/ղ/ել ըզսա» (457), «Եւ որք ի գրոյս  
**ուսնել** կամին, Նա **հասկնալ** ըդորդ բանին,.... **Բաժնեաց** ի ձիս  
և ի ջորիս,.... (Գրիչ՝ Ստեփաննոս, Վայր՝ Ատանա, 231),  
«**Չկարցի** այլ յիստակ իմանալ և գրել» (406), «Ով եղբայր Սի-  
մէոն, պիղծ գիր գրեցեր, ապա սիրուն ես **թաթխել**» (698),  
«Աշուիս **կու կուրնա**, ու ձեռուիս **կու թուլնա**, աւախ, աւախ»  
(405), «....ի բժշկութիւն հոգւոյ և մարմնոյ ամենայն **ախտ-  
ցելոց**.... (Գրիչ՝ Կարապետ, Վայր՝ Յոհաննավանք, 611), «Որ  
զընթերցվածքս **կատրեցի**, Ձեռամբ գրչին Կիրակոսի, Ջերծաւ  
Լևոն **թագւորորդի**» (Ստացող՝ Սմբատ Գունդստապլ, չափածո  
հիշատակարան, 362), ի **վայլումն** կենաց (219):

Որոշ ձայնավորներ կամ երկրաբբաոներ **հնչյունա-  
փոխվել են ը ձայնավորի՝** մասամբ շեշտափոխությամբ պայմա-  
նավորված. **ժառնգողք** (511), **աւժընդակ** (222), **անհասկընալի**  
(328), **անդատան** (284), **պատըւական** (206) **վաթսըներորդ** (74),  
**ուրթսըներորդի** (218), **լսնանալ** (լուսանալ) (440), **ըդորդ** (265):

**Հնչյունի հավելում** - **հ ի/լ** բաղաձայնի հավելում. «Տէր  
Աստուած աւգնե եղբաւր մերոյ որ ասի Թիրքիշ **հաբեղայ**, որ  
աւգնեց մեզ ի գիրս զայս չափս ըստ կարիւ իւր» (477), «....կա-  
տարեցի **զղձալիս** յոքունց....» (129), **զհաշտենն** իւր (ՆՀԲ -  
աշտեայ, որի կողքին «որ և աշտէ, ասի և աշտէն, իբր. ոմկ. (լծ.  
լտ. հասդա, թ.խըշտ), **հաշտենախոց** (371), ի **հեբբաեցի**  
Աւետարանէն (141), ի նոցունց **համբարաց** ցորենոյ (706):

Հնչյունի անկում - *հ ի/* բաղաձայնի անկում. *զիշատակս* նոցայ (736), *աջողակ* (248), *աջողել* (154), *մակաւասար* (338), զիւր *տղաքն* (297):

Այլ բաղաձայնների հավելման կամ անկման դրսևորումներ. հավելում. «Եւ արդ ընկալարուք զսերմանեացն ձերոց յովմից *յանկանջս* դիմաւք և գրով ի տեսիլ աչաց զբերս պտղոցս» (308), *կանանչ* (248). ՆՀԲ-ում *կանաչ*-ի մոտ նաև նշված է «և իբր ոմկ. կանանչ, կանանջ», *բարբանջել* (բարբաջել) (260). ՆՀԲ-ում հավասարապես արձանագրվել են բնագրային վկայություններ երկու տարբերակով էլ, ըստ ՀԱԲ-ի՝ ունի բնաձայնական ծագում, արմատի կրկնությամբ է, «ջ աճականով և ն յօղակապով կամ առանց յօղակապի», զբազումս ի *քրիստովնէիցն* (183), Ի թուականութեանս Հայկազնեայ *տովմարիս* (279), ի մեծամասնեան *բարժնի* մասին Եւրոպիոյն (368), *բարժանող* (405), *անբարժանելի* (202, 400), անկում. *կրսեր* (39, 280), «...որ *զվերջի* տետրս գրեաց» (429), *զառաջի* զիծն (20), *որչաք* (որչափք, 74):

Հնչյունների բարդացում - դ+հ=թ - *զընթանուր* զկենդանիս (231), համաքարոզք *յընթանուրս* տիեզերաց (58), թ+շ=չ - «...զպարաւանդեալ տոռամբք անաւրենութեան *զչուստ* ոգիս ի յոյզ և ի խնդիր ելանել այսմ հ/ո/զեկեցոյց մատենիս» (755):

Բառակազմական տարբերակներ - առանց հոդակապի տարբերակներ՝ *մեղսքաւիչ* (265), *սակաւգիծ* (ՆՀԲ-ում չի արձանագրվել և ոչ մի տարբերակով, ԱԲ-ում տեղ է գտել *սակաւագիծ* «սակալ գրված») (793), *հեզհոգի* (707), *թագաւորհայր* (315), *յետմնաց* (232, 698), *եղբայրսիրութիւն* (536), *արիւնհեղութիւն* (194), *բարիհամբաւ* (318), *աստուածգիտութիւն* (304):

Ի վերջնահնչյունից հետո ա հոդակապ - *ոսկիատիպ* (280), *ոսկիանկար* (418), *ոգիակենդան* (445), *ոգիակեցոյց* տառ

(492), *հոգիապայծառ* (304), *հոգիազարդ* (395), *հոգիահրաշ* (433), *հոգիախոս* մատենաս (473), *հոգիաներկ* սուրբ միւռնոսին (443):

*Բ* վերջնահնչյունով բառերը որպես բաղադրության առաջին բաղադրիչ կա'մ կորցնում են նշված ձայնավորը, կա'մ պահպանում: *Բ*-ն և հաջորդող *ա* ձայնավորը վերածվում են *ե*-ի: Վերջինիս են հարում հետևյալ օրինակները, որոնց ի վերջնահնչյունի կորստով տարբերակներն են տարածված թե' գրաբարում և թե' հետագա լեզվափոխերում. *երեխտեւոր* (երախտաւոր) (329), «...զպատանի եղբարն, որ *հեռեւոր* գնաց ի ճանապարհ» (613). ՆՀԲ-ում շատ վկայություններ կան *հեռաւոր*-ի և *հեռ*-ով այլ կազմությունների, ընդամենը մեկ վկայություն կա *հեռեւոր*-ի:

Հատված հիմքերով բառեր - *արքածին* (413), *թագորդի* (808). ՄՀԲ-ում արձանագրվել է թագվորորդի, *տղական* (198):

Բաղադրիչի սեռական հոլովածնի փոխարեն ուղղական հոլով - *եղբայրորդի* (795), իւր *քուրաղուստրն* Գոհարազիզն (ՀԲԲ-ում ամրագրվել է *քոյրաղուստր*) (108):

Որոշ բաղադրություններում էլ տեղի չի ունեցել վերջնավանկի ձայնավորի շեշտափոխական հնչյունափոխություն. նույնպես *երեցուկ* (510). ՆՀԲ-ում տրված են՝ երիցուկ, իրիցուկ, «Խաւարեցաւ արեգակն ի *մեջաւրէի*» (734), նշանագործ *տնաւորէութեամբ* (29), *զկեանսաբեր* սուրբ Աւետարանս (116):

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև *առնել*, *տեսանել*, *լինել*, *ճանաչել* և *մեղադրել* բայերի հետևյալ դրսևորումները. «Ես ինչ *արնեմ* գերիս» (399), «...ու այլ մարդ չկարէ հուրքս//*արնել*» (735), «Վայ խաւարեալ մտացս ինչ *այնեմ*, զերա եղկելիս ի՞նչ *այնեմ*» (620), «Աստուած իր /մեղաց/ թողութիւն *այնէ* (297)», «Յիշման *այրէք* դուք զիս արժանի» (661),

«Ու երեց, որ զգիր անփութ **աքնէ**, նայ ինքն ջնջեսցի ի դպրութենէ կենաց» (Վայր՝ Անի, 237), «.... որ **տենայր** զիր դուստրն» (166), «Եղբա՛յր, ....մի արագ **հլիւր**, և ուր քաշն դրած է՝ անդր քաշէ» (Վայր՝ Փոխընդայ վանք, որը տրված չէ ՏԲ-ում, 382), «....որում **ուլի**, նա յիշեսցէ ի Քրիստոս զմեզ և Աստուած զձեզ յիշողացդ ողորմեսցի, ամէն» (ըստ ՏԲ-ի՝ բազում վայրերում է հայտնի եղել Պողոսի վանք, սակայն մի *պողոսական անապատի* նշում կա, որը Կիլիկիայում է եղել, 907), «....որ **ճանչենան** զաղէկն և զպէղծն» (806), մի *մեղադներ* (555):

Պետք է կարծել, որ միջին հայերենի շրջանում ավանդված լեզվական այն իրողությունները, որոնք սակավ գործածություն ունեն, աղերսներ չունեն գրաբարյան և աշխարհաբարյան տարածված ձևերի հետ, եթե չիմացության, տարընթերցումների, վրիպակների հետևանք չեն և, ավելին, հայերենի մերօրյա բարբառներին հատուկ իրողություններ են, ապա բարբառային են նաև միջին հայերենի շրջանում:

**Նորահայտ բառեր:** Նախ շատ կարևոր էր բացահայտել, թե 13-րդ դարի հիշատակարանների բառապաշարը որքանով է արտացոլվել ՆՀԲ-ում, որը բառեր է պարունակում մինչ բառարանի ստեղծումը ավանդված տարբեր գրական աղբյուրներից, այդ թվում՝ ձեռագրերի հիշատակարաններից: Սակայն, ինչպես սույն ուսումնասիրությամբ պարզվեց, ձեռագրերի՝ 13-րդ դարի հիշատակարաններում գործածված շուրջ 600 բառ և բառատարբերակ ամենատարբեր պատճառներով չեն վկայվել ՆՀԲ-ում: Նշվածներից տասնյակ օրինակներ արձանագրված են 5000 բառերով համալրված ԱԲ-ում, սակայն, վերջինիս բնույթով պայմանավորված, աղբյուրները նշված չեն: Քիչ թվով օրինակ

ներ առկա են «Գրաքարի բառարան»-ում<sup>18</sup>՝ նույնպես առանց բնագրային նշումների, և ՀԱԲ-ում՝ կա՛մ աղբյուրի նշումով, կա՛մ դրա բացակայությամբ: ՆՀԲ-ում չվկայվածներից զգալի թվով բառեր արձանագրված են ՀԲԲ-ում, որում նույնպես բնագրային նշումներ չկան, ապա և՛ ՄՀԲ-ում, որն ընդգրկում է միմիայն միջին հայերի լեզվափոխում (12-16 դդ.) ավանդված բառեր, այդպիսով և՛ 13-րդ դարի ձեռագրերի հիշատակարաններում վկայվածներ: Այնուհետև մի շարք բառեր տեղ են գտել են Լ. Հովհաննիսյանի կազմած բառարանում<sup>19</sup>:

Դիտարկվող հիշատակարաններում վկայված շատ բառեր բնագրային վկայություններով բառարաններում հետագա շրջանի գործերի նշումով են, կամ էլ, ինչպես և վերը նշեցինք, արձանագրված են այնպիսի բառարաններում, որոնցում աղբյուրները բացակայում են: Սակայն մեր նպատակն է ներկայացնել միայն այն բառերն ու բառատարբերակները, որոնք հիշատակված տպագիր բառարաններից և ոչ մեկում տեղ չեն գտել: Այսպիսով, վերոհիշյալ բոլոր բառարաններում չեն վկայվել 13-րդ դարի ձեռագրերի հիշատակարաններում կիրառված շուրջ 400 բառեր ու բառատարբերակներ: Դրանցից շատերը հիշատակարաններում ոչ թե եզակի, այլ հաճախ բազմակի գործածությամբ են: Կարելի է կարծել, որ այդ բառերը մեծ մասամբ կազմվել են հիշատակարաններ գրելիս: Զուր չէ, որ բառարաններում մի շարք բաղադրյալ բառերի վկայությունները միմիայն տարբեր դարերի հիշատակարաններից են: Այսպես, Լ. Հովհաննիսյանը ՆՀԲ-ում չվկայված բառերի բառարանը կազմելիս թեև 13-րդ դարի ձեռագրերի հիշա-

---

<sup>18</sup>Ռ. Ղազարեան, *Գրաքարի բառարան*, Ե., 2000 (այսուհետև՝ ԳԲ):

<sup>19</sup> Լ. Հովհաննիսյան, *Գրաքարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր*, Ե., 2010 (այսուհետև՝ ԼՀԲ):

տակարանները չի օգտագործել, սակայն բառաշարքում տեղ են գտել դրանցում առկա բառեր, որոնց հիմնական մասը հաջորդ դարերի հիշատակարաններից է բերված: Օրինակներ՝ *բարիարմատ* (ԺԵ, Բ, 129) (494), *առաքելագումար* (ԺԵ, Գ, 53) (852), *սրտաջան* (ԺԴ, 398) (13), *արդիւնաբան* (ԺԴ, 419) (848), *մակհորջորջեալ* (ԺԴ, 6) (823) ևն: Նույնը մի շարք դեպքերում հաստատվում է նաև ՄՀԲ-ի վկայություններով: Պետք է հավելել նաև, որ Ա. Մարգարյանի՝ 14-15-րդ դարերի հիշատակարանների նորահայտ բառերին վերաբերող հոդվածի<sup>20</sup> բառացանկում կան տասնյակից ավելի օրինակներ, որոնք գործածվել են նաև 13-րդ դարի հիշատակարաններում, բայց քանի որ այդ բառերն արդեն արտացոլվել են ԼՀԲ-ում, ուստի դրանց չենք անդրադառնում:

Որոշ բառերի հաճախակի գործածությունը հիշատակարաններում կամ միայն նրանցում գործածությունը պայմանավորված է հիշատակարանների բովանդակային կողմերով: Դատելով այս ամենից՝ վստահաբար պետք է ասել, որ բազում բառեր կազմվել են հիշատակագրության ընթացքում:

Հիշատակարանների մեծ մասն սկսվում է հիշատակագրողների կողմից Աստծու և աստվածայինի փառաբանությամբ, որը, անկասկած, նոր բառերի կերտման հիմք է հանդիսացել: Աստծու, Աստվածաշնչի, աստվածային լույսի և իմաստնության փառաբանությանը, աստվածային ծագմանը և շնորհներին վերաբերող բառերը հիշատակարաններում ամենասովոր շերտն են կազմում: Այդպիսի օրինակները հիմնականում վկայված են Ավետարանի, ապա նաև վերջինիս մեկնությունների կամ առհասարակ հոգևոր գործերի հիշատակարան-

---

<sup>20</sup> Ա. Մարգարյան, *Նորահայտ բառեր հայերեն ձեռագրերի XIV- XV դդ. հիշատակարաններում*, ՊԲՀ, 1-2, 1993:

ներում, որտեղ գրիչները բազում գունագեղ որոշիչներով են իրենց վերաբերմունքն արտահայտել: Վերոհիշյալ բառարաններում չեն վկայվել հետևյալ ընդգծված բառերը. «Յանկ ելեալ աւարտեցան գերադրական և **գարունագեղ**, հոգիաբոյն և շնորհաբաշխ, աւետաբեր և **յաւետալոյս**,...Աւետարանս» (772), «Փառք փառաւորեալ, միաբուն, **համակերտող**, մշտաշարժ և անշարժ, յաւետախաղաց և **քիւրաճաճանչ** լուսոյ Սուրբ Երրորդութեանն» (863), «յորժամ վայելէք ի քաղցրաճաշակ, եղեմատունկ, **աստուածառոյգ** վտակաց աստուածային աւետարանական բանիցս» (396), (538), «...յորժամ վայելէք ի քաղցրաճաշակ, եղեմատունկ, **աստուածոռոյգ** վտակաց.... աւետարանական բանիցս»<sup>21</sup> (852), «....որ սկսեալ յանգ ելաւ գրութիւնս **լուսայարմար** հաւաքումն սուրբ Աւետարանիս» (381), «**լիալապտեր** ջահիցդ շիջեալ հողս և ունայնս Բարսեղ և ապէկար գծաւդ» (649), «....յիշեսջիք մաքուր աղաւթիւք.... **երկնամուտ** նորատուր մանկունս Նորոյ Սիովնի» (499), «Յարագուարճ, **երկնահլու**, մշտագուարթ, աստուածագան ներկատուն բանիցս ի փոքու մատենիս եղե ջանացող գծել մեղապարտ գրիչս Թեօֆիլէ սուտանուն կրօնաւոր» (941), «Գրեցաւ սուրբ տառս նորակերտ տաճարին, որ յանուն **աստուածասուրբ** Հոգոյն կանգնեցաւ ի գաւդն Տիրոջ» (591), «ի սքանչելի պատուիրանս նորա ուշմարար նայեցեալ եւ **աղտափարատ** լուսովս հրրճուեալ» (640), «Ախտահալած և **կուրաբաց** և յարուցիչ գոլ մեռելոց» (653), «**Վերնահանդէս** լոյսն իմաստութեան **առատակազմն** յարինէ ի լուսաւորեալս **պէս-**

<sup>21</sup> Ըստ ՆՀԲ-ի՝ *առոյգ* (որ գրի և *առոգ*, *առուգ*) «իբր առոգեալ, ոռոգեալ, առաճեալ կամ ուռճացեալ՝ որպէս զբոյսս» և *ոռոգ* «առոյգ, ուռճացեալ, ոռոգմամբ գուարճացեալ, ծաղկեալ», ՀԱԲ-ն *առոյգ* գլխաբառի տակ նշում է. «Գրուած է նաև առոգ, ոռոգ և առուգ»:

**պէտրակս»** (604), «...որք զուարճանայքդ յայսմ բուրաստանի, որ է **համակալոյս** եւ ծաղիկ լուսերանգ, **բազմախարի** (ըստ ՀԱԲ-ի՝ **խարի** «մի տեսակ բոյս է, որի արմատից պատրաստում են կարմիր սնգոյր. հաւածիպակ») և յարափթիթ, ծառ անծայրանալի...» (733):

**Աստուած** և **տէր**, **խօսք/** և **բան** բաղադրիչները բառերում համարժեք գործածություն ունեն: Ձեռագրերի հիշատակարաններում հաճախակի գործածությամբ **աստուածախօս** բառի փոխարեն (հատկապես **աստուածախօս տառ**, **աստուածախօս Աւետարան** կապակցություններում) հիշատակարաններից մեկում գործածվել է **տէառնաբան**. «Եւ արդ, շնորհին Աստուծոյ սկսաւ և ողորմութեամբ նորին կատարեցաւ... տիեզերախաւս վարդապետութիւնս **տէառնաբանին** Աստուծոյ» (654), կամ **աստուածապատում** բառի փոխարեն՝ **տիրապատում**, որը հոմանիշ է նախորդներին. «...կատարեցի **գաստուածամաղթան** եւ **տիրապատում** տառս մարգարեից եւ **գրքիստոսայայտ** տնաւրէնութեան բացայայտութիւն, առաքելական եւ աւետարանական թղթովք, որ է... **չքնադատիպ** մարգարիտ» (572):

Գրիչները ոչ միայն Աստծուն են դիմում ձեռագիրն ընդօրինակելու գործում իրենց գորավիզ լինելու, զանազան մեղքերից ազատելու և այլ խնդրանքներով, այլև երբեմն ապավինում են նաև Աստծու ծառաներին՝ սուրբ մարդկանց՝ վերջիններից նույնպես գորակցություն հայցելով կամ դիմելով Աստծու առաջ բարեխոս լինելու խնդրանքով: Հետևաբար նույնաբնույթ որոշիչներով են բնութագրվում նաև վերջիններս. «...և բարեխաւս ունելով զկայծակնամաքուր և գաստուածաբան մարգարէս զԵսայիս և զմեծն զտէր Եփրեմ, եւ **լուսահռչակն** զՅոհան... , զի

և սոքա յետ Աստուծոյ երկրորդաբար յոյս են մեզ ե բարեխաւսք մեզ...» (752), «**սրբազարդից** արանց առաջնորդի» (43):

Հաճախ բազմազան որոշիչներով բնութագրվում և մեծարվում են այն հոգևոր և աշխարհիկ գործիչները, որոնք որոշակի ներդրում են ունեցել տվյալ ձեռագրի ընթերցանական իրագործելիս կամ որևէ այլ առնչություն են ունեցել հիշյալին: Շատ դեպքերում գրիչները ավանդ են հղում ընթերցողներին՝ իրենց աղոթքներում հիշելու տվյալ անձանց. «...զմեծ հայր **բարեզարդահոյս** Կեռանի յիշեցէք յաղալթս» (418), «Շնորհիւն Աստուծոյ աւարտագծեցաւ .... Մաթեոսեան Աւետարանս, .... հրամանաւ բարիարմատ և **բազցրամիտ** պատրոնին» (494), «...տեսանելով զորդիս որդոց աստուածասէր և **բազցրաշատաւելիին** իւրո պատրոն Վաղտանգին, ի փառս Քրիստոսի Աստուծոյ՝ արիննելոյ յաւիտեանս» (494), «...ստացա զգծուածք Լուծմանցս..., զոր թելադրութեամբ **տրամիմաստ** վարդապետին մերո Դաւթա արարեալ է» (406), «...կատարեցաւ տառ մատենիս ի սուրբ եւ ի հռչակաւոր վանքս Գետկա, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, ..., այլ եւ առ ոոսս սուրբ եւ **վսեմապայծառ** վարդապետիս Յովասաբիս»<sup>22</sup> (436), «**փառազրւարճ** քահանայք, անբիծք և անարատք, բարեշուք ծերունիքն Գրիգորն և Առաքեալն» (368), «**յոքնալոյս** վարդապետի ասացեալ Սկեւռացոյ» (549), «Զբազմազան և **զարհերջանիկ** վարդապետն զպատուեալն ծերութեամբ ի հինաւուրցն արիննելոյն **Գրիգոր**

---

<sup>22</sup> Վարդապետ Յովասաբը աղոթքներով է օգնել Մխիթար Գոշին. «Արդ, ես յոքնամեղս Մխիթար, առ ոոսն տորա կալով եւ յաղալթս տորայ ապաւինեալ եւ յԱստուած, մոռացում արարի ամենայն մարմնականիս եւս առաւել տկարութեան մարմնոյ, առ յոյժ փափաքումն աստուածային մատենիս, եւ յոյժ նեղութեամբ եւ տառապանաւ գծագրեցի իմով ձեռամբ ի վայելումն անձին իմոյ եւ յիշատակ հոգոյս» (436):

րիս՝ զստացալո սուրբ մատենիս...» (781), «յիշել **յարժանա-  
խումբ** ձեր սուրբ հանդէսս զպատրոն Խայտերն՝ զստացալո  
սորա» (121), «ընդ որս եւ դուք ցաւակից գոլով, **սրբերամ** դասք,  
յաղալթս յիշատակել զստընդեայս զայն» (418):

Հաճախ հիշատակվում են այն սրբավայրերը, որտեղ  
հանձնվել կամ ընդօրինակվել են տվյալ ձեռագրերը: Այսպիսով,  
վանքերն ու եկեղեցիները նույնպես բնութագրվում են վերամ-  
բարձ որոշիչներով. «...և կանգնեաց **զսքանչաարժան** եկեղե-  
ցին ի մայրաքաղաքին Մամունեսաիա...» (որտեղ և հետագայում  
գրչագրել է Վասիլը) (788), «...ստացան զսա գանձ հոգևոր  
...յիշատակ հոգոյ, և վայելք մարմնոյ, ի պէտս **մաքրաբնակ**  
անապատին և ցանկալի մենանոց//ին» (678):

Ինչպես նկատվում է, Աստծու, աստվածայինի, սրբացված  
անձանց, հոգևոր գործիչների, ձեռագրի ստեղծմանը նպաստած  
մարդկանց և սրբավայրերի մասին խոսելիս գրիչները դրվա-  
տանքի ու փառաբանության ամենատարբեր բառային միջոցներ  
են կիրառել: Այդ ամենին հակադրվում է մեղսունակության  
գիտակցումը, հաճախ գրչագրական թերացումների՝ գրի խոշո-  
րության և զանազան այլ պատճառներով և, դրանցով պայմա-  
նավորված, ինքնանսեմացման և ինքնամեղադրական բառային  
միջոցների կիրառումը: Դրանով գրիչները փորձել են արժանա-  
նալ Աստծու ողորմությանը և թողությանը: Այդպիսով և կազմ-  
վել են որոշակի բառեր, ինչպիսիք են. «...գի յոյժ փափագմամբ  
գրեցի ինչ-ինչ **մեղսակարկամ** ձեռամբ իմով» (643), «ձեռամբ  
**յոզնապարտ** քանքարո և փանաքի գրչի Գրիգոր քահանայի»  
(639), «Քրիստոս որդի Աստուծոյ, ընկալ զքո սուրբ զԱւետա-  
րանս ի **սնապարտէս** Սահակայ իբրեւ զիւրեւէշն այրոյն եւ  
ողորմեա ինձ» (70), «...յոյժ **խաւարածառանգ** և պարապնդեալս  
մեղօք Ներսէս անպիտան գրիչ և սուտանուն քահանայ, գրեցի

.... գտուրք Աւետարանս.... ի յիշատակ Խաչակ քահանայի» (167), «այլ և կամօք իմովք սպանի զնայ և **չարագէշ** լեզրւաւս խոցոտեցի զեղբայրն» (370), «Արդ, ես զայս տեսեալ վերջինս ի բնաւիցս, **փցնամիտ** աշակերտս սորին Գեորգեայ, անարժան քահանայ, **պիտակագործ** անուանեալ Երեմիայ յորջորջեալ» (751), «Բայց զի յարայտեսութիւն **մեղասատար** սեւակիս, յարայտելելով յայլմէ յայլ, շահընկալ զիս ցուցանէ» (ՀԱԲ՝ *սատար* «գործող, գործաւոր, մշակ», 437), «...որ տրամադրեաց զմատունս վերջացելոյ տկար ոգոյ Վարդանայ աննման մեղապարտի, հասանել ի գիծս վերջին **փցնածին** կածնաւ, նմա գոհութիւն յամենայնի իմովս ձայնիւ» (ՄՀԲ՝ *կածին* «գրիչ, ձեռագիր ընդօրինակող») (715):

Առանձին խումբ են կազմում այն բառերը, որոնք վերաբերում են գրին ու գրչությանը: Այդպիսի բառերի գործածությունը հիշատակարաններում, անշուշտ, անխուսափելի է: Դրանք արտահայտում են գրչագրական աշխատանքները, գրի տարբեր դրսևորումները, թերակատար կամ լիակատար լինելը և այլն: Կարելի է ենթադրել, որ շատերը կազմվել են հենց տվյալ պահին՝ հիշատակարան գրելիս: Զուր չէ, որ այդպիսի բառերի մեծ մասը բառարաններում միմիայն տարբեր դարերի հիշատակարանների նշումով են: Մեծ թիվ են կազմում հատկապես **գիր** և **գիծ** բաղադրիչներով կազմությունները, որոնցում նշվածները համարժեք գործածություն ունեն: Այսպես. «ԶՍարգիս գրիչս յիշեայ ի Տէր Յիսուս, ո՛վ **խազագիծք**, և Քրիստոս զձեզ յիշէ յիւր անսպառ բարիսն, ամէն» (615), «Շնորհիւն Աստուծոյ **սաարտագծեցաւ** եղեմաբուխ, աստուածաին և անմահական աղբիւրս Մաթեոսեան Աւետարանս» (494), «Իսկ ես՝ բազմավրդովս Մարգարէս, որ աշխատեալ **ծրալրտեցի** զգիրս զայս ի խնդրոյ եղբօրն մերոյ Կարապետին, անարատ և անբիծ քահա-

նախն, ի վաեւս անձանց մերոց և ի յիշատակ հոգոց մերոց» (ՄՀԲ՝ *ծրել* «գրել, ընդօրինակել» ԺԴ, 22, որից և՛ բազմապատկ.՝ *ծրպտել*) (370), «ի Գրիգորէ Նիսեա *արտաշարեալ*» (605), «...*գսակաւագիր* յիշատակարանս գրեցի» (815), «Նեխեալ հոգւովս ի չար վերաց,... *Յատատագիրն* տացի շնորհաց, ամէն» (406), «*վերագծող* այսմ տառիս» (824), «խոշոր *ձաքրտանացս*» (ՄՀԲ՝ *ձաքրտել* «գրելիս ձեռքը դողալ, ծուռումուռ գրել, խզրզել») (868), «...ոյժ տագնապէ գմեզ, վասն որոյ առաւել *ցնցրդտեցի*, աղաչեմ ներել մեզ՝ եւ Տէր ձեզ» (*ցնցուղ* բառից) (868), «Որք հանդիպիք *տխմարատանջ* գրոյս, գսխալեալն եղբայրաբար ուղղեցէք և մի թշնամասէր մտաւք նախատէք, զի անհմուտ գոլով գրչութեան գրոյ և սրելոյ գրչի, բայց վասն կարեաց գրեցի» (729), «*Փցկութեան* գրիս մի մեղադրէք» (834):

*Գիր* և *գիծ* վերջնաբաղադրիչները բառերում ունեն և՛ գոյականական, և՛ բայական իմաստ: ԼՀԲ-ում արձանագրվել են այլ դարերի հիշատակարաններում վկայված *փցնագիր* և *խոշորագիծ* բառերը, որոնցում հիշատակված բաղադրիչները գոյականական են, մինչդեռ 13-րդ դարի հիշատակարաններում առկա են նաև նույն բաղադրիչների բայական իմաստով կիրառությամբ համանուն բառեր: Հմմտ. «Լցաք գտենչումն մեր, թէն *փցնագիր* էր գիրս» (ԼՀԲ՝ *փցնագիր* «անպիտան, պակասատր գիր», Հիշատ., ԺԴ, 413) - «Եւ ես *փցնագիրս* Հանիսուկ, ոչ հայելով, ի խոշորութիւն եւ յանյարմարութիւն գրչիս, այլ եռանդոտ յաւժարութեամբ գործ ի ձեռն առեալ գրեցի զսա ի վարժումն ուսումնասիրաց, եւ յիշատակ ծնաւդաց իմոց եւ եղբարց եւ բազմամեղ անձին իմոյ» (421), «Աստանաւր հանկ ելեալ կատարեցաւ *խոշորագիծ* գիրս» (ԼՀԲ՝ ԺԵ, Բ, 13) - «Եւ գրեցաւ սա ձեռամբ Կարապետի մեղապարտի եւ *խոշորագիծ* գրչի, ի ծերութեան եւ ի տկարութեան ժամանակի՝ խաւարեալ աչաւք»

(60), «ԶԿարապետ աստուածահաճոյ քահանայ յիշեսցիք ի Քրիստոս, և գտառապեալ **խոշորագիծս** Բասիլ» (103):

Որոշ բառեր վերաբերում են ձեռագիրը ձեռք բերելու, ուղղելու և առհասարակ ձեռագրաստեղծման և պահպանման դժվարություններին. «...ցանկացաւ եղէ այժմ լուսայեղձ եւ կենսագիր կտակիս, զոր յոյժ բաղձանաւք եւ **յոզնաշատ** մեծաւ աշխատութեամբ ստացայ զսա ի լուսաւորութիւն եւ ի բերկրումն մանկանց եկեղեցոյ եւ յիշատակ ինձ, եւ ծնաւղաց իմոց» (814), «....եւ յոյժ քրտնաջան եւ **մեծախոնջ** տաժանմամբ ուղղեցի ըստ կարի տաժանմամբ, որպէս յայտ ահա գիտնոցդ երեւի», «Ուղղողիս **մեծախոնջ** տաժանմամբ եւ ստացող հոգոյս Յոհաննէս եպիսկոպոս....» (641), «....բազում աշխատութեամբ եւ **յոզնատարժան** երկաւք.... ետու գրել զսուրբ Աւետարանս զայս ի փրկութիւն կենաց իմոց եւ ի լուսաւորութիւն հոգոյ իմոյ» (13):

Հիշատակագրողները հաճախ նկարագրում են իրենց ապրած ծանր ժամանակները՝ գործածելով բնորոշ բառեր. «...մեծահաւատ լեալ իբրեւ զԱբրահամ յայսմ **խոռվայեղ** ժամանակի՝ ետ գրել զսա յուրախութիւն սրտի իւրո», «Գրեալ եղել ի դառն և ի **խուճապուտ** և ի կականման ժամանակի, յորժամ ել ազգն խուժադուծ, որ կոչի Տաթար» (234), «Յայսմ **ամպրոպամած** և ի **վրդովուտ** ժամանակի՝ ի սոյն ամի... շարժեալ եղեն զաւրք արիական ազգին Հռոմայեցոց» (40):

Դժվար չէ նկատել, որ բառարաններում չարձանագրված բառերը հիմնականում կազմված են բառաբարդմամբ: Վերը բերված օրինակներին պետք է ավելացնել նաև հետևյալները. «**մատնատատան** մաղթանաւք աղաչեմ զամենիսեան» (773), «**յարքունապատիւ** գահոյս հայրապետութեան» (678), «իբրև զամպ **կարկտածին** լցեալ բարկութեամբ կայծակամբ» (702),

«յորժամ **թիւնաձիգ** (թոյն//թիւն բառից) լինիմք ի սա» (նույնում կա նաև **քարաձիգ**, 738), «**հեշտակարծ** ախտից առաթուր կոխելով» (751), «**յաւետայեղձ** բաղձանաւք» (756), «իսկ երկիր **բուսաբողբոջ** աղբերաբուխ գետահետեալք լայնածաւալ մեծ յորդութեանց» (797), «**մեծաշահավաճառ** արուեստիւ» (ՆՀԲ՝ մեծաշահ, ՀԱԲ՝ շահավաճառ) (797), «**արքայամուտ** դրանն» (797), «արբուցանելով զչորեսին **անկլինատիեզերս**» (815), «գոր **հազիւ-հազիւ** մեծաջան տենչիւ ոչ կարէին յեղաշրջել զկամսն նորա» (832), «**երջանկաջոկ** մանկանց» (837), «գոր կամեցայ յարինել ի **սպիտակահովիտ** հիւթիս՝ սեաւաթիւր թելով» (ՆՀԲ-ում **հովիտ** բացատրված է նաև՝ «նմանութեամբ՝ գոգ կամ ծոց և ընդունարան», 837), «**տի/եզե/րաբողբոջ** հովիտսն» (861), «վասն այսր հարկի՝ եւ **զխառնախորանս** ամսոցդ առննթեր» (867), «հոգոց **աստուածատենչաց**» (875), «հեշտասէր եւ **խակամետք** մեղս» (ՆՀԲ՝ **խակ**՝ նաև՝ «անմարդի, անընդել, դժնեայ») (875), «բարձրագոյնս և **խառնարգահոյս**» (812), «անմարմին և **տարրամած** եղութեանց բարձանց» (625), «**մեղսաբարձ** գառինն Աստուծոյ» (594), «**մշտասէրտ** զարութեամբ» (406), «և բուռն հարեալ **զմշտնջենածառանգն**» (614), «**երկայնահաս**, լայնատարած բազկաւք» (43), «Եւ է սա **աւետարանագլուխ** Սրբոյն Ղուկասու» (ավետարանի հատված, 673), «Նախ վասն ծննդեան Տեառն և մկրտութեանն, և սուրբ պատարագին, և **խաչեցարին**, և զելի և մատաղի» (63), «**հաւատահաստատ** կարգաւք» (105), «**մտայօղ** իմացմամբ» (259), «ի **շնորհաշարժ** ալեացն» (271), «**յոլովանաւթս** ոսկւոյ և արծաթոյ...» (285), «Եւ յիս նայեա տէր **հաշտակամ**» (286), «Եւ զի յոյժ հեռի **էաք** յազգէ եղբարց **մարմնադէտ** արեան մերձաւորաց» (ՆՀԲ՝ **ադէտ**՝ «գորով, գութ, սրտցաւորին», 313), «**դժընդակաթոյնն** սողնոց» (351), «**յեռանդ-նահոս** փափագմանէ» (499), «**գորովադատ** պատժել զստացող

սորա, և **զհամաչահոս** յաղարթս ձեր մասնատրել» (ամենայն հավանականությամբ՝ *համաչափահոս*, 515), «**նորայթարգման** զաւակ ի Սիոն և ընդանեակ յԵրուսաղէմ» (627), «միաշունչք և **եզախորհուրդք**, համագումարք և զուգահաւանք» (եզ «մի», 667), «և **տեառնատուր** մանուկս իմ Աթաբակ» (311), «Սրատեսիցդ և **կորովաբաց** զաչացս կոյրքս ոգով Բարսեղ և Ստեփանոս» (650), «**աւետանամակ** արձանագրութեամբ» (849), «**զտանահաւաք** տառից» (849), «**միասարագ** շարայարեալ տրամաբանաց» (ՆՀԲ՝ *սարաս* «տարագ, կերպ, ձև», 338), «ճահողասաց **պիտառաբան**» (338), «Զստացող **հանրալոյս** կտակիս» (29), «անկարացեալ սաղրանք **ստորայտուղին** » (437), «**խստաջան** առաքիւնութեամբ կեցեալ էր» (336) են:

Տասնյակ բառեր բառածանցմամբ են կազմված՝ **նախածանցավոր բառեր**՝ *համադէպ* (629), *մակաքարոզ* (338), *մականորոզ* (515), *զերահոս* (529), *տարատրոհ* (499) ևն, **վերջածանցավոր բառեր**՝ *հանդիսարկու* (604), *տաղտապումն* (ՆՀԲ՝ *տաղտապեմ* «տաղտկութիւն և տառապանս տալով՝ նեղել, հարստահարել») (639), *թագագնեայ* (511), *տարաբերուն* (97), *զետնաշխատութիւն* (729), *աշխատողիկ* (808), *իմաստանոց* (706), «Անուն մնացորդ ու բանքս *կրկնորդ* »(778), «հայցեմք ի ճաշակողացդ յայսմ *յոքնահամեան* սեղանոյ» (846), «*աշխարհափրկաւոյ* մարդեղութիւն» (849), *աստուածահոսակ* (ՆՀԲ՝ *աստուածահոս, աստուածահոսան*) (835), «ի *քսրմնելի* ամաւթոյն» (313) ևն, **համածանցավոր բառեր**՝ *համագնեայ* (417), «*հոմագնեա* իսկ մեր և արեանառուի» (281), *մակաքայլող* (689), *անհեղգալի* (777) ևն, **բայակազմութիւն**՝ *ընդգրաւել* (676), *մաքրագատել* (104), *յարգունել* (ՆՀԲ՝ *յարգուն* «ունակ յարգի և արժէից, յարգաւոր», 343), «*դիմընդդիմեցին* և հաստատեցին ձեռնգրերովն» (327), «ի սպառուած գրոյս յորժամ *բոլորաջահիք*՝

աւգտութեամբ իբեհիագն իմաստէս՝ և դուք ի համայնն ընկալ-  
ջիք ի բառացի Տեառնէն, ամէն» (605), «**ջոկադասիլ** ընդ աջմէ  
փեսային» (741):

Նշված բառարաններում չեն վկայվել նաև 13-րդ դարի  
հիշատակարաններում գործածված բազում բառատարբերակ-  
ներ, որոնք բնութագրվում են հնչյունական և բառակազմական  
տարբերությամբ՝ ներկայացնելով բառապաշարի՝ մի կողմից  
գրական և մյուս կողմից խոսակցական-բարբառային շերտերը:  
Այսպես.

1) հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերով  
տարբերակներ. ա) բառակազմության ժամանակ հիմքի *ի* վերջ-  
նահնչյունի ուղղակի պահպանմամբ, *ա* հոդակապից առաջ  
պահպանմամբ և *ե* /*է*/ միաձույլ հոդակապով տարբերակներ՝  
**բարիվայելուչ** (604), **բարիայբեր** (675), **հոգիանորոգ** (208, 520),  
**հոգիանուազ** (377), **հոգիայից** (418), **հոգիածաւալ** (756), **հո-**  
**գիագումար** (756), **հոգէտաւիդ** (ՆՀԲ, ԱԲ՝ **հոգիատաւիդ** «Հոգւոյն  
սրբոյ քնար եղած») (43),

բ) շեշտափոխությամբ հնչյունափոխված և մյուս կողմից  
անհնչյունափոխ հիմքերով տարբերակներ՝ **աստուծատուր**  
(621), **եղբարորդի** (ԱԲ՝ **եղբայրորդի**) (361), **ուշմութիւն** (667),  
**քուրադուստր** (ՀԲԲ՝ **քոյրադուստր**) (108), **գոյներանկ** (875),  
**հանգոյնատիպ** (նույն հիշատակարանում կա նաև **հանգու-**  
**նատիպ**, 762), **սեւաւաթիր** (ՆՀԲ՝ **սեւաթոյր**) (837):

2) հոդակապով և անհոդակապ տարբերակներ՝ **գիշեր-**  
**հաւ** (ՆՀԲ, ԱԲ՝ **գիշերահաւ** «տե՛ս չիղջ, որն է՛ չղջիկ» (164),  
**բազմհաւաք** (355), **քաջհմուտ** (837), **վերնկառոյց** (604),  
**ձեռնահաս** (370), **վերալուծութիւն** (626), **սակաւգիծ** (ԱԲ՝  
**սակաւազիծ** «սակավ գրված») (793) ևն:

3) ուղղականի կամ սեռականի հիմքերով տարբերակներ՝ **արիւնառու** (ՆՀԲ՝ *արեանառու* «առող զմասն նոյն արեան») (556), **գարունագեղ** (ՆՀԲ՝ *գարնանագեղ*) (772), **տեառնաբան** (ՀԲԲ՝ *տիրաբան*) (654):

4) *Լ* և *ղ* լծորդ բաղաձայններից որևէ մեկով տարբերակներ՝ **արփիանշոյղ** (349), **մատախղապատ** (178), **լամպարափայլ** (837):

5) բայի ներկայի և կատարյալի հիմքերով տարբերակներ՝ **շատիմայ** (ՆՀԲ՝ *շատիմաց*) (648), **այցառնութիւն** (ԱԲ՝ *այցարարութիւն*) (571), (536):

Հարկ ենք համարում ավելացնելու, որ մի շարք դեպքերում բառարանները վկայում են դիտարկված օրինակներից բաղադրված բառեր:

Համապատասխան բառարաններում տեղ չգտած բազում բառեր, հարազատ լինելով ժամանակակից հայերենին կամ վկայված լինելով աշխարհաբարյան երկերում, արձանագրվել են արդի հայերենի բառարաններում<sup>23</sup>՝ **բարձրաբլուր** (557), **հոգեկից** (92), **շնորհառատ** (626), **խաւարափարատ** (713), **անդընդանման** (827), **դժուարընթեռնելի** (304), **ալեկոծուն** (684), **կորովաբանութիւն** (684), **տղամանուկ** (817), **յորդահեղ** (182) ևն:

Անշուշտ, քննության առնված բառախումբը կարող է իր որոշակի նպաստը բերել պատմական բառագիտությանը և հայ բառարանագրությանը:

**Օտար բառերի գործածությունը 13-րդ դարի հիշատակարաններում:** Օտար ծագման հազարավոր բառեր, վաղնջա-

---

<sup>23</sup> Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976: ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Ե., 1969:

կան ժամանակներից մուտք գործելով հայերեն, դարձել են մեր բառապաշարի անքակտելի մասը՝ գործածվելով գրական հայերենի զարգացման բոլոր փուլերում: Որոշ թվով օտար բառեր էլ հատկապես միջինհայերենյան շրջանում են ներթափանցել հայերեն՝ մասամբ պահպանվելով մերօրյա բարբառներում: Ստորև անդրադառնում ենք վերջիններիս և առհասարակ այնպիսի բառերի, որոնց օտար լինելը գիտակցելի է:

Հայերեն ձեռագրերի 13-րդ դարի հիշատակարաններում արձանագրված օտար ծագման բառերը բաժանելի են երկու հիմնական խմբի՝ 1) *էկզոտիկ* կամ, ինչպես Ֆ. Խլղաթյանն է անվանել, *տարաշխարհիկ* բառեր [2]<sup>24</sup>, որոնց գործածությունը անխուսափելի է, և 2) օտար բառեր, որոնք, տարածված լինելով ժամանակի խոսակցական լեզվում, գործածվել են հայերեն համարժեքների փոխարեն: Այդ բառերը հիշատակարաններում առկա են զանազան հնչյունատարբերակներով, որը պայմանավորված է թե՛ տարբեր լեզուներում և թե՛ բարբառներում դրանց տարբերությամբ: Հայերեն ձեռագրերի՝ նախորդ դարերի հիշատակարանների բառապաշարին անդրադառնալիս նկատել ենք, որ օտար բառերը հիմնականում հունարենից են, մասամբ էլ՝ արևելյան լեզուներից<sup>25</sup>: Ինչ վերաբերում է 13-րդ դարի հիշատակարաններին, սրանցում տեղ են գտել նաև որոշ թվով ֆրանսերեն, իտալերեն բառեր, որոնք գործածվել են Կիլիկյան Հայաստանում և այնտեղ բնակվող գրիչների կամ առհասարակ տարբեր հիշատակագիրների միջոցով արձանագրվել հիշատակարաններում:

Ձեռագիր ընդօրինակողները՝ գրիչները, կամ առհասարակ հիշատակարան գրող անհատները (նաև ստացողները,

---

<sup>24</sup> Ֆ. Խլղաթյան, *Ժամանակակից հայոց լեզու*, Ա մաս, Ե., 2009:

<sup>25</sup> Վ. Խաչատրյան, նշվ. աշխատություններ:

պատվիրատուները և այլք) հիշատակագրելիս հետևել են գրա-  
բարյան օրինաչափությանը՝ հնարավորինս զերծ մնալով նաև  
օտար բառերի գործածությունից: Սակայն աստիճանաբար այդ-  
պիսի մոտեցումը խախտվել է, նաև կանոնավոր կրթություն  
չունեցող և գրաբարին լավ չտիրապետող անհատներ են հիշա-  
տակարաններ գրել, այդպիսով և տուրք տվել ժամանակի խո-  
սակցական լեզվին և վկայել օտար բառեր, որոնք լայնորեն  
գործածել են իրենց առօրյայում: Բացի դրանից, ինչպես վկա-  
յում է Է. Մկրտչյանն իր աշխատության մեջ<sup>26</sup>, գրաբարյան այլ  
աղբյուրների համեմատությամբ խոսակցական իրողություննե-  
րը առավել մեծ չափերի են հասնում հիշատակարաններում,  
քանի որ նրանցում կենցաղային մանրամասներ են հաղորդվել:  
Ահա և սրանով էլ պայմանավորված է կենցաղային բնույթի  
օտար բառերի մուտքը 13-րդ դարի հիշատակարաններ, չնայած  
որ դրանք բավական սակավ են 14-րդ դարի հիշատակարաննե-  
րում գործածված օտար բառերի համեմատությամբ: Պետք է  
փաստել, որ յուրաքանչյուր հաջորդ դարի հիշատակարաննե-  
րում առավել ազատ և անկաշկանդ են գործածվել հայկական  
կենցաղ ներթափանցած օտար բառերը, սակայն, դրան զուգա-  
հեռ, հիմնականում պահպանված են գրաբարյան քերականա-  
կան կանոնները:

Օտար բառերը հիշատակարաններում գործածվել են  
կա՛մ տվյալ իմաստն ունեցող բնիկհայերենյան, կա՛մ վաղուց  
մեր լեզվում արմատավորված փոխառյալ համարժեք բառերի  
առկայության, կա՛մ էլ, բնականաբար, դրանց գործածության  
անխուսափելիության պարագայում. վերջիններս փոխատու

---

<sup>26</sup> Է. Մկրտչյան, *Աշխարհաբարի տարրերը միջնադարի գրական հուշարձան-  
ներում*, Ե., 1980:

լեզվի պետական, մշակութային զանազան հասկացությունների (ազգային տիտղոսներ, կոչումներ ևն) վերաբերող անվանումներ են, նույն տարաշխարհիկ բառերը, որոնք քննվող օտար բառերի շարքում ամենամեծ թիվն են կազմում:

13-րդ դարի հիշատակարաններում վկայված քիչ թվով օտար բառեր կարելի է գտնել ՆՀԲ-ում, բայց և՛ միջինհայերենյան շրջանի այլ բնագրային աղբյուրների վկայություններով: Ավելի շատ այդպիսի բառեր արձանագրված են ՀԱԲ-ում և ՄՀԲ-ում՝ կա՛մ հիշատակարանի, կա՛մ մեկ այլ աշխատության բնագրային վկայությամբ: Մի քանիսն էլ առկա են Ակնարկներում տրված փոխառյալ բառերի ցանկերում:

**Կոչում, տիտղոս, պաշտոն նշանակող բառեր:** *Ջանջլեր* - ՀԱԲ-ում վկայված է *ջանսլեր* տարբերակը. բառահոդվածում նշված է, որ հայտնի է եղել *ջանցլեր* ձևով նույնպես, ծագում է ֆր. *chancelier* բառից, որը նշանակում է «արդարադատության նախարար, կնքապահ»: Նշված տարբերակները տրված են նաև ՄՀԲ-ում՝ «պալատական աստիճանավոր» բացատրությամբ. «ըստ արքունական պատույ՝ *ջանջլեր* առաջի թագաւորին Հայոց Լևոնի» (238): Այն համապատասխանում է նույն *կանցլեր* բառին, որն առկա է արդի գերմաներենում «վարչապետ» նշանակությամբ, ռուսերենում որպես պետական պաշտոնյաներին տրվող բարձրագույն աստիճան և մի շարք այլ լեզուներում: Հիշատակարանում վկայված հնչյունական տարբերակը եթե պատահական վրիպակ չէ, ապա հետևանք է առնմանությամբ պայմանավորված հնչյունափոխության, որը հատուկ է բարբառային-խոսակցական լեզվին: *Մենեկալ // սէ-նէհալ* – ՄՀԲ-ում արձանագրված են *սենեկալ*, *սենէսկալ* և *սենեսոջալ* բառերը, որոնք, ըստ նշված բառարանի, ծագում են հֆր. *senescal*-ից, ընդ որում՝ առաջին երկուսը բացատրված են

«պալատական մատովակ», իսկ վերջինը՝ «արքունի գանձապետ»: Սովորաբար բառարաններում միևնույն բառի հնչյունատարբերակները կա՛մ մի բառահոդվածում են տրվում, կա՛մ էլ հղվում են բառարանում առկա մյուս տարբերակները, սակայն հիշյալները առանձին են տրված, հղում չի կատարվել, և մեկը այլ բացատրությամբ է տրված, թեև այն չի բխում բառարանում առկա միակ բնագրային վկայությունից: *Սենեսկալ* արձանագրվել է նաև ՀԲԲ-ում, որտեղ նշված է. «հին ֆր. *senescal*, այժմ *sénéchal*, պալատական մատռուակ, բարձր պալատական պաշտոնեայ», ապա նաև՝ «Ռուբինեանների ժամանակ բարձր պալատական պաշտոնեայ, արքունի գանձապետ»: Հիշատակարաններում արձանագրվել են թե՛ հֆր. և թե՛ նոր տարբերակները՝ երկուսն էլ նույն գրիչի կողմից՝ տարբեր ընդօրինակությունների հիշատակարաններում. «...գամենայնեմ *սենեսկալն* Հայոց զպարոն Աւշին՝ որդի ամենայնեմ սպարապետին Սմբատայ», «Ես Աւշին *սենեսկալս* ամենայն Հայոց...» (630): *Գունդստապլ // գունդուստապլ // գուրուստապլ* (230). ՆՀԲ-ում բացատրված է «ախոռապետ»: Ըստ ՀԱԲ-ի՝ < իտ. *contestabile*, հֆր. *conestable*, ֆր.. *connetable*, ասոր. *qōntōstabl*, որոնք էլ իրենց հերթին ծագում են լատ. *comes stabuli* ձևից, որն է «կոմս ախոռոց»: ՄՀԲ-ն մեկնում է հայերենում հայտնի իմաստով՝ «սպարապետ, ավագ իշխան»: *Բրինձ* – ՆՀԲ-ում նշված է լատ., իտ. ծագումը, բացատրված «իշխան», իսկ ՀԱԲ-ում նաև հավելված են ֆրանսերենն ու գերմաներենը: Ըստ ՀԱԲ-ի՝ այն առաջացել է լատ. *princeps* «առաջին, նախկին, գլխավոր» բառից և նշանակում է «իշխան»: ՄՀԲ-ում տրված են նաև «իշխանորդի, թագաժառանգ» իմաստները. «որդի *բրինձին* Անտիոքայ Ռեմդին» (77), «ի *բրինձ* Պրմրնդին ժամանակ» (40), «ընդ տերութեամբ *բրինձին*»: *Սիր* – ՀԱԲ՝ «արքայ, իշխան» < ֆր. *sire*

«տէ՛ր արքայ», որ ծագում է լատ. *senior* «ծերագոյն» բառից. «ի նացմէ և իր որդոյն *սիր* Սիմունին պարգևել» (327): *Մարաջախտ* – ՀԱԲ՝ «իշխան, զօրավար» (գործածական դարձաւ նոր գրականում՝ իբր ֆր. *maréshal*) = հֆր. *\*mareschalt* բառից փոխառեալ է Ռուբինեանց ժամանակ. այս բառը իր հերթին փոխառել է հգերմ. *marahscale* «ձիապան» բառից». «....զմեծափառ *մարաջախտըն* Հայոց՝ զբարետիպ եղբայրըն մեր Լևոն» (323), «ի հալեալ արդեանց ստացաւ զսա՝ Աւշին *մարայջախտ* Հայոց» (446) ևն: *Պատրոն* – ՀԱԲ՝ «միջնադարեան իշխանական մի աստիճան» < ֆր. *patron* «պատրիկ, պաշտպան, պետ» (ծագում է լատ. *patronus* հոմանիշից). Աստուածընտիր *պատրոն* (29), «զԱստուծով մեծացեալ զմեծ *պատրոնն* զՎախտանգն յիշեցեք» (95) զանուանի *պատրոնաց պատրոն* Գրիգոր (193) ևն: *Պայլ* – ՆՀԲ՝ բառ գաղղ. և իտ. «անուն պատուոյ տուեալ մեծի իշխանին հայոց ի ֆռանկաց», ՄՀԲ՝ հֆր. *bail* 1. Մեծ իշխան, 2. Կիլիկյան շրջանում պարոնի կամ ասպետի փոխանորդ. «....գոր և *պայլ* իսկ եղ Հայոց» (585) : *Ստրատելատ* – ՄՀԲ՝ *ստրատել* < հուն. «զորավար». «յիշել աղաւթիւք... և բարի *ստրատելատն*՝ զպարոն Յուշապն»: *Ումբրուր* – Արձանագրված է ՄՀԲ-ում՝ հղված *ըմբրուր* < ֆր. *empereur* «կայսր». «....յորոց և *ումբրուրն* Ֆռանգաց, կայսրն Յունաց, առաքեցին նմա թագ և զանձ բազում» (586):

**Պետական, դատաիրավական համակարգին վերաբերող բառեր:** *Հուլմ* – ՄՀԲ՝ արաբ., թուրք. «հրաման, վճիռ». «....ու այլ մարդ չկարէ *հուլմ* արնել» (735): *Ասախ* – ՀԱԲ՝ «օրէնք» < թրք. *yasaq*. «....զաւրացուցանէր զազգն Իսմայելի իւր պեղծ *ասախովն* ի վերայ քրիստոնէից» (784): *Անսիզ* – ՀԱԲ՝ «օրէնք» < ֆր. *assises*. «զ*Անսիզն* զպարոնութեան մայրաքաղաքին Անտիոքայ»: *Ջալունջ* – ՀԱԲ՝ «դատական բողոք, զանգատ» < հֆր.

*chalonge*. «Ոչ իմոյ և ոչ աստարաց ունի իշխանութիւն **ջալունջ** առնել» (402): **Լիճ** - Ակնարկներ՝ հֆր. «վասալ, ենթակա». «գիր **լիճ** ճորտերուն»:

**Կրոնակեղեցական կյանքին վերաբերող բառեր՝**  
**պենդեկոստե // պենդակոստե** < հուն. «50-րդ օրը՝ սկսած Զատիկի կիրակիից». ի տաւնի **պենդակոստեին** (817), **յինդիկ-տիոն // ընդիքտիոն** (145) < հուն. «15 տարվա մի շրջան», **մդտեսի // մդդսի** < արաբ. *muğdesi* «Երուսաղեմ ուխտի գնացած քրիստոնյա», **փեղամպար** (131) < պարսկ. «մարգարե» և այլն:

Քանի որ հիշատակարաններում արծարծվել են գրին, գրչությանը և գիրք ծաղկելուն առնչվող հարցեր, ուստի նաև գործածվել են համապատասխան իմաստային խմբին պատկանող օտար բառեր: Այսպես. ըստ ՀԱԲ-ի՝ **նշաստակ** -ը նույն պարսկ. *nišāsta* «օսլայ» բառն է, «սրանից է համառոտուած արաբ. *nišā*, որից և հայ. *նշայ* «օսլայ»: Ըստ երևույթին՝ երկուսն էլ գործածվել են տարբեր դարերի, մասնավորապես 13-րդ դարի հիշատակարաններում՝ որոշ դեպքերում բարբառային հնչյունափոխությամբ կամ բաղադրության կազմում. «Յիշեսջիք և զՍամուխ հոգեւոր եղբայր մեր, եւ զծնողսն նոցայ, որ **զնշաշտակս** ետուն Աւետարանիս»: «Խոշորութեան գրոյս չմեղադրել, զի թուխթս յաննշա է» (377): ՄՀԲ-ում տրված է **աննշայ** բառը 15-րդ դարի հիշատակարանի միակ վկայությամբ. «Այս թուղթս ու մեկ այլն **աննշայ** է», սակայն բացատրված է «անպետք, անորակ»՝ բնականաբար ելնելով բառային միջավայրից բխող ենթադրությունից, մինչդեռ նշանակում է «առանց օսլայելու»: **Նաղաշ** - ՀԱԲ՝ «նկարիչ» < արաբ. *naqqāš* «զարդանկարիչ». «յիշես-ջիք ի Քրիստոս.... զԸհձեր **նաղաշն** եւ զծնողսն իւր»: **Զրնջուֆր** - ՀԱԲ՝ **զհնջուփր** «կինաբարիս կոչուած կարմիր ներկը» < արբ. *zunjufi*, Ակնարկներ՝ արբ.՝ **զհնջուփր (զհնճեֆր)** «խրուկ, կար-

միր ներկ», ՄՀԲ՝ «կինաբար, խրուկ, ծծմբասնդիկ, կարմրադեղ, սուր»։ «Էւ գՊետրոս, որ զայս *զընջուֆրս* շնորհեաց, յիշեսջիք ի Քրիստոս» (268)։ *Ջաբիստր* - ՀԱԲ՝ «նորագիւտ բառ. Գործածուած է 1338 թ. գրուած մի Աստուածաշնչում՝ < հֆր. *chapistre* > ֆր. *chapitre* < լտ. *capitulum* «գրքի գլուխ»։ «Համար ֆռանկին, որ *ջաբիստր* կոչեն, որ ի վերա ամենայն Աստուածաշնչին ճապղած է» (750)։ փաստորեն այս բառն ավելի վաղ է արձանագրվել, քան ՀԱԲ-ի վկայությունն է։

Գրիչները հիշատակարաններում հաճախ տեղեկություններ են հաղորդում ժամանակի ռազմական գործողությունների մասին։ Հետևաբար փոխառությունների մի մասն էլ վերաբերում է իմաստային տվյալ շերտին։ Այսպես. *սղար* - ՀԱԲ՝ «պաշարումն» = շրջուած է *խսար* բառից, որ փոխառեալ է արաբերէնից»։ «նստել յաթոռ պարոնութեանն և պնդել *զսղար* բերդին Լամբրունի» (586), որից էլ *սղարել* «պաշարել»։ «...*սղարեաց* զշոռովկայն» (702), *նաղմ* - ՀԱԲ՝ «ական պատերազմի, *mine*» < պարսկ. *naγm*, որից և՛ *նաղմել*, *նաղմափոր*։ «...փորեալ *նաղմեցին* զքար բերդին իբրեւ զհող» (702), «...*սղարեալ* բաբանօք ի վերուստ և քարափոր ծակամտօք՝ *նաղմելով* նեղեալ ի ներքուստ» (719), «քարահատ արուեստականօք և *նաղմափոր* դարանամտօք» (711)։

Օտար ծագման բառերի մի խումբն էլ ներկայացնում են «ունեցվածք, ընծա, ժառանգություն» նշանակող բառերը։ Պետք է նկատի առնել, որ գրիչները կամ տվյալ ձեռագրերին որևէ առնչություն ունեցող անհատներն իրենց հիշատակարաններում հաճախ են նշում ձեռագիրը այս կամ այն վանքին նվիրաբերելու, որպես ժառանգություն թողնելու մասին՝ գրական վկայագիր հաղորդելով համապատասխան իմաստով օտար անվանումներին, որոնք սովորական են եղել ժամանակի խո-

ասկցական լեզվում: Այսպես. **ռիսլ** – ՄՀԲ՝ արբ., պրսկ. *vaqf, vağf* «կրոնական հաստատությանը՝ եկեղեցուն նվիրված անշարժ կալվածք՝ գույք՝ առարկա». «...ստացայ գտուրք Աւետարանս յիմ **հալալ** ընչից և եղի **ռիս** ի Սուրբ Կիրակոս», «...ու գիրքս **ռիսլ** կենայ ի վանքս. և մի /ոք/ իշխեսցէ զսա ծախել, գրաւ դնել կամ աւժտել» (828), **պոռլք** – ՄՀԲ՝ հուն. «օժիտ, բաժինք», **միրայլթ** – ՄՀԲ՝ *միրաթ* (որ և՛ *միրասս, միրազ*) < արբ. *mirās*, պրսկ. *miras* «ժառանգություն». ըստ երևույթին՝ ՄՀԲ-ի միակ վկայությունը ավանդված է 13-րդ դարի բանաստեղծ Ֆրիկի կողմից. «Ոչ ի հօրէ առեր *միրալթ*». «Բայց մի ոք իշխեսցէ աւժտել զսա եկեղեցոյս կամ **պոռլք** տալ, կամ ումեք **միրայլթ** հանել, այլ մնայ յայս եկեղեցիս ի Սուրբ Թորոս» (173). **մուլք** – ՄՀԲ՝ արբ., թրք. *mālk*, պրսկ. *molik* «անշարժ գույք, կալվածք, ունեցվածք, կարողություն». «Եւ սուրբ Աւետարանս **մուլք** է Ստեփանոսին, որ այլ մարդոյ *դաւի* չէլի» (737). **դալաթ** – ոչ թե *դալատ* (արաբ. «սխալ, սխալմունք») բառն է, այլ նույնանում է *խալաթ* բառին, որը վկայված է ՄՀԲ-ում՝ արաբ., պարսկ. *xāl'āt* «իբրև նվեր տրված թանկագին հագուստ», այսինքն՝ նույն *խալաթ* բառն է, որ այսօր էլ գործածում ենք հայերենում՝ որպէս «տանը կամ աշխատանքի ժամանակ հագնելու երկար ու լայն վերնագգեստ», **դիլայ** – ՄՀԲ՝ *խիլայ* <աւոր. *xila* «պարզև, ընծա. իբրև նվեր տրվող զգեստ». «...բերին աւժիտս մեծագին և պատուական զգեստուց **դալաթ** և **դիլայ** անձին թագաւորին» (712):

Պետք է հավելել նաև հետևյալ բառերը, որոնք վերաբերում են առօրյա կյանքին. **Ղեհ** // **դիհ** - պարսկ. «կողմն». «Այս **դեհիս** գիրն շատ է, ապա քիչ» (201), «Վա՛յ կուրացեալ մտաց, վերնագիրն ի մեկ այլ **դիհն** պիտեր» (222): **խասպազ** - արաբ. «հացագործ». «Աւրինեայ Քրիստոս Աստուած Թորոս **խասպազն**, որ եղև միաբան Սուրբ Աստուածամարն» (109): Այս բառը

վկայվել է նաև ՆՀԲ-ում, որտեղ տրված է. «Բառ ոմկ. այն է արար. *խուպագ*, այսինքն հացագործ»: *Մամ* «հանի, մեծ մայր». «...յիշեցեք ի Տեր Յիսուս Քրիստոսի թողութիւն մեղաց զՅակոբ գրիչ, և զՄամոնց՝ *մամն* իմ» (գրիչ՝ Յակոբ, վայր՝ Արգիլան. ըստ ՏԲ-ի՝ այն գտնվում է Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Առբերանի գավառում, 738), «....հանգեօ ի Քրիստոս բարեպաշտ *մամն* իմ Զապել թագուհին» (Ստացող՝ Հերթում Բ թագաւոր, 705): ՆՀԲ-ում մեկ վկայություն կա Մխիթար Գոշի դատաստանագրքից: Ըստ ՀԱԲ-ի՝ փոխառյալ է հունարենից, որը «նախապէս նշանակում էր «մայր», յետնաբար դարձաւ «մեծ մայր»: *Մուխատրա* – ըստ ՄՀԲ-ի՝ արար., պարսկ. «վտանգաւոր». «....երկուցեալք, ել ի դուրս եղաք և համառաւօ գնացաք՝ ի *մուխատրա* կենացս» (Հեղինակ՝ Վարդան Արևելցի, վայր՝ Սանահին, 308): ՆՀԲ-ում նույնպէս վկայված է և տրված. «Բառ ոմկ. (թ. մուխաթարէ): *Շիքիրոն* - «Քրիստոս յիշեայ զԽաչատուր վարդապետ, որ *զիքիրոնս* ետ, ամէն» (882), «Կարի դժվար է ի կապած գիրք գրիչ բանեցնել, վասն այն, որ ձեռքն կու սղա առանց *շիքրոնի*» (355): ՀԱԲ-ում *շիքիլոն* «նստարան» գլխաբառի դիմաց գրված է. «նորագիւտ բառ, որ մէկ անգամ գտնում եմ գործածուած Դրնդ. 407...., նույնը կա *շիքրոն* ձևով՝ անդ, էջ 209»՝ բերվելով բնագրային վկայությունները՝ «դներ զգլուխըն ի վերայ *շիքիլոնին*» և «ի վերայ *շիքրոնին* յեցելով»: Այնուհետև նշվում է, որ «թթ. բառ է. հմմտ. ուլդուր. šikusun «փողոցներում հանգիստ առնելու տեղ, ....մի տեսակ հիւրանոց»: ՀՄԲ-ն դարձյալ նույնն է վկայում՝ քիչ հավանական համարելով ՀԱԲ-ում նշված ծագումը: ՄՀԲ-ն *շիքիրոն* գլխաբառի մոտ հղում է *շիքրոն* տարբերակը՝ բերելով մեկ վկայություն ԺԴ դարի հիշատակարանից՝ *զիքիրոնս* շնորհեաց, իսկ *շիքրոն*-ը բացատրված է «նստարան», և բերված է

վերը նշված օրինակը, սակայն փոխատու լեզվի մասին ոչինչ ասված չէ: Դատելով բերված բոլոր վկայություններից՝ միմիայն կարելի է եզրակացնել, որ խոսքը վերաբերում է «սեղանիկի կամ նման մի հարմարանքի», որը շարժական է և օգտագործվել է գրչագրական աշխատանքներ կատարելիս: **Պասստեղ**. «Սուրբդ Աստուծոյ, աւգնեա Սոսթենէս քահանայի, որ *զպաստեղս* եբեր մեզ» (146): Բառը վկայված է ՀԱԲ-ում՝ հետևյալ բացատրությամբ՝ «պտուղը եփելով խիւս շինած և թերթ թերթ չորացրած», ապա համարված է հունական փոխառություն, որն էլ իր հերթին «փոխառեալ է լատ. *pastillus* «նկանակ, կարկանդակ կամ այլ խմորեղէն»: Արձանագրված է նաև ՀԼԲԲ-ում *պաստեղ* և *պաստեխ* տարբերակներով. «խաղողի՝ թթի՝ սալորի՝ հոնի ռուպով և այլորով պատրաստած քաղցրավենիք»: **Ռահ** – պահլ. «ճանապարհ, ուղի, արահետ». «*Ռահ* լուսոյ առ դա տեսայ» (753): Ըստ ՀԼԲԲ-ի՝ գործածվում է Ղարաբաղի բարբառում: **Քոսակ** – պարսկ. «քարձ, մօրուքը չբուսնող». «...և քիթն տափակ, և մուրուքն **քոսակ**» (196): ՀԱԲ-ում ներկայացված է, որ մեկ վկայությամբ հայտնի է հիշատակարանում՝ նկատի առնվելով հենց այս օրինակը: Ակնարկներում տրված է հետևյալ տարբերակը՝ *գոսակ* < պահլ. \**kōsak* (նոր պարսկերեն՝ *kōsa*) (224): **Անփեշ** «անարհեստ». «Զբազմամեղ Թեօֆիլէ՝ *անփեշ* գրիչ եւ զծնողսն եւ զեղբարսն եւ զգաւակսն իմ յիշեցեք ի Տէր» (941): ՄՀԲ-ում վկայված է *փեշայ* – պարսկ. *pīše* «արհեստ, զբաղմունք»: Շատ հիշատակագիրներ իրենց *անարհեստ* են կոչել: Սակայն մեկ նախադասությունից բաղկացած տվյալ հիշատակարանում գործածվել է օտար բաղադրիչը, որն, ըստ երևույթին, հարազատ է եղել հիշատակագրին: Նույն արմատից է նաև ներկայում էլ մի շարք հայ բարբառներում լայնորեն տարածված *փեշակ* բառը:

Մի քանի բառեր ավելի վաղ են վկայվել հայերեն գրավոր աղբյուրներում: Դրանք մինչև օրս էլ հարազատ են մեր առօրյա-խոսակցական լեզվին կամ բարբառներին, այսպես. *հալալ* < արաբ., պարսկ., թուրք. «արդար, ազնիվ». «ի *հալալ* և յարդար արդեանց», «ի *հալալ* արդեանց ստացաւ զսա՝ Աւշին մարայջախտ Հայոց», *հարամի* < արաբ. «ավազակ». «Պիղծ *հարամիք* տարան գերի...» (601), *հաւաս* < արաբ. «ցանկութիւն, իղծ». «Եւ ինքն վասն իմ սիրոյս և *հաւասիս* ինձ պարգևեաց, և ես աշխատեցայ և փոխեցի ի Հայ լեզու» (327), *սինաւ* < հուն. «սահման». «մինչև ի *սինաւոն* Վրաց» (85), «ի պատճառս *սինաւ* կտրելոյ» (435) և այլն:

Ինչպես և նկատեցինք, հիշատակարանները, պարունակելով կենցաղային բնույթի տեղեկություններ, տրամադրում են ժամանակի խոսակցական լեզվին կամ բարբառներին բնորոշ բառեր և բառատարբերակներ: Կարևոր է նկատել, որ դիտարկված տասնյակ այդպիսի բառեր, ըստ բառարանային տվյալների, նշված ժամանակաշրջանի համար եզակի վկայություններ են: Աշխատանքում ներկայացված որոշ օրինակներ էլ հայտնի են ավելի ուշ շրջանի գործերի բնագրային վկայություններով: Սակավ դեպքերում առկա են ոչ ճիշտ բացատրություններ:

Առանձնակի կարևորություն ունեն վերհանված այն հարյուրավոր բառերը, որոնք ամենահայտնի բառարաններից և ոչ մեկում չեն գետեղվել: Դրանք, անկասկած, մեծ մասամբ կազմել են հիշատակագիրները՝ շարադրվող նյութի բովանդակային պահանջով:

Ամփոփելով ձեռագրերի՝ 13-րդ դարի հիշատակարաններում արձանագրված բառապաշարի քննությունը՝ պետք է հավաստել, որ հայերեն ձեռագրերում վկայված բազում բառեր տարբեր տեսանկյուններից քննության ու լուսաբանման կարիք

ունեն: Անշուշտ, այսպիսի ուսումնասիրությունները պետք է շարունակական բնույթ կրեն՝ ի նպաստ հայերենագիտության և մասնավորապես հայոց լեզվի պատմության մի շարք հարցերի բացահայտմանը: Վերհանված և քննված բառապաշարը կարող է որոշակի նշանակություն ունենալ հայերենի պատմական բառագիտության և հայ բառարանագրության համար:

**Khachatryan Valentin – The Vocabulary of the 13-th Century Colophons of Armenian Manuscripts** - In the framework of this study, we examined the vocabulary of Armenian manuscripts in the colophons of the 13th century. First, we have presented the words that were widely used in the memoirs, conditioned by the content-stylistic features. Then, we have separated and examined the dialectal realities, the words of foreign origin, the words expressed differently in phonetic and word-formation aspects of Middle Armenian in comparison with the Old Armenian from old Armenian colophons. We have also referred to hundreds of words and word-variants not recorded in any of the well-known dictionaries. The discovered and examined vocabulary, of course, can have its benefit to Armenian historical lexicology and lexicography.

**Хачатрян Валентин – Лексика армянских рукописных колофонов 13-го века** - В данной статье исследуется лексика армянских рукописных колофонов XIII века. Нами были рассмотрены лексемы, частое использование, которых было обусловлено содержательными и стилистическими особенностями колофонов. Соблюдая закономерности грабара, нами были выделены и проанализированы диалектизмы, слова иностранного происхождения, слова, выраженные в среднеармянском языке в фонетических и словообразовательных инвариантах, отличных от древнеармянских. В статье также было рассмотрено сотни слов и их вариантов, не зафиксированных ни в одном из известных словарей. Отобранная и проанализированная лексика, конечно, может внести свой вклад в историческую лексикографию.

**ՔՈՒՆԱՅԻ ՄԻԱՐԱՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ  
ՍՏԵՂԾՎԱԾ ԵՐԿԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ  
ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ԺԴ. դարի սկզբից Հայաստանը դառնում է կաթոլիկ ունիթորների (միարարներ) քարոզչության ասպարեզ, պապականության հովանու ներքո ֆրանցիսկյան, ապա դոմինիկյան միաբանները լծվում են կաթոլիկությունը և Կաթոլիկ Եկեղեցու գերակայությունը քարոզելու գործին՝ իրենց շուրջ համախմբելով դավանափոխ հայերին և միաժամանակ հարուցելով Հայոց Եկեղեցու դիմադրությունը, որը պաշտպանում էր իր դավանանքի ինքնուրույնությունը:

1318 թվականին՝ այն բանից հետո, երբ պապական կոնդակով Արևելքի կաթոլիկացումը հանձնարարվեց դոմինիկյան միաբանությանը, նույն ուխտի վարդապետ Բարդուղիմեոս Բոլոնիացին սկսեց քարոզչական գործունեություն Մարաղայում, իսկ 1330 թվականից՝ բուն Հայաստանում<sup>1</sup>: Նրա համախոհների, հատկապես դավանափոխ հայ վարդապետ Հովհաննես Քոնեցու ջանքերով Երնջակ գավառի Քոնա գյուղում հիմնվեց միաբանություն և բարձր տիպի վանական դպրոց՝ «Երկրորդ Աթենք» հավակնոտ անունով: Մինչ այս՝ նույն դարի սկզբներին Արտազ գավառի Զաքարիա եպիս-

---

<sup>1</sup> Արևելյան Հայաստանում ունիթորական կենտրոնների ստեղծման և գործունեության հանգամանքների մասին տե՛ս **Լևոն Խաչիկյան, Արտազի հայկական իշխանությունը և Օործորի դպրոցը**, «Բանբեր Մատենադարանի», N 11, 1973, էջ 125-210: **Յովհաննես Քոնեցի, Յաղագս քերականի, Ներածություն՝ Քոնայի հոգևոր-մշակութային կենտրոնը և Հովհաննես Քոնեցու գիտական գործունեությունը** (հեղ. Լ. Խաչիկյան,), Ե., 1977, էջ 5-51:

կոպուսի հովանավորությամբ Ծործորի վանքում ստեղծվել էր ֆրանցիսկյան կենտրոն, որի գործունեությունը արգասավոր եղավ հատկապես թարգմանչական ուղղությամբ: Սակայն պապական հիշյալ կոնդակից հետո քարոզչական և գիտական ասպարեզներում առաջնությունը վերապահվեց Քոնայի դոմինիկյան կենտրոնին:

Բարդուղիմեոսի, ապա նրա մահից հետո (1333 թ.) մեկ այլ նշանավոր կաթոլիկ վարդապետի՝ Պետրոս Արագոնացու գլխավորությամբ Քոնայի միաբանները ստեղծեցին ինքնուրույն և թարգմանական ծավալուն գրականություն՝ ծիսական, քարոզչական բովանդակությունից բացի ներմուծելով նաև արժեքավոր տեքստեր արևմտաեվրոպական սխոլաստիկ աստվածաբանությունից և տրամաբանությունից<sup>2</sup>:

Սակայն ունիթոր գործիչները ունեին նաև քաղաքական դիտավորություն. նրանց թարգմանած կամ մեկնած գիտական ուսմունքները, քարոզած դավանաբանական գաղափարները կոչված էին տեսական հիմնավորումներով հաստատելու Կաթոլիկ Եկեղեցու գերազանցությունը: Հայոց Եկեղեցու վարդապետները, որ ստանձնել էին հակաունիթորական շարժման գաղափարական առաջնորդությունը, ուշի-ուշով ուսումնասիրում էին լատին քարոզիչների աշխատությունները, որպեսզի ճանաչեն նրանց քարոզած ճշմարտությունները և կարողանան համոզիչ և ամուր լինել իրենց դիրքորոշման մեջ: Եվ թեև Բարդուղիմեոս Բոլոնիացին «բանադրանօք» փորձել էր խափանել այդ գրականության

---

<sup>2</sup> Ունիթորական միջավայրի գրականության մասին ավելի մանրամասն տե՛ս Մ. Ուղենրիյն, *Հայ-Դոմինիկեան մատենագիտական ծանօթութիւններ*, «Բազմավէպ», 1922, էջ 138, 229, 263:

յուրացումը իր հակառակորդների կողմից<sup>3</sup>, այդուհանդերձ, Հայ Եկեղեցու շատ վարդապետներ շուտով հասու դարձան ունիթորական միջավայրի երկերին՝ սերտելով նրանց իմաստասիրման ոճն ու փաստարկման եղանակները<sup>4</sup>:

Եկեղեցու միասնության կամ ինքնուրույնության վեճը փիլիսոփայության մեջ հիմնավորումներ փնտրեց չափավոր ռեալիզմի և նոմինալիզմի դիրքերից: Այս ուղղությունները, ինչպես հայտնի է, անդրադառնում են ունիվերսալիաների (ընդհանրականներ) գոյաբանությանը՝ հաստատելով կամ ժխտելով դրանց ռեալությունը և այդպիսով, ըստ էության, ձևակերպելով կեցության և մտածողության առնչության կերպերը<sup>5</sup>: Մակայն այս ուսմունքների դավանաբանական ընթերցման դեպքում՝ եթե եզակին ճանաչվում է ընդհանուրի մաս, ապա աներկբայորեն՝ որպես ճշմարիտ հարաբերություն՝ ինքնուրույն (ազգային) եկեղեցին պետք է ստորադասված լինի ընդհանրական (կաթոլիկ) եկեղեցուն: Ուստի ունիթոր գործիչները քարոզում էին ընդհանուրի գերազանցությունը եզակիի նկատմամբ, իսկ Հայ Եկեղեցու ներկայացուցիչները՝ հատկապես Հովհան Ռոտունեցին և Գրիգոր Տաթևացին, առաջ էին քաշում եզակիի՝ որպես իսկական և առաջնային գոյության առավելության թեզը<sup>6</sup>:

---

<sup>3</sup> Տե՛ս **Բարդուղիմեոս Բոլոնիացի**, *Քարոզգիրք*, ՄՄ ձեռ. 2184, 12բ:

<sup>4</sup> Տե՛ս **Յովհաննէս Քոնեցի**, անդ, էջ 33-35:

<sup>5</sup> Տե՛ս **Ս. Զաքարյան**, *Ընդհանրականների (ունիվերսալիաների) հիմնահարցի արիստոտելյան ըմբռնումը Տաթևի դպրոցում*, «Հայագիտության հարցեր», 2016, 3, էջ 157-59:

<sup>6</sup> Տե՛ս **Ս. Արևշատյան**, *Բարդուղիմեոս Բոլոնիացու հայկական ժառանգությունը*, Ե., 2014, էջ 64-72: Ըստ Ս. Զաքարյանի՝ չափավոր ռեալիզմին հարում էին նաև հայ փիլիսոփաները, միայն թե դավանաբանական պայքարում տարբերվում էր նրանց և կաթոլիկների փաստարկների նախընտրությունը. նրանք պնդում էին եզակիի առաջնության թեզը,

Եվ ահա, ներմուծված նոր բովանդակությունը, առաջացնելով հակազդեցություն և աշխուժացնելով գիտական միտքը, բարերար ազդեցություն ունեցավ, ունիթորականությանը, նրանց գաղափարական կովաններին հակադրվելու անհրաժեշտությունը Հայոց Եկեղեցու վարդապետներին մղեց բանավեճի սխոլաստիկայի ասպարեզում. ի հետևանք՝ ժամանակի փիլիսոփայական ուսմունքները և դրանց շուրջ մտածումներն ու վեճերը արդիական դարձան նաև Հայաստանում:

Ունիթորական միջավայրի գրականությունը նշանակալի չափով թարգմանական է, Ծործորի և Քոնայի միաբանությունների ջանքերով թարգմանվել են երկեր, որոնք պատկանում են Կաթողիկ Եկեղեցու ականավոր գաղափարախոսների, սխոլաստ աստվածաբանների, ինչպիսիք են Ջիլբերտուս Պոռետացին, Ալբերտուս Մեծը, Թովմա Աքվինացին, Նիկողայոս Լյուրացին և ուրիշներ: Հաշվի առնելով այդ երկերի նշանակալիությունը, թարգմանչական գործի նպատակադրումը և սկզբունքները՝ հայ թարգմանական գրականության պարբերացման մեջ առանձացվել է «Միարարական միջավայրի թարգմանություններ» կոչվող շրջան՝ մեկը այն հինգ շրջաններից, որոնք ներկայացնում են թարգմանական գրականության աստիճանական զարգացումը Ե.-ԺԸ. դդ. ընթացքում<sup>7</sup>:

Քոնայի միարարական կենտրոնում թարգմանված կարևորագույն երկերից է Ալբերտուս Մեծի «Համառոտ

---

ունիթորները՝ ընդհանուրի. տե՛ս *Ունիվերսալիաների հիմնահարցի մեկնաբանությունը* 14-րդ դարի կաթողիկ քարոզիչների աշխատություններում, «Բանբեր Երևանի համալսարանի», 133.1, Երևան, 2011, էջ 10-13:

<sup>7</sup> Տե՛ս **Լ. Տեր-Պետրոսյան**, *Հայ հին թարգմանական գրականություն*, Ե., 1984, էջ 7-23:

հաւաքումն աստուածաբանական ճշմարտութեան»<sup>8</sup> աշխատությունը, որը «Compendium theologiae veritatis» երկի<sup>9</sup> ամբողջական թարգմանությունն է: Աստվածաբանական երկերի շարքում հատկապես նշելի է Թովմա Աքվինացու «Հաւաքումն աստուածաբանութեան» ("Summa Theologiae") կոթողային աշխատության թարգմանությունը: Մրա թարգմանիչները մի քանիսն են՝ Հովհաննես Քոնեցին և լատին միաբաններ Հովհաննես Անգլիացին և Պետրոս Արագոնացին՝ գրչակցությամբ Հակոբ Քոնեցու (հայտնի նաև որպես Հակոբ Թարգման): Գործը հսկայածավալ է, թարգմանվել է մաս-մաս՝ առանձին վերնագրերով՝ իբրև ինքուրույն միավորներ: "Summa Theologiae"-ն ունի երեք մաս, առաջինը, որ բաղկացած է 119 խնդիրներից (quaestio), հայերեն փոխադրվել է մասնակիորեն՝ ընդգրկելով միայն 24 խնդիրները, և վերնագրվել «Համառոտ հաւաքումն յաղագս հրեշտակաց»<sup>10</sup>: Աշխատության երրորդ մասը թարգմանվել է «Յաղագս տնօրէնութեանն Քրիստոսի» վերնագրով՝ դարձյալ որոշակի ընտրությամբ. այս մասն ունի 90 խնդիր, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է 1-ից 59-ը խնդիրների թարգմանությունը<sup>11</sup>, Մ. Ուղենրիյնի կազմած քննական բնագրում տրված են նաև 60-71, 77 խնդիրները<sup>12</sup>:

---

<sup>8</sup> ՄՄ 66, 3ա-120ա:

<sup>9</sup> **Albertus Magnus**, *Opera omnia, Compendium theologiae veritatis*, volumen 13, p. 1-148, ed. Jammy, Lyon, 1651.

<sup>10</sup> ՄՄ 126, 177ա-251ա, ՄՄ 3487, 82բ-138բ, 1389թ., հմմտ.՝ **Thomas Aquinas**, *Summa Theologiae*, prima pars, quaestio 50-64, 106-14:

<sup>11</sup> ՄՄ 68, 6ա-276ա, հմմտ.՝ **Thomas Aquinas**, *Summa Theologiae*, tertia pars, quaestio 1-59:

<sup>12</sup> **M. A. van den Oudenrijn**, *Eine alte Armenische übersetzung der tertia pars der Theologischen Summa des. Hl. Thomas von Aquin*, Francke Verlag Bern, 1955, հմմտ.՝ **Thomas Aquinas**, *Summa Theologiae, tertia pars, quaestio 60-71, 77*:

Քոնայի միաբանության մի քանի այլ գործեր՝ հայտնի որպես հեղինակային աշխատություններ, կարելի է համարել մասամբ թարգմանական, քանի որ պարունակում են բառացի ընդօրինակություններ լատիներեն տարբեր աղբյուրներից: Այսպես՝ Բարդուղիմեոս Բոլոնիացու հայտնի «Դիալեկտիկայի» («Հաւաքումն համառօտ և յոյժ օգտակար ի դիալետիկէն, որ տրամաբանութիւնն») չորս մասերի հիմքում Պետրոս Իսպանացու "Summulae logicales" («Տրամաբանական սեղմ ամփոփումներ») երկի տրակտատներն են, որը հաստատվում է բովանդակային բազմաթիվ համընկնումներով<sup>13</sup>, Հովհաննես Քոնեցու «Յադագս քերականին» երկը մեծապես ազդվել է Պրիսցիանուսի "Institutiones grammaticae" («Քերականական ուսմունքներ»), Սպոնսիուսի "Summa de constructione" («Ամփոփում կապակցության վերաբերյալ») աշխատություններից և հաճախ բառացիորեն կրկնում է դրանք<sup>14</sup>:

Վերևում հիշատակված ունիվերսալիաների խնդիրը հանգամանալի քննվել է Բարդուղիմեոս Բոլոնիացու «Յադագս

---

<sup>13</sup> ՄՄ 69, 266ա-346բ, ՄՄ 2382, 339ա-370, 1403թ., ՄՄ 1685, 88ա-178բ, հմմտ.՝ *Peter of Spain, Tractatus, called afterwards Summule Logicales*, First Critical Edition from the Manuscripts with an Introduction by L. M. De Rijk, 1972: Այս երկի լատիներեն աղբյուրների մասին ավելի մանրամասն տե՛ս **Տ. Միրունյան**, *Հովհաննես Քոնեցու քերականական երկի սահմանումների լատիներեն նախօրինակները*, «Բանբեր «Դիալեկտիկա» և "Summulae Logicales", «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2019, Զ, էջ 44-66, Է, էջ 106-119:

<sup>14</sup> **Հովհաննես Քոնեցի**, *Յադագս քերականին*, բնագիրը պատրաստեց Լ. Խաչիկյանը, Ե. 1977, հմմտ.՝ *Prisciani Institutionum Grammaticarum Libri I-XII, Libri XII-XVIII, ex recensione Martini Hertzii, Lipsiae*, 1859, **Charles Thurot**, *Extraits de divers manuscrits latins pour servir à l'histoire de doctrines grammaticales au Moyen-Age*, Paris, 1869: Այս երկի լատիներեն աղբյուրների մասին ավելի մանրամասն տե՛ս **Տ. Միրունյան**, *Հովհաննես Քոնեցու քերականական երկի սահմանումների լատիներեն նախօրինակները*, «Բանբեր Մատենադարանի», Ե., 2017, N 24, էջ 122-140:

հնգից ընդհանրից»<sup>15</sup>, Պետրոս Արագոնացու «Համառոտ հաւաքումն վերլուծութեան Վեցից սկզբանց Ջիլպերտոսի Պօնետացոյ», «Համառոտ վերլուծութիւն Ստորոգութեանց Արիստոտէլի», «Համառոտ հաւաքումն ի վերայ Ներածութեան Պորփիրի», «Սկիզբն Վերլուծութեան ի վերայ գրոցն, որ կոչի Պերիարմենիաս» աշխատություններում<sup>16</sup>:

Աստվածաբանական, տրամաբանական, քերականական այս գործերը, կարելի է ասել, ամբողջովին ամփոփում են Քոնայի կենտրոնում ստեղծված գիտական բովանդակությունը, հետևաբար՝ դրանց բառապաշարի քննությամբ կարելի է վեր հանել հասկացական այն նոր շերտը, որ ներմուծել են ունիթոնները, և պարզաբանել այդ հասկացությունների նյութականացման սկզբունքները, այն է՝ բառակերտման եղանակները, կադապարներն ու առանձնահատկությունները:

Ա. Նորաբանությունների կազմությունը<sup>17</sup>

1) Նախածանցները նորաբանությունների կազմում: Լատիներենի բառային կադապարների յուրացման հետևանքով և կամ դրանց ազդեցությամբ հիշյալ երկերի բառապաշարում բավականին ակտիվ է նախադաս դիրքը: Բազմաթիվ բառեր, հատկապես տերմինային նշանակության, ընդունելով նախա-

---

<sup>15</sup> **Բարդուղիմեոս Բոլոնիացի**, *Յաղագս հնգից ընդհանրից*, բնագիրը պատրաստեց Ս. Արևշատյանը, (Բարդուղիմեոս Բոլոնիացու հայկական ժառանգությունը, Երևան, 2014, էջ 75-106):

<sup>16</sup> ՄՄ 1684, 3ա-37ա, ՄՄ 926, 85ա-91ա, ՄՄ 1684, 37ա-108բ, ՄՄ 926, 91ա-101ա, ՄՄ 1684, 109ա-51ա, ՄՄ 926, 101բ-108ա, ՄՄ 1684, 151ա-238ա, ՄՄ 926, 108ա-123բ:

<sup>17</sup> Բառերը նորակազմ են համարված հետևյալ բառարանների համեմատությամբ. **Գ. Աւետիքեան, Խ. Միւրմէլեան, Մ. Աւգերեան**, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1836-37, **Լ. Հովհաննիսյան**, *Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր*, Ե., 2010:

ծանցներ և ըստ այդմ՝ կրելով ձևային և իմաստային փոփոխություններ, ստացել են նորաբանության արժեք:

Նորակազմությունների մեջ հատկապես արդյունավետ են հետևյալ նախածանցները, որոնք ստորև թվարկված են ըստ կենսունակության.

*ներ-*. «ներմտածել<sup>18</sup>», «ներդիպել», «ներգսպել», «ներմբռնել», «ներընդունողական», «ներչափել», «ներշարժել», «ներհամաձայնել» ևն,

*համ-*. «համաժողովումն», «համանշանակել», «համաքատակութիւն», «համատրոհել», «համափակումն», «համախառնել» ևն,

*ան-*. «անբացորոշական», «անձահաւորութիւն», «անշարման», «անտարորոշորէն», «անտրամատրելի», «անյատարար» ևն,

*արտ-*. «արտատարածել», «արտահերքել», «արտացնդումն», «արտացրական», «արտափոխութիւն», «արտաքարշութիւն» ևն,

*նախ-*. «նախաճաշակել», «նախընթացումն», «նախակալացեալ», «նախապահականել», «նախենթադրել», «նախապատրաստիչ» ևն,

*բաց-*. «բացաւարտեալ», «բացաքեցել», «բացորոշակի», «բացեզերեալ», «բացբառնալ», «բացորոշիչ» ևն,

*տար-*. «տարահերքումն», «տարաձահութիւն», «տարաչափական», «տարաքեցել», «տարալուծութիւն», «տարազատեալ» ևն,

*ենթ-*. «ենթաներհակ», «ենթակայաբար», «ենթադատելի», «ենթակելական» ևն,

---

<sup>18</sup> Այս և մյուս օրինակների մատենագրական տվյալները և բացատրությունները տե՛ս կից բառացանկում:

Նորակազմությունների մեջ գործածվել են նաև նախորդներին կենսունակությամբ զիջող մեկ տասնյակից ավելի նախածանցներ, որոնք կա՛մ սակավ կիրառություն ունեն կա՛մ հանդիպում են եզակի օրինակներով, օր.՝ *շար-*. «շարագուգութիւն», *վեր-*. «վերնագոյել», *անդր-*. «անդրագսպեալ», *մակ-*. «մակաբաժանել», *հակ-*. «հակատարաբաժանել», *յար-*. «յարամօտել», *ստոր-*. «ստորատրամատել», *փաղ-*. «փաղանունանել» ևն:

Թարգմանական երկերի նորաբանությունների և լատիներեն նախօրինակ ձևերի համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց նախածանց բաղադրիչների իմաստային և քանակային հարաբերությունը ոչ միշտ է համաչափ:

Լատիներենի նախածանցները փոխանցվել են հետևյալ համիմաստ ձևերով.

*հաւ-* = *con-*. «համաթագաւորել». "conregare", «համահետևիլ». "consequi", «համայարմարիլ». "convenire", «համայաւելումն». "coappositio", «համազանգուածութիւն». "commensuratio" ևն,

*ան-* = *in-*. «անխելամուտ». "indocilis", «անվնասարարութիւն». "innocentia", «անպատկանաբար». "inconvenienter", «անջերմեռանդապէս». "indevote" «անչափակցութիւն». "improportionabilitas" ևն,

*ներ-* = *in-*. «ներտարածիլ». "intendere", «ներտպաւորիչ». "imprimens", «ներյեցել». "inhaerere", «ներսահել». "illabi", «ներպարարել». "includere" ևն,

*նախ-* = *prae-*, *ante-*. «նախաճանաչել». "praescire", «նախապահանջել». "praesupponere", «նախագուշակել». "praenuntiare", «նախիմանալ». "praeintelligere", «նախակայութիւն». "antecessio" ևն,

*արտ-* = *re-*, *trans-*, *abs-*. «արտալուծումն»։ "resolutio", «արտայեղուլ»։ "redundare", «արտաքայլել»։ "transcendere", «արտաքարշել»։ "abstrahere" նն,

*տար-* = *di-*, *se-*, *re-*. «տարակացել»։ "distare", «տարաչափութիւն»։ "dimensio", «տարազատեալ»։ "separatus", «տարալուծութիւն»։ "resolutio" նն,

*բաց-* = *de-*. «բացաւարտութիւն»։ "determinatio", «բացեալ»։ "deesse", «բացքառնալ»։ "removere" նն,

*ենթ-* = *sub-*. «ենթաշարադրական»։ "subcontinuativus", «ենթանկիլ»։ "subjicere", «ենթաներհակ»։ "subcontrarie", «ենթատարրալուծական»։ "subdisiunctivus" նն,

*անդր-* = *re-*, *ex-*. «անդրաբերել»։ "referre", «անդրահոսումն»։ "recessus", «անդրաշրջեալ»։ "eversa" նն,

*վեր-* = *super-*, *de-*. «վերնագոյացական»։ "supersubstantialis" «վերաւարտումն»։ "determinatio" նն,

*շար-* = *con-*, *ad-*. «շարայօղել»։ "componere", «շարայարադրական»։ "adiunctivus" նն:

Լատիներենի նախածանցների դիմաց երբեմն դրվել են նաև խոսքիմասային արժեք ունեցող բաղադրիչներ՝ նախադրություն և մակբայ, օր.՝ «առանց վերաւարտելոյ»։ "indeterminatus", «յառաջադիտեալ»։ "praestitutus", «յանդիմանկացուցանել»։ "praebere", «յառաջգալ»։ "procedere" նն:

Թարգմանական երկերում նախածանցը նաև սուկական կիրառություն ունի, այսինքն՝ դրա առկայությունը միայն բառի ձևային կազմն է փոխում, իսկ բովանդակային առումով այն, ըստ էության, չեզոք մասնիկ է, առանց որի՝ բառիմաստը լիովին արտահայտելի է. այս մասնիկները սովորաբար ի հայտ են գալիս բնագրային կաղապարները ճշգրիտ արտացոլելու հետևանքով. օր.՝ «արտալուծումն»։ "resolutio", «արտահեղուլ»,

“redundare”, «բացաւարտեալ». “determinatus” նն:

Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ լատիներենի նախածանցները մեխանիկորեն չեն վերարտադրվել, նախադաս դիրքը ձևավորել են նաև բաղադրիչներ, որոնք չեն արտացոլում բնագրային կաղապարները: Ըստ այդմ՝ նշելի են նախածանցման հետևալ հատկանիշները.

ա) որոշ նախածանցներ չեն արտահայտում բնագրային նախածանցների նշանակությունը, այլ տարարժեք են դրանց նկատմամբ, օր.՝ «համասիրելի». “dilectus”, «ներփոխական». “transformativus”, «համամարտութիւն». “impugnatio”, «ներխուզութիւն». “collatio”, «ներպարառութիւն». “ambitus” նն,

բ) նախածանցումը երբեմն չի բխում նախօրինակ ձևերից, այսինքն՝ նախադաս դիրքը ակտիվ է ինքնուրույնաբար. «ենթադատել». “iudicare”, «համահաւասարիլ». “aequare”, «շարագուգել». “jungere”, «համանշանակութիւն». “significatio” նն: Ինքնուրույն նախածանցմամբ կազմված են նաև բառեր, որոնք թարգմանվել են ըստ իմաստի և որևէ ձևային կախում չունեն բնագրային կաղապարներից, օր.՝ «ներդաշնակաւորութիւն». “melodia”, «արտանիւթաբար», «արտանիւթական». “mathematicus” նն:

Այս օրինակներից կարելի է դատել, որ կաթոլիկ թարգմանիչները օտար բառակազմությունը վերարտադրելիս չեն ձգտել բացարձակ ճշգրտության, այլ ըստ հարկի՝ դիմել են ինքնուրույն կազմությունների: Դրա վկայությունն են նաև նախածանցներով բաղադրված այն բառերը, որոնք թարգմանվել են տարաձև՝ ի հայտ բերելով թարգմանական տարբերակներ, օր.՝ մեկ բառով նշանակվել են լատիներեն հոմանիշ բառեր՝ «վերաւարտել». “determinare”, բայց՝ «վերաւարտողական». “diffinitus”, և հակառակը՝ լատիներեն միևնույն

բառը փոխանցվել է մի քանի տարբերակով՝ «անկրակա-  
նություն», «անչարչարելիություն». “*impassibilitas*”, «անախտա-  
կրելի». “*impassibilis*”:

2) Վերջածանցները նորաբանությունների կազմում:  
Հայերենի բառակազմության մեջ, ի տարբերություն նախադաս  
դիրքի, վերջադաս դիրքը կենսունակ է ինքնին՝ առանց օտար  
կադապարների ազդեցության. այս ընդհանուր օրինաչափու-  
թյունը գործել է նաև քննության առարկա աշխատություններում:

Վերջածանցավոր նորաբանությունները հիմնականում  
կազմված են *-ություն* («օդություն») և *-ական* («դիրափոխա-  
կան») մասնիկներով, որոնք, ինչպես հայտնի է, հայերենի  
ամենակենսունակ գոյականակերտ և ածականակերտ վերջա-  
ծանցներն են: Թարգմանական երկերում լատիներենի նախա-  
ծանցները փոխանցվել են հետևյալ համարժեքությամբ.

*-ություն՝ -ia, -io, -tio, -tas, -tia*. «վատահամբալորություն». “*infamia*”, «առնողություն». “*actio*”, «կրկնակություն». “*ingemina-  
tio*”, «վտառալորություն». “*porositas*”, «մտաթափություն». “*amen-  
tia*” ևն,

*-ական՝ -ius, -ivus, -alis, -ilis, -osus*. «վարձարժանա-  
լորական». “*meritorius*”, «կրողական». “*passivus*”, «սառուցա-  
կան». “*glacialis*”, «դիրական». “*facilis*”, «սանձարձակական». “*impetu-  
osus*” ևն:

Հունաբան հայերենում և ուշ լատինաբանությունների  
շրջանում ընդարձակորեն կիրառվել են մակբայակերտ ածանց-  
ները, մի երևույթ, որ տեղիք է տվել բազմաթիվ անսովոր  
կազմությունների և մատնանշվել իբրև բառակազմական

օտարաբանություն<sup>19</sup>. մակբայակերտ ածանցների առատ կիրառությունը հատուկ է նաև ունիթորական միջավայրի երկերին:

Մակբայներ նշանակալի չափով կերտվել են հարաբերական ածականներից, ըստ այդմ՝ բաղադրվող հիմքերը հիմնականում ածանցավոր են.

-*պէս*. «բազձաձականապէս». “collective”, «բազմաւորականապէս». “pluraliter”, «թշուառականապէս». “miserabiliter”, «կրողականապէս». “passive”, «բացասականապէս». “negative”, «փոխաբերականապէս». “translative” են,

-*բար*. «տեղականաբար». “localiter”, «եզականաբար». “singulariter”, «տեսակաբար». “formaliter”, «չափակցաբար». “proportionaliter” են,

-*օրէն*. «նախագաղափարօրէն». “exemplariter”, «պակասօրէն». “privative”, «երևակականօրէն». “imaginarie” են:

Այլ խոսքի մասերի հիմքերով ստեղծված մակբայները պակաս հաճախադեպ են. «ներելապէս». “veniabiliter”, «զարմանալապէս». “mirabiliter”, «կարծողօրէն». “putative”, «գովասանապէս». “laudabiliter”, «սպասաւորօրէն». “ministerialiter”, «նիւթաբար». “materialiter”, «միջաբար». “mediate” են:

Նորաբանությունների կազմությանը մասնակցել են նաև այլ վերջածանցներ, որոնք, սակայն, վկայված են սակավ կամ եզակի օրինակներով. «կարծոտ». “suspiciosus”, «համբերողագոյն». “patientior”, «պարունակիչ». “continens”, «շնորհային». “gratuitus” են:

Վերջածանցման մեջ ևս գործածվել են մասնիկեր, որոնք տարարժեք են բնօրինակի վերջածանցների նկատմամբ, օր.

---

<sup>19</sup> Տե՛ս Գ. Մուրադյան, *Հունարանությունները դասական հայերէնում*, Ե., 2010, էջ 79-82, Վ. Համբարձումյան, *Լատինարան հայերենի պատմություն*, Ե., 2010, էջ 223, 230-31 նն:

ածականակերտ և մակբայակերտ վերջածանցերը դրվել են գոյականակերտ վերջածանցների և ներկա դերբայի վերջավորության փոխարեն. «սպառական». “consumptio”, «ջանօրէն». “iniquitas”, «յառաջընթացական». “antecedens” ևն, հազվադեպ կատարվել է նաև ինքնուրույն վերջածանցում՝ դերբայական հիմքին կցվել է ածանց՝ լատիներենի դերբայական ձևի դիմաց՝ «մղողական». “impellens”:

3) Բարդ նորաբանություններ: Քննվող երկերում մի քանի տասնյակ նոր բառեր կերտվել են արմատների կցման եղանակով՝ առանց մասնիկավորման. սրանց գերակշիռ մասը ածականներ են՝ «փոքրախելք», «գիջաթոր», «ղիւրակորուստ», «զանազանաձայն», «մեղուշագոյն» ևն: Նոր բարդություններ ի հայտ են եկել նաև տարբեր խոսքի մասերի բայացման հետևանքով. «քառանկիւնել», «կիսատել», «մաքրափայլել», «չափակցիլ» ևն:

Այս և մյուս նորահայտ բարդ բառերը կազմությամբ հիմնականում ինքնատիպ են, նույնությամբ չեն կրկնում նախօրինակ ձևերի կառուցվածքը, այլ ազատորեն փոխանցում են դրանց իմաստները, ուստի բնագրային կաղապարների հետ նրանց առնչությունը հաճախ միայն իմաստային է, օր.՝ «աղուէսաբարոյ». “versutus” (= ճարպիկ, խորամանկ), «բազմանգամ». “frequenter” (= հաճախակի), «յառաջադիտեալ». “praestitutus” (= նախանշված), «վայրակոր». “globatus” (= կլորացված), «վատահամբաւել». “diffamandus” (= անվանարկել), «տկարագործ». “infirmorum” (= տկար, անուժ) ևն: Լատիներեն բառերի ազատ թարգմանության մեկ այլ դրսևորում է, երբ միևնույն բառը փոխադրված է հոմանիշ տարբերակներով՝ «բազմակուլ», «շատակուլ». “vorax” (= որկրամուլ, շատակեր): Երբեմն հայերեն համարժեքն օժտվել է հավելյալ իմաստով՝ ըստ համատեքստի՝

«բարակաշուրթն». “tenuis” (= բարակ), «տղմալիք». “lutum” (= կեղտ, տիղմ):

Լատիներեն տեքստերից կատարվել են նաև կառուցվածքային պատճենումներ, սակայն բնօրինակ և թարգմանական ձևերի միջև կաղապարային ընդհանրությունը բացարձակ չէ, օր.՝ հետևյալ բարդությունները ստեղծվել են բնագրի բառակապակցությունների ամփոփումով. «կիսակուրծ». “dimidius comestus”, «արձակաքայլ». “longus passus”, «միսակողմն». “alia pars”, «ստուարածեռն». “crasse manus” նն, ընդ որում՝ պատճենման բաղադրիչները դրվել են նաև հակառակ դասավորությամբ. «թխակն». “oculus niger”, «կամարայունք». “supercilia arcuata”, «նեղաճակատ». “frons angusta”, «դժուրահայեաց». “oculi acriter” նն:

Գ. Օտարաբանությունների կազմությունը: Լատիներեն երկերի մի քանի տասնյակ տերմիններ՝ հիմնականում տրամաբանական և քերականական բնույթի, փոխառվել են ուղղակիորեն՝ հայերեն տառադարձությամբ. «դիալեթիկայ». “dialectica”, «ֆափեւմո». “fapesmo”, «ֆելափթօ». “felapto”, «ֆերիօ». “ferio” նն: Ըստ երևույթին տերմինային կազմն անփոփոխ վերարտադրելու նպատակով կատարվել է նաև ամբողջական տառադարձություն՝ ներառյալ քերականական մասնիկները, ինչպես՝ սեռանիշ վերջավորություններ՝ «-ուս». “-us”, «-ում». “-um”, օր.՝ «ֆալսիգրաֆուս», “falsigrafus”, «արգումենթում». “argumentum” նն, սեռական հոլովի հոգնակիի վերջավորություն՝ «-որում». “-orum”, օր.՝ «ելենքորում», “elenchorum”, «թօփիզիքօրում», “topicorum” նն:

Ածանցավոր կազմությունները ևս անխառն չեն, զուգահեռաբար գործածվել են և՛ հայերեն, և՛ լատիներեն մասնիկներ. օտար ածանցներով ավելի հաճախ ներկայանում

են գոյականներ, օր.՝ «ռեդարգուսիօ»։ “redargutio”, «սուսպրանսիա»։ “substantia”, «սուսսիսթենսիա»։ “subsistentia” նն, իսկ ինքնուրույն ածանցում ունեն հիմնականում ածականները և մակբայները։ «սոֆիսթիական», «սոֆեսթիական», «լօջիքայական», «քօնքրթաբար», «քօնքրէթօրէն» նն, բայց սա էլ բացարձակ կանոն չէ, օր.՝ ածականակերտ “-bilis” վերջավորությունը գործածվել է մակբայական կիրառությամբ՝ “-բիլէ” ձևով։ «ինօփինաբիլէ»։ “inopinabile”:

Թեն օտար տերմինների ակնհայտ նախապատվությանը, որոշ տերմիններ գործածվել են նաև կրկնակ ձևերով՝ տառադարձությամբ և հայերեն համարժեքով։ «սիլօջիզմուս»։ «հաւաքաբանութիւն»։ “sillogismus”, «լօճիկայ» - «տրամաբանութիւն»։ “logica”, «թեմթաթիվա» - «փորձողական»։ “temptativa”, «էքսէնփլում», «գաղափար»։ “exemplum” նն:

Այս բառերի տառադարձությունը չի ենթարկվում կայուն կանոնների, բնագրային բառերի հնչյունական կազմը հաճախ փոխանցվել է այնպիսի հնչյուններով, որոնք կա՛մ լծորդի արժեք ունեն, կա՛մ արտասանական որևէ ընդհանրություն։ Ի հետևանք՝ տառադարձությունը կատարվել է մի քանի տարբերակով, օր.՝

b - բ / պ / փ. “diab<sup>h</sup>olus”. «դիաբօլուս», “sub<sup>h</sup>stantia”. «սուսպրանսիա», “dab<sup>h</sup>itis”. «դափիթիս»,

t - թ / դ. “dati<sup>s</sup>i”. «դաթիսի», “celarent<sup>t</sup>”. «սէլարէնդ»,

g - գ / ջ / ք. “cathegorica”. «քաթեգորիկայ», “gerundium”. «ջերունդիական», “logos”. «լօբօս»:

s - ս / զ. “hypost<sup>s</sup>is”. «իփօսթազիս», “solecism<sup>s</sup>”. «սօլօէսիզմուս»,

x - ք / զ. “exemplum”. «էքսէնփլում», “lexis”. «լէգիս»,

m - մ / ն. “entimema”. «ենթիմեմայ», “amphibolia”. «անֆիբոլիայ»,

n - ն / մ. “essentia”. «եսենսիա», “sintosis”. «սինթոզիս»,

th - թ / դ. “anthropos”. «անթրոպոս», “method”. «մեթոդ»:

Տառադարձական տարբերակներով գործածվել է նաև միննույն բառը, օր.՝ b - բ / պ. “abstractus”. «աբսթրաքթուս», «ապսթրաքթուս», t - թ / տ / դ, e - է / ի. “dialectica”. «դիալեքիկայ», «դիալեքիական», «դիալեքիքայ», c - կ / ք. “logicos”. «լոջիկոս», «լոջիքոս» են:

Լատիներենի ուշ շրջանում ի հայտ եկած արտասանական փոփոխությունները արտացոլվել են հնչյունների հետևյալ համարժեքությամբ.

ա. բառասկզբի “c”-ն (“k”՝ ավանդական արտասանությամբ, հետագայում նաև՝ “ts”՝ “e”, “i” հնչյուններից առաջ) տառադարձվել է «կ», «ց», «զ», «ս». “cardinales”. «կարտինարականք», “celantes”. «ցելանթես», “cesare”. «զեզարե», “celarent”. «սելարենդ»,

բ. միջձայնավորային “s”-ն, որ արտասանվում է “z”, տառադարձվել է նաև «ս»՝ “prosopon”. «փրոզոփոն», “disamis”. «դիսամիս»:

գ. “ti” հնչյունակապակցությունը (արտասանությունը՝ “tsi”), տառադարձվել է «սի», “inductio”. «ինդուքսիո», “nugatio”. «նուգապիո», “argumentatio”. «արգումենթապիո»:

Օտար բառերի տառադարձությունը ոչ միայն որոշակի սկզբունքների չի ենթարկվում, այլև բավարար խնամքով չի կատարվել. որոշ բառեր փոխադրվել են հավելյալ հնչյուններով, կա՛մ ներկայացնում են բնօրինակ բառերի ամփոփ, սղված ձևերը, և կա՛մ տառադարձվել են նախնական հնչյունակազմի որոշ աղավաղումներով, օր՝ “baralipton”.

«բարալիփ», “prolepsis”. «փրօլէմսիս», “zeugma”. «զեօմայ», “sincathegoremata”. «սինքաթէգրամաթայ», “cambestres”. «ցամբեսթիէս» են, ընդ որում՝ այս հավելագրությունները կամ սղումները որևէ կերպ չեն հիմնավորվում և կարող են բնորոշվել որպես կամայական միջամտություններ:

Նորաբանությունների և օտարաբանությունների ցանկ.  
բնույթը և կառուցվածքը

Բառացանկը պարունակում է մոտ 500 բառային միավոր, որոնք վկայված չեն Հայկազյան բառարանում («Նոր բառգիրք հայկազեան լեզուի»), ներառյալ այնպիսիք, որոնք գործածվել են նոր իմաստով՝ հիմնականում տերմինային նշանակությամբ: Բառացանկի նյութը քաղված է ԺԴ. ունիթորական միջավայրի գրականությունից՝ ստեղծված Քոնայի վանքում:

Բառացանկը կառուցված է բառարանի սկզբունքներով՝

ա) գլխաբառերը դասավորված են այբբենական կարգով, բ) իրար հաջորդող բառերի տարբերակները, որոնք ունեն նույնիմաստ ածանցներ, բերված են միասին, նույն կերպ նաև՝ հնչյունական տարբերակներով բառագույգերը, գ) բայերը տրված են անորոշ դերբայի ձևերով՝ ըստ լծորդությունների և սեռերի, դ) գլխաբառերին կից նշված է դրանց խոսքիմասային պատկանելությունը, անցյալ և ենթակայական դերբայները տրված են՝ ըստ իրենց գոյականական կամ ածականական իմաստների՝ իբրև գոյական կամ ածական, ե) բառերը բացատրված են նկարագրական եղանակով կամ հոմանիշների միջոցով, զ) բոլոր բառահոդվածներն ունեն մատենագրական

վկայություններ՝ հեղինակի, գործի վերաբերյալ կից տեղեկություններով. եթե բառը քաղված է թարգմանական երկից, զուգահեռ բերված է նաև դրա նախօրինակը լատիներեն բնագրից, ը) գլխաբառը տարբերակված է աստղանիշով, եթե բառի տվյալ իմաստը վկայված չէ Հայկազյան բառարանում, ը) հունարենից անուղղակի փոխառություններին կից փակագծերում նշված է փոխատու լեզուն:

## Բ Ա Ռ Ա Յ Ա Ն Կ

### Ա

**Աբսթրաքթաբար, աբսթրաքթորեն**, մ. վերացական կերպով. «առեալ լինին աբսթրաքթաբար և քօնքրէթօրէն» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 96ա), տե՛ս նաև *քօնքրթաբար* բառահոդվածի օրինակը:

**Աբսթրաքթեալ**, ա. վերացարկված. «Ասելի է, թէ կոյրն ասէ զքօնքրթեալ կուրութիւնն, այսինքն՝ ենթակայն, իսկ կուրութիւնն զաբսթրաքթեալն» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 96բ):

**Աբսթրաքթում, ապսթրաքթում**, ա. վերացական. «Այլք ստորոգիին միայն ըստ անուանն՝ որպէս քօնքերթում պատահմունքն, իսկ ոմանք ոչ ըստ անուան և ոչ ըստ բանին, որպէս՝ աբսթրաքթում պատահմունքն» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 48ա-բ), «Ուստի ճշմարտապէս թէ որդին աստծոյ, որ է միաւորօղ ընդ յինքեան, զմարդկային բնութիւնն իմացեալ ի յինքեան, այսինքն ի ապսթրաքթումն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 20ա), “Unde vere dicimus quod filius Dei, qui est uniens sibi humanam naturam, est homo. Sed humana natura in se considerata, idest *in abstracto*” (ThA, STh, III, q.2, a.8, co.):

**Աղուէսաբարոյ,** ա. ճարպիկ, խորամանկ, նենգ. «Որ արագ ընթանալովն զսպէ զինքն և զերեսն կորակնէ զբոլոր մարմինն կծկէ, նշանակէ զերկշտուն, զըռիշտուն և զաղուէսաբարոյն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 37բ), “*Qui celeriter incedendo se cotaprimat, et vultum deducit, atque totum corpus implicat, significant timidum, parcum et versutum*” (AM, CThV, 47):

**Ամեներանեալ,** ա. ամենից երանելի. «որ է հետ ամեներանեալ և անստեղծ երրորդութեանն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 8բ), “*quae est vestigium beatae et increatae Trinitatis*” (AM, CTh, V, 8):

**Անախտակրելի,** ա. անկիրք. «Եւ այսոքիկ բաւական լինէին մարդոյն, էթէ ունէր հոգևորապէս և մարմնաւորապէս անախտակրելի կեանս» (ԹԱ, ՅՏՔ, Ուր, 134), “*Et hoc quidem sufficeret homini si haberet et corporaliter et spiritualiter impassibilem vitam*” (ThA, STh, III, q.65, a.1, co.):

**Անբացորոշական,** ա. ոչ հայտնի, անորոշ. «Նախ բացորոշէ զճշմարտութիւնն յանբացորոշականս նախադասութիւնս» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 233ա):

**Անբացորոշակի, անբացորոշօրէն,** մ. ոչ հայտնի, անորոշ կերպով. «տարակուսանս այս և ի մասնաւորսն և յանբացորոշակիսն» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 233բ), «բացերևոցել ընդհանրականապէս՝ անբացորոշօրէն և մասնաւորաբար» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 237ա):

**Անբացորոշելի,** ա. անորոշելի. «Է նշանակէ անբացորոշելի իմն շարադրութիւն, այլ բացորոշելի լինի, յորժամ մակյաւելին նմին՝ է մարդ» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 166ա):

**Անդրադարձապէս,** մ. անդրադարձությամբ. «անդրադարձապէս որ ինչ ասացեալ լինէին զմարդոյն, այն կարէին ասել և զիրաքանչիւր գ անձանցն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 26բ), “e

*converso ea quae dicerentur de illo homine, possent dici de qualibet trium personarum*” (ThA, STh, III, q.3, a.6, arg.3):

**Անդրաբերել**, նբ. վերաբերել. «ասին առնչութիւնք, զի անձինքն նոքօք առ իրեարս անդրաբերին» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 13բ), “*dicuntur relations, quia persone per eas ad se inuicem referuntur*” (AM, CThV, 15):

**Անդրահոսումն**, գ. անդր՝ այն կողմ հոսելը. «արտահոսումն և անդրահոսումն ի ծովուն նովաւ պատճառի» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 22ա), “*accessus et recessus maris per eam causatur*” (AM, CTh V, 26):

**Անդրաշրջեալ**, ա. շուռ տված, շրջած. «Մարդն յունարէն կոչի անթրօպոս, այսինքն՝ ծառ անդրաշրջեալ, քանզի գլուին հերաւն ունի զինքն ըստ օրինակի արմատոյ» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 36ա), “*Homo Graece anthropos dicitur, id est, arbor eversa: habet enim caput cum capillis ad modum radicis*” (AM, CThV, 46):

**Անդրագալեալ**, ա. ընդհանրական դատողության տեսակ. «Ասելի է, թէ կրկին է ընդհանրականն, այսինքն՝ բացարձակ և անդրագալեալ» (ՊԱ, ՄՎՊ, ՄՄ 1684, 182ա):

**Անթիթոզիս**, գ. antitosis (հուն.). կատարյալ բանի կամ շարամանության (նախադասության) տեսակ. «Այլ անթիթոզիսին լինի զանագանութիւն անգմանց, հիբան *զբանն զորս լսէք, ոչ է իմ. զբանն զոր է ի հայցական անգմանէն և իմն ի յուղական*» (ՀՔ, ՅՔ, 209), “*ἀντιπρωσις. procidentia*” (Pr, IG, XVII, 184):

**Անթրօպոս**, գ. anthropos (հուն.). մարդ, տե՛ս անդրաշրջեալ բառահոգվածի օրինակը:

**Անխելամուտ**, ա. ոչ հասու, անտեղյակ. «Կարի իմն նեղաճակատն արտայայտէ զանխելամուտն և զշատակուլն, իսկ լայնն զփոքրախելսն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 37ա), “*Frons*

angusta nimis *indocilem* et voracem declaret: lata vero paruitatem significant discretionis” (AM, CThV, 46):

**Անկրականութիւն**, գ. կիրք չկրելը, կրքից զուրկ լինելը. «Դարձեալ չորք են օժիտք փառաւորեալ մարմնոյն, որպէս յառաջիկայդ ասասցի, այսինքն՝ անկրականութիւն, արագութիւնն, նրբութիւնն և պայծառութիւնն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 206բ), “Praeterea, corporis gloriosi sunt quatuor dotes, ut infra dicetur, scilicet *impassibilitas*, *agilitas*, *subtilitas* et *claritas*” (ThA, STh, III, գ.45, ա.1, arg.3):

**Անձնականապէս**, մ. ինքն անձամբ՝ իբրև անհատ. «Մէրն երբեմն ասէ... զերրորդ անձն երրորդութեանն, ըստ այնմ որ ասէ աստուած սէր է, և ըստ այսմ առեալ լինի անձնականապէս: Երբեմն առեալ լինի էականապէս, և ըստ այսմ բոլոր երրորդութիւնն ասի սէր» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 81բ), “Charitas quandoque dicit... tertiam personam in trinitate. 1.Ioan.4. Deus charitas est, et sic sumitur *personaliter*. Quandoque sumitur *essentialiter*, et sic tota trinitas dicitur charitas” (AM, CThV, 97):

**Անճահաւորութիւն**, գ. անհամապատասխանություն, անպատեհություն. «լինիցի նաւամարտութիւնն կամ ոչ լինիցի և ըստ այսմ հետևի նոյն անճահաւորութիւնն որպէս և յառաջագոյնն, այսինքն եթէ ստորասութիւնն է սուտ, բայց ասութիւնն ոչ է ճշմարիտ» (ՊԱ, ՄՎՊ, ՄՄ 1684, 195բ):

**Անյատկական**, ա. տրամաբանական սահմանման՝ բացորոշության տեսակ. «Իսկ անյատկական բացորոշութիւն է, որ կարէ ասիլ զէակէն և զոչ էակէն, և այսպիսի բացորոշութիւնն է կարծելի, և ի յայսպիսիս ի շարագուգէն ոչ հետևի արտորոշեալն, որպէս թէ ասիցի՝ եղջերուաքաղն է կարծելի, ոչ հետևի, ապա ուրեմն է» (ՊԱ, ՄՎՊ, ՄՄ 1684, 222ա):

**Անյատարար**, ա. անհատին հատուկ, անհատական. «Իսկ պատահի ի յենթադրեալ իրս ոմանս գտանիլ ինչ որ ոչ վերաբերի առ բան տեսակին որպէս պատայմունքն և անյատարար սկզբունք» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 14բ), “Contingit autem in quibusdam rebus subsistentibus inveniri aliquid quod non pertinet ad rationem speciei, scilicet accidentia et principia *individuantia*” (ThA, STh, III, q.2, a.2, co.):

**Անշարաման**, ա. անկապակից, «Ասելի է, թէ բազմա-  
ձայնք և զանազանաձայնք ասեն զշարամանութիւնսն, իսկ աստ  
ճառէ յանշարամանիցն» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 41բ):

**Անշարամանեալ**, ա. ոչ կապակցված. «Այլ ձայն անշա-  
րամանեալ, որպէս անունն և բայ, ոչ նշանակէ ճշմարիտ» (ԲԲ,  
Դ, ՄՄ 69, 271բ):

**Անորոշանալ**, չբ. անորոշ դառնալ. «Նախ զի նշա-  
նակեսցէ զգոյացութիւնն հանդերձ որակութեամբ, յորմէ  
կարացցէ զրկիլ, զոր ոչ ունին դերանուանքն նմին իրի և ոչ  
անորոշանան իսկ: Երկրորդ, զի որակութիւն այն լինիցի  
հասարակ և ոչ առանձնակի, ուստի և առանձնականն եզերք  
անորոշանալ ոչ կարէն» (ՊԱ, ՄՎՊ, ՄՄ 1684, 163բ):

**Անչարչարելիութիւն**, գ. անախտություն, կրքերի չար-  
չարանքից ազատ լինելը. «Երկրորդ բաժինքն մարմնոյն է  
անչարչարելիութիւնն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 118ա), “Secunda dos  
corporis est *impassibilitas*” (AM, CThV, 145):

**Անպատկանաբար, անպատկանապէս**, մ. ոչ վերաբերելի,  
անպատեհ, անդեպ կերպով. «Երևի թէ անպատկանաբար  
մակյաւելեալ իցէ վկայութիւն հայրական ձայնին ընդ յասելն  
դա՛ է որդի իմ սիրելի» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 209ա), “Videtur quod  
*inconvenienter* additum fuerit testimonium paternae vocis dicen-  
tis, hic est filius meus dilectus” (ThA, STh, III, q.45, a.4, arg.1),

«Երևի թէ անպատկանապէս արարեալ իցեն սքանչելիքն ի Քրիստոսէ առ երկնային մարմինսն» (անդ, 201բ), “*Videtur quod inconvenienter fuerint a Christo facta miracula circa caelestia corpora*” (անդ, գ.44, ա.2, arg.1):

**Անջերմեռանդապէս**, մ. ոչ ջերմեռանդ կերպով. «անջերմեռանդապէս մատիցէ» (ԹԱ, ՅՏՔ, Ուբ, 183), “*indevote accedit*” (ThA, STb, III, գ.69, ա.9, co.):

**Անվնասարարութիւն**, գ. ոչ վնասարար լինելը, չարիք չպատճառելը. «Նոյն կերպիւն զանազանելի է և վասն սիրոյ ներգործութեանն, որ նմանապէս է անվնասարարութեան և բարերարութեան» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 83բ), “*Eodem modo distinguendum est de dilectione affectus, qui similiter duplex est, innocentiae, et beneficentiae*” (AM, CThV, 101):

**Անտարորոշօրէն**, մ. ոչ տարանջատ կերպով. «պարփաւ կեցցէ անտարորոշօրէն» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 237բ):

**Անտրամատրելի**, ա. անտրոհելի, անբաժանելի. «Առաջին է ըմբռնումն պարզիցն և անտրամատելոցն» (ՊԱ, ՀՀՆՊ, ՄՄ 1684, 4ա):

**Անֆիբօլիայ**, գ. մոլորեցնող կամ պատրանքներ պարունակող դատողության տեսակ. «Անֆիբօլիայն է սկիզբն խաբման ի բանէն բոլորովին նոյն զբազում նշանակող» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 326բ), “*Amphibolia autem est principium fallendi ex oratione simpliciter eadem plura significante*” (PH, T, VII, 106):

**Առաջաճաշակ**, ա. առաջուց ճաշակող, ըմբռնող. «նախ հարկաւոր է նոցունց հնգիցն նախաճանօթ լինել և առաջաճաշակ հասարակաբար» (ԲԲ, ՅՀԸ, 75):

**Առատաբարոյութիւն**, գ. բարիքների առատաւորւոյն, շռայլւորւոյն. «Լինիցի և բխումն ամենագլուարճ, որ է ըստ կերպի բարեկամութեան և առատաբարոյութեան» (ԱՄ, ՀՀԱՃ,

ՄՄ 66, 8ա), “Erit etiam emanation jocundissima, quae est per modum benignitatis, et *liberalitatis*” (AM, CThV, 7):

**Առնողականապէս** մ. ներգործությամբ. «Եվ ըստ այնմ արար ինչ առնողականապէս յղութիւնն Քրիստոսի» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 149բ), “Et sic aliquid *active* egit in conceptione Christi” (ThA, STh, III, q.32, a.4, arg.1):

**Առնողութիւն**, գ. ներգործություն. «ամենայն առնողութիւնք և կիրք Քրիստոսի գործիականապէս ներգործեն զորութեամբ աստուածութեան առ մարդկայինս փրկութիւն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 229բ), “omnes *actiones* et *passiones* Christi instrumentaliter operantur, in virtute divinitatis, ad salutem humanam” (ThA, STh, III, q.48, a.6, co.):

**Առնչականապէս**, մ. առնչական կերպով, վերաբերությամբ. «Դարձեալ անուանք ոմանք ասին զաստուծոյ.... Ժամանակաւորապէս, որպէս տիրոջ, ողորմոյ, ոմանք բազմաւորականապէս, որպէս անձինք, ոմանք եզականաբար որպէս աստուած, ոմանք յատկապէս, որպէս յատկութիւն անձանցն, ոմանք յատկացելապէս, որպէս կարողութիւնն և իմաստութիւնն, ոմանք դրականապէս, որպէս արդար, ոմանք բացբարձականաբար, որպէս անմահ, և այսք առաւել ասին զաստծոյ, քան դրականքն, քանզի լաւագոյն ասի զաստծոյ որ ինչ ոչ է, քան որ ինչ է, ոմանք փոխաբերականապէս, որպէս առիծ, զառն, ոմանք բազձաձականապէս, որպէս երրորդութիւնն երբեակ, ոմանք առնչականապէս, որպէս հաւասար, նման» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 14ա), “Quaedam sunt nomina quae de Deo dicuntur... temporaliter, vt dominator et miserator, quae connotant effectum in creatura secundum actum. Quaedam pluraliter, vt personae. Quaedam singulariter, vt Deus. Quaedam proprite, ut proprietates personarum. Quaedam appropriate, vt potentia,

sapientia. Quaedam positivae, vt iustus. Quaedam privativae, vt immortalis, et haec magis proprie dicuntur de Deo, quam positiva: quia melius dicitur de Deo quod non fit, quam quod fit. Quaedam translativae, ut agnus, leo... Quaedam dicuntur collectivae, vt trinitas, trinus. Quaedam *relativae*, vt, aequalis, similis” (AM, CThV, 15):

**Արարածականապէս**, մ. արարողականությամբ, արարելով. «կենդանացուցանել արարողականապէս է ամե-ննին կատարելութիւն» (ԹԱ, ՀՀՅՀ, ՄՄ 3487, 85բ), “vivificare *effective simpliciter perfectionis est*” (ThA, STh, I, q.51, a.1, ad3):

**Ար[տա]տարածական**, ա. դէպի դուրս տարածվող. «աճել ուրախութեանն ի հրեշտակս կարէ իմանիլ կրկին կերպիւ, այսինքն՝ ար[տա]րածական կամ ներտարածական» (ԹԱ, ՀՀՅՀ, ՄՄ 3487, 135բ):

**Արգումենթասիօ**, գ. առարկության իրացումն ու ծավալումն իբրև ամբողջական դատողություն. «Արգումենթասիօ է ծաւալումն արգումենթին բանիւ, այսինքն՝ արգումենթասիօ է բան ծաւալող զառարկութիւնն» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 336ա), “*Argumentatio est argumenti per orationem explicatio, idest oratio explicans argumentum*” (PH, T, VII, 161-62):

**Արգումենթում**, գ. փաստարկում կառուցելու միջոց (ԲԲ, Դ, ՄՄ 2382, 344ա), հայերեն կրկնակը՝ առարկութիւն. «Առարկութիւնն է բան առնող զհաւատն ի կարծելի իրաց» (անդ, 340բ), “*Argumentum est ratio rei dubie faciens fidem*” (PH, T, V, 55):

**Արձակաքայլ**, ա. արձակ քայլող, մեծ քայլերով ընթացող. «Արձակաքայլն բացայայտէ զմեծասիրտն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 37բ), “*Qui longis passibus incendunt, magnamini esse solent*” (AM, CThV, 47):

**Արշաւական,** ա. տրամասական, քննախոսական. «Ապա ուրեմն երևի թէ ի Քրիստոս ոչ իցէ լեալ ներխուզական կամ արշաւական գիտութիւն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 65ա), “Ergo videtur quod in Christo non fuerit scientia collativa vel *discursiva*” (ThA, STh, III, q.11, a.3, arg.1):

**\*Արշաւանք,** գ. զրույց, տրամասություն, քննախոսություն. «Արդ այսոքիկ ոչ լինին բացառաձեալ ի Քրիստոսէ, եթէ ոչ ըստ այնմ, որ ունին յինքեան գներխուզումն և զարշաւանս» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 65ա), “Non autem removentur haec a Christo nisi inquantum important collationem et *discursum*” (ThA, STh, III, q.11, a.3, arg.1):

**\*Արշաւել,** չբ. քննախոսել. «Արդ յատուկ գործ բանական հոգոյն է ներխուզելն և արշաւելն ի միոջէն ի միւսն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 65ա), “Propria autem operatio animae rationalis est conferre et *discurrere* ab uno in aliud” (ThA, STh, III, q.11, a.3, s.c.):

**Արտալուծումն,** գ. լուծում, տարրալուծում. «միթէ լինիցի այնքան արտալուծումն եփեալ մարմնոցն ի ջուրն, մինչ զի հիւրն այն առաւել ունիցի ի յօտար գոյացութենէն քան ի ջրո» (ԹԱ, ՅՏՔ, Ուբ, 143), “nisi forte sit facta tanta *resolutio* corporum lixatorum in aqua quod liquor plus habeat de aliena substantia quam de aqua” (ThA, STh, III, q.66, a.4, ad2):

**Արտահեղութիւն,** գ. հորդություն. «ոսկեղէն պսակիկն նախկնաբար է ի միտս, այլ արտահեղութեամբ իմն փայլէ և ի մարմինն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 118բ), “aureola non tantum principaliter sit in mente, sed per quandum *redundantiam* fulgeat etiam in carne” (AM, CThV, 146):

**Արտահեղույ,** նբ. դեպի դուրս հոսել, հորդել. «հաւատալի է, զի ի գաւակէն արտայեղեալ իցէ ի մայրն, ամեննին ի բացառաձումն արմատոյ» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 124ա),

“credendum est quod ex prole *redundaverit* in matrem totaliter a fomite subtractio” (ThA, STh, III, q.27, a.3, co.):

**Արտահերքել**, նբ. հերքելով փարատել, վերացնել. «արտահերքել գտարակուսանս» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 155ա):

**Արտանիթաբար**, մ. մաթեմատիկորեն. «Եթե խօսեսցուք ի քանակութեանցն արտանիթաբար» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 49բ), “si loquamur de quantitativibus *mathematicae*” (ThA, STh, III, q.7, a.12, ad1):

**Արտանիթական**, ա. մաթեմատիկական. «Դարձեալ՝ անջատեալ քանակութիւնն ի յենթակաէն, երևի գոյ արտանիթական քանակութիւն, որ ոչ է ենթակա զգալի որակութեանց» (ԹԱ, ՅՏՔ, Ուր, 197), “Praeterea, quantitas a subiecto separata videtur esse quantitas *mathematica*, quae non est subiectum qualitatum sensibilium” (ThA, STh, III, q.77, a.2, arg.4):

**Արտատարածել**, նբ. դեպի դուրս տարածել. «սահմանս այս կարէ արտատարածիլ առ կատարեալ և անկատարն բան» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 171բ), «արտատարածէ զինքն առ հակասութիւն» (անդ, 180բ):

**Արտացնդումն**, գ. լուծում, քայքայում. «թեպէտ ասացել իցէ Դէմոկրիտեայ կէտիցն ծնանելն զգիծն, ոչ է ճշմարիտ, եթէ ի հաւաքմանէ կէտիցն լինիցի պարզ ծնունդ և ի յարտացնդմանէ ապականութիւն, այլ լինիլ պարզ լինելութիւն, յորժամ լինի արտափոխութիւն տեսակարար տեսակին առ այլ իմն տեսակարար տեսակ, և յորժամ լինի փոփոխումն նախնեաց յատկութեանց, զոր օրինակ, եթէ լինիցի հուր ի յօդոյ, տարափոխի խոնաւն ի չորն և վերջին տեսակն, այսինքն՝ օդութիւնն ներփոխի և լինի հրութիւն, և ըստ այսմ է պարզ լինելութիւն» (ՊԱ, ՀՎՎՍ, ՄՄ 1684, 148բ-49ա):

**Արտացրական,** ա. տրամաբանական սահմանման՝ բացորոշության տեսակ. «Արտացրականն է, որ նուազեցուցանե՝ զբոլոր բացորոշելին իւր՝ առադրելով գնորին հակակայն, որզան՝ մարդ մեռեալ, աչք կոյր և ի սայցս տարազ ոչ ներհաւաքի՝ ասելով Սոկրատէս է մարդ մեռեալ, ոչ հետևի, ապա ուրեմն է մարդ կամ Սոկրատէս ունի աչք կոյր, ոչ հետևի, ապա ուրեմն ունի աչք» (ՊԱ, ՄՎՊ, ՄՄ 1684, 222ա):

**Արտափոխութիւն,** գ. փոփոխում. տե՛ս արտացնդումն բառահոդվածի օրինակը:

**Արտաքայլել,** չբ. քայլելով անցնել. «Այլ սանձարձակականն է, որ լինի միայն յառաջ եկեալ ի վավաշոտ տոփանացն՝ արտաքայլելով զկոպարաւ բանականին և զհամեստութեանն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 52բ), “Impetuosus est, qui ex sola libidine proueniens, metas honestatis, et rationis *transcendit*” (AM, CThV, 66):

**Արտաքարշել,** նբ. անջատել, վերացարկել. «ընդ արտաքարշիլ անձնաւորութեանն իմացմամբն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 25ա), “*abstracta personalitate per intellectum*” (ThA, STh, III, գ.3, a.3, ad3):

**Արտաքարշութիւն,** գ. անջատում, վերացարկում. «Եվ յայսմանէ հետևի, զի հոգին Քրիստոսի լցեալ իցե ունակութեամբ իմն գիտութեան, որ արտաքարշութեամբ այսպիսի տեսակացս կարասցէ աճիլ» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 68ա), “Et ex hoc sequitur quod in anima Christi aliquis habitus scientiae fuit qui per huiusmodi *abstractionem* specierum potuerit augmentari” (ThA, STh, III, գ.12, a.2, co.):

**Արտորոշորէն,** մ. որոշակիորէն. «ներհաւաքի արտորոշորէն» (ՊԱ, ՄՎՊ, ՄՄ 1684, 222ա):

## Բ

**Բազմանգամ**, մ. բազում անգամ «անտեղեակքն դպրութեան և ծանրալեզուքն, որք տան զխորհուրդս, բազմանգամ ածէին պակասութիւն ի խորհուրդս» (ԹԱ, ՅՏՔ, Ուբ, 101), “illiterati et balbi qui sacramenta conferunt, *frequenter* defectum in sacramentis inducerent” (ThA, STh, III, q.60, a.7, arg.3):

**Բազմակուլ**, ա. բազում բաներ կուլ տվող, որկրամուլ, անկշտում. «Բերանն ի վեր քան զչափն լայնաձիգ նշանակէ զբազմակուլն, զոչ հեզն և զանգութն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 37բ), “Sed quod vltra modum dilatatur, *voracem* indicat, et immitem, et impium” (AM, CThV, 47):

**Բազմաւորականապէս**, մ. pluraliter. բազում, հոգնակի թվով. տե՛ս առնչականապէս բառահոդվածի օրինակը:

**Բախտական**, ա. պատահական, դիպվածական. «Ոչ է այնպէս ի բնական և ի բախտական բարեաց, զի զայսպիսիս տեղա աստուած ի վրա արդարոց և մեղաւորաց» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 74ա), “Non est autem sic de bonis naturalibus et *fortuitis*, quia talia pluit Deus super iustos et iniustos” (AM, CThV, 90):

**Բարալիփ**, գ. baralipton. մտահանգման ե եղանակի մնեմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

**Բարակաշուրթն**, ա. բարակ շուրթ ունեցող. «Սակայն բարակաշուրթն ունելով փոքր զբերանն, ցուցանեն զթուլասիրտն և զչարաճիկն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 37բ), “*Tenuia* vero et parui oris, imbecillem animum et versutum indicant” (AM, CThV, 47):

**Բարբարա**, գ. barbara. մտահանգման ա եղանակի մնեմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

**Բարեյարմարութիւն**, գ. բարեհարմար, պատշաճ, վայելուչ լինելը. «Բոլոր վիզն հաւաստէ զգօրութիւն ոգոյն և

գրաբեյարմարութիւն մարմնոյն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 37բ), “*ceruix rotunda probat virtutem animi et corporis humilitatem*” (AM, CThV, 47):

**Բարուական**, ա. բարոյական. «Այլ ընդդէմ է, զոր ասէ Գրիգորիոս յերեք գիրս բարուականաց» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 246ա), «*Sed contra est quod Gregorius dicit, XIII Moral*” (ThA, STh, III, q.52, a.8, c.s.):

**Բարօքո**, գ. barocho. մտահանգման ժգ եղանակի մենեմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

**Բացասականապէս**, մ. բացասական կերպով, բացասորեն. «Արդ ուղղապէս իմացեալ եռակի ասի անհունն, այսինքն՝ բացասականապէս, պակասօրէն և ներհակաբար» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66,10ա), “*Sane triplex dicitur infinitum, scilicet negative, priuatiue, contrarie*” (AM, CThV, 10):

**Բացաւարտեալ**, ա. սահմանված, որոշարկված. «Առ չորրորդն ասելի է, թէ այնու որ ասի կերպի ինչ կամել, նշանակի բացաւարտեալ շարժումն կամելոյն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 93բ), “*Ad quartum dicendum quod per hoc quod dicitur aliquoaliter velle, designatur determinatus modus volendi*” (ThA, STh, III, q.18, a.1, ad4):

**Բացաւարտութիւն**, գ. սահման, եզր. «Եւ այս վասն ասացեալ առարկութեանդ, որ սակայն ոչ բռնադատէ, զի մեծն և փոքրն զանազանեն զտարաչափական քանակութիւնն, ոչ ըստ ելութեան նորին, այլ ըստ բացաւարտութեան չափոյն» (ԹԱ, ՅՏՔ, Ուր, 205), “*Et hoc ratione inducta. Quae tamen non cogit. Quia magnum et parvum diversificant quantitatem dimensivam non quantum ad eius essentiam, sed quantum ad determinationem mensurae*” (ThA, STh, III, q.77, a.8, ad4):

**Բացաքեցել**, նբ. ժխտել, բացասել. «Աստուստ բացաքեցէ տարակուսանս, զի մի կարծեսցէ ոք, թէ յիրաքանչիւր մակյաւելումն նաս միոյ փաղառութեանն առնէր ստորասութիւն կամ բացասութիւն, այլ տարամերժէ զայս» (ՊԱ, ՄՎՊ, ՄՄ 1684, 170բ):

**Բացաքեցութիւն**, գ. ժխտում, բացասում. «բացաքեցութիւն ներհակիցն կարէն լինել համանգամայն, որպէս բացաքեցութիւն սպիտակին և սևոյն է դեղինն, և ի նոյն միում դեղնոջն է բացաքեցութիւն սպիտակին և սևոյն» (ՊԱ, ՄՎՊ, ՄՄ 1684, 186բ):

**Բացբառնալ**, նբ. հեռացնել, վերացել, բացառել. «Դարձեալ ընդ բացբառնալ միջոյն տարորոշին այնք, որք շարակցին միջովն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 37ա), “Praeterea, *remoto* medio, separantur ea quae per medium coniunguntur” (ThA, STh, III, q.6, a.1, arg.3):

**Բազձաձականապէս**, մ. collective. հավաքական կերպով, հավաքաբար. տե՛ս առնչականապէս բառահոդվածի օրինակը:

**Բացբարձականաբար**, մ. privative. բացասաբար, ժխտողական կերպով. տե՛ս առնչականապէս բառահոդվածի օրինակը:

**Բացեզերեալ**, ա. ավարտուն. «բացեզերեալ համանմանութեամբ» (ՊԱ, ՀՎՎՍ, ՄՄ 1684, 115բ):

**Բացէագոյ**, չբ. պակասել, բացակայել. «խնդրէր ի նմանէ աղօթելովն որ ինչ ի բացէագոյր ի նմանէ ըստ մարդկայինն բնութեան» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 105ա), “ab eo orando petebat quae sibi *deerant* secundum humanam naturam” (ThA, STh, III, q.21, a.3, co.):

**Բացորոշակի**, մ. հայտնի, պարզ կերպով. «ոչ նշանակեցե՞ց... բացորոշակի զճշմարիտն կամ բացորոշակի» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 176ա-բ):

**Բացորոշիչ**, ա. բացահայտիչ. «են բազումք եղանակք բացորոշիչք նախադասութեանց» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 228բ-29ա):

**Բովանդական**, ա. ամբողջական. «բովանդական կարէ ծնանիլ ի տարաչափական քանակութենէ հացին և գինոյն» (ԹԱ, ՅՏՔ, Ուր, 202), “*totum potest generari ex praedicta quantitate dimensiva panis vel vini*” (ThA, STh, III, q.77 ,a.5, co.):

**Բօքարդօ**, գ. bocardo. մտահանգման ժը եղանակի մենեմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. ՓԽ, Դ, IV, 52):

## Գ

**Գործիականապէս** մ. գործուն, գործիական կերպով. instrumentaliter. տե՛ս առնողութիւն բառահոդվածի օրինակը:

**Գործիատրեալ** ա. գործունակ դարձած. «Ուստի վասն ունելոյն Քրիստոսի ի յառաջին կէտ յղութեանն իւրոյ զբանական հոգին, ինչպէս և զմարմինն կազմեալ և գործիատրեալ ևս առաւել կարէր ունել զգործ շօշափական զգայութեանն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 155ա), “*Unde, cum Christus in primo instanti suae conceptionis habuit animam rationalem, formato iam et organizato corpore eius, multo magis in eodem instanti poterat habere operationem sensus tactus*” (ThA, STh, III, q.34, a.2, ad3):

**Գովասանապէս** ա. գովասանությամբ, գովասանքով, «Գովասանապէս յիշատակին յաւետարանի անդ, որ զմարմին նորա առեալ ի խաչէն զգուշութեամբ և պատուով պատեալ թաղեցին» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 239բ), “*Laudabiliter commemorantur in Evangelio qui corpus eius, de cruce acceptum, diligenter atque*

honorifice tegendum sepeliendumque curarunt” (ThA, STh, III, q.51, a.2, co.):

**Գիջաթոր** ա. խոնավություն թորող, գիջալից. «Աչք դժուարհայեաց եթէ լինիցին գիջաթոր, արտայայտէ զճշտախօսն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 37ա), “Oculi acriter intuentes; si sunt *humidi*, indicant hominem veridicum” (AM, CThV, 47):

**Գիտնակ** ա. գիտակ, տեղյակ. «Զայրն ցաւոց և զգիտնակն տկարութեան» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 197ա), “virum dolorum et *scientem* infirmitatem” (ThA, STh, III, q.43, a.1, arg.2):

## Դ

**Դաթիսի,** գ. datisi. մտահանգման ժէ եղանակի մենեմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

**Դարափթի,** գ. darapti. մտահանգման ժդ եղանակի մենեմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

**Դարիի,** գ. darii. մտահանգման գ եղանակի մենեմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

**Դափիթիս,** գ. dabit. մտահանգման է եղանակի մենեմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

**Դժուարաթողութիւն** գ. դժվարությամբ զիջելը, ներելը. «Դարձեալ մի մեղքն ասի մեծագոյն քան զմիւսն բազմակերպիւ եղանակաւ, այսինքն... դժուարաթողութեամբ որպէս մեղքն որ ընդդէմ հոգոյն սրբոյ» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66,42ա), “Vnum peccatum dicitur maius altero multis modis, scilicet... *difficultat remittendi*, vt peccatum in spiritum sanctum” (AM, CThV, 53), ՆՀԲ՝ դժուարաթող:

**Դժուարահայեաց** ա. դժվարությամբ նայող, (աչքերը) դժվարորեն հառող. acriter intuentes. տե՛ս գիջաթոր բառահոդվածի օրինակը:

**Դիաբոլուս** գ. սատանա. «Քանզի կոչի ի լատինարէն դիաբոլուս, որ է ծօրեալ, զի անկաւ հոգևորապէս և տեղականաբար» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 27բ), “Vocatur enim *diabolus*, quod interpretatur deflunes, quia defluit, id est, corrui spiritualiter, et localiter” (AM, CThV, 34):

**Դիալեթիկայ, դիալիդիքայ** գ. տրամաբանություն. «Իսկ դիալեթիկայ ասի ի դիաե, որ է երկուս, և ի լօքօսե, որ է ասացուած, և ի լեզիսե, որ է բան, իբր երկու ասացուած կամ բան, այսինքն՝ դնօղին և պատասխանօղին տրամաբանութիւնն» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 268բ), “Dicitur autem '*dialectica*' a '*dia*', quod est duo, et '*logos*', quod est sermo, vel a '*lexis*', quod est ratio, quasi duorum sermo vel ratio, scilicet opponentis et respondentis disputando” (PH, T, I, 1), «Քանզի լուծանել զայսպիսի տարակուսանս ոչ վերաբերի առ դիալիդիքայն» (ԲԲ, ՅՀԸ, 75):

**Դիալեթիական, դիալետիական, դիալիդեական, դիալիդիական**, ա. դիալեկտիկական, դիեալեկտիկային բնորոշ. «մեթաֆիզական փիլիսոփոսն և դիալեթիական» (ԲԲ, ՅՀԸ, 90), «դիալետիական հաւաքաբանութիւն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 58բ), “*dialecticus syllogismus*” (ThA, STh, III, գ.9, ա.3, ad2), «դիալիդեական գիտութիւն» (ԲԲ, ՅՀԸ, 89), «դիալիդիական գիտութիւն» (անդ):

**Դիալեթիկոս**, գ. տրամաբան. «ոչ ընթանայ, որ ոչ է բայ առ դիալեթիկոսքն, այլ է անորոշելի բայ» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 276ա), “ '*non currit*', quod non est verbum secundum *dialecticos*, sed verbum infinitum” (PH, T, I, 2), նաև՝ դիալետիկոս (անդ, 266բ), դիալեթիքոս (ՊԱ, ՀՀՆՊ, ՄՄ 1684, 7ա), դիալեդիկոս (անդ, 19ա):

**Դիմադրական**, ա. շաղկապի տեսակ. «Դիմադրական է, որ նշանակէ գներհակ պատճառին, որգոն թէպէտ, սակայն, և թէպէտ, նա և թէ, գոնեա» (ՀՔ, ՅՔ, 187), “*Adversativae sunt, quae*

adversum convenienti significant, ut ‘tamen, quamquam, quamvis, etsi, etiamsi, saltem’ ” (Pr, IG, XVI, 99):

**Դիրական** ա. դյուրին, թեթև. «Առ երկրորդն ասելի է թե նորագոյն մկրտեալքն են կրթելիք ի յարդարութիւնն, ոչ պատժական գործօք, այլ դիրական, որպէս, զի իբր կաթամբ էին, դիրավարժութեամբ յառաջեցեն առ կատարելագոյնսն» (ԹԱ, ՅՏՔ, Ուր, 167), “Ad secundum dicendum quod nuper baptizati exercitandi sunt ad iustitiam, non per opera poenalia, sed per opera *facilia*, ut quasi quodam lacte facilis exercitii promoveantur ad perfectiora” (ThA, STh, III, q.68, a.5, ad2):

**Դիրակորուստ**, ա. հեշտ կորսվող. «Մակացութիւնն ոչ դիրակորուստ իմն է» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 80ա):

**Դիրավարժութիւն** գ. facilis exercitium. դյուրին վարժություն. տե՛ս դիրական բառահոդվածի մեջբերումը:

**Դիրափոխական**, ա. հեշտ, հաճախ փոփոխելի, հեղհեղուկ. «Նմանապէս և առողջութիւնն, յորմէ ասի որ առողջ ըստ այնմ, որ է տրամադրութիւն մարմնոյ և դիրափոխական, է ի յառաջին տեսակին» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 81բ):

**Դիրիմաց**, ա. հեշտ հասկանալի, դյուրըմբռնելի. «Եւ անանջատականքն՝ ոմանք են ըստ ինքեան, և ոմանք ըստ պատահման, որոյ բացայայտութիւնն դիրիմաց է ի նորին գրելոցն» (ՊԱ, ՀՀՆՊ, ՄՄ 1684, 22ա-բ):

**Դիսամիս**, գ. disamis. մտահանգման ժգ եղանակի մենեմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

**Դիսփարաթ**, գ. փաստարկում կառուցելու պարագա՝ «տեղ». «տեղի ի դիսփարաթէ» (ԲԲ, Դ, ՄՄ 2382, 360բ), “locus a disparatis” (PH, T, V, 73):

**Դրողական** ա. դրական, էական. «Վասն այսորիկ այլք ասեն թե թլփատութիւնն տայր շնորհ նան ըստ այլ իմն

դրողական ներգործութեան, որ է արժանաւորեցուցանել յաւիտենական կենացն» (ԹԱ, ՅՏՔ, Ուր, 114-15), “Et ideo alii dicunt quod circumcisio conferebat gratiam etiam quantum ad aliquem effectum *positivum*, qui est facere dignum vita aeterna” (ThA, STh, III, q.62, a.6, ad3):

## Ե

**Եզականաբար** մ. singulariter. եզակիորեն. տե՛ս առնչականապէս բառահոդվածի օրինակը:

**Ելենքորում**, գ. լատ. elenchus-ի հոգն. սեռ. elenchorum-ից. հերքումների. «Դ տեսակ հաւաքաբանութեանն է ճարտասանականն հաւաքաբանութիւնն, ... և ի հաւաքաբանութենէս այս ուսուցանէ ելենքորում գիրք, յորս խօսի վասն պատրանաց» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 268ա):

**Ելենքսիական**, ա. հերքմանը վերաբերող. «Վասն ելենքսիական պատրանացն» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 336ա-բ, 346ա), “De ignorentia *elenchi*” (PH, T, VII, 161):

**Եղեալաբար**, մ. եղած լինելով. «մարմինն Քրիստոսի ոչ սերմնապէս, այլ եղեալաբար է կազմեալ ի հոգոյն սրբոյ» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 158բ), “corpus Christi non seminaliter, sed *conditive* a spiritu sancto formatum est” (ThA, STh, III, q.35, a.2, ad2):

**Ենթադատել**, նր. ենթադրել, կարծել. «քանզի զայն զոր ենթադատեմք առնելոյ, յետ քննութեան խորհրդոյն ընտրեմք» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 95բ), “illud enim quod *iudicamus* agendum post inquisitionem consilii, eligimus” (ThA, STh, III, q.18, a.4, ad2):

**Ենթադատելի**, ա. ենթադրելի. «առաւել վասն այսմ իրի ենթադատելի է ըստ որպիսութեան աստուածային առօղ անձինն քան ըստ որպիսութեան առեալ մարդկային բնութեանն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 26բ), “magis est circa hoc *iudicandum* secundum

conditionem personae assumptis quam secundum conditionem naturae humanae assumptae” (ThA, STh, III, q.3, a.3, ad3):

**Ենթակայաբար, ենթակայապես**, մ. ենթակա կերպով. «Ընդհանրականն ի յիրն արտաքոյ է ենթակայաբար, իսկ ի յիմացումն յառաջեղելապէս» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 50բ-51ա), «ենթակայապէս՝ ըստ այնմ որ են իմացումն որպէս ենթակայոջ, և այսպէս են մասնաւոր պատահմունք իմացման, իսկ յառաջեղելաբար՝ ըստ այնմ որ բերեն զմանութիւն այնմ բնութեան և ըստ այսմ են ընդհանրականք, և այս է առաջին գործ իմացմանն» (ՊԱ, ՀՀՆՊ, ՄՄ 1684, 4ա-բ):

**Ենթաներհակ**, ա. կատեգորիկ դատողության տեսակ. «Ենթաներհակք են մասնաւոր ստորասական և մասնաւոր բացասական, որպէս ոմն մարդ ընթանայ, ոմն մարդ ոչ ընթանայ» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 281բ), “*Subcontrarie sunt particularis affirmativa et particularis negativa [eiusdem subiecti et eiusdem predicati], ut 'quidam homo currit'- 'quidam homo non currit'”* (PH,T, I, 6):

**Ենթակելական**, ա. ենթակայական, ենթակային հատուկ. «Ստորոգութիւնն է շարակարգութիւն ստորոգելեացն և ենթակելեացն ի գիծս ստորոգականին, և այսպիսի ստորոգականքս և ենթակելականքս են սեռ կամ տեսակ, տարբերութիւն, յատուկ և պատայումն» (ՊԱ, ՀՀՆՊ, ՄՄ 1684, 5բ):

**Ենթակելի**, ա. ենթակայելի. տե՛ս ենթակելական բառահոդվածի օրինակը:

**Ենթանկիլ**, չբ. ենթարկել. «ուր գտանի յատկութիւն նիւթոյ, անդ գտանի և նիւթն, այլ յատկութիւն նիւթոյն է ընդունել զպատահումն կամ ենթանկիլ նորին» (ԹԱ, ՀՀՅՀ, ՄՄ 3487, 83բ), “*Proprietates autem materiae sunt recipere et substare;*

unde dicit Boetius, in libro de Trin., quod forma simplex *subiectum* esse non potest” (ThA, STh, I, q.50, a.2, arg.1), նաև՝ «իբր թէ այլ ինչ իցէ, որ ենթանկի առնչութեանն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 25ա), “quasi aliud sit quod *subiicitur* relationi” (ThA, STh, III, q.3, a.3, ad3):

**Ենթաշարադրական,** ա. շաղկապի տեսակ. «Ենթաշարադրական է, որ ցուցանէ զպատճառ շարադրութեանն, հիպէս *զի, քանզի*» (ՀՔ, ՅՔ, 187), “*Subcontinuativae* vero causam continuationis ostendunt, ut ‘quoniam, quia’ ” (Pr, IG, XVI, 94):

**Ենթատարալուծական,** ա. շաղկապի տեսակ. «Ենթատարալուծական է, որ ի ներքո տարալուծական ձայնի զերկոսեանն նշանակէ լինել, որպակ *թէ արարեալ իցես և թէ ոչ*» (ՀՔ, ՅՔ, 187), “*Subdisiunctivae* sunt, quae voce disiunctivarum utrumque tamen esse significant, ... ‘Alexander sive Paris’ pro ‘Alexander, qui et Paris dicitur’ ” (Pr, IG, XVI, 98):

**Ենթիմեմայ,** գ. տրամաբանության անկատար գործիքի տեսակ. «Իսկ իէթիմեմայն է հաւաքաբանութիւն անկատար, յորժամ եղեալ մի առաջարկութեամբ միայն եզրակայանայ շտապական եզրակացութիւն» (ԲԲ, Դ, ՄՄ 2382, 343բ, 345ա), “*Entimema* est sillogismus imperfectus, idest oratio in qua non omnibus antea positis propositionibus infertur festinata conclusio” (PH, T, VII, 161-62):

**Երանացուցիչ** ա. երանություն շնորհող. «Այլ ի վեր քան զամենայն սիրելով է աստուած, քանզի... է ծայրագոյն երանելի, է և ծայրագոյն երանացուցիչ» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 82բ), “*Super omnia diligendus est Deus; quia... summe beatum est, summe beatificum est*” (AM, CThV, 99):

**Երևակականօրէն,** մ. երևակայությամբ. «Այլ արդ Մօսէս և Եղիա ոչ էին անդ ճշմարտապէս, այլ երևակականօրէն» (ԹԱ,

ՅՏՔ, ՄՄ 68, 208ա), “Moyses autem et Elias non ibi vere affuerunt, sed *imaginarie*” (ThA, STh, III, q.45, a.3, arg.2):

## Զ

**Չանազանաձայն**, ա. զանազան ձայների պարունակող, զանազան ձայներից կազմված, տե՛ս անշարաման բառահողվածի օրինակը:

**Չանազանողական**, ա. տարբերիչ. «Քանզի կնիքն երևի նշանակել զանազանողական իմն նշան» (ԹԱ, ՅՏՔ, Ուբ, 115), “Character enim significare videtur quoddam signum *distinctivum*” (ThA, STh, III, q.63, a.1, arg.1):

**Չանցարարեալ**, ա. անտեսված. «Երբեմն սուրբ վարդապետք պատճառաւ համառօտութեան զանցարարեալք բացահայտութեամբն ի կիրառնուն զՔրիստոսիւ զստեղծական անունն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 89ա), “*aliquando sancti doctores, causa brevitatis determinatione omissa, nomine creaturae utuntur circa Christum*” (ThA, STh, III, q.16, a.8, ad1):

**Չարմանալապէս**, մ. զարմանալիորեն, զարմանալի կերպով. «ի զարմանալապէս եղեալ իրս բոլոր պատճառաւ եղելոյն է կարողութիւն առնօղին» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 29ա), “*in rebus mirabiliter factis tota ratio facti est potentia facientis*” (ThA, STh, III, q.1, a.1, arg.1):

**Չեզարէ**, գ. cesare. մտահանգման ժ եղանակի մենմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

**Չեօմայ**, գ. zeugma (հուն.). կատարյալ բանի կամ շարամանության (նախադասության) տեսակ. «Իսկ զեօմային լինի զանազանութիւնն երբեմն դիմաց միայն, որպէս *ես կու ընթեռնում եւ դու*» (ՀՔ, ՅՔ, 209), “*ζεύγμα. adiunctio*” (Pr, IG, XVII, 183):

**Զօրեղական** ա. գորավոր. «Արդ ըստ առաջին կերպին Աստուած է անհուն ոչ ըստ տարաչափական քանակութեանն, որ ոչ է ի նմա, այլ ըստ զօրեղական քանակութեանն, որ ի նմայն է» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 10ա), “Primo modo Deus est infinitus, non secundum quantitatem dimensiūam, quae in Deo non est, sed secundum quantitatem *virtualem*, quae in ipso est” (AM, CThV, 10):

## Է

**Էականապէս** մ. իբրև էակ, *essentialiter*, տե՛ս անձ-նականապէս բառահոդվածի օրինակը:

**Էլենքուս**, գ. լատ. *elenchus*-ից. հերքում՝ որպէս մոլորեցնող կամ պատրանքներ պարունակող դատողության տեսակ. «Էլենքուսն է հակասական հավաքաբանութիւն միոյ և նոյնի» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 336ա), “*Elenchus* est sillogismus contradictionis unius et eiusdem” (PH, T, VII, 161-62):

**Էսենսիա**, գ. էություն. «Առ յոյնս են չորս բառք, այսինքն ուզիա, ուզիօզիս, իփօսթազիս և փրօզօփօն. և առ լատինս ասին այսոքիկ, էսենսիա, սուպսթանսիա, սուպսիսթենսիա և փէրսօնա. իսկ ի հայս անուանին, էութիւն, գոյացութիւն, ենթադրութիւն և անձն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 9ա), “Apud Graecos quatuor sunt vocabula, scilicet *vsia*, *vsiosis*, *hypostasis*, *prosopon*: haec apud Latinos *aequipollent* istis quatuor, videlicet *essentia*, *substantia*, *subsistentia*, *persona*” (AM, CThV, 9):

**Էքսէնսիվում**, գ. տրամաբանության անկատար գործիքի տեսակ, գործածված է փոխառյալ ձևով (ԲԲ, Դ, ՄՄ 69, 312բ), նաև՝ հայերեն կրկնակով. «գաղափարն, որ է այս՝ յորժամ միով մասնականան հաւաստի միւս այլ մասնականն վասն նմանութեան ինչ, որ գտանի ի նոսին» (ԲԲ, Դ, ՄՄ 2382, 345ա),

“*Exemplum est quando per unum particulare probatur aliud particulare propter simile repertum in ipsis*” (PH, T, V, 58):

## Ը

**Ընդհանրականաբար**, մ. ընդհանուր կերպով. «ոչ է... յատկապէս, այլ ընթանրականաբար» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 105ա), “non in specie, sed *in genere*” (AM, CThV, 127):

**Ընդունողական**, ա. ընդունելի, ընկալելի. «է սկիզբն իմն ամենասուրբ պատուրիանացն սուրբ գործոյն առ ի յընդունողական դիպողութիւն նոցին՝ տեսակաւորելով զշնչաւոր ունակութիւնս մեր» (ԹԱ, ՅՏՔ, Ուր, 139), “est quoddam principium sanctissimorum mandatorum sacrae actionis, ad eorum *susceptivam* opportunitatem formans nostros animales habitus” (ThA, STh, III, q.66, a.1, ad1):

**Ընկերակցական**, ա. ընկերային, հասարակական. «Զի մարդ բնականապէս է ընկերակցական կենդանի» (ԹԱ, ՅՏՔ, Ուր, 133), “quia homo naturaliter est animal *socialis*” (ThA, STh, III, q.65, a.1, co.):

**Ընտրողական**, ա. շաղկապի տեսակ. «Ընտրողական է, որ ի յերկուց առաջ եղելոցն զմինն ընտրեցէ, հիկէն *առաւել քան*» (ՀՔ, ՅՔ, 187), “*Disertivae vel electivae sunt, quando diversis propositis aliquid ex eis nos eligere ostendimus, ut ‘dives esse volo quam pauper’*” (Pr, IG, XVI, 98):

## Թ

**Թեզիս**, գ. (հուն.). դրույթ, գիտական առաջադրություն՝ թեզիս. «Եւ իփօթէթիկայն ասի յունարէն աբ իփօսէ, որ է ի ներքոյ, և ի թեզիսէ, որ է եղումն, այսինքն ի ներքոյ եղումն»

(ՄՄ69,289ա), “Et dicitur ypotetica ab ‘ypos’, quod est sub, et ‘thesis’, quod est positio, quasi suppositiva” (P.H.,TI,8-9):

**Թեմթաթիվա**, գ. սիլլոգիզմի տեսակ. «գ տրամաբանութիւն է թեմթաթիվօ» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 312բ), նաև՝ հայերեն կրկնակով. «Իսկ փորձող հաւաքաբանութիւն է, որ յառաջ գայ ի հաւաստականաց առաջարկութեանց պատասխանողացն» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 314ա), “*Temptativus autem sillogismus est qui est sillogizatus ex probabilibus respondententi*” (PH, T, VII, 90-91):

**Թխակն**, ա. թխաչյա, թուխ աչքեր ունեցող. «Ամեննին թխակն՝ զտկարն և զվատոյժն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 37ա), «*Oculi pure nigri significant imbecillem*» (AM, CThV, 47):

**Թիրական**, ա. թեքական՝ խոնարհված կամ հոլովված. «Ասելի է, թէ բացերութիւնն է երկակի, այսինքն կատարեալ կամ անկատար. կատարեալ է ի բայէ պարզաբար և ի յուղականն անուանէ, իսկ անկատարն լինիցի ի յուղական անուանէն և ի թիրական բայէն» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 169բ), նաև՝ «թիրական անուն» (անդ):

**Թշուառականապէս**, մ. թշվառ կերպով. «Քանզի յորժամ անկարգաբար ամբարձ զինքն ի վերո ինքեան, անկաւ թշուառականապէս ի ներքո ինքեան» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 40բ), “*Dum enim inordinate erexit se supra se, cecidit miserabiliter infra se*” (AM, CThV, 50):

**Թօփիզիքօրում**, գ. “topicorum”, Տոպիկա (Արիստոտելի աշխատությունը). «զիրքն թօփիզիքօրում, որ կոչի տեղեաց» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 268ա):

Ժ

**\*Ժամանակական**, ա. մակբայի տեսակ. «Ժամանակականք, հիբար այսօր, երեկ, վաղն, յեռանդն, այժմ, յայնժամն,

կանխաւ, երբեմն, յորժամ, արդէն իսկ, միշտ, հանապազ, վաղորդեան, երեկուն, արշալուրշն» (ՀՔ, ՅՔ, 181-82), “*temporalia...*, ut pridem, nuper, antea, nudiustertius, ... nunc, praesto, ... modo” (Pr, IG, XV, 81):

**Ժամանակաորայէս** մ. temporaliter. Ժամանակավոր կերպով. տե՛ս առնչականապէս բառահոդվածի օրինակը:

**\*Ժողովական,** ա. մակբայի տեսակ. «Ժողովականք, հիգան համանգամայն, միանգամայն, հետ իրերաց» (ՀՔ, ՅՔ, 182), “*congregativa*, ... ut simul, una” (Pr, IG, XV, 87):

## Ի

**Ինդուքսիօ,** գ. տրամաբանության անկատար գործիքի տեսակ. «Ինդոքսիայն է, յորժամ ի մասնականացն բաւականապէս թուեալ եզրակայանայ ընդհանրական առաջարկութիւնն, որպէս Սոկրատէս ընթանայ, Արիստոտէլ ընթանայ, յայսպէս և այլոցն, ապա ուրեմն ամէն մարդ ընթանայ» (ԲԲ, Դ, ՄՄ 1685, 158բ), “*Inductio est progressus a particularibus ad universale. Ut Sortes currit, Plato currit, Cicero currit, et sic de singulis ergo omnis homo currit*” (PH, T, VII, 161-62):

**Ինօփինափիլէ,** մ. սոփեստական տրամաբանության տեսակ. առնչությունը բնագրային սահմանմանը հիմնականում իմաստային է. «այն, ինչ որ անհաւանական է և անախորժ մարդկային մտաց» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 316բ), “*Inopinabile est quod est contra opinionem omnium aut plurium aut sapientum, et horum vel omnium vel plurium vel maxime notorum*” (PH, T, VII, 94):

**Իշխողութիւն,** գ. իշխող լինելը, իշխանություն. «յաղագս իշխողութեան հրեշտակացն ի վերա մարմնական ստեղծութեան» (ԹԱ, ՀՀՅՀ, ՄՄ 3487, 128ա), “*de praesidentia Angelorum super creaturam corporalem*” (ThA, STh, I, գ.110, pr.):

**Իփօթէթիկայ**, գ. դատողության ենթադրական տեսակը. «Նախադասութիւն իփօթէթիկայ է այն, որ ունի բ քաթէգորիկա նախկին մասունք իւր, որպէս թէ մարդն կու ընթանայ, մարդն կու շարժի» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 289ա), “*Propositio ypotetica est illa que habet duas propositiones cathedgoricas principales partes sui, ut 'si homo currit, homo movetur'*” (PH, T, I, 8-9):

**Իփօթազիս**, գ. (հուն.) էություն. «Քանզի ի միաւորութենէ է հոգւոյն և մարմնոյն, պատճառի ի մեզ անձն կամ իփօթազիս մարդոյ» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 17ա), “*Ex unione enim animae et corporis in nobis causatur persona vel hypostasis hominis*” (ThA, STh, III, q.2, a.5, arg.1):

## Լ

**Լափիս**, գ. լատ. lapis-ի տառադարձված ձև՝ քար. «Նոյն են կիրքն առ ամէնեսեանն, զի թէպէտ լափիսն և քարն են ձայնք զանազանք, զի մինն լատինարէն և միւսն հայերէն, այլ նմանութիւն նոցին ձայնիցն նոյն է առ երկոսսեանն» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 156ա-բ):

**Լեզիս**, գ. lexis (հուն.). բառ. տե՛ս դիալեթիկայ բառահոդվածի օրինակը:

**Լօջիքայ**, գ. տրամաբանություն. «քերականութիւնն է շուրջ զյարմարաւն և զանյարմարաւն՝ սապէս և լօջիքայն շուրջ զճշմարիտիւն և զստովն» (ՊԱ, ՀՀՆՊ, ՄՄ 1684, 3բ), նաև՝ «լօճիկայ» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 268ա):

**Լօջիքայական**, ա. տրամաբանական. «Երեքկին է բաղադրութիւնն, զի ոմն է բնական, այսինքն որ է ի նիւթոյ և ի տեսակէ, ոմն քանակական, որ է յերկուց քանակաց, և ոմն լօջիքայական, որ է ի սեռէ և ի տարբերութենէ» (ՊԱ, ՀՎՎՍ, ՄՄ 1684, 114ա):

**Լօջիքոս**, գ. տրամաբան. «Ասելի է, թե անդ խօսի փիլիսոփոսն, որպէս մեթաֆիզիքոսն, որ նկատէ պատճառ իրաց և ոչ զբանս նոցին, իսկ լօջիքոսն նկատէ զբանս իրացն» (ՊԱ, ՀՀՆՊ, ՄՄ 1684, 33բ), նաև՝ «լօջիկոս» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 44բ):

**Լօքօս**, գ. logos (հուն.). խոսք. տե՛ս դիալեկտիքայ բառահոդվածի օրինակը:

## Խ

**Խաւարամածութիւն**, գ. խավարով պատված լինելը. «Արդ այսպէս մաքրեսցին տարերք, մինչ զի... սառուցական ցրտութիւնն ի ջրոյն, ծանրութիւնն և խաւարամածութիւնն ի հողոյն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 113բ), “Ita autem purgabuntur elementa, quod... ab aqua glacialis frigiditas, a terra vero grauitas et opacitas” (AM, CThV, 139):

**Խրախակցութիւն**, գ. ուրախակից լինելը. «հրեշտական խրախակցութիւն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 100բ), “Angelica conuiuatio” (AM, CThV, 121):

## Մ

**Մխնական**, ա. ծխնիի պէս՝ իբրև լատ. cardinalis-ի (կարդինալ) մեկնաբանություն. «Արդ չորեքեան առաքինութիւնքս այս կոչին կարտինարականք, այսինքն ծխնականք, զի որպէս դուռն շրջի ի ծխնոջն, և այսպէս և ի սոցին ուղղի և շրջի կեանք մարդոյն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 84ա), “Istae quatuor virtutes appellantur *cardinales*, quia sicut ostium vertitur in cardine, sic in his vertitur, et regitur vita hominis” (AM, CThV, 101):

**Կամարայունք**, ա. կամարաձև հոնքեր ունեցող. «Կամարայունքն, եթե հասցե մինչև յոնկունսն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 37ա), “*Supercilia arcuata, quae conjunguntur usque ad cornu nasi*” (AM, CThV, 46):

**Կամարաձևություն**, գ. կամարի ձև ունենալը. «Իսկ թե կամարաձևությունն ձկտեսցի դեպի քունսն, նշանակե՛ զհեղզն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 37ա), “*Si autem arcuositas declinat ad tempora, et gibbositatem genarum, significant negligentem*” (AM, CThV, 46):

**Կանխագիտենալ**, չբ. կանխապես իմանալ. «Աստուած նախատեսանէ և կանխագիտէ» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 199բ):

**Կատարունական**, ա. կատարողական, կիրառական. «Ուստի ենթադրեալն նշանակի որպէս բոլոր ունօղ բնութեան իբր գտեսակական և զկատարունական մասն իւր» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 14բ), “*Unde suppositum significatur ut totum, habens naturam sicut partem formalem et perfectivam sui*” (ThA, STh, III, q.2, a.2, co.):

**Կարգառող**, ա. կարգավորող, տնօրինող. «Յաղագս որպիսութեան կարգառողացն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 109ա), “*De qualitate ordinandorum*” (AM, CThV, 132):

**\*Կարծողական**, ա. մակբայի տեսակ. «կարծողականք, որպէս թերևս, բռունք, ինձ թուի, այսպէս կարծեմ» (ՀՔ, ՅՔ, 182), “*dubitativa forsan, fortassis et fortasse, fors, forte*” (Pr, IG, XV, 86):

**Կարծողօրէն**, մ. կարծեցյալ, թեական. «Ծնեալ է որդին աստծոյ ոչ կարծօղօրէն իբր ունելօվ երևակայական մարմին, այլ ճշմարիտ մարմին» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 34ա), “*natus est Dei filius non putative, quasi imaginatum corpus habens, sed corpus verum*” (ThA, STh, III, q.2, a.5, arg.1):

**Կարծոտ**, ա. կասկածոտ, կասկածամիտ. «Ձայն բարակ և իբր սգաւորի, ցուցանեն զոխուրն և զկարծոտն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 37բ), “Vox tenuis et quasi lugubris, tristem indicat et *suspiciosum*” (AM, CThV, 47):

**Կարտինարական**, ա. կարդինալական. «Աստուածաին առաքինութիւնքն կալեալ լինին հոմամբ, իսկ կարտինարականքն ստացմամբ» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 77բ), “Virtutes theologiae habentur per infusionem, *cardinales* vero per acquisitionem” (AM, CThV, 94):

**Կիսակուրծ**, ա. ոչ լիովին կերած, կիսաքաղց. «կամեսցի ունել զնա այնպիսի, որպէս յորժամ էր կիսակուրծ ի յորդանց», (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 116ա), “vellet habere tale sicut fuit quando *dimidium comestum* fuit a vermibus” (AM, CThV, 142):

**Կիսատել**, նբ. կիսել, կես դարձնել. «Երրորդն է թէ խոսովանողն կիսատեաց զխոստովանութիւնն, քանզի պիտո է միում խոստովանել զբոլորն զոր ինչ ունիցի ի մտի» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 105ա), “Tertius est si confitens *dimidiauit* confessionem; oportet enim quod vni fiat confession integer omnium, quae habentur in memoria” (AM, CThV, 127):

**Կուսապղծութիւն**, գ. անպատվութիւն. «Իսկ կոյս որ յազգէ քահանայից՝ վասն կուսապղծութեանն այրեցեալ լինէր» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 133բ), “Virgo autem de genere sacerdotali propter *stuprum* occidebatur” (ThA, STh, III, q.29, a.1, ad4):

**Կրկնակութիւն**, գ. կրկնելը, երկրորդելը. «Վասն այսորիկ ոչ է աւելորդ կրկնակութիւն բանիցն, յորժամ ի խորհուրդսն մակյաւելին բանքն երևելի իրողութեանցն, զի մինն ի նոցանէ բացայայտէ միւսովն» (ԹԱ, ՅՏՔ, Ուր, 100), “Et ideo non est superflua *ingeminatio* verborum cum in sacramentis rebus visibilibus verba adduntur, quia unum eorum determinatur per aliud” (ThA,

STh, III, q.60, a.6, ad1):

**Կրողական**, ա. passivus. կրավորական. տե՛ս առնողական բառահոդվածի օրինակը:

**Կրողականապես**, մ. որպես կրող, կրավորական կերպով. «մնալովն կոյս կարէր ծնանել ոչ առնողականապես, այլ կրողականապես» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 150բ), “manens virgo posset generare, non quidem active sed *passive*” (ThA, STh, III, q.32, a.4, ad1):

## Հ

**Հակադարձօրէն**, մ. հակադարձ լինելով, հակադարձությամբ. «ժամանակն և տեղին հակադարձօրէն» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 61բ):

**Հակակատարբերութիւն**, գ. ներհակ տարբերություն. «հակակատարբերութիւնք, որպէս յորժամ ապի կենդանին ոմն է բանական, ոմն անբան» (ՊԱ, ՀՀՆՊ, ՄՄ 1684, 5բ, նաև՝ անդ, 26բ):

**Հակակատեղի**, գ. տեղի բացասումը. «Եւ ոչ ի հակակատեղիս անցանելով՝ զի տեղին է մարմին, այլ ոչ շարժի տեղօրէն, եթէ ոչ մարմինն, ապա ուրեմն ոչ է մարմին» (ՊԱ, ՀՎՎԱ, ՄՄ 1684, 121բ):

**Հակատարաբաժանել**, նբ. տարաբաժանելով հակադրել. «հակատարաբաժանին ի միմեանց» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 104ա):

**Համաբնակ**, ա. ամբողջովին բնական. «կրկին է ճանաչումն ի հրեշտակս. մինն է բնական, ըստ որում էութեամբն իւրեանց ճանաչեն զինքեանս և նմանությամբն համաբնակ զայլ իրս» (ԹԱ, ՀՀՅՀ, ՄՄ 3487, 97ա), “in Angelis est cognitio duplex. Una quidem naturalis, secundum quam cognoscunt res tum per

essentiam suam, tum etiam per species *innatas*” (ThA, STh, I, q.57, a.5, co.):

**Համագոյացութիւն**, գ. գոյակից լինելը. «գՔրիստոս յղացեալ ի հոգւոյն սրբոյ ըստ այսմ յեղանակի, որ արարողութիւն հոգւոյն սրբոյ վերածիցի առ առեցեալ մարմինն, իսկ համագոյացութիւնն առ առօղ անձն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 158բ), “Christum esse conceptum de spiritu sancto, hoc modo quod efficacia spiritus sancti referatur ad corpus assumptum, *consubstantialitas* ad personam assumentem” (ThA, STh, III, q.32, a.2, co.):

**Համագանգուածութիւն**, գ. հավասար զանգված ունենալը, համաչափություն. «Ըստ այսմ եղին ոմանք զմիութիւնն եղեալ ի Քրիստոս ըստ կերպի շփոթման, որ է առանց կարգի կամ ըստ կերպի համագանգուածութեան, որ է կարգաւ հանդերձ» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 9ա), “Et secundum hoc, posuerunt aliqui unionem esse per modum confusionis, quae scilicet est sine ordine; vel *commensurationis*, quae est cum ordine” (ThA, STh, III, q.2, a.1, co.):

**Համաթագաւորել**, չբ. թագակից լինել, միասին թագավորելը. «Եվ միւս այլ կերպիւ ասի Քրիստոսի նստել ընդ աջմէ հօր աստծոյ, ըստ այնմ որ համաթագաւորէ ընդ հօր» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 270ա), “Alio modo dicitur Christus sedere in dextera patris, inquantum patri *conregnat*” (ThA, STh, III, q.58, a.1, co.):

**Համաժողովումն**, գ. համահավաքում, մեկտեղում. «բազում անուանք նշանակեն գնոյն իրն, որպէս յայտ է ի համաժողովումն սահմանին» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 213բ):

**Համախառնել**, նբ. իրար միացնել, միախառնել. «Վասն որոյ ի տունկս, ի յորս համախառնին երկոքեան զօրութիւնքն, ոչ է զանազանութիւն արուի և իգի» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 150բ),

“Propter quod in plantis, in quibus utraque vis *commiscetur*, non est distinctio maris et feminae” (ThA, STh, III, q.32, a.4, co.):

**Համահաւասարիլ**, չբ. համահավասար դառնալ, ամբողջովին հավասարվել. «Քանզի միջակ ստեղծուած ոչ պարտի համահաւասարիլ ստեղծողին, այնու որ լինիցի ամենուրեք» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 99բ), “Cum enim sit creatura, non debet *aequari* Creatori in hoc quod sit vbique” (AM, CThV, 120):

**Համահաւասարութիւն**, գ. ամբողջովին հավասար լինելը. «բաղադրեալն է ի ներհակաց, որոց պահպանկութիւնն է բարեխառնութիւն և համահաւասարութիւն» (ՊԱ, ՀՎՎՍ, ՄՄ 1684, 134ա):

**Համահեղումն**, գ. հորդությամբ հոսելը՝ լցվելը. «Անդ յղփութիւն փարթամութեանց, ի ներս հեղումն հեշտութեանց, համահեղումն պատուոց» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 120ա), “Ibi affluentia diuitiarum, influential deliciarum, et *confluentia* bonorum” (AM, CThV, 148):

**Համահետևիլ**, չբ. նույն ճանապարհով ընթանալ, հետևել, բխել. «ապա ուրեմն համահետևի, զի միաւորութիւնն եղեալ իցէ յանձն բանին և ոչ ի բնութիւնն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 15ա), “*consequens* est quod unio sit facta in persona verbi, non autem in natura” (ThA, STh, III, q.2, a.2, co.):

**Համահետևութիւն**, գ. հաջորդականություն, հետևություն. «Եթէ աստուած նախատեսէ ասյմիկ, ի հարկ է լինիցի, կրկին է, զի շարամանեալ է ճշմարիտ և բաժանեալ սուտ, քանզի է անդ հարկաւորութիւն համահետևութեանն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 17ա), “Si Deus praeuidet hoc, hoc necessario eueniet, quia coniunctim est vera, diuisim falsa: et ibi necessitas *consequentiae*” (AM, CThV, 19):

**Համահետևումն**, գ. հաջորդելը, հետևելը. «համահետևումն ոչ է, եթէ ոչ ի յատուկ իմն նիւթս» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 181ա):

**Համաձևացուցանողական**, ա. միևնույն ձևով, կերպարանքով, նմանակից. «է նշան համաձևացուցանողական» (ԹԱ, ՅՏՔ, Ուր, 118), “signum est *configurativum*” (ThA, STh, III, q.63, a.3, ad2):

**Համաձուլեալ**, ա. միաձուլված. «ի յաստուածային կամ մարդկային զօրութենէն լինէր յամաձուլեալ մի զօրութիւն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 98ա), “ex virtute divina et humana esset *conflata* in Christo una virtus” (ThA, STh, III, q.19, a.1, co.):

**Համաճառական**, ա. համաբանական. «համաճառական իմն եզրակացութիւն» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 48բ):

**Համաճառութիւն**, գ. համաբանություն. «Եւ զայն ևս տրամատէ յերկուս, ի յառաջինն բացայայտէ զսահմանն տեսակին, ի յերկրորդն ի ներս ածէ համաճառութիւն իմն» (ՊԱ, ՀՀՆՊ, ՄՄ 1684, 14բ):

**Համամարտութիւն**, գ. հակառակություն, կռիվ, մարտ. «Այլ արդ տագնապն երևի ցուցանել համամարտութիւն իմն ոգոյն դիմելոյն առ ներյականս» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 96բ), “Sed agonia videtur importare quandam *impugnationem* animi in contraria tendentis” (ThA, STh, III, q.18, a.6, arg.3):

**Համայարմարիլ**, չբ. լիովին հարմար գալ, պատշաճել, համապատասխան լինել. «Այլ գիտելի է, զի յորժամ համայարմարի ինչ ստեղծողին և ստեղծուածին, սակայն գերազանցապէս պատկանի ստեղծողին» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 13բ), “Quando aliquid creaturae *convenit*, quod competit creatori, tamen excellentius de Deo dicitur” (AM, CThV, 14):

**Համայաւելումն**, գ. ամբողջական հաձելում, «ոչ իբր զհամայաւելումն իմանամք զեղանակ միատրութեանն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 23բ), “non secundum *coappositionem* coniunctionis intelligimus modum” (ThA, STh, III, գ.3, ա.1, ad1):

**Համայաւետակցել**, նբ. մշտապես մերձ՝ միասին լինել. «համայաւետակցի հօրն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 158ա), “*consempiternum* patri” (ThA, STh, III, գ.35, ա.2, ad2):

**Համայաւիտենական**, ա. հաձերժական. «Համայաւիտենականք են աստուածային անձինքն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 9ա), “*Coaeternae quoque sunt personae diuinae*” (AM, CThV, 8):

**Համանշանակել**, նբ. հաձասարապես նշանակել. «ոմանք նախկնաբար նշանակեն զաստուածային էութիւնն, և համանշանակեն զներգործութիւնն ի ստեղծուած» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 14ա), “*quaedam principaliter significant essentiam divinam, et connotant effectum in creatura actu*” (AM, CThV, 15):

**Համանշանակութիւն**, գ. ընդհանուր նշանակություն. «այլայլումն ի վախճանէ ասութեանն, իբր թէ բազում անգամ, փոխէ զհամանշանակութիւնն» (ԹԱ, ՅՏՔ, Ուր, 102), “*variatio autem ex fine dictionis ut plurimum non mutat significationem*” (ThA, STh, III, գ.60, ա.7, ad3):

**Համանստել**, չբ. միասին նստել. «հեշտութիւն և ուրախութիւն լինիցի ինձ ընդ համանստելն ընդ քեզ արտաքարշեալ ի մարդկային տեսութեանց» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 265բ), “*delectatio et laetitia erit mihi in consessu tuo humanis obtutibus subtracto*” (ThA, STh, III, գ.57, ա.1, ad2):

**Համաշարակցութիւն**, գ. անընդհատ հաջորդակաւնությամբ միմյանց կցվելը, հարակցություն. «պահանջի բացաւատեալ կարգ բանից և համաշարակցութիւն նոցին» (ԹԱ, ՅՏՔ,

Ուր, 102), “requiritur determinatus ordo verborum, et etiam orationis *continuitas*” (ThA, STh, III, q.60, a.8, arg.3):

**Համաշօշափումն**, գ. հպում, շոշափում. «Եվ այսպիսի ազդողական համաշօշափումն բաւական է առ բան ներգործութեանս» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 264ա), “Et talis *contactus* virtualis sufficit ad rationem huius efficientiae” (ThA, STh, III, q.56, a.1, ad3):

**Համառինչ**, գ. ընդհանուր առինչ՝ առնչակցություն, հարաբերակցություն, հմպտ. լատ. *correlatio*. «ի միում համառնչոյն իմացեալ լինի միւսն» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 68բ-69ա):

**Համառնչական**, ա. ընդհանուր առնչակից, հարաբերակից. «ոչ ամենայն առնչականք ասացին առ հակադարձն, զոր աւրինակ թէ թնոյն բացատրեսցի համառնչական հաւն, այսք ոչ հակադարձին» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 72ա):

**Համասիրելի**, ա. հավասարապէս սիրելի. «Եւ արդ զի հայրն կարէր, զիտէր և կամէր զինքն լիապէս հաղորդել, արար զայս յաւիտենականապէս, այսինքն ունելով զսիրելին և զհամասիրելին, որ է որդին և հոգին սուրբ» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 8ա), “Cum igitur pater potuerit, sciuerit, et voluerit se summe *comunicare*, hoc fecit aeternaliter, scilicet habendo, dilectionem et *dilectum*, hoc est filium, et Spiritum Sanctum” (AM, CThV, 7):

**Համաստեղծեալ**, ա. միասին ստեղծված. «լինեին համաստեղծեալք ընդ մեզ» (ՊԱ, ՀՀՆՊ, ՄՄ 1684, 36բ):

**Համատեսակութիւն**, գ. միևնույն տեսակին պատկանելը, համաձևություն. «Քրիստոս ըստ այնմ որ մարդ ասի գլուխ եկեղեցոյ վասն երից պատճառաց, ... բ. վասն համատեսակութեան բնութեանն, զոր ունի գլուխն առ անդամս» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 64ա), “Christus inquantum homo dicitur caput

ecclesiae triplici ratione. ... Secundo, propter *conformitatem* natuare quam habet caput ad membra” (AM, CThV, 79):

**Համատեսություն**, գ. ընդհանուր տեսողություն, միասին տեսնելու կարողություն (լատ. բնագրում բացակայում է). «Նմանապես և ոչ հրեշտակք ասին առնել բաժինք, քանզի ի հարսանիսն լինի հաւանումն ոգոցն և միաւորութիւն և համատեսութիւն բնութեանց» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 116բ), “Similiter nec Angeli dicuntur habere dotes, quia cum in nuptiis sit consensus animorum, et vnio corporum” (AM, CThV, 143):

**Համատրամատող**, առհասարակ զանազանող, ա. «Թէպէտ տարբերութիւնք համատրամատողք սեռին են համանգամայնք յինքեանս, սակայն սեռն ոչ է համանգամայն ըստ նոսին» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 103բ):

**Համատրոհել**, նբ. առհասարակ տրոհել, զանազանել. «Թոշունն, հետևակն և ջրայինն համատրոհեն զկենդանին» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 103բ):

**Համարժան**, ա. լիովին արժանի. «Երեքկին զանազանի արդիւնքն, այսինքն ի պատշաճորէն, ի յարժանաւորն, և ի համարժանն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 75ա), “triplex distinguitur meritum, scilicet congrui, digni et *condigni*” (AM, CThV, 91):

**Համարժանաւոր**, ա. նույն արժեքն ունեցող, համարժեք, համապատասխան. «Համարժանաւոր արդիւնն է հաւասարութիւն արդեանցն առ հատուցումն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 75ա), “Meritum *condignus* dicit aequalitatem meriti ad remunerationem” (AM, CThV, 91):

**Համարժանաւորութիւն**, գ. նույն արժեքն ունենալը. «Եւ արդ զի համարժանաւորութեամբն շահիմք զկեանս յաւիտեանականս, բազում են պատճառք» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 77ա), “Quod autem ex *condigno* mereamur vitam aeternam multae sunt

causae” (AM, CThV, 93):

**Համափակումն**, գ. ամբողջովին փակելը. «Դարձեալ ձևն կերպիւ մի է համափակումն գծիցն, որպէս յայտ է ի բոլորակն, ի յեռանգիւնին, ի քառանգիւնին, և ի սոյնպիսիս, և ըստ այսմ է որակութիւն» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 83ա):

**Համաքատակութիւն**, գ. համանմանություն. «ոչ ունիցին համաքատակութիւն, ոչ ի համահետևութիւնն, և ոչ ի հակադրութիւնն» (ՊԱ, ՄՎՊ, ՄՄ 1684, 208բ):

**Համաքարշել**, նր. ժողովել, գումարել, ընդգրկել. «Երևէ թէ Քրիստոս համաքարշեալ իցէ զմարմնական պակասութիւնս: Քանզի զայն ասեմք համաքարշեալ, զոր համանգամայն ընդ բնութեանն և ընդ ծննդեանն քարշեմք» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 75ա), “Videtur quod Christus defectus corporales *contraxit*. Illud enim *contrahere* dicimur quod simul cum natura ex origine trahimus” (ThA, STh, III, q.14, a.3, arg.1):

**Համբերողագոյն**, ա. առավել համբերող. «համբերողագոյն առ վաստակն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 100բ), “*patientior ad laborem*” (AM, CThV, 121):

**Համենթակայացեալ**, ա. ընդհանուր բաղկացությամբ, բաղադրված. «լինել ի յաշխարհի ընդհանրական հոգի, որ անճառելի շարժմամբ կենդանացուցէ զամենայն սերմանիս, և ոչ իցէ համենթակայացեալ, այլ տայ կեանս ծնանելեացն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 158ա), “*esse in mundo animam generalem, quae sic ineffabili motu semina cuncta vivificet ut non sit concreta cum genitis, sed vitam praestet ipsa gignendis*” (ThA, STh, III, q.35, a.2, ad1):

**Համեստաբարոյ**, ա. համեստ՝ պարկեշտ բարք ունեցող. «Աչք ի յորս իբր զշիտ պայծառութեան լուսաւորէ, ցուցանէ զհամեստաբարոյն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 37ա), “*Oculi qui tanquam*

guttulae nitoris nitidi relucet, *mores compositos* indicant” (AM, CThV, 47):

**Համիմանալ**, չբ. ամբողջապես հասու լինել, խորությամբ իմանալ. «Որպես և աստուած ասի տէր առնչութեամբն, որ համիմացեալ լինի ընդհանրական առնչութեանն, որով ստեղծուածս նուաճի ընդ աստծով» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 160բ), “Sicut Deus dicitur dominus relatione quae *cointelligitur* reali relationi qua creatura subiicitur Deo” (ThA, STh, III, q.35, a.5, co.):

**Համընթանալ**, չբ. միասին ընթանալ, զուգակցել, ներդաշնակել. «յամընթանան ի մի անձն որդւոյն աստծոյ» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 19բ), “*conveniunt* in una persona filii Dei” (ThA, STh, III, q.2, a.7, co.):

**Համընթացական**, ա. միասին ընթացող, զուգակից. «Վերջինն դատաստանի ոմանք են յառաջընթացականք, ոմանք իբր համընթացականք, և ոմանք հետևողականք» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 110ա), “Finale iudicium quaedam sunt antecedentia, quaedam *concomitantia*, quaedam sequentia” (AM, CThV, 134):

**Համյանդիմանակաց**, ա. հանդիման եղած. «սակայն է աստուածային զօրութիւն համյանդիմանակաց խորհրդոյն, որ առնէ զխորհրդական ներգործութիւնն» (ԹԱ, ՅՏՔ, Ուբ, 111), “est tamen virtus divina sacramento *coassists*, quae sacramentalem effectum operatur” (ThA, STh, III, q.62, a.4, co.):

**\*Համր**<sup>20</sup> ա. վերբերական կապակցության տեսակ (հարաբերական բառով կազմված կապակցություն, արդի

---

<sup>20</sup> Հովհաննես Քոնեցին այս տեսակը սխալմամբ թարգմանել է «համր»՝ նկատի առնելով “mutus”-ը, մինչդեռ լատ. աղբյուրում “mutuus” է («երկկողմանի» կամ «ընդհանուր»)։ այս իմաստը հաստատվում է նաև օրինակով. «այն, որ կու ընթեռնու, կու տրամաբանէ», “ille, qui legit, disputat”:

ըմբռնմամբ՝ ստորադասական նախադասություն). «Իսկ համրն է, յորժամ մի վերբերականն վերաբերի առ միւսն, որպակ *այն, որ կու ընթեռնու, կու տրամաբանե*» (ՀՔ, ՅՔ, 210), “*Mutua relatio est illa, quando unum relativum tenetur alteri relativo, ut ille qui legit, disputant*” (S, Th, 357):

**\*Հաստատական,** ա. մակբայի տեսակ. «հաստատականք, որգան ստոյգ, ոստուար» (ՀՔ, ՅՔ, 182), “*confirmativa, ut profecto, scilicet, quipped, videlicet, nempe*” (Pr, IG, XV, 85):

**Հաւասարամտութիւն,** գ. անվորդովություն, համբերատարություն. «գարքայութիւն աստծոյ ոչ լինել ի կերակուր և յըմբելի, այլ ի հաւասարամտութիւն տանելովն գոծուարինս» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 188ա), “*regnum Dei non esse in esca et potu, sed in aequanimitate tolerandi*” (ThA, STh, III, q.40, a.2, ad1):

**Հաւաստական,** ա. շաղկապի տեսակ. «Հաւաստական է, որ հաւաստէ զիրն, որպէս *այոյ, հայ, հայնց*» (ՀՔ, ՅՔ, 187), “*Approbativae sunt, quae approbant rem... ‘Equidem merui nec deprecor’*” (Pr, IG, XVI, 97):

**Հեռացուցանողական,** ա. հեռավոր. «Վասն այսորիկ՝ այլք ասացին, թէ թլփատութեամբն տուեալ լինէր շնորհ ըստ ներգործութեանցն հեռացուցանողական մեղացն, այլ ոչ ըստ դրական ներգործութեանն» (ԹԱ, ՅՏՔ, Ուր, 114), “*Et ideo alii dixerunt quod per circumcisionem conferebatur gratia quantum ad effectus remotivos culpaе, sed non quantum ad effectus positivos*” (ThA, STh, III, q.62, a.6, ad3):

**Հոմանունեալ,** ա. համանուն դարձած, համանվանական հարաբերության մեջ գտնվող. «Սահմանելով գիտմանունսն՝ ունէր նկատումն առ հոմանունեալն իրսն» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 42ա):

## Զ

**Ձեռնախաղութիւն**, գ. ըմբշամարտ, մրցություն, պայքար. «Մեղանչել լսելեօք, տեսանելեալք, ճաշակելեալք, հոտոտելեալք, և շօշափելեօք, ձեռնախաղութեամբ, համբուրիւ, ընծալիւ, ակնարկութեամբ, պատգամաւորութեամբ, թղթագրութեամբ» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 55բ), “delinquere visu, auditu, odoratu, gustu, et tactu, *lucta*, osculis, muneribus, itineribus, nutibus, mendaciis, scripturis” (AM, CThV, 70):

**Ճրիական**, ա. ձրիաբար տրված, անհատույց. «Ասելի է, թէ քահանայապետութիւնքն մնասցեն միշտ՝ ըստ աստիճանի պատուոյն և ըստ պատուականութեան ձրիական պարգևին և բնութեանն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 25բ), “Sciendum est quod hierachiae semper stabunt,... quantum ad gradum dignitatis, et nobilitatem doni *gratui*, ac naturae” (AM, CThV, 31):

## Ճ

**Ճարտարամտութիւն**, գ. փիլիսոփայություն. «Զգոյշ լերուք, մի՛ ոք իցէ, որ զձեզ պատրիցէ ճարտարամտութեամբ և սնոտի խաբէութեամբ» (ԹԱ, ՅՏՔ, Ուբ, 97), “videte ne quis vos seducat per *philosophiam* et inanem fallaciam” (ThA, STh, III, q.60, a.3, arg.1):

## Մ

**Մաթեմաթիքայ**, գ. փիլիսոփայությունից անմիջապես ծագած գիտություն, որ ուսումնասիրում է քանակական հարաբերություններ. «Են նախկին մասունք ի իմաստասիրութեանն ֆիզիքայ, այսինքն՝ բնական, մեթաֆիզիքայ՝ ի վեր քան զբնականն, և մաթեմաթիքայ՝ ի վերոյ շարժման և զգալեաց» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 37բ):

**Մակաբաժանել**, նր. վերաբաժանել, կրկին բաժանել. «Դարձեալ առաջինն մակաբաժանի յերկուս» (ՊԱ, ՀՀՆՊ, ՄՄ 1684, 11ա):

**Մակատրամատել**, նր. երկրորդաբար՝ վերստին տրոհել, բաժանել. «Դարձեալ առաջինն մակատրամատի յերկուս» (ՊԱ, ՄՎՊ, ՄՄ 1684, 164բ):

**Մակատրոհել**, նր. վերտրոհել, կրկին տրոհել. «Դարձեալ զառաջինն մակատրոհէ յերիս ըստ երից բաժանմանցն տարբերութեանց» (ՊԱ, ՀՀՆՊ, ՄՄ 1684, 22ա):

**Մակյաւելեալ**, ա. հավելյալ, ավելադիր. «Եվ թէ այնց որ վերաբերին առ բան տեսակին, ոչինչ մակյաւելեալ կարեր գտանիլ» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 14բ), “Et si quidem his quae ad rationem speciei pertinent nihil aliud *adiunctum* inveniri posset” (ThA, STh, III, q.2, a.2, co.):

**Մակյաւելու**, նր. վրան ավելացնել, ավելադրել. «մակյաւելու աստէն և զերկրող տարբերութիւն» (ՊԱ, ՄՎՊ, ՄՄ 1684, 165բ):

**Մաքրափայլել**, չբ. մաքրությամբ փայլել. «արդարութեամբ հաւատոյն մաքրափայլեցի» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 10ա), “per justitaiam fidei *emundetur*” (AM, CThV, 10):

**Մեդող**, գ. (հուն. -os), միջոց, դատողության կամ ճանաչողության եղանակ. «Դիալեթիկայ է արհեստ արհեստից առ ամենայն մեդողաիցն, այսինքն զհիտութեանց սկսբունս ճանապարհ ունել» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 266ա), “Dialectica est ars [artium]<sup>21</sup> ad omnium *methodorum* principia viam habens” (P.H., TI, 1):

**Մեթաֆիզիկական, մեթաֆիզական** ա. մետաֆիզիկական, մետաֆիզիկային հաուկ. «մեթաֆիզիկական փիլիսոփոս» (ԲԲ,

---

<sup>21</sup> Բնագրի այլ տարբերակում՝ “Dialectica est ars artium...”, տե՛ս Peter of Spain, անդ, էջ 1:

ՅՀԸ, 90), «առ այլ վախճանական կարգաւորէ զկեանս իւր մերթաֆիզականն» (անդ):

**Մերթաֆիզիքայ**, գ. մետաֆիզիկա, բնագանցություն. «Այլ արդ՝ ի տեսական իւրաքանչիւր յաւելումն կամ պակասումն այլայլէ գտեսակն, որպէս ի թիվսն, ըստ այնմ որ ասէ ուրերորդ գիրս Մերթաֆիզիքայ» (ԹԱ, ՅՏՔ, Ուր, 102), “Sed in formis quaelibet additio vel subtractio variat speciem, sicut et in numeris, ut dicitur in VIII *Metaphys*” (ThA, STh, III, q.60, a.8, arg.2):

**Մերթաֆիզիքոս**, գ. մետաֆիզիկայի մասնագետ. «Այլ այսպէս պատկանի առ դիալէտիկոսն, կամ առ մերթաֆիզիքոսն» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 266բ):

**Մեղուշագոյն**, ա. հաճելի գույնով, վարդագույն. «Այլ յորժամ երևին անդ շիտք սակաւ մի մեղուշագոյն, նշանակեն զարդարամիտն, զքաջն և զուշիմն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 37ա), “Quando autem guttulae *rubentes* aliquantulum ibi sunt, et tamen nigrae apparent, animum iustum, probum, et ingeniolum ostendunt” (AM, CThV, 47):

**Մեջանցանել**, չբ. միջով անցնել, ներթափանցել. «Իսկ Որոգինէս ասէ՝ պատայեալ այնմիկ ընդ մեջանցանելով ամբոցն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 202ա), “Origenes autem dicit hoc accidisse per *interpositionem* nubium” (ThA, STh, III, q.44, a.2, ad2):

**Միջաբար**, մ. մեջընդմեջ, ընդմիջմամբ. «Արդ հոգին սուրբ բխի ի հօրէ միջաբար և անընդմիջաբար» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 6ա), “Procedit autem Spiritus sanctus a patre *mediate*, et immadiate” (AM, CThV, 5):

**Միւսակողմն**, գ. մյուս կողմ. «Իսկ քօնքրեթումն ասին հոգևորելն և մարմեղենն, որպէս ի միւսակողմն աստուած և մարդ» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 84բ), “In concreto vero dicuntur

animatum et carneum, sive corporeum, sicut ex *alia parte* Deus et homo” (ThA, STh, III, q.16, a.1, ad3):

**Միջադրություն,** գ. մեջը դնելը (չի համընկնում բնագրային interpolatio-ին, ըստ երևույթին՝ սխալմամբ նկատի է առնվել interpositio-ն) «Արդ՝ եթե յաւելումն կամ պակասումն ոչ բառնայ զգօրութիւն խորհրդոյն, երկի ըստ նոյն բանին, թէն ոչ փոխադրութիւն բանիցն կամ միջադրութիւն արտաբերութեանն» (ԹԱ, ՅՏՔ, Ուր, 102), “Si ergo additio vel subtractio non aufert sacramenti veritatem, videtur quod pari ratione nec transpositio verborum, aut etiam *interpolatio* pronuntiationis” (ThA, STh, III, q.60, a.8, arg.3):

**Մղոդական,** ա. մղիչ, հրահրիչ. «Քանզի նախքան զմարմնանալն Քրիստոսի, ունէր սատանայ ձեռն քարշողական և ձեռն մղոդական» (ԱՍ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 65ա), “Ante incarnationem Christi diabolus habuit manum attrahentem et manum *impellentem*” (AM, CThV, 80):

**Մտաթափություն,** գ. մտքից զուրկ, անմիտ լինելը. «ոչ են մկրտելի ի մտաթափութեանն» (ԹԱ, ՅՏՔ, Ուր, 174), “amentia” (ThA, STh, III, q.68, a.12, co.):

### Յ

**Յանդիմանկացուցանել,** նբ. հանդիման ցուցադրել, ներկայացնել. «Իսկ ի Գալիլեա ոչ գաղտաբար և ոչ մի անգամ կամ երկիցս, այլ մեծաւ զօրութեամբ երևեցաւ յանդիմանկացուցանելօվ զինքն կենդանի» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 259բ), “In Galilaea vero non clam, aut semel aut bis, sed cum multa potestate ostensionem sui fecit, *praebens* se eis viventem” (ThA, STh, III, q.55, a.3, ad4):

**Յառաջադիտեալ**, ա. նախատեսված, նախանշված. «Կամ գովութիւնն է վաղճան նախկնաբար յառաջադիտեալ գործոյ առաքիներեանն և գործօղին» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 53ա), “*Vel laus est finis principaliter praestitutus opera virtutis et operanti*” (AM, CThV, 66):

**Յառաջգալ**, չբ. առաջ ընթանալ. «Աստուածային մարմնառութիւնն յառաջեկն ի յաստուածային սիրոյն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 032բ), “*incarnatio divina processit ex divina caritate*” (ThA, STh, III, գ.4, ա.5, arg.2):

**Յառաջեղեւաբար, յառաջեղեւապէս**, մ. առջևից դրվելով, որպէս առաջադիր տե՛ս ենթակայաբար բառահոդվածի օրինակը:

**Յառաջընթացական**, ա. antecedens. առաջ ընթացող. տե՛ս համընթացական բառահոդվածի օրինակը:

**Յատկացեւաբար, յատկացեւապէս**, մ. հատկանալով, հատկական կերպով. «Թեպէտ ամենայն մեղք հասարակաբար է ընդդէմ աստծոյ երից և միոյն, սակայն յատկացեւաբար, ոմն ասի ընդդէմ հօր, ոմն ընդդէմ որդոյ և ոմն ընդդէմ հոգոյն սրբոյ» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 54բ), «*Qvamis generaliter omne peccatum sit contra Deum trinum, et vnum, appropriate tamen dicitur aliquod peccatum esse in patrem, aliud in filium, aliud in spiritum sanctum*» (AM, CThV, 69), տե՛ս նաև առնչականապէս բառահոդվածի օրինակը:

**Յատկացուցանել**, նբ. հատկացնել. «յետ հանդիսութեան սուրբ խորհրդոյն ի յօրհնութիւն հացին և գինոյն յատկացուցանէին ինքեանց գնուէրս իւրեանց» (ԹԱ, ՅՏՔ, Ուբ, 202), “*post celebrationem sacri mysterii et consecrationem panis et vini, suas oblationes vindicabant*” (ThA, STh, III, գ.77, ա.6, s.c.):

**Յարամնաւորիւն**, գ. հարամնայություն. «Յարամնաւու-

թիւնն է հաստատուն և մշտնջենաւոր յարակայութիւն ի քարեպէս քննեալ բանականութիւնն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 86ա), “Perseuerantia est virtus in ratione bene considerate, stabilis et perpetua permansio” (AM, CThV, 103):

**Յարամօտել**, չք. շարունակաբար մոտենալ, հաժասարվել. «Այն է շարունակ քանակութիւն, որոյ մասնկունքն շարամօտին առ հասարակ ի սահմանն, այլ արդ մասնկունք գծին յարամօտին առ մի հասարակ սահմանն, այսինքն՝ առ կէտն, ապա ուրեմն գիծն է շարունակ քանակութիւն» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 59ա):

**Յարատրոհել**, նք. մշտապէս, ըստ սովորականի տրոհել. «սա յարատրոհի երկակի, նախ շարժէ տարակուսանս, երկրորդ լուծանէ» (ՊԱ, ՀՎՎԱ, ՄՄ 1684, 120բ):

**Յաւիտենականապէս** մ. հավերժաբար. «ցուցցէ զհայր, յորմէ ինքն յաւիտենականապէս էլ ըստ աստուածային բնութեան» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 105ա), “ostenderet patrem suum esse auctorem a quo et *aeternaliter* processit secundum divinam naturam” (ThA, STh, III, q.21, a., co.):

**Յետնեալ**, ա. հետին, նվաստ. «պարտ էր ունել յետնեալ կէանս ի յաշխարհի աստ» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 186բ), “debuerit *abiecte* vivere in hoc mundo” (ThA, STh, III, q.40, pr.):

**Յիմարախօսութիւն**, գ. անմտորեն խոսելը, հիմարաբանություն. «յանդիմանել զայլս ի յայնց, զոր և ինքն գնոյնն առնէ. դատարկաբանութիւն, շատախօսութիւն, յիմարախօսութիւն, արտաբերել զբանս ծաղրականս» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 55բ), “reprehendere proximum in aliquot quod ipse facis, vaniloquium, *stultiloquium*, proferre verba otiosa” (AM, CThV, 69):

**\*Յորդորական,** ա. մակբայի տեսակ. «յորդորականք, հիզան քաջ լերուք, արի կացէք, պինդ կացէք» (ՀՔ, ՅՔ, 182), “*hortativa heia, age*” (Pr, IG, XV, 86):

## Ն

**Նախագաղափարօրէն,** մ. ըստ նախօրինակի. «Հոգին սուրբ ասի սէր և այս երբակի, այսինքն՝ էականապէս, անձնաւորաբար և նախագաղափարօրէն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 6ա), “*Spiritus sanctus amor Dei est, et hoc tripliciter, videlicet essentialiter, personaliter, et exemplariter*” (AM, CThV, 5):

**Նախագուշակել,** նբ. նախօրոք հայտնել, գուշակել, մարգարեանալ. «զի յղացումն կուսին նախագուշակեցաւ մարգարետութեամբ նախասահմանութեամբն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 134բ), “*quia conceptus virginis praenuntiatus fuit prophetia praedestinationis*” (ThA, STh, III, q.30, a.1, arg.1):

**Նախակայութիւն,** գ. նախապէս լինելը, նախորդելը. «ընդունելութիւնս այս նախասահմանեալ ցուցանէ զնախակայութիւնն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 113ա), “*hoc participium praedestinatus importet antecessionem*” (ThA, STh, III, q.24, a.1, ad3):

**Նախաճաշակեալ,** ա. նախապէս ճաշակել՝ փորձել. «ի սուրբ կուսանացն նախաճաշակեալ» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 63ա), “*a sanctis virginibus praegustatum*” (AM, CThV, 78):

**Նախաճանաչել,** նբ. նախօրոք իմանալ՝ ճանաչել. «Որպէս ասէ առաքեալն ի նոյն տեղուոջն, զորս նախաճանաչեաց և նախասայմանեաց կերպարանակից լինել պատկերի որդոյ իւրոյ» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 28բ), “*sicut apostolus ibidem dicit, quos praescivit et praedestinavit conformes fieri imagini filii eius*” (ThA, STh, III, q.3, a.8, co.):

**Նախապահանջել**, նբ. նախապես պահանջել. «Քանզի են ումանք, որ ոչ միայն խնդրին առ վարձն, այլև նախապայանջին արժանաւորութիւնն» (ԹՄ, ՅՏՔ, ՄՄ 68, 22բ), “Quaedam enim sunt quae non solum requiruntur ad praemium, sed etiam *praeexiguntur* ad meritum” (ThA, STh, III, q.2, a.11, ad2):

**Նախապահպանել**, նբ. ի սկզբանէ պահպանել, հոգալ. «Նաև նախապահպանի ի մարմնական վնասակարաց՝ փրկական կրթութեամբ խորհրդոցն» (ԹՄ, ՅՏՔ, Ուբ, 104), “*praeservatur* etiam a noxiis corporalibus per salubria exercitia sacramentorum” (ThA, STh, III, q.61, a.1, co.):

**Նախապատրաստական**, ա. իբրև նախապատրաստութիւն. «հոգին սուրբի յերանելի կոյսն արար կրկին մաքրութիւն: Մինն իբր նախապատրաստական առ յղութիւնն Քրիստոսի» (ԹՄ, ՅՏՔ, ՄՄ 68, 124ա), “spiritus sanctus in beata virgine duplicem purgationem fecit. Unam quidem quasi *praeparatoriam* ad Christi conceptionem” (ThA, STh, III, q.27, a.3, ad3):

**Նախապատրաստիչ**, ա. նախապատրաստող. «Նաև դնէ զմկրտութիւնն Յովանու, որ էր նախապատրաստիչ առ մկրտութիւնս մեր» (ԹՄ, ՅՏՔ, Ուբ, 153), “Ponit etiam Baptismum Ioannis, qui fuit *praeparatorius* ad nostrum Baptisma” (ThA, STh, III, q.66, a.11, ad3):

**Նախենթադրել**, նբ. կանխավ ենթադրել, կռահել, գուշակել. «Սակայն՝ նախենթադրէ զքանչելիքն, որ եղեալ է ի յօրհնութիւնն» (ԹՄ, ՅՏՔ, Ուբ, 200), “corruptio illa specierum non est miraculosa, sed naturalis, *praesupponit* tamen miraculum quod est factum in consecratione” (ThA, STh, III, q.77, a.4, ad3):

**Նախընթացումն**, գ. նախորդող ընթացք. «տեղական շարժումն այն ո՛չ պարունակի ի ներքոյ յղութեանն, այլ է նախընթացումն առ յղութիւնն» (ԹՄ, ՅՏՔ, ՄՄ 68, 152ա), “motus

ille localis non comprehenditur infra ipsam conceptionem, sed est conceptione *praeambulus*” (ThA, STh, III, q.33, a.1, ad2):

**Նախիմանալ**, նբ. կանխալ իմանալ. «Քանզի թէ նախիմանիւր, կամ պիտոյ էր, զի ապականէր, և ըստ այսմ ընդունայն լինէր առաւել» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 30բ), “Si enim *praeintelligeretur*, vel oporteret quod corrumperetur, et sic frustra esset assumpta” (ThA, STh, III, q.4, a.2, co.):

**Նախկայանալ**, չբ. նախորդել. «քանզի երկոքեան պատճառքս այսոքիկ նախկայանան քան զիրս» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 40բ), “hae enim duae causae *praeexistunt* rei” (ThA, STh, III, q.6, a.5, co.):

**Նախկացեալ**, ա. առաջ եղած, նախորդած. «Լինէր ապականեալ ենթադրութիւն նախկացեալ հոգւոյն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 39ա), “corrupta fuisset subsistentia animae *praeexistens*” (ThA, STh, III, q.6, a.3, co.):

**Նեղաճակատ** ա. նեղ ճակատ ունեցող. *frons angusta*. տե՛ս անխելամուտն բառահողվածի օրինակը:

**Ներամտածել**, նբ. խորապէս մտածել, խորհել. «Այլ հասարակական է կրկնակի, զի կամ վերաբերի առ ճշմարտութիւնն և կամ առ կարծիս: Արդ եթէ առ ճշմարտութիւնն միայն, սապէս մտածեալ լինի [ի] մեթաֆիզիկոսէն, իսկ եթէ առ կարծիսն, սապէս ներամտածի ի դիալեկտիկոսէն» (ՊԱ, ՀՎՎՍ, ՄՄ 1684, 109ա):

**Ներգործականապէս**, մ. ներգործական կերպով. «Քրիստոս յղացեալ կամ ծնեալ ի հոգւոյն սրբոյ և ի կուսէն մարմնաւ նիւթաբար, իսկ հոգւոյն սրբոյ ներգործականապէս» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 148բ), “Christus conceptus aut natus de spiritu sancto, et de Maria virgine, nam de Maria virgine materialiter, de spiritu sancto *effective*” (ThA, STh, III, q.32, a.2, ad3):

**Ներգործապէս**, մ. ներգործությամբ. «Իսկ աստուածութիւնն ունի զօրութիւն կենդանացուցանելոյ ոչ տեսակաբար, այլ ներգործապէս» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 236ա), “Divinitas autem non habet vim vivificandi formaliter, sed *effective*” (ThA, STh, III, q.50, a.2, ad3):

**Ներդաշնակատրութիւն**, գ. ներդաշնակություն. «ոչ ի հոգին լինիցի կատարեալ հոգևորական ներդաշնակատրութիւն, եթէ ոչ իցեն ի միասին ամենայն առաքինութիւնքն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 73բ), “nec in anima erit spiritualis *melodia*, nisi adsint omnes virtutes” (AM, CThV, 90):

**Ներդիպել**, չբ. ներքուստ վերաբերել՝ բնորոշել, հատուկ լինել. «տառքն ոչ նշանակ ձայնիցն, եթէ ոչ ըստ ձևոյն, վասն զի գրին ներդիպին երեք, այսինքն՝ անուն, ձև և կարողութիւն, յորոց ձևն միայն է նշանակ ձայնի» (ՊԱ, ՄՎՊ, ՄՄ 1684, 155բ):

**Ներելապէս**, մ. ներելի. «Երրորդն բառնայ զսկզբնականն և զդիւրասահութիւն մեղանշելոյն մահուչափ և ներելապէս, և այսպիսի էր յերանելի կոյսն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 57ա), “Tertia remouet culpam originalem, et proniatem ad peccandum tam *veniabili*, quam mortaliter, et talis fuit in beata Virgine” (AM, CThV, 71):

**Ներգսպական**, ա. տրամաբանական սահմանման՝ բացորոշության տեսակ. «Արդ ներգսպական է, յորժամ զսպէ բացորոշելին իւր, սակայն ոչ նուագացուցանէ զնա, այսպիսի բացորոշություն է սպիտակն կամ արդարն՝ Սոկրատ է մարդ սպիտակ, ներհաւաքի արտորոշորէն, ապա ուրեմն է մարդ և է սպիտակ» (ՊԱ, ՄՎՊ, ՄՄ 1684, 222ա):

**Ներգսպել**, նբ. ներառել, ամփոփել. «ոմանք են տեսակք վերամբարձեալք, որ ոչ ներգսպին առ սեռ իմն» (ՊԱ, ՄՎՊ, ՄՄ 1684, 225բ):

**Ներքմբոնել**, նբ. ըմբոնելով յուրացնել, հասու լինել. «էակն է այն, որ նախ իմացմամբ ներքմբոնի» (ՊԱ, ՄՎՊ, ՄՄ 1684, 234բ):

**Ներընդունողական**, ա. ներընդունական, ներունակ. «ներընդունողական իմացումն» (ԲԲ, ՅՀԸ, 101):

**Ներիմանալ**, նբ. ճանաչել, բացահայտել. «ստորասութիւնն է նախքան զբացասականն և նախամեծար, զի ի բացասականն ներիմանի ստորասականն, այլ ոչ հակադարձեալ» (ՊԱ, ՄՎՊ, ՄՄ 1684, 211ա):

**Ներխառնումն**, գ. միմյանց խառնվելը, միախառնում. «որպէս ի ներխառնմանէ օդոյն ընդ հրոյ լինի հուր, սոյնօրէն ընդ նմին լինի և յատկութիւն նորին, այսինքն վերաթնեալն ի բարձունս» (ՊԱ, ՀՎՎՍ, ՄՄ 1684, 149ա):

**Ներխուզական**, ա. հետազոտական (համարժեք չէ լատ. ձևին). «Երևի թէ հոգին Քրիստոսի զգիտութիւնս զայս ոչ իցէ կալեալ ըստ ներխուզականն յեղանակի» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 65ա), “Videtur quod anima Christi non habuit hanc scientiam per modum *collationis*” (ThA, STh, III, q.11, a.3, arg.1), տե՛ս նաև արշաւական բառահոդվածի օրինակը:

**Ներխուզել**, նբ. քննել, հետազոտել. տե՛ս արշաւել բառահոդվածի մեջբերումը:

**Ներխուզութիւն**, գ. հետազոտություն (համարժեք չէ լատ. ձևին). «Դարձեալ կարօտանայ մարդն ներխուզութեան և արշաւանաց բանականին» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 65ա), “Praeterea, homo indiget *collatione* et discursu rationis ad inquirenda ea quae ignorat” (ThA, STh, III, q.11, a.3, arg.2):

**Ներխուզումն**, գ. հետազոտելը. տե՛ս արշաւանք բառահոդվածի մեջբերումը:

**Ներհակադրութիւն**, գ. ներքին հակադրություն. «Այլ ասէ երկու նախադասութիւնքս, այսինքն՝ ընթեանուր ստորասականն և մասնաւոր բացասականն, ընթեանրապէս կարեն անդրադարձիլ յամենայն սահմանս ներհակադրութեամբ» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 288ա):

**Ներհամաձայնել**, չբ. ներքուստ համաձայնել, միանգամայն համապատասխանել. «ներհամաձայնի ընդ անունանն» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 166բ):

**Ներհատանել**, նբ. ներսից հատել, կտրել. «որպէս կարելի է հանդերձիս այս հատանիլն, նաև կարելի է մաշիլն, այլ թէ մաշի, ոչ ներհատանի, ապա ուրեմն երկոքեանն են կարելի՝ հատանիլն և ոչ հատանիլն» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 197բ):

**Ներհաւաքել**, նբ. ի մի բերել, խմբավորել. «Նախ բացայայտէ զճշմարտութիւնն, թէ յորժամ ի յանջատիցն արժան է ներհաւաքել զշարագուգեալն, երկրորդ, թէ երբ ի շարագուգիցն վայել է ներհաւաքել անջատօրէն» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 215բ-16ա):

**Ներճահաւոր**, ա. ամբողջովին պատշաճ, հարմար. «Ասելի է, թէ լօջիկոսն ոչ սահմանէ բանն, ըստ այնմ որ նշանակէ զճշմարիտն կամ զսուտն, և ոչ ըստ այնմ որ է ներճահաւոր կամ անճահ» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 171ա):

**Ներճահաւորել**, նբ. ներքուստ հարմարեցնել, պատշաճեցնել. «Թէպէտ ներճահաւորին նմա սահմանն այն, սակայն ոչ կատարեալ թարց այնցն երկուց մասանց, որ է որոշելի և ուղիղն, որք ոչ ներպատկանին անորոշելի անուանն և ոչ հոլովիցելոցն» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 163ա):

**Ներճահողութիւն**, գ. ներքնապէս պատեհ, հարմար լինելը. «ոչ ստորոգին զյոլովից ներգործութեամբ, այլ ըստ ներճահողութեան» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 191բ):

**Ներճառութիւն**, գ. մանրամասն ճառելը, մեկնաբանելը.  
«[Վ]երնագոյնդ նախադասեաց փիլիսոփոսդ գնախերգանն,  
այժմ բուն հարկանէ զներճառութեանց» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684,  
154բ):

**Ներմտածելի**, ա. խորությամբ դատելու, խորհելու հարկ  
ունեցող. «Սակայն ներմտածելի է, զի ներընդունականն է  
հոմանուն ըստ հետևելին հարկաւորին» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684,  
231ա):

**Ներմտածումն**, գ. խորին մտածում, դատողություն.  
«ձայնիւ արտայայտէ խօսողն զներմտածումն իւր» (ՊԱ, ՍՎՊ,  
ՄՄ 1684, 155բ):

**Ներյեցեալ**, ա. իրար սերտ կցված, միավորված. «Արդ  
ըստ առաջնոյն՝ նիւթն է սկիզբն անհատութեան ամենայն  
ներյեցելոց տեսակացն» (ԹԱ, ՅՏՔ, Ուբ, 197), “Quantum igitur ad  
primum, materia est individuationis principium omnibus formis  
*inhaerentibus*” (ThA, STh, III, q.77, a.2, co.):

**Ներյոյութիւն**, գ. ներսից հղված լինելը, տե՛ս ներձայնոջք  
բառահոդվածի օրինակը:

**Ներյորջորջել**, նբ. անվանել, կոչել. «ներյորջորջի  
անունս» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 191ա):

**Ներշարագուգել**, նբ. ներքուստ հարակցել, հողել.  
«Ներշարագուգէ աստուստ զբաժանումն յառաջադրեալն» (ՊԱ,  
ՍՎՊ, ՄՄ 1684, 231ա):

**Ներշարամանել**, նբ. ներհյուսել, կապակցել. «Յորժամ է  
ստորոգումն պատայմամբ, ոչ է արժան զարտատրոհեալն  
ներշարամանել» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 220բ):

**Ներշարայարումն**, գ. սերտ շարակցումը. «ապուսի  
ներշարայարումն ստորոգելոյն առ ենթակայն» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ  
1684, 210բ-11ա):

**Ներշարժել**, նբ. ներսից շարժել, մղել, խթանել. «թէ ոչ իմանամք զբանս, նաև ոչ ներշարժէ զիմացականն, և ըստ այսմ ոչինչ նշանակեսցէ» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 172ա):

**Ներչափել**, նբ. ներքուստ չափել. «ամանակն է արտաքին որակութիւն ներչափելով, զորս ընդ ժամանական, իսկ երբն ոչ ներչափէ» (ՊԱ, ՀՎՎՍ, ՄՄ 1684, 133ա):

**Ներպարագրել**, նբ. ներպարունակել, ամփոփել. «գլուխն է, որ ներպարագրէ յինքն զամենայն զգայութիւնսն» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 78բ):

**Ներպարառութիւն** գ. շրջափակություն, ընդգրկում. «ոչ կարէ տեսանիլ ըստ բովանդակութեան իւրում ներպարառութեան» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 10բ), “*secundum ambitum totum videri non potest*” (AM, CThV, 10):

**Ներպարառել**, նբ. շուրջանակի պատել, ամփոփել. «ներպարառէ խորհուրդս» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 65ա), “*consilium includit*” (ThA, STh, III, q.11, a.3, ad1):

**Ներպարգ**, ա. ի բնէ պարգ. «մասնկունք ներպարգն անուան ոչինչ նշանակեն զատեալք» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 160ա):

**Ներպատկանել**, չբ. պատկանել, վերաբերել. տե՛ս ներճահատրեմ բառահոդվածի օրինակը:

**Ներպատուաստել**, նբ. իրար կիպ կցել, պատվաստել, կապակցել. «Նախ ներպատուաստէ զասացեալսն ընդ ասացելոցն» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 222բ):

**Ներսահիլ**, չբ. ներս սահել, թափանցել. «ներսահիլ ի յեութիւն հոգւոյն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 13բ), “*essentiae hominis illabi*” (AM, CThV, 14):

**Ներստորածել**, նբ. ներդնել, ներմուծել. «ներստորածէ աստուստ զկարգ հետևմանցն» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 231ա):

**Ներտարածական,** ա. դեպի ներս տարածվող. տե՛ս ար[տա]րածական բառահոդվածի օրինակը:

**Ներտարածիլ,** չբ. ներս տարածվել. «Եւ գիտեալ է, զի զոջումն կարէ այնքան ներտարածիլ, մինչ զի ոչ միայն մեղքն, այլև բոլոր պատիժն ևս թողցի» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 104ա), “Nota etiam, quod contrition potest tantum *intendi*, quod non solum culpa, sed etiam tota poena dimittatur” (AM, CThV, 126):

**Ներտպաւորիչ,** ա. դրոշմող, կնքող. «Եվ վասն այսոցիկ որդեգրութիւնն, թէ պարտ իցէ հասարակ բոլոր երրորդութեանն, սակայն յատկանայ հօր իբր առնօղի, որդւոյ իբր նախագաղափարի, և հոգւոյն սրբոյ իբր ներտպաւորչի ի մեզ զնմանութիւն նախատպին այնմիկ» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 111բ), “Et ideo adoptatio, licet sit communis toti Trinitati, appropriatur tamen patri ut auctori, filio ut exemplari, spiritui sancto ut *imprimenti* in nobis huius similitudinem exemplaris” (ThA, STh, III, q.23, a.2, ad3):

**Ներտրամատել,** նբ. ներքին բաժանման ենթարկել. «Դարձեալ առաջինն կրկնակի, նախ ներտրամատել, երկրորդ արտահերքէ տարակուսանս իմն» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 172բ):

**Ներտրոհել,** նբ. երկրորդաբար տրոհել, բաժանել. «դարձեալ առաջինն ներտրոհի երկակի» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 183ա):

**Ներփոխական,** ա. այլակերպական. «Դարձեալ սերն ունի զօրութիւն տարածական ի բարեգործութիւնն, միաւորական ի սեր ընկերին, ներփոխական ի յարդարացունելն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 81բ), “Amor habet vim diffusiuam in bono operatione, vnitiuam in proximi dilectione, *transformativam* in iustificatione” (AM, CThV, 98):

**Ներփոխել,** նբ. ներքուստ փոխել. տե՛ս արտացնդումն բառահոդվածի օրինակը:

**Նիւթաբար**, մ. materialiter. Նյութականորեն. տե՛ս ներգործականապէս բառահոդվածի օրինակը:

**\*Նմանական**, ա. մակբայի տեսակ. «նմանականք, հիբար որպիսի, այսպիսի, այսպէս, հայնց» (ՀՔ, ՅՔ, 182), “*similitudinis*, ut ceu, quasi, velut, veluti, sic, sicuti, ut, uti” (Pr, IG, XV, 87):

**Նուգասիօ**, գ. սովետական տրամաբանության տեսակ, առնչությունը բնագրային սահմանմանը հիմնականում իմաստային է. «Նուգասիօն է անօգուտ կրկնաբանությունն ի համայն և ի նոյն կողմանէն, զոր օրինակ ասիցէ որ՝ մարդ մարդ ընթանայ» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 317ա). “*Nugatio est eiusdem et ex eadem parte inutilis repetitio, ut 'homo homo currit'*” (PH, T, VII, 94):

**Նրբահայեցություն**, գ. դիտունակություն, խորաթափանցություն. «նրբահայեցութեամբ իմացմանն ճանաչէ» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 132ա), “*perspicacitate sensus cognoscit*” (ThA, STh, III, q.29, a.1, arg3), «նրբահայեցութն և խրթին և խոր իմացումն իրին» (ԲԲ, ՅՀԸ, 75):

## Շ

**Շատակուլ**, ա. vorax. որկրամոլ, շատակեր, ամենակուլ. տե՛ս նեղաճակատ բառահոդվածի օրինակը:

**\*Շարադրական**, ա. շաղկապի տեսակ. «Շարադրական է, որ նշանակէ զշարադրութիւն և զհետևումն իրին, հիկէն թէ, ապա թէ ոչ, թէպէտ» (ՀՔ, ՅՔ, 187), “*Continuativae sunt, quae continuationem et consequentiam rerum significant, ut 'si, sive, sin, seu' ”* (Pr, IG, XVI, 94):

**Շարագուգել**, նր. հարակցել, կապակցել, հոդել. «Որպէս անպատշաճ լինէր, էթէ որ նկարէր պատկեր, ի յոր մարդկային գլխոյն շարագուգիւր պարանոց ձիոյ» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 6բ), «*sicut inconveniens esset iunctura si quis pingeret imaginem in qua*

humano capiti cervix *iungeretur* equina» (ThA, STh, III, q.1, a.1, arg.2): Նաև՝ շարագուգեալ, ա. «Միայն իմացմունք ասին հրեշտակայինքն, որ ոչ ունին մարմինք շարագուգեալ ինքեանց» (ՊԱ, ՀՀՆՊ, ՄՄ 1684, 7ա):

**Շարագուգութիւն**, գ. հարակցություն, միավորություն, աղերսակցություն. «Ասէ Բօէսիոս, որ ինչ եգական իմացմամբ և ձայնիւ արտաբերին, առանց շարամանութեան ասին, իսկ որ ինչ շարագուգութեամբ իմն և կամ պատայման գուգակցութեամբն յարախառնին, ըստ շարամանութեան ասին» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 45բ):

**Շարագուգօրէն**, մ. հարակցաբար. «զմարդոյ ճշմարիտ է ասել և՛ գատ կենդանի, և՛ գատ երկոտանի, և՛ զերկոսեանն շարագուգօրէն» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 216բ):

**Շարայարադրական**, ա. շաղկապի տեսակ. «Շարայարադրական է, որ ստորադասական բանիցն շարադրի, հիգան եթէ, յորժամ, ընդ» (ՀՔ, ՅՔ, 187), “*Adiunctivae sunt, quae verbis subiunctivus adiunguntur, ut ‘si, cum, ut, dum, quatenus’*” (Pr, IG, XVI, 95):

**Շարայօդել**, նբ. շարադրել, ձևավորել, կազմել. «Կամ ստանայ զայնպիսին անարժան գործօք, որ լինի մեղք ներելի, որպէս յորժամ ոք շարայօդէ բանս ծաղրականս առ ի շահել ինչ, սակայն պահելով զհամեստութիւնն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 53բ), “*Vel acquirit talia per operam illicitam, quae est veniale peccatum, vt cum aliquis verba iocosa componit ad lucrum, salua tamen honestare*” (AM, CThV, 68):

**Շնորհային**, ա. իբրև շնորհ. «Ծնունդ Քրիստոսի է եռակի. այսինքն աստուածային, մարդկային և շնորհային» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 61բ), “*Natiuitas Christi triplex est, scilicet diuina, humana, gratuita*” (AM, CThV, 77):

**Շրջախոսություն**, գ. շրջասություն. «Յայտ յայսցանէ է, զի ոչ կարենք զաստուած ծանուցանել սահմանաւ, այլ շրջախոսութեամբ իմն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 14բ), “Ex his patet, quod Deum non possumus notificare per diffinitionem, sed qualiter cumque per *circumlocutionem*” (AM, CThV, 16):

## Ո

**\*Որոշական**, ա. մակբայի տեսակ. «որոշականք, հիպէս առանձինն, որիշ, յետո, այլ կերպ, ծածուկ, զատ ի զատ, կրկին ասամքք, բազում ասամքք» (ՀՔ, ՅՔ, 182), “*discretiva seorsum, separatism, secreto, utrimque, divise, singillatim, bifariam, omnifariam*” (Pr, IG, XV, 87):

**\*Որպիսական**, ա. մակբայի տեսակ. «որպիսականք, որգոն չարապէս, բարեպէս, գեղեցկապէս, զօրեղապէս» (ՀՔ, ՅՔ, 182), “*qualitatis, ut bene, male*” (Pr, IG, XV, 86):

**Ուզիա**, գ. usia (հուն.). էություն. տե՛ս էսենսիա բառահոդվածի օրինակը:

**Ուզիօզիս**, գ. usiosis (հուն.). գոյ, գոյություն. տե՛ս էսենսիա բառահոդվածի օրինակը:

## Չ

**Չափակցաբար**, մ. համաչափորեն. «մկրտությունն չափակցաբար պատճառէր զբացումն դրանն, ոչ ըստ իրին այլ միայն ըստ յուսոյն» (ԹԱ, ՅՏՔ, Ուբ, 182), “*Baptismus proportionaliter causabat ianuae apertionem, non quidem in re, sed in spe*” (ThA, STTh, III, գ.69, a.7, ad2):

**Չափակցեալ**, ա. համաչափ. «իմանալի տեսակքն չափակցեալ իւրոյ բնութեանն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 059ա), “*menti*

species intelligibiles *proportionatae suae naturae*” (ThA, STh, III, q.9, a.3, ad3):

**Չափակցիլ**, չբ. համաչափ դառնալ, համապատասխանել. «Քանզի կատարելութիւնն չափակցի ի կատարելի իրին» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 65a), “Perfectio enim *proportionatur* perfectibili” (ThA, STh, III, q.11, a.4, arg.1), նաև՝ նբ. զուգաչափել, համեմատել. «շարժումն չափակցի տեղոջն» (ԹԱ, ՀՀՅՀ, ՄՄ 3487, 88բ), “motus... *commensuretur* loco” (ThA, STh, I, q.53, a.1, co.):

**Չափհասեալ**, ա. չափահաս. «Որ սակայն ոչ լինէր բաւական ի չափհասեալսն, որք ունին զկիրառումն բանականին» (ԹԱ, ՅՏՔ, Ուբ, 191), “Quod tamen non sufficeret in *adultis* usum rationis habentibus” (ThA, STh, III, q.71, a.1, ad3):

## Պ

**Պակասականապէս**, մ. պակասավորությամբ. «Իսկ անծնելութիւնն է հօր, և առեալ լինի պակասականապէս» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 13բ), “Innascibilitas autem est in patre, et sumitur *privative*” (AM, CThV, 14):

**Պակասօրէն**, մ. privative. պակասությամբ. տե՛ս բացասականապէս բառահոդվածի օրինակը:

**Պատարուն**, ա. լեցուն. «Մասն բարձիցն, որ ի ներքո ծնկացն, յորժամ է պատարուն և իբր թէ յղի, նշանակէ զանպարկեշտն և զանամոթխածն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 37բ), “Pars cruris quae sub genu est, quae vocatur sura, quando *plena* est e quasi grauida, intemperatum hominem significant, et imprudentem” (AM, CThV, 47):

**Պարագրաբար**, մ. բովանդակելով. «Քանզի մարմինն է ի տեղւոջ պարագրաբար և սահմանապէս» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66,

24ա), “Cum enim corpus sit in loco *circumscriptive* et diffinitive” (AM, CThV, 28):

**Պարունակիչ**, ա. պարունակող. «որ է պարունակիչ և պահպանող ամենայն բարութեանց» (ՄՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 8բ), “qui est *continentia* omnis boni” (AM, CThV, 8):

## Ջ

**Ջանօրէն**, մ. ճիգով, դժվարորեն. «յայտնութիւնքս, թէ լինին... առ դէսն, ոչ են լուսաւորութիւնք, զի ոչ կարգեն գնոսա առ Աստուած, այլ զի կատարեցեն ջանօրէն զկամս իւրեանց» (ԹԱ, ՀՀՅՀ, ՄՄ 3487, 128ա), “revelationes, si. ex parte vero Daemonum, non sunt illuminationes, quia eas in Deum non ordinant, sed ad expletionem propriae *iniquitatis*” (ThA, STh, I, q.109, a4, ad 1):

**Ջերմեռանդագոյն**, ա. devotior. ավելի ջերմեռանդ. տե՛ս համբերողագոյն բառահոդվածի օրինակը:

**Ջերունդիական**, ա. լատ. gerundium-ի ածանցված ձևը, բայանուն կամ գոյական դերբայ. «կերպ բայի, որ կոչին ջերունդիական և սուփիննական» (ՀՔ, ՅՔ, 178):

## Ռ

**Ռեդարգուսիօ**, գ. սոփեստական տրամաբանության տեսակ. առնչությունը բնագրային սահմանմանը հիմնականում իմաստային է. «Ռեդարգուսիօ է, յորժամ պատասխանողն բացասէ զայն, ինչ զոր յառաջագոյն ստորասեաց, և կամ ստորասէ, զոր յառաջագոյնն բացասեաց» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 316ա). “*Redargutio* est preconcessi negatio vel prenegati concession in eadem disputatione vi argumentationis” (PH, T, VII, 94):

## Ս

**Սանձարձակական**, ա. impetuosus. անգուսպ՝ անկաշկանդ վարքին հատուկ. տե՛ս արտաքայլել բառահոդվածի օրինակը:

**Սահմանապէս**, մ. diffinitive. սահմանված, որոշակիորեն. տե՛ս պարագրաբար բառահոդվածի օրինակը:

**Սառուցական**, ա. glacialis. սառցե, սառցային. տե՛ս խաւարամածութիւն բառահոդվածի օրինակը:

**Սեռականաբար** ա. ըստ սեռի՝ ոչ տեսակային, ընդհանրապէս, առհասարակ. «Շնորհին ասի երեքկին: Նախ սեռականաբար, և ըստ այսմ է շնորհն աստուածաին օգնականութիւնն ձրի տուեալ ստեղծուածոյ առ իւրաքանչիւր գործ» (ՄՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 71բ), "Gratia dicitur tripliciter. Primo *generaliter*, et sic gratia est adiutorium diuinum craeturae gratis impensum, et indifferenter ad quecumque actum" (AM, CThV, 87-88):

**Սելարէնդ**, գ. celarent. մտահանգման բ եղանակի մնեմնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

**Սելէմսիս (սիլէմսիս)**, գ. silemsis (հուն.). կատարյալ բանի կամ շարամանության (նախադասության) տեսակ. «Իսկ սիլէմսիսն է զանազան ասութեանց միով բայիւ համագոյց յղութիւն: ... *Ես և դու և նա ընթեռնումք*» (ՀՔ, ՅՔ, 206-7), "σύλληψις. conceptio" (Pr, IG, XVII, 183):

**Սիլօջիզմոս**, գ. sillogismus. դեդուկտիվ մտահանգում. «սիլօջիզմոս, որ է հաւաքաբանութիւն» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 299բ):

**Սիմթոզիս**, գ. sintosis. կատարյալ բանի կամ շարամանության (նախադասության) տեսակ. «Սիմթոզիսն է զանազանութիւն դիմաց, թուոց և անգմանց: ... *Ես Պետրոս կու*

ընթանան» (ՀՔ, ՅՔ, 208), “συνέμπτωσις. concidentia” (Pr, IG, XVII, 183):

**Սինքաթեգրամաթայ**, գ. (հուն.). ոչ լիիմաստ խոսքի մաս<sup>22</sup>. «Իսկ գիտելի է, զի դիալեթիկոսն դնէ միայն ք մասունս բանին, այսինքն՝ անուն և բայ, ... զայլ զմասունսն կոչէ սինքաթեգրամաթայ, որ է առնշանական» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 278բ). “Et sciendum est quod dialecticus ponit duas partes orationis tantum, scilicet nomen et verbum, alias vero partes appellat *sincathegoremata*, idest consignificativa” (PH, T, I, 2-3):

**Սոֆիսթիական, սոֆեսթիական**, ա. սոփեստական, ճարտասանական. «սոֆիսթիական փիլիսոփոս» (ԲԲ, ՅՀԸ, 90), «սոֆեսթիականն կարգաւորէ զկեանս իւր առ վեր երևոյթն» (անդ):

**Սուսպթանսիա**, գ. substantia. գոյ, գոյություն. տե՛ս էսենսիա բառահոդվածի օրինակը:

**Սուսսիսթենսիա**, գ. subsistentia. ենթադրություն՝ իբրև ենթակայություն, հիմք, էություն. տե՛ս էսենսիա բառահոդվածի օրինակը:

**Սուփինական**, ա. լատ. supinum-ի ածանցված ձևը, բայանուն կամ գոյական դերբայ. տե՛ս ջերունդիական բառահոդվածի օրինակը:

**Սպառական**, ա. սպառողական. «Եւ թէ որպէս ասի սերն վախճանն, զիտեալ է, զի երեքկին է վախճանն, այսինքն՝ սպառական, կատարողական, և վախճանական» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 82ա), “Quomodo autem dictum finis, scilicet *consumptio*-

---

<sup>22</sup> Հունական քերականության հասկացություն, որ լատինացրել է Պրիսցիանուսը, իսկ հետագայում՝ ԺԳ դարից դիտարկվել է սխոլաստիկայի մեջ, տե՛ս *Prisciani Institutionum Grammaticarum Libri I-XII, ex recensione Martini Hertzii, Lipsiae*, 1859, p. 55.

nis, consumationis, et terminationis” (AM, CThV, 98):

**Սպասաւորօրէն**, մ. որպէս սպասավոր. «Բայց գործիականապէս կամ սպասաւորօրէն նաև այլ սուրբքն ասին տալ զհոգին սուրբ» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 51բ), «Instrumentaliter autem, sive *ministerialiter*, etiam alii sancti dicuntur dare spiritum sanctum” (ThA, STh, III, q.8, a.1, ad1):

**Ստորատրամատել**, նբ. երկրորդաբար՝ վերստին բաժանել, զանազանել. «Դարձեալ առաջինն մակաբաժանի յերիս...: Այլն սա ստորատրամատի յերիս» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 103ա-բ):

**Ստորատրոհել**, նբ. երկրորդաբար՝ վերստին տրոհել. «Երկրորդ ստորատրոհել ի պատահականն» (ՊԱ, ՀՎՎՍ, ՄՄ 1684, 118բ):

**Ստուարաձեռն**, ա. խոշոր՝ հաստ ձեռքեր ունեցող. «Ստուարաձեռն, եթէ քան զչափն կարճս ունիցի զմատունս, բացայայտէ զնենգաւորն, զդարանակալն և զգողն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 37բ), “*Crasse manus, si digitos breues vltra modum habeant, tergiuersorem declarant, insidiosum et furem*” (AM, CThV, 47):

**Սրբաբարութիւն**, գ. սրբացում. «ի յերանուհի կոյսն յետ սրբաբարութեանն ի յորովայնին մնաց արմատն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 125ա), “in beata virgine, post *sanctificationem* in utero, remansit quidem fomes” (ThA, STh, III, q.27, a.4, ad1):

**Սօլօէսիզմուս**, գ. սովետական տրամաբանության տեսակ. առնչությունը բնագրային սահմանմանը հիմնականում իմաստային է. «Սօլօէսիզմուս, յորժամ ոք խոսի ընդդէմ կանոնական յայտնապէս արհեստ ի քերականութեան» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 316բ-17ա). “*Solecismus est vitium in contextu partium orationis contra regulas artis gramatice factum*” (PH, T, VII, 94):

## Վ

**Վայրակոր,** ա. վար կորացած, վայրահակ, կլորածն. «Մատունք մած և վայրակոր նշանակեն զագահն և զչարաբարոյն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 37բ), “*Digiti collecti et globate auarum dicut, et malignum*” (AM, CThV, 47):

**Վատահամբաւել,** նբ. անվանարկել. «Սակայն որ ամբաստանեն զայլ ոք, զգուշացի ստէպ, զի մի արացել զայն առ ի վատահամբաւել, այլ առ ի յուղղել» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 94ա), “*Veruntamen accusans alium, caueat diligenter ne hoc faciat ad diffamandum, sed ad corrigendum*” (AM, CThV, 113):

**Վատահամբաւորութիւն,** գ. վատ համբավ ունենալը, անվանարկված լինելը. «մի տապասցի վատայամբաւորութեամբ եղծեալ կուսութեանն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 132բ), “*ne temeratae virginitatis adureretur infamia*” (ThA, STh, III, q.29, a.1, co.):

**Վարձարժանաւորական,** ա. վարձի՝ երախտիքի արժանի. «Ապա ուրեմն երևի թէ կիրառնումն անձնիշխանութեանն, զոր ունէր Քրիստոս ըստ մարդոյն ի յառաջին կէտ յղութեանն իւրոյ, ո՛չ իցէ վարձարժանաւորական» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 155բ), “*Ergo videtur quod usus liberi arbitrii quem Christus habuit secundum hominem in primo instanti suae conceptionis, non fuerit meritorius*” (ThA, STh, III, q.34, a.3, arg2):

**Վարձարժանաւորապէս,** մ. վարձի՝ երախտիքի արժանաւորվ. «ըստ այնմ որ մարդ է, գործէ առ ներքին ներգործութիւն խորհրդոցն՝ վարձարժանաւորապէս և արարողաբար այլ գործիօրէն» (ԹԱ, ՅՏՔ, Ուբ, 124), “*Secundum autem quod est homo, operatur ad interiores effectus sacramentorum meritorie, et efficienter, sed instrumentaliter*” (ThA, STh, III, q.64, a.3, co.):

**Վարձարժանաւորել**, նբ. գնահատել ըստ արժանիքի, արժանացնել. «Դարձեալ որում միանգամ վարձարժանաւորեցաւ որ, արդէն կերպիւ իմն առնէ ինքեան զայն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 155բ), “Praeterea, illud quod semel aliquis *meruit*, iam facit quodammodo suum” (ThA, STh, III, q.34, a.3, arg.3):

**Վարձարժանաւորութիւն**, գ. արժանաւորութեան վարձ, վաստակ, երախտիք. «Քրիստոս ոչ ունէր ամեննին ըստ վարձարժանաւորութեան հոգւոյն, ի յորում կարէր զարգանալ» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 155բ), “non habuit omnino Christus, iuxta animae *meritum*, quo potuisset proficere” (ThA, STh, III, q.34, a.3, s.c.):

**\*Վերատրել**, նբ. տրամադրել, օժտել. «Հասարակ բնութիւնն ոչ կարէ վերատրիլ, եթէ ոչ հասարակ և բնական ներգործութիւնքն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 032ա), “naturae communi non possunt *attribui* nisi operationes communes et universales” (ThA, STh, III, q.4, a.4, co.):

**Վերաւարտել**, նբ. սահմանել, հաստատել, որոշել. «Իսկ յետոյ վերաւարտեցաւ եկեղեցեալ» (ԹԱ, ՅՏՔ, Ուբ, 158), “Postmodum vero per Ecclesiam *determinatum* est” (ThA, STh, III, q.67, a.5, co.), նաև՝ «Պատասխանի ասելի է, թէ զինդիրս զայս Օգոստինոս էթող առանց վերաւարտելոյ» (ԹԱ, ՅՏՔ, Ուբ, 158), “Respondeo dicendum quod hanc quaestionem Augustinus *indeterminatam* reliquit” (ThA, STh, III, q.67, a.5, co.):

**Վերաւարտողական**, ա. սահմանական, որոշիչ. «Իսկ վերաւարտողական ենթադատութիւնն է, որով բանականն հրամայէ զիր ինչ լինել կամ ոչ լինել, և առ այս է առաքինութիւն» (ԱՄ, ՀՀԱԸ, ՄՄ 66, 84բ), “Iudicium vero *diffinitium* est, quo ratio imperat aliquid fieri, vel non fieri: et circa istud est virtus” (AM, CThV, 102):

**Վերաւարտումն**, գ. սահման, ավարտ, ամփոփում. «Այլ ընդդէմ է, որ ասի ի վերաւարտումն ժողովոյն Քաղկեդոնի» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 13ա), “Sed contra est quod dicitur in *determinatione* Concilii Chalcedonensis” (ThA, STh, III, q.2, a.1, s.c.):

**Վերնագոյացական**, ա. գերագոյն գոյութեամբ՝ էութեամբ. «Գոլ ամենեցուն է վերնագոյացական աստուածութիւնն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 3բ), “Esse omnium est *supersubstantialis* diunitas” (AM, CThV, 2):

**Վերնագոյել**, չբ. վերնում գոյել՝ լինել, գերիշխել. «որպէս գոյացութիւն վերնագոյնելով» (ՊԱ, ՀՀՆՊ, ՄՄ 1684, 14բ):

**Վերոասացեալ**, ա. վերոնշյալ, վերոհիշյալ. «պատահմունքն են ի խորհուրդս յայս առանց ենթակայի, վասն վերոասացեալ պատճառացն» (ԹԱ, ՅՏՔ, Ուբ, 196), “accidentia sunt in hoc sacramento sine subiecto, propter rationes *supra inductas*” (ThA, STh, III, q.77, a.1, ad1):

**Վիճակակցութիւն**, գ. վիճակակից, մասնակից լինելը. «ժողովեալ լինէին վիճակակցութեամբ իմն նշանաց կամ խորհրդոց» (ԹԱ, ՅՏՔ, Ուբ, 104), “aliquo signaculorum vel sacramentorum visibilium *consortio* colliguntur” (ThA, STh, III, q.61, a.1, s.c.):

**Վիճակընկեցութիւն**, գ. վիճակ գցելը, բախտագուշակություն. «Այլ մեղք գործոյն են այսոքիկ. որկրամոլութիւն, արբեցութիւն, բղջախոհութիւն, սեղանակապ-տութիւն, սիմոնականութիւն, վիճակընկեցութիւն» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 55բ), “Peccata operis sunt haec, gula, luxuria, ebrietas, symonia, *sortilegium*, sacrilegium” (AM, CThV, 70):

**Վտառաւորութիւն**, գ. պատուածք, անցք, ծակոտիներով պատված լինելը՝ ծակոտկենություն. «որպէս ի խորհրդական տեսակս մնա հոծն և անգայտն, որպէս վերնագոյնդ ասացաւ,

նոյնպէս մնայ անդ վտառաւորութիւնն, նաև ըստ այսմ և բեկանելին գոլ» (ԹԱ, ՅՏՔ, Ուր, 203), “sicut in speciebus sacramentalibus remanet rarum et densum, ut supra dictum est, ita etiam remanet ibi *porositas*, et per consequens frangibilitas” (ThA, STh, III, q.77, a.7, ad1):

## S

**Տարազատեալ**, ա. տարանջատ. «Ապա ուրեմն և ոչ առ կատարելութիւն մարդկային իմացմանս վերաբերի ճանաչել զայնս, որ ոչ կարեն լինել երևակայացեալք, որպէս են տարազատեալ գոյացութիւնքն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 63բ), “Ergo neque ad perfectionem intellectus humani pertinet cognoscere ea quorum non possunt esse phantasmata, sicut sunt substantiae *separatae*” (ThA, STh, III, q.10, a.3, ad3):

**Տարալուծութիւն**, գ. լուծում, տարրալուծում. «Եվ զի ի երանուհի կոյսն ոչ է եղեալ տարալուծութիւն ինչ սերմանն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 150բ), “Et quia in beata virgine nulla fuit facta *resolutio seminis*” (ThA, STh, III, q.32, a.4, co.):

**Տարածականապէս**, դ. տարածվելու հատկությամբ, տարածական տեսանկյունից. «Երկրորդ կերպս ասի մեծագոյն տարածականապէս» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 10բ), “Alio modo dicitur aliquid maius *extensive*” (ThA, STh, III, q.1, a.4,co.):

**Տարակացել**, չբ. հեռու լինել. «Դարձեալ որքան այնք միաւորին, յաւետ տարակացին այն որքան փոքրագոյն է միաւորութիւնն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 20բ), “Praeterea, quanto ea quae uniuntur magis *distant*, tanto minor est unio” (ThA, STh, III, q.2, a.9, arg.2):

**Տարահերքումն**, գ. բոլորովին հերքելը, վանելը. «տարահերքումն ընդհանրականութեան» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 189բ-

90ա):

**Տարաճահ,** ա. անճահ, ոչ պատշաճ. «քերթողն ճառէ զանուանէն և զբայէն, ըստ այնմ որ՝ ներսամտեն ի ճահաւոր և ի տարաճահ բանս, իսկ լօջիկոսն ըստ այնմ որ ներսամտեն ի բացերևութիւնս՝ ի սուտս կամ ի ճշմարիտս» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 153բ):

**Տարաճահութիւն,** գ. անճահ՝ ոչ պատշաճ լինելը. «քերթողն ներամտածէ ի ճահաւորութենէ և ի տարաճահութենէ, բայց լօջիքայն ներամտածէ ի բացերևութենէն, ըստ այնմ՝ որ է սուտ կամ ճշմարիտ» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 153ա):

**Տարաչափական,** ա. տարաձև չափմանը հատուկ. «Երկրորդ, էթէ տարաչափական քանակութիւնն իցէ ենթակա այլ պատահմանցն» (ԹԱ, ՅՏՔ, Ուբ, 195), “Secundo, utrum quantitas *dimensiva* sit subiectum aliorum accidentium” (ThA, STh, III, q.77, pr.):

**Տարաչափութիւն,** գ. տարբեր կողմերից չափումը. «քանզի մարմինն ի յամենայն կողմանց ունի տարաչափութիւն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 62բ), “quod quia corpus est ad omnem partem *dimensionatum*” (ThA, STh, III, q.11, a.1, arg.2):

**Տարաքեցել,** նբ. հերքել, վանել, փարատել. «տարաքեցէ տարակուսանս» (ՊԱ, ՍՎՊ, ՄՄ 1684, 170ա):

**Տեղականաբար, տեղականապէս,** մ. ըստ տեղի, տեղով. «որպէս որ շարժի տեղականապէս, նախիմանի քան զշարժումն» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 30բ), “sicut id quod movetur localiter praeintelligitur ipsi motui” (ThA, STh, III, q.4, a.2, co.), տե՛ս նաև դիսքուրս բառահոգովածի օրինակը:

**Տեսակաբար,** մ. formaliter. ձևականորեն. տե՛ս ներգործապէս բառահոգովածի օրինակը:

**Տեսակական**, ա. *formalis*. ձևական. տե՛ս կատարունական բառահոդվածի օրինակը:

**Տեսակաւորել**, նբ. տեսակաւոր դարձնել, մասնավորել. «Եվ ոչ է կարելի, զի նիւթն արասցէ ինչ առ ի տեսակաւորիլն իւր, զի ոչ է ներգործութեամբ» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 150ա), “Nec est possibile quod materia agat ad sui *formationem*, quia non est actu” (ThA, STh, III, q.32, a.4, co.):

**Տկարագործ**, ա. գործելիս տկար, անուժ. «Այլք եղեգն, այսինքն գդատարկաբանութիւնս և գտկարագործս» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 79ա), “Alii stipulam, scilicet otiosorum verborum et operum *infirmorum*” (AM, CThV, 96):

**Տղմալիւր**, ա. տիղմով լի. «սրբագոյն է հանկչել ի ծաղկոցս, քան ի տղմալիւր տեղս» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 74բ), “mundius quiescitur in floribus, quam in *luto*” (AM, CThV, 91):

**Տրամատօրէն**, մ. տրոհությամբ. «Այլ ունակութիւնն ընդունի զյաւետն և զնուագն: Դարձեալ առաջինն ստորաբաժանի կրկնակի. նախ բացորոշէ զունակութենէն սահմանօրէն, երկրորդ տրամատօրէն» (ՊԱ, ՀՎՎՄ, ՄՄ 1684, 142բ-43ա):

### Յ

**Յամբեսթիէս**, *cambestres*. մտահանգման ժա եղանակի մենեմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

**Յելանթէս**, *celantes*. մտահանգման գ եղանակի մենեմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

### Փ

**Փաղանուանել**, նբ. հոմանիշ լինել. «Իսկ ստորոգելին տրամատի՝ ասելովն զայլմէ և գոլովն ի յայլում, արդ որպէս ասիլն զայլմէ և գոլն ի յայլում ոչ կարեն փաղանուանիլ, սապէս

և անշարաման ասելին ոչ կարէ փաղանունիլ առ ժ. սեռն» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 46բ):

**Փէրսոնա**, գ. persona. անձ. տե՛ս էսենսիա բառահոդվածի օրինակը:

**Փոխաբերականապէս** մ. translative. փոխաբերությամբ. տե՛ս առնչականապէս բառահոդվածի օրինակը:

**Փոխարինական**, ա. փոխարինող. «Ուստի ի մկրտելոցն ոչ լինի եղեալ փոխարինական ինչ պատիժ, զի են բոլորովին ազատեալք փոխարինօվն Քրիստոսի» (ԹԱ, ՅՏՔ, ՄՄ 68, 232ա), “Unde baptizatis nulla poena *satisfactoria* imponitur, quia sunt totaliter liberati per satisfactionem Christi” (ThA, STh, III, գ.49, a.3, ad2):

**Փոփոխամտութիւն**, գ. անկայուն, դյուրափոփոխ միտք ունենալը. «փաղչելն ի փոփոխամտութենէ» (ԱՄ, ՀՀԱՃ, ՄՄ 66, 85ա), “*Mutabilitatem* fugere” (AM, CThV, 102):

**Փոքրախելք**, ա. սակավամիտ, նեղմիտ. տե՛ս անխելամուտ բառահոդվածի օրինակը:

**Փրօբաբիլէ**, մ. (լատ. probabile-ի տառադարձությամբ) հավանական, հնարավոր. «Գ տեսակ հաւաքաբանութեանն է տրամաբանական հաւաքաբանութիւնն, որ է եզերեալ առ փրօբաբիլէ ի նիւթն, որ է հնարաւոր, որպէս ամէն մայր կու սիրէ, այլ Մեղէայն է մայր, ապա ուրեմն կու սիրէ» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 268ա):

**Փրօզօփօն**, գ. prosopon (հուն.). անհատ. տե՛ս էսենսիա բառահոդվածի օրինակը:

**Փրօլէմսիս**, գ. prolepsis (հուն.). կատարյալ բանի կամ շարամանության (նախադասության) տեսակ. «Արդ փրօլէմսիսն է հաւաքումն իրացն, որ յետո են բացայայտելիք, կամ այսպէս. փրօլէմսիսն է նախասացեալ բազմութեանն բացայայտու-

թին մասամբ: ... Մեք ընթեռնումք, եւ զԱւետարանն և զու  
զԱռաքելն» (ՀՔ, ՅՔ, 207), “προλαψις. praeceptio” (Pr, IG, XVII,  
183):

## Ք

**Քաթեգորիկայ**, գ. դատողության ստորոգական տեսակը.  
«Քաթեգորիկայն է, որ ունի ենթակայ և ստորոգեալ զնախկին  
մասունս իւր, որպէս մարդն է կենդանի» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 280ա),  
“*Categorica est illa que habet subiectum et predicatum principales*  
*partes sui, ut 'homo currit'”* (PH, T, I, 3-4):

**\*Քանակական**, ա. մակբայի տեսակ. «քանակականք,  
հիբար յոլով, սակաւ, շատ, բաւական, հերիք, այսքան, այնքան»  
(ՀՔ, ՅՔ, 182), “*quantitatis, ut nimium, parum*” (Pr, IG, XV, 86):

**Քառանկիւնէլ**, նբ. քառանկյուն դարձնել. «Եւ առադրէ  
տարացոյցս ի բոլորակ չորեքանկիւնութենէ, քանզի մակացելի  
է, զի բոլորակն քառանկիւնեցի» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 73բ):

**Քօնքրթաբար, քօնքրէթօրէն**, մ. որոշակի կերպով.  
«Վերնագոյնդ բացորոշեաց ի յորակութենէն արթրաքթօրէն,  
իսկ աստ քօնքրթաբար» (ՊԱ, ՀՎՍԱ, ՄՄ 1684, 87ա), տե՛ս նաև  
*արթրաքթաբար* բառահոդվածի օրինակը:

**Քօնքրթեալ**, ա. որոշարկված, տե՛ս արթրաքթեալ  
բառահոդվածի օրինակը:

## Օ

**Օդութիւն**, գ. օդի բնութիւն, օդային հատկություն, տե՛ս  
արտացոնումն բառահոդվածի օրինակը:

## Ֆ

**Ֆալսիգրաֆուս**, գ. ճշմարիտ ապացուցողական սիլ-  
լոգիզմին հակադիր կեղծ սիլլոգիզմ. «բայց ընդդէմ այսմ

հաւաքաբանութեանս է այլ իմն հաւաքաբանութիւն, որ կոչի հաւաքաբանութիւն ֆալսիգրաֆուս, այսինքն ստապատում, և արդ հաւաքաբանութիւնս այս է ի նոյն սկզբանցն, յորմէ և ապացուցականն, բայց ստաքար իմացեալ» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 313ա), “Et contra istum sumitur alius, qui nominatur *falsigrafus* et est ex eisdem principiis falso modo sumptis” (PH, T, VII, 90):

**Ֆափէւսօ**, գ. fapesmo. մտահանգման ը եղանակի մնեմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

**Ֆելափթօ**, գ. felapto. մտահանգման ժե եղանակի մնեմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

**Ֆէսթինօ**, գ. festino. մտահանգման ժբ եղանակի մնեմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

**Ֆէրիսոն**, գ. ferison. մտահանգման ժթ եղանակի մնեմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

**Ֆէրիօ**, գ. ferio. մտահանգման դ եղանակի մնեմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

**Ֆիզիքայ**, գ. նյութի ուսումնասիրությամբ զբաղվող գիտություն. «առաջին գիրքն ֆիզիքոց» (ԲԲ, Դ, ՄՄ 69, 266ա):

**Ֆրիսէւսօ**, գ. frisesomo. մտահանգման թ եղանակի մնեմոնիկական բանաձևը (ԲԲ, Դ, ՄՄ 69, 307ա. PH, T, IV, 52):

Սկզբնաղբյուրներ և դրանց համառոտագրությունները

ԱՄ, ՀՀԱՃ - Ալբերտուս Մեծ, Համառոտ հաւաքումն աստուածաբանական ճշմարտութեան, ՄՄ ձեռ. 66, 3ա-120ա, ԺԴ. դ.:

ԲԲ, Դ- Բարդուղիմէոս Բոլոնիացի, Հաւաքումն համառոտ և յոյժ օգտակար ի դիալէտիկէն, որ տրամաբանութիւնն,

ՄՄ ձեռ. 69, 266ա-346բ, 1401թ., ՄՄ ձեռ. 2382, 339ա-370, 1403թ., ՄՄ ձեռ. 1685, 88ա-178բ, ԺԷ դ.:

ԲԲ, ՅՀԸ- Բարդուղիմեոս Բոլոնիացի, Յաղագս հնգից ընդհանրից, բնագիրը պատրաստեց Ս. Արևշատյանը (Բարդուղիմեոս Բոլոնիացու հայկական ժառանգությունը, Երևան, 2014):

ԹԱ, ՀՀՅՀ- Թովմա Աքվինացի, Համառոտ հաւաքումն յաղագս հրեշտակաց, ՄՄ ձեռ. 126, 177ա- 251ա, ԺԷ. դ., ՄՄ ձեռ. 3487, 82բ- 138բ, 1389 թ.:

ԹԱ, ՅՏԲ- Թովմա Աքվինացի, Յաղագս տնօրէնութեանն Քրիստոսի, ՄՄ ձեռ. 68, 6ա-276ա, թրգմ.՝ Պետրոս Արագոնացի, Հակոբ Քոնեցի, 1345թ.:

ՀՔ, ՅՔ- Հովհաննէս Քոնեցի, Յաղագս քերականին, բնագիրը պատրաստեց Լ. Խաչիկյանը, Երևան, 1977:

ՊԱ, ՀՀՆՊ- Պետրոս Արագոնացի, «ամառոտ հաւաքումն ի վերայ Ներածութեանն Պորփիրի, ՄՄ ձեռ. 1684, 3ա- 37ա, 1643 թ., ՄՄ ձեռ. 926, 85ա- 91ա, ԺԸ. դ.:

ՊԱ, ՀՎՍԱ - Պետրոս Արագոնացի, Համառոտ վերլուծութիւն Ստորոգութեանն Արիստոտելի, ՄՄ ձեռ. 1684, 37ա-108բ, 1643 թ., ՄՄ ձեռ. 926, 91ա- 10 ա, ԺԸ. դ.:

ՊԱ, ՀՎՎՍ - Պետրոս Արագոնացի, Համառոտ հաւաքումն վերլուծութեան Վեցից սկզբանց Ջիլպերտոսի Պօռետացոյ, ՄՄ ձեռ. 1684, 109ա- 51ա, 1643 թ., ՄՄ ձեռ. 926, 101բ-108ա, ԺԸ. դ.:

ՊԱ, ՍՎՊ - Պետրոս Արագոնացի, Սկիզբն Վերլուծութեան ի վերայ գրոցն, որ կոչի Պերիարմենիաս» ՄՄ ձեռ. 1684, 151ա- 238ա, 1643 թ., ՄՄ ձեռ. 926, 108ա- 123բ, ԺԸ. դ.:

Ուր- Մ. Ուդենրիյնի կազմած քննական բնագիր. M. A. van den Oudenrijn, Eine alte Armenische übersetzung der tertia pars

der Theologischen Summa des. Hl. Thomas von Aquin, Francke Verlag Bern, 1955:

AM, CThV- Albertus Magnus, Compendium Theologicae Veritatis, Opera omnia, volumen 13, p. 1-148, ed. Jammy, Lyon, 1651.

PH, T- Petrus Hispanus, Tractatus, called afterwards Summule Logicales, First Critical Edition from the Manuscripts with an Introduction by L. M. De Rijk, 1972.

Pr, IG- Priscianus, Institutionum Grammaticarum, Libri I-XII, Libri XII-XVIII, ex recensione Martini Hertzii, Lipsiae, 1859, Charles Thurot, Extraits de divers manuscrits latins pour servir à l'histoire de doctrines grammaticales au Moyen-Age, Paris, 1869.

S, Th- Sponcius Provincialis. Charles Thurot, “Extraits de divers manuscrits latins pour servir à l'histoire de doctrines grammaticales au Moyen-Age”, Paris, 1869.

ThA, STh- Thomas Aquinas, “Summa Theologiae”, prima pars, quaestio 50-64, 106-14, tertia pars, quaestio 1-59, 60-71, 77.

### Այլ համառոտագրություններ

ա.- ածական

գ.- գոյական

մ.- մակբայ

ՄՄ- Մ. Մաշտոցի անվան Մատենադարան

նր.- ներգործական սեռի բայ

չբ.- չեզոք սեռի բայ

arg.- argumentum

a.- articulus

co.- commentarius

գ.- quaeastio

pr.- prooemium

s.c.- sed contra

**Tigran Sirunyan - “The lexicon of the works created in the center of Krna: neologisms and barbarisms”.** The article explores the neologisms and barbarisms of the authorial and translated works created in the center of Krna. The features of formation of the neologisms, their derivative and complex moulds are described in comparison with the Latin originals, the principles of transliteration of the barbarisms are explained.

There is a glossary attached to the article, including about 500 words from the mentioned works, which are not evidenced in the New Dictionary of the Old Armenian Language.

**Тигран Сирунян - «Лексический состав созданных в центре Кирна сочинений: неологизмы и варваризмы».** В статье исследуются неологизмы и варваризмы в оригинальных и переводных произведениях, созданных в центре Кирна. В сопоставлении с латинскими подлинниками описаны особенности образования неологизмов, их префиксальная и сложная оболочка, объяснены принципы транслитерации варваризмов.

К статье приложен словарь, включающий около 500 слов из упомянутых сочинений, которые не засвидетельствованы в Новом словаре древнеармянского языка.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### **Գրիգորյան Սուսաննա**

Գրիգոր Տաթևվացու «Գիրք հարցմանցի» հատուկ անունների  
իմաստային քննություն.....5

### **Թադևոսյան Հասմիկ**

Միջին հայերին բնորոշ բառիմաստային նոր դրսևվորումները  
«Գիրք վաստակոց» երկում.....100

### **Խաչատրյան Վալենտին**

Հայերեն ձեռագրերի՝ 13-րդ դարի հիշատակարանների  
բառապաշարը.....148

### **Միրունյան Տիգրան**

Քոնայի միարարական կենտրոնում ստեղծված երկերի  
բառապաշարը.  
նորաբանություններ եվ օտարաբանություններ..... 199

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ  
IV

Ձևավորումը և էջադրումը՝  
Հ. Թադևոսյանի

Խմբագրության հասցեն՝ 0015, Երևան 15, Գրիգոր Լուսավորչի 15, հեռ.  
(010) 565337

Address: Grigor Lusavorich str. 15, 0015, Yerevan, Armenia, tel. (010) 565337

Адрес редакции: 0015, Ереван -15, ул. Григора Лусаворича 15, тел. (010)  
565337